

2004



# ՔՆԵԱԼ-ԹԻՒՅ ԽԵԳԲԱՅ

ՏՕՐԵԱԱ ԱՇԽԱՏԱՏՐՈՒԹԵԱՄՄ ՏԻՐԱՑՈՒ ՅՈՎՍԻՓ ԲԱՐԵ-ԱԱ  
ՎԱՐԺԱՊԵՏ ՍԱԴՄԿՈՅ ԵՒ ՄՐԱՎՐՈՒԹԵԱՄՄ ՏԵՐ ԳԵՂՈՐԴ ՔԱԶԱ-  
ՆԱՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԱԱԿԱՆ:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՎ ՄԻՒԾԵԱՆԻ  
ԱՍՏՈՒԱՆԱՐԵԱԼ. S. S. ՆԵՐԱԿԱՅԻ ԱՐԲԱՋՆԱ-  
ԿԱՏԱՐ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ՀՐԱՄԱՆԵՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-  
ՊԱՏՐԻՄՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ . S. ՄԱՏ-  
ԹԵՈՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊՈՏԱԿՈՎՈՍԻ

**Արդեամբք գերամեծար Փիշմիշեան քեռորդի  
բարեսէր մահաւեսի Յովհաննէս աղայի Ան-  
տօնեան, որ յԱկնայ գեղջէն Ապուցիսու:**

Ի ՏԻՊ Ա. Թ Զ Ե Ր Ե Ա Լ.




ՅՈՐԹԱԳԻՒՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՈՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՅԻՈՅ

Հայուն

нр № 2568



36826-66

ԲԱՌԵ ԵԹ ԲՆԵՑՑԵ ԲՑԱԼԵ ԲԱ

Անդհանուր պարտաւորութիւնն է բանական արարածոց՝ հաղորդել այլոց իրենց ունեցած բարիքը. ինչպէս պարտաւոր է հարուստը օգնել կարօտեալին, կարօղը՝ ձեռնտու ըլլալ տկարին, առողջը՝ դարման ընել հիւանդին, գիտունը՝ սորվեցընել տգետին, և այլ այսպիսի բարեաց տէր եղողներուն անհրաժեշտ հարկ է իրենց բարիքը հաղորդել չունեցողներուն. քանզի հարստութիւն՝ կարողութիւն՝ առողջութիւն՝ գիտութիւն և այլ այսպիսիք՝ բոլորն ալ բարիք կըավին, քանի որ այս աշխարհիս մէջ եմք:

Ազգոքէն տիրապահ քաղաքին Արտակերու Ատղմիկ գիւղ բնակեալ Տիրացու Յուլսէփ բարեջան Աջարժապէտը, որ իւր գըտնը վաճ տէղւցն նայելով՝ և ուսումնական և արհեստական գիրքերէ գրեթէ զուրկ մնալով՝ և գիտնական խմաստասէր ընկերներէ ըստ մէծի մասին հեռի գանըմիլով՝ բաւական տէղէկութիւն և հմտութիւն ունի կարեւոր բանից արդրոց: Արդ՝ սցն աշխատասէր անձը ճանչնուլիւր պարտաւորութիւնը, որ պէտք է հա-

## ԿՐԵԽ ԵՐԱՎԵԱԼԻ ԹԻՒՆԵ

ԱՌ ԻՄԱՍՏԱԽՆԴԻ ԲԱՐՁՐԱՊԱՏԻ ՑՈՎՀԱՆ  
ՆԵՍ ԱԴԱՅՆ ԱԼՓԻՄՐԵԱՆ

Դշխոյ առաքինութեանց կըսվի այն առաքինութիւնը, որ գերազանցութիւն ունի իրմէ նուաստ առաքինութեանց վրայ . և աչա այն առաքինութիւնները՝ որ մարդոյս կիբքը կը կըրթեն և կը սանձեն, անոնց մէջ՝ դիւցազնական առաքինութիւնը դշխոյ կը համարվի . ինչպէս որ այս առաքինութիւնը ունեցողին ՚ի վեր քան զմարդ կըսէին նախնի իմաստասէրք . և այն առաքինութիւնները՝ որ մարդոյս կամքը կը կըրթեն և կանոնի տիպ կը ձգեն, անոնց մէջ արդարութիւնն է դշխոյ . բայց իմաստութիւնը թագակալ դշխոյ է այն առաքինութիւններուն մէջ, որոնք մարդոյս միտքը կուղղեն և կը լուսաւորեն :

Արդ՝ այսպիսի գերազանց առաքինութեանց հետեօղ ըլլալովդ՝ ՚ի իմաստասէր թարերար իմ, հրաման ըրիր ծառայիդ՝ որ դիւցածիս չափ ըստ կարողութեամներ մտացը զբոսարան մը ընծայ ընելու աշխատութիւն ունենամ . որպէս և ՚ի վաղուց անտի ծառայիդ այսպիսի գրուածները ընդուներես, և սիրով կը կարդաս :

Ուստի այս անգամի նուաստիս յանձն առած ընծառայելի աշխատութեանս նպաստակը այս է, որ դժուարիմաց եղած խնդրոց ոմանց տարակուսանքը լուծել խորհեցայ, վասն որոյ և այս համառօտութեանս անուանը՝ «իննութիւն խնդրոց ըսի» : Աւ այսպիսի խըն-

Դիրները հինգ տեսակ բաժանելով՝ հինգ մասն ըրէնք  
այս գիրքը՝ Առաջին՝ աստուածաբանական խնդրոց և  
Տըեշտակաց վրայ։ Երկրորդ՝ եկեղեցական իրողու-  
թեանց վրայ։ Երրորդ՝ մեկնութեան վերաբերեալ  
Տարցմանց վրայ։ Չորրորդ՝ բարոյական քննութեանց  
վրայ։ Հինգերորդ՝ բնական իրաց վրայ։

Եւ յիրաւի այսպիսի խնդրոց վրայ գիտունները  
զանազան մեկնութիւն և մկայութիւն կուտան՝ հաս-  
տատեալ սուրբ գրովք և վճռովք իմաստասիրաց։ բայց  
մեք յամենայն բարեաց զուրկ ըլլալով այսչափ կըր-  
ցանք մեկնել ինչ որ միտքերնիս դրինք Տարցանել և  
պատասխանել։

Ուրեմն խնդրեմ ՚ի խոնարհամիտ Յարդութենէդ՝  
բարեսէր կամօք ընդունել մերս նուազ գիւղական ըն-  
ծայն, և երբեմն երբեմն զբաղվլ ՚ի սմա ընթերցմամբ  
սիրովն Յիսուսի, յորոյ շնորհն ապաւինեալ մեր՝ սկսա-  
նինք ձեռն արկանել առաջակայ դործոյս,


Ու եմ  
ծառայ ծառայիցն Աստուծոյ  
Յովսէփ ՚ի բնակչաց  
Սաղմոյ։



# ՎՐԱՅԻԹԻՒՅՆ ԽՆԴՐՈՅ

## ՄԱՍՆ · Ե

ԽՈՏՈՒՇԸ ԱԲԱՆԱԿԵՐԵ ԽԵԳՐՈՅ  
ԿԱՄ ՀՐԵՇՏԱԿԱՅ ՎՐԱՅ



ՀԱՐՑՈՒՄՆ ԱԲԱՋԻՆ

**Վ**ասուածային բնութիւնը անփոփոխ է, ինչո՞ւ երբեմն  
կը վկացնի՝ բարկացաւ:

ՊԱՏԱՍԽԱՆԻ

**Վ**ասպիսի բառերը երբ այ վրայ կը սին, վոխաբերաբար  
խնախալ պէտք է. որպէս թէ երբ ած իւր խնամքը մեր վասյէն  
կը վերցընէ՝ կամ մեղաւորները կը պատճէ՝ կը սեմք բարկա-  
ցեալ. բայց ած ինչո՞ր կը դործէ նէ՝ արդարութիւն է, և ոչ  
կը իւր. և այ վրայ բարկանալ, կամ ասրջանալ կը սեմք նէ, մեր  
մարդկային տկար մտաց ըմբռնմանը համար է. ուստի Ալպեր-  
տոս այսպէս կը սէ. || Յորժամ ած առնէ զիմն, վոխոխումն ոչ  
լինի յած, այլ ի գործեցւալ իրն, ալու, գիրք, առ, գլ, ժիշ:

Հ · Բ

**Ե**թէ ած անփոփոխ է, հոգին ոք ալ ած է. ինչո՞ւ  
երբեմն հոգւցն սրբայ վոխոխիւն կը սին:

Պ. **Փ**ոխոխիւն ըսվածը, մի՛ կարծեր թէ ինքն յինքեան կը  
վոխոխիւն ըստ եռութիւն, այլ ըստ ներդործութիւն, այսինքն ըստ  
պարզեց իւրոց. ըանդի զանազան ժամանակ իւր ներդոր-

Ֆութիլ կը փոխէ , և աչ Եթէ ինքն կը փոխվի : Խնջողէս հոգին  
ոք առաջին գերիներուն մէջ Աբրահամ միայն արդարացց  
իւր տղթին մէջ՝ և բարեկամը ըրաւ : Եւ երբ գերին և աղջը  
փոխվեցաւ , Մովսէսը՝ և Սամուելը՝ և Դաւիթը մարդարէ  
ըրաւ . յետ ժամանակի առաքեալները հաստատեց . և այսպէս  
ըստ փոփոխութէ գերիներուն և ազգերուն՝ իւր ներգործու-  
թիւնն ալ կը փոխէ . ոմն մարդարէ կընէ , ոմն առաքեալ , ոմն  
վարդապէտ , ոմն հովիւ , ոմն մարտիրոս , և ոմն ալ ըստ կարգի  
հրաշեւք կընէ մինչև աշխարհին վերջը . ինչպէս վրկին մեր  
կըսէ իւր վարդապէտութէ մէջ . || Հոգին ոք ընդ ձեզ բնա-  
կեցի , և ընդ ձեզ վեցի յաւիսեան . ահ , ժկ . 16 || :

## Հ . Գ

**Ա**րք քո Յորդանան մկրտեցաւ , ինչո՞ւ հոգին ոք աղու-  
նց կերպ իջաւ վրան՝ և աչ ուրիշ կերպիւ :

Պ . **Ա**ռունելիսս Ռակերերանէն առնելով այսպէս կըսէ .  
|| Քրիստոսի առաջին գալուստը՝ խոնարհութէ կերպովէր ,  
քանզի մեղաց թողութիւ տալ , և գութ և ողորմութիւ ցուցա-  
նել եկաւ . բայց Երկրորդ գալուստը՝ Տրոյ նման պիտի ըլլոյ  
մեղաւորները գատապարանէլու համար : Ուստի հոգին ոք ա-  
ղունակերպ իջաւ , որ իւր վատակցին հեղութիլ ցուցունէ ,  
աղունաց նման խոնարհութիւ ցոյց տալով : Տես զընդարձակն  
՚ի ինը հարցումն այսր մասին :

## Հ . Գ

**Հ**ոգին ոք Ախօն վերնատանը մէջ առաքելոց վրայ ինչո՞ւ  
հրեղէն լեզուաց կերպով իջաւ :

Պ . **Վ**ատ պատճառներ կը գրեն սրբազնն մեկնիչները .  
բայց մեք համառօտ կերպով մը խմացունենիք , Առաջին՝ քանզի  
ինքն մեղաց խուիները այրող կրակ մի էր : Երկրորդ՝ առա-  
քեալները բորբոքելու համար իւր սիրոյն վրայ : Երրորդ՝  
վատեալ սիրով քի սուրբ Սւետարանը քարոզելու համար :  
Չորրորդ՝ ինչպէս Եսայի մարդարէին լեզուն կրակով մաքրը-  
վեցաւ , ասոնցն ալ հրեղէն լեզուներով մաքրըվելու համար :  
Հինգերորդ՝ ցուցունելու համար զանազան լեզուաց խօսակ-  
ցութէ պարզեր : Եցերորդ՝ ցուցունէ թէ ինքն է , որ իրենց  
ագիտութիւ պիտի ջնջէ , վասն որոյ ըստ քայ . || Ես եկաւ

ուսուցէ ձեզ զամ։ յօհ, ժկ, 26 ։ Այօթներորդ՝ հոգին ար\*  
ձեռն և մատն այ կըսվի։ ինչպէս Երբ Երեմիա մարդարէն  
ըսաւ։ Մանուկ եմես, և խօսիլ իսկ ոչ դիմում ։ աճ ձեռքը  
բերնին մօտեցցց և ըսաւ։ Ահա ետու զբանս իմ ՚ի բերան  
քո ։ Երեւ ։ ա ։ 9 ։

Այսպէս ալ այս տեղ նոյն այ ձեռքը, այսինքն հոգին  
նը, հրեղէն լեզուաց ձեռլ առաքելոց վրայ հանգչելով իրենց  
մանկամութիւն խնատասահրութե դարձուց։ Ութերորդ՝ ըստ  
կուռնելիութ, որովհետեւ առաքեալները նը աւետարանին քա-  
րոզիւ կարգեց, և քարոզութե գործիքը լեզուն է, վասն որոյ  
այն կերպով հոգին նը իջաւ։ Խններորդ՝ որովհետեւ լեզուն  
դիւրաւ կը ծովի առ բարին և առ չարին, և մարդոցս մտաց  
թարգմանն է ։ վասն որոյ հոգին սուրբ հրեղէն լեզուաց նման  
երկեցաւ առաքելոց վրայ, որոնք առբարին հաստատէ։

## Հ ։ Ե

Ուրե Գրիգոր Նարեկացին ՚ի գէմն հոգւցն սրբոյ շա-  
րադրած ազօթքին մէջ ոյսպէս կըսէ առ հոգին նը ։ Ուր բա-  
րեխօսդ ես վասն մեր յանմուռնէ հեծութիւնս ։ բան, լէ ։ Յ.  
Երդ՝ բարեխօսելու նուտաստութե նշան է, և հոգին նը հա-  
մապատիւ կը դաւանիք հօր և որդւոյ ։ ապա ինչո՞ւ համար  
բարեխօսել կըսվի։

Պ. Հոգին նը աճ է, և բարեխօսելու միշտ նուտաստութի-  
ցցց չի տար ։ քանզի եթէ բարեխօսութիւն ՚ի ստեղծուածոց  
առ ստեղծօղն ըլլայ, յայտնապէս նուտաստութեան նշան է։  
ինչպէս Սողոմոնյեցոց համար Աբրահամնւ ըրած աղաջանքը  
առ աճ ։ ծնն ։ ժը ։ 23 ։ Լու եթէ ստեղծողին առ ստեղծօղն  
ըլլայ բարեխօսութիւն, նուտաստութե նշան չէ՝ այլ համա-  
պատուեն։ Այսպէս Բերսաբէ աղաջանք ըրաւ իւր որդւոյն  
Սողոմոնին, որ Սօմացի Աբիսակիր՝ Աղօնիսյի տայ կարգըվե-  
լու ։ կ, թակ ։ ը ։ 21 ։ Աւ տիբամայր Ածածինը իւր որդւոյն  
աղաջանք ըրաւ հարսնետանը մէջ՝ զինիին պակսելուն համար ։  
յօհ, ը ։ 3 ։ Ահա Երկուքն ալ ծնողական պատուով նախամե-  
ծաբք էին, և ոչ նուտաստացան իրենց բարեխօսելովը ։ այսպէս և  
հոգին նը լը մեր բարեխօսելովը առ հայր՝ չի նուտաստանար։  
Եթէ այս մէկնութես ընդդիմացօղ ըլլայ, ունիմ ըսել  
թէ՝ անառակ որդւոյն առակին մէջ՝ որ կըսվի, եթէ հայրն  
Երեց որդւոյն կազմուէր, ապա նուտաստացեալ համարինք

Հայրն քան զորդին , որ հայրը՝ հայր ած ցոյց կուտայ , և  
երեց որդին՝ հրեշտակական բնութելիւնը :

## Հ . Զ

**Պ**ողւցն սրբոյ պարգևաց մէկը՝ Երաղոց տեսիլքը կը  
համարէ Յովէլ մարգարէն , ինչպէս որ կըսէ . || Եւ ծերք ձեր  
երազովք երազեսցին . Յովէլ . Բ . 28 || : Վրդե՛օք երազը ճշմա-  
րիտ համարինք մի , կամ մասն մարգարէութեան : Առաջա-  
նաբուքոդոնոսոր և Փարաւան մարգարէական երազ աեսան ,  
ասոնք մարգարէ համարինք :

Պ . **Ե**րկու պայման պէտք է երազին , որ մարգարէութիւն  
համարիի : Յամի՝ պէտք է որ ճշմարտապէս ցուցունէ ետքէն  
ըլլալու բան մը , կամ ծածուկ եղած բան մը : Երկրորդ՝  
երազին նշանակութեան ճշմարիտ ծանօթութիւնը՝ ոյ յայտ-  
նութենէն եղած պիտի ըլլայ :

**Վ**ուաշին պայմանին պակասութեանը նայելով՝ ըստ օրինի  
պէտք չէ երազի հաւատաւ . քանզի երազը բնական բան մի է .  
ուստի յարմարութի՝ և բաւականութի՝ չունի , որ ծածուկ՝  
կամ ետքէն ըլլալու ծածուկ բան մը ցուցունէ ճշմարտապէս :

Երկրորդ պայմանին պակասութեանը նայելով՝ մարգարէ  
չեն համարիր ոչ Փարաւան և ոչ Կայութոգոդոնոսոր՝ և ոչ անոնց  
նման ուրիշները , քանզի իրենք իրենց երազոց մեկնութիւնը  
չի գիտցան : Ո՞խայն մարգարէ կը համարին Յովէլի և Պա-  
նիկէլ , որոնք ածային յայտնութե՛ք ոյն մթութե՛ խաւարին մէջ  
ճշմարտարան մեկնիչ գտնըլեցան :

## Հ . Ե

**Ա**նչո՞ւ համար հոգին սուրբ հողմոյ կամ հրց օրինակաւ  
երևեցաւ :

Պ . **Ե**յսպէս պատասխան կուտայ Ալպերտոս . || Տուեալ ե-  
ղե (կըսէ) հոգին ոք հրով , զի ջերմացուսցէ զառուցեալս .  
տուեալ եղե հողմով , զի զարհուրեցուսցէ զապստամբեալսն .  
Գերս , առ . Գւ , թշ || :

## Հ . Ը

**Ա**յնպէս կը հաւատամիք , որ ած ամիշն տեղէ . ապա  
ինչո՞ւ միայն Երկնիքը կըսէլ աթու ոյ :

Պ. Այս իւթական բան մը ուր է նէ՞ հոն է , ուրիշ տեղ չէ .  
ինչպէս՝ Պէտրոս՝ որ հոն է , ուրիշ տեղ չէ . բայց այսպէս  
մի՛ իմանար երկնից աթոռ ըլլալն այ , այլ երկինքին բարձ-  
րութեանը և գերազանցութեը և պատուականութեը նայելով  
կըսվի աթոռ այ . քանզի ինչպէս որ կըսվի ՚ի հեզս և ՚ի խո-  
նարհս բնակիլ , ըստ հաճութեն կամաց պիտի իմանամք բնակի-  
լը . այսպէս՝ որ երկինքը նսանել կըսվի՝ իբր յաթոռոջ , այսինքն  
իննեակ դասակարգութեց վրայ . ինչպէս մարդոցս իմացակա-  
նութեը իւր մասցը մէջ . թէպէտ մեր իմացականութեը և մեր  
միտքը եակից են . և ած և աթոռոց դասք հրեշտակաց ուրիշ  
կերպ են : Եւ Դիոնէսիոս Արիստագացին ածակիր կանուանէ  
այդ աթոռոց դասակարգութիւնը . բայց ածակիր ըսածը՝  
գցացութեամբ զան կըսւ չի պիտի իմանամք , ինչպէս բեռ-  
նակիրը բեռ մը կը կըս նէ , այլ չնորհիւ ածակիր կանուանին  
ըստ կերպի սպասաւորաց :

## Հ . Ժ.

Երկիրը ինչպէս կանուանի պատուանդան ոտիցն այ :

Պ. Երդւոյն միածնի մարդեղութեը յատկացեալ ածային  
գերահաշող ողորմութեը՝ մեր միաքը ըմբռնելու համար , եր-  
կինքէն իջնալ կըսեմք , թէպէտ ինքն անփոփոխ է . և այնպէս  
ալ կը հաւասամք ըսելով , || Որ վասն մերց փրկութեն իջեալ ՚ի  
յերկնից || . Եւ յատաջքան զմարդեղութին միաքերնուսու ու-  
ղել ըմբռնանը համար՝ երկինքը աթոռ կանուանեմք , և  
այսպէս կիմանամք աթոռոց դասակարգութեը , ինչպէս վերի  
հարցմանդ պատասխանին մէջ ըսի : Եւ երկիրն ալ պատուան-  
դան ոտից որ կըսվի , ասովալ այսինքն ոտիւք , այժման  
ածարւան վարդապէտք կիմանան մարդեղութին քի . քանզի  
ոտքն յետին մասն է մարմնցն , և մարդեղութին եղեւ յետին  
ժամանակի մէջ , որ որդւոյն միածնի անձին՝ պատուանդան  
եղաւ առեցեալ մարդկութիւնը :

## Հ . Ժ.

Կաժոխիքին մէջն դատապարտեալ հոգիները , վերջապէս  
հնա՞ր է որ ընդգեմ արդարութեն այ դաժոխիքին աղատին ,  
և արքայութիւն երթան :

Պ. Պէտք է գիտնալ , որ ածային կարողութեը երկու կը  
զանազանի , բայց արձակ կարողութեն և կարդեալ կարողութեն :

Բացարձակ կարողութե՛ անանկ բան կընայ ընել ած , որ մեք  
չեմք կընար իմանալ Օդոստինոսի ըսածին պէս . և այս բացար-  
ձակ կարողութե՛ գատապարտեալ հոգիները դժոխքէն կընան  
աղատիւ : Իսայ Կարգեալ կարողութե՛ հնար չէ՝ որ գատա-  
պարտեալները դժոխքէն աղատին . քանզի Կարգեալ կարողու-  
թեամբ չի կամիր ած , որ չարը առանց պատժ մնայ , և ոչ  
բարին՝ առանց վարձուց :

**Եւթէ՝** քանի որ մարդս աշխարհիս վրայ է , իւր չար  
դործը փոխելով կընայ ածային վճիռն ալ փոխել , որ ած-  
իւր մարդասիրութե՛ը կըփոխէ . ինչու որ սուրբ Գրիգոր  
Կարեկացին կըսէ առ ած . || Որ միշտ յաղթիս ՚ի դժութէ՝ և  
ոչ թշնամնիս . պարտիս յողորմութէ՝ և ոչ պարատիս ,  
և այն . բան , ծը || :

**Վհակեղօրինակ , Եսայի կուգոյ առ Եղեկիս հրամանա-  
ւըն այց և կըսէ . || Հրամանն տոնւր վա տան քո , զի մեռանիս և ոչ  
կեսս . Եսայ . Ըլ . 1 || : Քետոյ աղօթքը ընելով Եղեկիս , տասն և  
հինգ տարի ևս կեանք արլաւ իրեն ած : Այնուեացւոց հա-  
մար վճնեց ած . || Թէ ոյլ ևս երեք աւուրքը են , և սինուե  
կործանեսցի . յն , դ . 5 || : Իսայ քաղաքացիք երբ իրենց չա-  
րութէն դարձան , ած ալ իւր վճիռը փոխեց :**

**Մարդս որչափ որ աշխարհիս վրայ է , կընայ իյնալ և  
կայնիլ , և եթէ այսպէս չըլար , մարդցոյս անձնիշխանութիւն կը  
խսփանէր : Կա ևս շտո անդամ այց մարդասիրութիւն զզջումի  
չնորհ կըպարգեէ մարդցն , թէպէտ ամմենն ալ չեն զզջոր  
որովհետեւ այն չնորհացը աեղի չեն տար , բայց շատերն ալ աեղի  
տալով կը զզջան , ուրեմն ժամանակաւոր վճիռը կընան յետո  
դարձունել : Եթէ աջակողմեան աւաղակը և Մարիամ Մադ-  
դաղենացին չի զզջացած մեռնէին , կըդատապարտըլէն դը-  
ժոխքին մէջ . և որովհետեւ զզջացին , վճիռը փոխվեցաւ :**

#### Հ . ԺԱՆ

**Արդե՛օք այց յաւիտենական վճիռը դժոխքի դատապար-  
տեալ հոգւոց վրայ , հնար է որ փոխվի :**

**Պ .** **Արդս՝** որ այս անցաւոր կեանքէն կելլայ , և յաւիտե-  
նական դատապարտութե՛ տիպ կը մնայ , այնուհետեւ ոչ այն  
յաւիտենական վճիռը կըփոխվի , և ոչ նոյն դատապարտեալ  
հոգին կաղատի : Իսանզի աղատութե՛ չըլար՝ մինչև մարդցոյս  
անձնիշխան կամաց հաւանութիւր չըլար . ինչու կըվիայէ

Օգոստինոս՝ ըսելով . || Որ ստեղծ զքեղ առանց քեղ , ոչ արա-  
դարացուցանէ զքեղ առանց քեղ || :

Եւ որովհետեւ մարդոյն կամքը մեռնելոն ետքը անփո-  
փոխ է ՚ի չարէն առ բարին՝ և ՚ի բարւոյն առ չարն , նմանա-  
պէս արդիւնքն ևս չի փոխվիր , ոչ գատապարտեալն կաղատի ,  
և ոչ փրկեալն կը դատապարտի . աշա՞ ոք գիրն ևս կը վճռէ  
ըսելով . || Եթէ անկցի փայտն ՚ի հարաւ՝ և կամ ՚ի կողմն հիւ-  
սիսց , ուր անկցի փայտն անդ կացցէ . ծաղ . ժաղ . 3 || : Եւ  
Աբրահամու տուած պատասխանին , որ ըսաւ մեծատանը .

|| Ո՛չ կարեն այտի առ մեղ անցանել . զահ . ժաղ . 26 || :

### Հ . Ժ.Բ.

Ո՛չ որ ամեն բան ավալ կը կառավարիլի , ինչո՞ւ համար  
սյալափ մեղք և պատասութիւններ կը պատահին . և շատ ան-  
գամ տշնարհիս մէջ արդարները ձախորդութեն մէջ կիյնան , և  
մեղաւորները յաջողութիւն կունենան :

Պ . Եսապէս պատասխան կուտայ Օգոստինոս . || ԱՃ ծոյրա-  
գցն բարի ըստալով , ամենելին չուզէր որ գործոց մէջ չար մը  
պատահի . և թէ այնքան ամենաբարի և ամենակարօղէ , որ  
չորեն ևս բարի կը հանէ . ինչպէս որ Յուլիոյի չար մատնու-  
թենէն , և հրէից չար անդթութեն յայտնի է որքան բարիք  
յառաջացան || :

### Հ . Ժ.Դ.

Ո՛չ որ չարէն բարի կելլայ՝ ինչո՞ւ համար կըսէն՝ հա-  
կառակաց հակառակ են և պատճառք , և ինչպէս չարէն կը-  
նոյ բարի ըստալ :

Պ . Հակառակաց հակառակ են և պատճառք , ասիկայ ամեն  
իրողութենց վրայ ճշմարիտ չէ , մանաւանդ բնական գործոց  
վրայ , ինչպէս կըսկին տաքութիւնը յրտութեն պատճառ ըստար .  
Բայց արարողական պատճառը՝ որ կամաւոր է , կընոյ ներ-  
հակաց պատճառ ըստալ . ինչպէս պատկերհանը գեղեցիկ պատ-  
կեր ալ կընոյ նկարել , գէշ պատկեր ալ :

Ի հա՞ սըսազն առաքեալն Պօղոս ևս կը վկայէ . || Եթէ  
ոչ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն ՚ի նմին զանգուա-  
ծոց առնել զանօթ , զոմն ՚ի պատիւ և զոմն յանաբգանս .  
Հոսկ . Ծ . 21 || : Դարձեալ չարն բարւոյն ներհակ չէ , ոյլ

պակասութիւն է բարեցն ։ անոր համար հարկ չէ որ չարին  
սկիզբն ըլլայ ։ քանզի չարն ինչ չէ, այլ ոչինչ է :

Հ ։ ԺԴ

**Ը** ատ բան կոյ՝ որ ըստ դիպուած-ց կըլլայ, այդպէս  
բաներուն ալ կըլլի՞մի այ նախախնամութիւնովը եղած :

Պ. **Պ**ատնկ բաները դիպուած կը համարին որուն որ կը պատա  
հիննէ, և ոչ եթէ այ՝ որ այն գործը ՚ի կարգի գնողն է, գեղեցիկ օրինակաւ մը Ագուինացին կը մեկնէ այսպէս :  
|| Աղային մէկը իր երկու սպասաւորը զատ զատ ձանապարհաւ  
տեղմը կը խրիկէ, և այսպէս այլեւ այլ ձանապարհաւ երբ կեր-  
թային՝ մէկ ըլլ մէկու պատահեցան՝ աղաներնուն ըրած խոր-  
հուրդին պէս, որ իրենք չէին գիտէր : Արդ՝ սպասաւորաց  
իրարու պատահիլը՝ իրենց մտացը նայելով դիպուած կը համա-  
րի ։ բայց խրկոլ աղային մտացը նայելով գիտուած չի համարիր,  
քանզի ինքն գիտէր՝ որ իրարու պիտի պատահին || :

Հ ։ ԺԵ

**Պ**ահ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն ՚ի չար  
ձանապարհէն և զկեալն : Կը տեսնանք՝ որ շատ մեղաւոր ի-  
րենց չար ձանապարհէն չեն դառնար ։ արդ՝ այ կամքը ան-  
կատար կը մնայ :

Պ. **Ճ**թէ մեղաւորին սիրտը արժանապէս պատրաստ գանը-  
լի այ կամացը նէ, այ կամքը միշտ կը կատարի . և եթէ ան-  
պատրաստ գանըլի, այ կամքը չի կատարիր . և այսպիսի կամքը՝  
ածարան վարդապէտները նախընթաց և հետեւեալ կամք կան-  
ուաննէ : Կամացընթաց կամքը ած կը կամի, զի ամ մարդիկ  
կեցցեն, և ՚ի գիտութիւն ձշալրատութիւն եկեսցեն : Այս է այ  
կամքը իւր կողմանէ, որ միշտ չի կատարիր, եթէ միշտ կատա-  
րելու ըլլայ, մեր անձնիշխանութիւնը բռնութիւն տիպ ինկած  
պիտի ըլլայ, և ած ժողովուրդը բռնութիւն փրկած պիտի ըլ-  
լար, որ այս արդարութիւն գէմ է . ևս և չարը դատապարտելի  
չէր ըլլար . կընար ըսեւ մեղաւորը՝ թիւ ած զիս ալ բռնութիւն  
թող արդարացընէր : Բայց հետեւեալ կամքն է, որով ած  
իւր ուղածին պէս պատրաստութիւն ունեցողները կամք կընէ  
փրկելու . և այս կամքն է՝ որ միշտ կը կատարի :

## Հ . Ժ.Զ.

Առ կարէ տեսանել զած որբան ՚ի մարմնի է . ապա  
ինչո՞ւ Եսայի մարդարէն կըսէ ինքը զենքին համար . || Տեսի  
զտէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելց , և լի էր  
տունն փառօք . Եսա ։ Պ . 1 || :

Պ . Առ կուռնելիս . || Եսայի ոչ ետես զած-ային էութին || .  
Քանզի Յովհաննէս աւետարանիչ կըսէ . || ՊԱԾ ոչ ոք ետես եր-  
բէք || . անանկ է նէ՝ ոչ Մովլսէս , ոչ Պօղոս , և ոչ Եսայի  
կըցին աւեմնալ : Վապա մարդարէին տեսի զար ըսելը , կամ կերպ  
մը տեսակաւ էր՝ իրը թէ մարմնական պատկերաւ , ինչպէս  
տեսան Աբրահամ , Յակոբ , և Մովլսէս : Իսայ այս տեսակը  
իրը թէ մարդու կերպարանքովէր , այսինքն թագաւորական  
կերպիւ , որովհետեւ նստեալ տեսնըլցաւ : Եւ այսպէս միշտ  
կտակարանին մէջ՝ մարդկային կերպիւ տեսնըլիւ կըսվէ , որով-  
հետեւ մարդկային ընութիւն առնելու էր :

## Հ . Ժ.Ե.

Վ . Ճս եղանակին ըսիր թէ մարդկային կերպիւ տեսնըլիւ  
կըսվէ , բայց մեք ածաշունչ գրոց մէջ կը կարդամք , որ երբ  
կերևար նահապետաց , իրը թէ ինքն իւր անձամբ հետերնին  
կը խօսէր , ինչպէս որ շատ տեղ յայտնի է . արդ՝ ինչպէս  
կերւայ , քանզի ինքն է՝ որ կըսէ , հիշ մարդմը չի կընար  
երեսս տեսնաւ և տպրիւ . Եւ Պ . ԼՇ . 20 :

Պ . Ուրբեն Կիպրիանոս՝ յերկրորդ գիրն , որ ընդ գեմ ձրէից  
՚ի հինգ գլուխն , և որն Ճիլարիս ՚ի դիրն ամենանը երրոր-  
դութիւն , և որն Գրիգոր Նազիանզացին յընձեռուածս հա-  
ւատաց այսպէս կը համարին թէ , ած առեցեալ երևելի մարմ-  
նովն երևեցաւ Աբրահամու , Մովլսէսի , և Մարդարէից :  
Իսայ ճշմարիտ է թէ՝ այս ամմէն երևենունիները հրեշտակօք  
եղան , որոնք առեցեալ մարմնովքն զանձն ոյց կըէին , անոր  
համար ած կանուանին :

Վ . յապէս վկայէ ուն Դիոնեսիս ՚ի գիրն երկնային քա-  
հանայապէտութեան . որն Ճերոնիմոս՝ յերրորդ գլուխն առ  
Գաղատացիս . որն Օգոստինոս՝ յերրորդ գիրն ամենանը եր-  
րորդութեան . սուրբն Գրիգոր՝ յառաջաբանութիւն բարոյա-  
կանին . և ուրիշ շատ վարդապէտներ :

Եւ ահա հաստատեմ , քանզի այն՝ որ երևեցաւ Մովլսէսի ,  
և ասէ , || Ես եմ ած Աբրահամու || , այն հրեշտակ էր . ինչպէս

որ կը վկայէ ուրն Ստեփաննոս . Գործ . Է . 30 : Այսպէս և  
ած՝ որ օրէնք արվաւ Առվլէսի Սինէական լեռան վրայ .  
Էլեց . Ժմ . 20 : Դ ուրն Պօղոսէ առ Գաղատացիս , Շ . 19 .  
Հրեշտակ կանուանի :

## Հ . ԺԲ

**Խնչպէս խմանամք այ խօսակցութել նահապետաց կամ  
մարդարէից հետ :**

Պ . **Այսպէս կըսէ կուռնելիսո , Երեք կերպիւ ած խօսե-  
ցաւ նահապետաց և մարդարէից հետ : Այս Երբեմն իրմէն  
ցցց առած Երազներով : Երկրորդ՝ Հրեշտակօք և լսելի ձայնիւ :  
Երրորդ՝ հոգեւոր խօսակցութել իրենց մասցը և անուրջքին մէջ :**

## Հ . ԺԲ

**Երբ ած հրեշտակներով կը խօսի , հրեշտակները մարմ-  
նաւոր և զգալի կերպիւ կերեան . արդ ինչպէս մարմին , և  
ինչպէս կուռնենան :**

Պ . **Հրեշտակները չեն կրնար իրենց հետ միաւորել մարմին  
մը գցացարա՞ առանց անձնաւորական միաւորութե , քանզի  
այս միայն այ զօրութել յատուկ է . բայց կրնան պատահա-  
բար մարմին առնել և իրենց հետ միաւորել , և այն մարմինը  
շարժել . այլ հասարակապէս իրենց մարմին կը կազմեն օդէն՝  
խառնելով հաստ գոլորշիներէն՝ մուժ և փայլուն եղածնե-  
րէն , և իբր թէ ճշմարիտ գցն և ձև մարմնաւորի պէս կը կաղ-  
մէն . և երբ աներեւոցթ ըլլան՝ վաղվաղակի օդ և գոլորշի գառ-  
նալով , այն մարմինը կը ցրվէ , սյապէս կը համարի Վասրվէս :**  
**Վսիկ յայտնի կընէ , թէ այն մարմինները՝ որոնցմով կերեան  
հրեշտակները , ճշմարիտ մարմին չեն , միայն թէ երեւելի քան  
մը , ինչպէս որ երբեմն ամզին մէջ զանազան ձեւեր կերեան :**

**Վրէ՝ այսպիսի մարմնով չե կրնար գործել հրեշտակը հա-  
սարակ կենդանեաց գործը , ինչպէս ուտել , խօսիլ , և այն .  
քանզի սյապիսի գործքերուն կենդանացեալ մարմին հարկա-  
ւոր է . բայց հրեշտակը չե կրնար մարմին կենդանացունել ,  
միայն կրնայ սյապիսի գործքերու հետեւլ , մինչզի չե կար-  
ծեմք՝ սուտ կամ կեղծեալ ըլլալը :**

**Այսպիսի մարմինները ճշմարտապէս հաստ և թանձր չեն՝  
ինչպէս ուրիշ մարմիններն են , և երբ շօշափեմք , հնար է որ**

կարծըլին՝ թէ շշմարիս մարդկին մարմին չեն, բայց իրենք  
ինչպէս որ ուղեն՝ այնպէս կրնան իմացընել տալ: Ինչպէս որ  
մեր հոգին մարդկային մարմնոց մէջ՝ երբեմն թոյլ և երբեմն  
պինդ ցոյց կուտայ զգայութիւնները, այսպէս հրեշտակները  
թոյլ կուտան Աբրահամու օշափել իրենք՝ երբ որ ոտքերնին  
կը լուանայ. ծնն. ժը. 5: Խշ երբ որ Գովայ ձեռքը բռնե-  
լով, Սոտոմայ քաղաքէն կը հանեն. ծնն. ժը. 16:

## Հ. Ի

**Ինչո՞ւ աճ կերևայ Մովսէսի վառեալ մորենւցն մէջ:**

Պ. **Պատմառն այս է՝ որ ցոյց տայ իրեն այրիկը իւր ժողով-  
վրդեան թշուառութեանը համար, որոնք նեղութի կը կրէին  
Եղիպտացիներէն: Այնպէս երևեցաւ Ստեփաննոսի՝ ողջ թէ  
ինպատերազմի, որովհետեւ կանդնեալ երևեցաւ, իրը թէ իրեն  
հետ պատերազմելոց էր: Ապդաղենացիին երևեցաւ պարախզ  
պարնի կերպով Խմաւուս գնացօղ աշակերտներուն ձանապար  
հորդի կերպով երևեցաւ. քանզի պարակէզին մէջ պարտիզպան  
կերևայ. ձանապարհորդ եղողներուն՝ ձանապարհորդ կերևայ:**

Խւ որովհետեւ պարտիզպան և պանդուխտ էր իրենց կար-  
ծերպով, որ իւր յարութիւն կը կասկածէին. և նորին չարչա-  
րանօքն և խաչիւն հովանացեալք, քրիստոնէական հաւատացն  
վրայ կը դողդովային, անոր համար սյնդէս երևեցաւ. չուսու-  
նի թէն, եսայ. գլ, Ղ. հանար. ա:

## Հ. ԽԱ

**Խուը եկեղեցին համապատիւ կը դաւանի ամենանը եր-  
րորդութիւն. արդ՝ երբ քն դատասատնին աւուր վրայ կը  
խօսի նէ, ինչո՞ւ կըսէ թէ, Ա.Յ. վասն աւուրն այնորիկ և  
ժաման՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակ յերկինս և ոչ որդի, բայց  
միացն հոյը. խա. իդ. 36: Ապա այս խօսքէն կը հետեւի՝ որ  
հօր այ գիտացածը որդին չե գիտէր:**

Պ. **Ճառէս չե՝ քանզի ամենայնիւ ստցդ է՝ թէ ինչպէս  
որ հօր և հոգւցն սըբց միօրինակ յայտնի էր, նոյնպէս և  
որդւցն՝ ոչ միայն ըստ որում աճ, այլև ըստ որում մարդ:**  
Խւ թէպէտ ըսող եղաւ, որ քն ըստ որում մարդ՝ չե գի-  
տէր. բայց ըստ հասարակ վարդապէտութիւն չե և չե արժան  
սցսակիսի նուազութիւն տալ այն գերափայլ և լուսաւորեալ

մարդկութեանը , յորում ամ գանձք ածային խմաստութե և գիտութեան ծածկեալ կային : Եւ որովհետեւ մարդկօրէն կը պամշը դատաստանին նշանները , վա որց դատաստանին ժամանակը չուզեց յայտնի ընել , քանզի ոյ գաղանի խորհրդոց մէկն է . վասն որց և զգիտցող ձեանալու համար առ արտաքս՝ չգիտել ասաց . ինչպէս կերպարանափոխ թագաւոր մը երբ կը շրջե , իբր թէ ինքը զինքը կը ծածկէն , նոյնպէս և իւր աէրուե գաղանիքները կը պահէ : Տես ՚ի տեսութե նոր կտակարանաց :

**Վ.** Հա և կաղինոսի բերած օրինակը այս բանին վը . || Գիտէր կըսէ և ըստ մարդկութե , բայց չյայտնելի գիտութք . ինչպէս որ խոստովանահօր մը եթէ հարցունես , թէ ի՞նչ ըստ քեզի այս ինչ մարդ երլ խոստովանեցաւ . ճշմարտապէս պատասխան կուտայք քեզի՝ թէ ոչ . աշա ամմէնքս ալ պարտական եմք այսպէս խմանալ քի ասութե ոճը , այսինքն ոչ գիտեմ , որ խմանալի է՝ թէ չէ պարտ ասել . զի գիտեմզայն ընդ գաղանեօք :

### Հ . ԻԲ

**Վ.** յս համապատութե վրայ այս ալ հարցունեմ , ինչո՞ւ համար կըսէ աւետարանիքը , Ո՛չ եթէ հայր դատէ զոր , այլ զամ դատաստան ետ որդւց իւրց . Ճ . Դ . Ե՞լ :

**Պ.** Առ արտաքս եղած երից անձանց ամմէն գոճքը՝ երից անձանց ևս հասարակ են , ինչպէս կը վկայեն ամ ածալքանք . ուստի ընդ որդւց դատէ և հայր և հոգին ոք : Բայց այնպէս կըսէ թէ ամ դատաստան տուաւ որդւց , որովհետեւ նա միայն դատաստանին օրը դատաւորի կերպարան ովհաի ունենայ , ինքն միայն պիտի աեսնըլի դատողական յաթոռ նստած , ինքն միայն պիտի խօսի , և յետին անդարձ վճիռը պիտի ասյ . և ասոր համար կըսէ աըն Ամբըրոսիոս . || Զմբ դատաստան ետ որդւց || . Ետ արդարեւ ծնանելով և ոչ առատաձեռնելով : Եւ Ասկերերանն ասէ . || Ետ նմա զամ դատաստան , վա զի դատաւոր ծնաւ զնա :

### Հ . ԻԳ

**Վ.** Կիտեմք՝ որ ած բարի է և ստեղծող բարւց . ինչո՞ւ համար ինք իրեն կողմանէ՝ Եսայի մարդարէին բերանովը կըսէ , թէ || Ես եմ որ առնեմ զիսաղաղութիւն , և հասատեմ զչար . Եսայ . Խե , 7 || :

**Պ.** յս այն խօսքն է , որ ած մարդարէով կը խօսի Կիւրոս թագաւորին հետ , որ անոր ձեռքովը պիտի աղատէր չըէից

աղքը չար թշնամիներուն գերութեն . ուստի այսպէս կը մեկնըլի : Հըեկ աղքին խաղաղութեր՝ է հարստութի՝ ձոխութեր՝ աղատութի, և այն, որ բարեաց առատութի է : Այս բարեկը ները ինչով կելեն իրենց ձեռքեն, յայտնի է որ չար գործքերով, որ այն գործքերով ած կը բարկացընեն, որուն համար ալ պատիժ կը կրեն, որ է կարօտութի՝ ծառայութի՝ սովու, և այն . այս է՝ որ կը վիճակ չար . բայց մեղաց չարը աստուծմէ չէ՝ այլ իրենցմէ . բայց պատիժին չարը՝ որ իրենց չար գործքերեն կը հետեւի, այն աստուծմէ է . և այն ալ բարի է՝ արդարութեանոն և օրէն ըլլալով : Այս մեկնութիւնը սորվեցանք Ձերոնիմուէն՝ Օգոստինոսէն՝ իրինոսէն՝ և Ասկելերանէն, ինչուս որ կը վկայէ Կուռոնելիոս Ի մեկնութեն Եսայեայ :

## Հ . Ի Դ

**Պ**ար ած ստեղծեց ամմէն արարածները, բնութե դէմ բանմը չըրաւ . բայց Դաւիթ կըսէ թէ՝ Եւ ջուրք՝ որ ՚ի վերց քան զերկինս, օրհնեցէք զանուն ան . առջնու, ձիւը, 4 || : Ահա բնութեան դէմ կերեայ ջուրին երկնից վայ ըլլալը : Պ . Բանութե դէմ չէ այն ջուրին երկնիքն վեր ըլլալը, որովհետեւ անօսր՝ նուրբ՝ և թեթև ջուր մի է, որով կը զանազանի մեր ջուրէն, և իւր բնական տեղին այն է . քանով Օգոստինոս կըսէ՝ թէ || Ամմէն բանին բնականը այն կը համարվի, ինչ որ իրեն անօրինվեր է անկից, որմէ է ամմէն չափը, թիւը, և բնութեան կարգը || :

## Հ . Ի Ե

**Ա**նչու համար այս ջուրերը այն տեղ դրվեցան : Պ . Այսպէս կըսվի, որ բարեխառնեն ջերմութիւնը, որ առաջ կուգայ աստեղաց զօրութենէն և շըջանէն :

## Հ . Ի Զ

**Ա**նչու երբեմն առաքինի գործովք զարդարված ոմանք թող արևած կերեան, և իրենց վախճանը մոլութիւնով և չար գործքով կը կատարի :

Պ . **Ծ** հիշ մէկ արդարը թող չի տար, և չի զեկեր իւր Հոորհքէն . եթէ նախ ինքը զենքը թող տալ չի տայ . այսպէս կը սորվեցընեն ած արանք :

Ուրբ գրցն մէջ գրված է՝ թէ ॥ Ասաց ած եղեցի լոյս, և  
եղեւ լոյս ॥, մի թէ այսպէս արտաքերական ձայն էր :  
Պ. Այս թէ արտաքերական ձայն էր, այլ կամին էր նոյ, որ  
այս այսպէս ըլլայ ։ ինչպէս կը գրէ Աթանասիոս Արիանոսաց  
դէմ։ Առ եկեղեցական երգցն մէջ կըսվի, ॥ Տէրն յետ ստեղծա-  
ման արարածոց՝ հանգեաւ յեօթն օր ՚ի գործոց ։ այն որ հան-  
դիսա աշխատելոց և կամքն (ահա սսաց) գործ է եղելոց ։  
այսինքն ներգործութիւն հաստատօղ արարածոց ։

Գախեմք՝ որ ած ամպենուս ածն է, ինչո՞ւ համար սուրբ  
գրոց մէջ կանուանի ած Աբրահամու, Խսահակայ, և Յակո-  
բայ, և այլոց նահմապեմաց :

Պ. Եյս երեք անձեն սկսեց գերազանց երեք առաքինու-  
թիւնք, և ասոնցմէ ուրիշներուն անցան ։ Աբրահամէն սկսաւ  
հաւատը և հնազանդութիւն ։ Խսահակէն՝ մոքրութիւն մեղաց և  
անմեղութիւն ։ Յակոբէն՝ աշխատութիւն և թշուառութիւն համբե-  
րութիւն և արիութիւն ։ Ահա ասոր համար կըսվի ած Աբրա-  
համու, Խսահակայ, և Յակոբայ :

Քրիստոսի ուտելոց յարութենէն ետքը ինչպէս էր :

Պ. Քրիստոս յարութենէն ետքը չմարտապէս առաքելոց  
հէտ կուտէր, բայց հըեշտակայ ուտելուն պէս կերածը օդ կը  
փոխարկէր ։ քանզին վառաւորեալ մարմինը՝ կերակուրով չի  
մնանիր ։ այսպէս կըսեն ած աբանիք :

Ուշ որ կարելի է, առաւել ընդարձակ մեկնութիւն մը  
տակը այս բանին վըսց, որ աղեկ մը յայտնի ըլլայ :

Պ. Ահա ոյսպէս ընդարձակ կը մեկնեն կաղինոս՝ Հերոնի-  
մոս՝ Օգոստինոս՝ և Լիրանոս, թէ յա յարութիւն ետքը երե-  
ցած ատենը Նշմարտապէս կերաւ, ոչ եթէ կերակուրի կարօ-  
տութիւնով մեղի պէս՝ այլ կարողութիւնով, ինչպէս կըսէ  
Օգոստինոս, հըեշտակները բորբոք մարմնաւոր ձեռով կերւան,

Ճշմարտապէս չեն ուտելը , այլ արտաքուսա այնպէս կը ձեւացը նեն . քանզի ուտելը կենսական գործողութիւն մի է , որովհազին գործ ածելով մարմնեղէն գործարանները՝ որ իրմէն տեսակաւորեալ են , իբր հոգեռորդած . կը խրկէ իւր բերանէն ստամոքսին մէջ այնպիսի ուտելիք , որոնք այն տեղ կը հալին և կը մարսին , և յետոյ կաթի պէս բան մը կը լլան՝ և յետոյ արիւն կը փոխարկին , որով անդամները կը մնանին : \* Ծրեշտակը տեսակաւորեալ չի համարվիր առած մարմնովը , միայն մօտաւորութիւնը կը լլայ իրեն . ուստի խօսիլը , շարժիլը , ուտելը , կենսական գործողութիւն մի չէ , այլ լոկ արտաքին ինչ :

Տօբիթոյ հրեշտակը կերակուր կառնէր բերանը , կուր կուտար , կերթար ստամոքսին մէջ , բայց ինչպէս որ բերանը՝ և խռչափող՝ և ստամոքսը տեսակաւորեալ չեն այն հրեշտակէն , անոր համարը ճշմարիտ բերան՝ խորչափող՝ և ստամոքս չէին . նոյնպէս ուտելին ալ ճշմարիտ ուտել չէր , այլ լոկ շարժումն կամ երկոյթ մի , որով այն կերակուրը կը մնարի իբր առ աչօք բերանին մէջ , և ատա օդին մէջ կը ցրվէր և աներկոյթ կը լլար :

Դայց քայլ յարութէն եաքը ճշմարիտ կենսական գործողութեամբ կը ճամէր կերակուրը մարդկային եղանակաւ , որ կիջնար ստամոքսին մէջ այնպիսի եղանակաւ , որ կրնար փոխվիլ յարիւն և ՚ի մնունդ՝ եթէ մննդեան կարօտ ըլլար . բայց մննդեան կարօտ ըլլալուն համար , և թափանցութիւն ունենալով ՚ի ձրից փառաւորեալ մարմնոցն , հոգին անաւսանելի կերպով մը օդոցն կը ցրվէր :

Հթէ աղէկ մը չի հասկըցար այս ըսածովս , որովհետեւ երկար եղաւ , քեզի օրինակ մը ըսեմ Օգոստինոսէն , որով աղէկ իմանաս , և քի յարութէն եաքը ուտելը ինչպէս էր , և մեր ուտելը ինչպէս է՝ աղէկ մը հասկընաս : \* Ծուրը՝ արեգակն ալ կը իմէ , և ծարաւցած գետինն ալ , բայց զանազան եղանակաւ : Արեգակը կարողութեամբ կը ցամքեցնէ ջուրը , և աչ եթէ ջուրին կարօտութիւն ունենալով . բայց ծարաւ երկիրը կարօտութիւնով կը խմէ՝ որ զովանայ :

Դարաւ Երկիրը կը խմէ ջուրը , և իւր երակներուն բաժին կը նէ . արեգական ջերմ ճառագայթիները կը քաշէ ջուրը , և անկէ իրեն օդուտ չունենար , քանզի ջուրի կարօտութիւնի , ուստի շոգի կը դարձունէ , և անյայտ կը նէ . տես ՚ի Տեսութիւն նոր կտտակարանաց . հապոք . Բ :

Պ. բիստոս խաչին վրայ խաչահանուաց համար առ հայրը  
աղօթեց, ըսելով՝ Հայր Թաղ դոցա՝ զի հը գիտեն զի՞նչ  
դործեն ։ Պահ ։ Եթ ։ 34 ։ Եթէ քի հայցուածքը հօր այ ըն-  
դունելի եղաւ, անանկ է նէ ածաշարչար ձրւաները չի դա-  
տապարտըվեցան ։ Թէ որ ընդունելի չեղաւ՝ ուրեմն հայր ած-  
ընդունեց իւր միածին որդւցն խնդիրը:

Պ. Որդւցն միածնի խնդիրը ընդունելի եղաւ, և միշտ  
ալ կըլսայ ։ Ինչպէս որ ինքն ալ վկայեց՝ երբ չորեքօրեայ մեռ-  
եալ Վաղարսին յարութիւն տուաւ, ուր տեղ ըսաւ, ։ Հայր՝  
դոհանամ զքէն՝ զի լուար ինձ, և ես գիտէի՝ զի յամ ժամ  
լսես ինձ ։ Զհ ։ Ժ- ։ 41 ։ Պահնց համար միայն ընդունելի  
եղաւ, որոնք որ տեղի ունեին ընդունելու այս ներողութե-  
շնորհը ։ որով հարիւրապետը և այն տեղ եղօղներէն ուրիշները՝  
շնորհաց և փրկութեան արժանի եղան։ Բայց որոնք որ տեղի  
չունեին արժանի ըլլալու այս շնորհացը, դատապարտեցան  
իրենց յամառութեամբը։ Պահնց կը վերաբերի մարդարէին  
բերնով վկայվածը՝ որ կըսէ, ։ Եւ աղօթք իմ ՚ի ծոց իմ  
դարձին ։ առաջ ։ Ե- ։ 53 ։

Պատճին պատասխանիս վկայութիւնը տե՛ս ՚ի մեկնութեն  
Եսայեայ՝ որ ՚ի կուռնելիոսէ ։ Գլ ծ- ։ 12 ։ Բայց հարիւրա-  
պետին և անոր հետ եղօղներուն հաւատալը, տե՛ս Յայսմա-  
տուրաց մէջ ։ Պահ զունիիանոս հարիւրապետը միականի  
էր, որ տէգով խոցեց քի կողը, և անկից բղիսեալ արիւնը  
կցը աչքին ցաթկելով լուսաւորեցաւ, և հաւատաց ինքը՝ և  
երկու զինուորալ իրեն հետ։

Պ. բորդոք ած էր Յակոբայ հետ մարտնչողը՝ Եթէ հրեշ-  
տակ ։ Ճնն, լը ։ 24 ։

Պ. մանք ըսին թէ՝ որդին այ էր ։ բայց ըստ կուռնելիոսի  
հրեշտակ էր ։ որ Ովետ ալ կը վկայէ ըսելով, ։ Ժուժկալեաց  
ընդ հրեշտակի՝ և զօրացաւ ։ ամսէ ։ Ժ- ։ 4 ։ Պ. յսպէս և առն  
Դիոնեսիոս և ուրիշները կըսէն :

Պ. ապա ինչո՞ւ համար Երեսուն համարին մէջ կըսէ Յակոբ ։  
Ա Տեսի զած դէմ յանդիման, և ապրեցաւ անձն իմ ։

Պ ստ կուռնելիուի հրեշտակ էր ևս ըստ անձին . բայց  
ներկայապէս և հեղինակապէս ած էր . ինչպէս որ թագավոր-  
թին փոխանորդին՝ թագաւոր կըսվէ .

5 • L7

5 • Lb

Այս հրեշտակը ինչո՞ւ համար Յակոբաց պուտին ետևի ջեղերը կը ձմբէ և կը թմբէ ըստ :

¶ . 3 **այստինի ըլլայ** Յակոբայ որ՝ հրեշտակին գէմհամբերութեամբ տոկալը՝ իւր ուժովը չէր, այլ այ զօրութիւր. այսպէս կը վկայէ Շեռոտորէթոս։ Եւ կաղալն ալ անոր համար էր որ՝ միշտ քալած ժամնակիլ ածային բարերարութիւր միաք բերէ։ Տես ՚ի Տեսութիւնին կտակարանաց. հապոր, առ էրեւ 85.

5 · 12

Համար կին անուամբ կանուանի քրիստոս :

Պ. Արովիչետե Պօղոս առաքեալ աւետարանաւն ծնաւ հեթանոսները՝ ի հաւաան քի, հեթանոսաց հայր անուանեցաւ. և որովիչետե քս ևս ցաւօք և չարչարանօք ծնաւ զեկեղեցի, կոչեցաւ կին անուամբ և աւելածու, որ զդրամն կորուսեալ խնդրեաց. Պահա, ժե, 8. և մայրաբար միշտ գութ ունի իւր որդւոց վայ:

544

• ქართული ანთლების ეტელი უღებელეցათ მწარმეობა იყო.

¶ . || **մանկ** ըսին թէ՝ քո անունը Յովհաննէս Մկրտչիչ գրաւ-  
մլբռութէ ժամանակը . բայց այս կարծիքին հակառակ կը վկայէ-  
նը Մատթէոս աւետարանիցը , թէ || Յակոբ Ճնաւ զՅովսէփ  
Պայրն Մարիամն, որում խօսեցեալ դՄարիամ կըս , յորմէ  
Ճնաւ յն՝ որ անուանեցաւ քն . Խոր , առ . 16 || : **Կա ևս՝ քո**



անունը է անուն ներդործութե միաւորութե բանին և մարմ-  
նոյն՝ առողջն և առեցելոյն . և այն միաւորութել մկրտութեն  
շատ յառաջ եղած էր :

## Հ . Լ.Բ.

**Ղ**յս աշխարհիս մէջ եղածներուն բարի կըսվի ըստ ոք  
գրոց . և մեր ամէն բարիքն ալ աստուծմէ է , և աստուծմէ կը-  
յառաջանայ . ապա ինչո՞ւ քո կըսէ , || Չեք ոք բարի՝ բայց մի  
աճ . զարկա , ժկ . 19 || :

**Պ**արին երկու կերպիւ կիմոցին , հաղորդութե և բնու-  
թե . արդ՝ ամէն ստեղծականը բարի են՝ այ բարութել հա-  
ղորդ ըլլալով , ինչպէս որ ոք գիրն ալ կըսվայէ . || Եւ ետես ած-  
զամ զոր արար , և ահա բարի են յցժ . ձն , ա . 32 || : Բայց  
բնութեամբ բարին , այսինքն եապէս և ըստ ինքեան բարին՝  
ճշմարտապէս մի միայն աճ է :

## Հ . Լ.Բ.

**Վ**րիստոսի հետ եզօղ աշակերտները թափօրական լեռը  
պայծառակերպութե ժամանակը , իւր աճ ութե լցութ ինչպէս  
կըցին տեսնալ մարմնաւոր աչօք :

**Պ**ուրբն Յօհան ոսկերերան կըսէ . || չ բովանդակ զամ  
պայծառութիւնն հանդերձելոցն յատիտենից երկեցցց նա  
և մեզ : **Օ** ի թէ խնայելով էր տեսիլն այն՝ և ոչ ճշգրիտ յան-  
՝ գիմանութիւն իրացն , այն յայտ իսկ է ՚ի նոցուն իսկ բանից  
՝ աւետարանչին : Իսկ զի՞նք իցէ՝ զոր տան . || Կաւսաւորեցաւ  
՝ իբրև զարեգակն . հապ , ժէ . 2 || : Իսկ արդ՝ անապական մարմ-  
նոյն փառք չէ իբրև զապականացու մարմնոյս արձակէ զլոյս .  
և ոչ գարձեալ այնպիսի ինչ , զի մահկանացու տեսանելիք եր-  
բէք բաւական իցեն հանդարտել այնմիկ , այլ անապական և  
անմահ աչաց ոլէտք են տեսանել զնա : Ուս ՚ի գիրք աճ , ՚ի  
ճառն՝ որ առ անկեան թէողորոս : ՚Ացնպէս և ՚ի մեր Շա-  
րակնոցին ասի || Ի մասնաւոր լուսոյն զարհուրեցան դասք առա-  
քելոց || : Ուրբմն տեսածնին աճ ութեան բոլոր լցութ չէր , այլ  
կըցածնուն չոփ :



## Հ . Խ

♦ օր այ կամքը մատնեցաւ որդին ՚ի ձեռս մարդկան ՚ի խաչ ելոննել . ասպա ինչո՞ւ համար պարտաւորեցան ձրեայք խաչելով՝ և Յուղա մատնելով :

Պ . ♦ ըւաները և ապերախտ մատնիչն Յուղա այդ սարսափելի մեղքը գործեցին նէ՝ հօր այ կամքը կատարելու համար չէր, այլ վա նախանձու մեռուցին չարչարանօք խաչի, վա որոյ աններելի մեղքը մեղանցեցին . քանզի ուղեցին՝ որ անով իրենց չար ցանկութիւն և կամքը կատարեն . ինչպէս որ Պիդասոս աւ հասկընալով ըստաւ, առ նախանձու մատնեցին զնա . եթէ կամիս տես ՚ի դ մասն գրոյս՝ չարցումն, զը :

## Հ . ԽԱ

♦ Պարչաբանաց ժամանակը որդին միաճին կըսէ առ հայր անձ . || Հայը՝ եթէ կամիս, անցն զբաժակս զայս յինէն . բայց աչ իմ կամք՝ այլ քաշ լիցի . զակ, իւ . 42 || . և երեւցաւ նման հրեշտակ յերկինց՝ և զօրացուցաներ զնա, այսինքն աղաչէր, թէ հօր այ կամքը քո մեռանիլու կուզէ աշխարհի փրկութէ համար . արդէ՝ որովհետեւ քա է իմաստութիւն հօր այ, գիտեր նորին կամքը, ինչո՞ւ հրեշտակէն սորվեցածի պէս կերեայ :

Պ . ♦ Եիսասոս անութիւն հօր այ հաւասար էր, բայց մարդկութիւն փոքր քան զիրեշտակս . եբբ, թ . 9 : Եւ որովհետեւ սովորութիւն է, որ փոքր եղողը մեծէն կըսորվի այ կարգադրութեամբը, անոր համար և որդին այ ինչորէս չարհամարհեց իրմէն հաստատված թլիատութիւն օրէնքը, նոյնպէս անարասապահէց իրմէն գրված կանոնը՝ կամելով հրեշտակաց միջնորդութիւնը սորվիլ . և մանաւանդ օրինակ տալու համար առաքելց, թէ ամ պարգևք՝ որ ՚ի վերուստ կիջնան ստորնոցս վրայ, կարգաւ և աստիճանուու են : Ինչպէս որ թագաւորի մը զաւակ՝ թէպէտ յառաջադրույն գիտէ իւր հօրը կամքը, բայց գեսապանով կա կը հարցունէ և տեղեակ կըլլայ, որ տեսնօղները և լսողները չե կարծեն թէ հակտուակ է ըրած գործը հօրը կամքին :

Պ . մանապէս և քա որդի երկնաւոր հօրն՝ գիտէր իւր հօրը կամքը, որովհետեւ մը էր իւր և հօրը կամքը . բայց ըստ որում մարդ՝ կամեցաւ անօրինաբեր իմանալ և սորվիլ : Պ . յն՝ որ մարդասէրութեան համար նուռաստութիւն չի համարեց իրեն՝ մարդկային կերպիւ երկրի վրայ շրջիւ, անոր համար և մարդկօրէն հարցունելն ալ ամօթ չի համուրեց :

Գեղեցիկ պատասխան կուտայ սուրբն Դիմումիոս այս  
հարցմանը վեր ահա իւր բուն շարադրութիւր որ կըսէ ։ Ինքն  
յա՞ որ է գերագցն էութե, պատճառ երկնայնոցն էութեց՝  
ի մեր ընութիս անփոխաղբաբար եկեալ, ոչ փախչե յիւրմէ  
կարգեցեալ և ընտրեալ մարդավայելուչ բարեկարգութէն,  
այլ բարւոք հաւանութե հնազանդի հօր այ ՚ի ձեռն հրեշ-  
տակացն տպաւորութեամց ։

Հ. ԽԲ

**Երբ** հոգին նը քի վրայ իջաւ, ինչո՞ւ համար աղաւնւց  
կերպիւ երևեցաւ :

Պ. **Ամս** քա աշխարհ եկաւ հեղաղաւնւց նման, որ մարդ-  
կան մեղաց թողութիւր պարգևէ ։ բայց դատաստանին օրը հրց  
նման պիտի գայ ամբարիչո և չար մարդիկները պատժելու  
համար ։ ուստի հոգին սուրբ քի աղաւնական բարբը ցցց  
տալով աղաւնւց նման իջաւ ։ այսպէս կըսէ Կուռնելոս  
ուսեալ Յոսկելերանէ :

**Երկրորդ՝** եօթն յատկութիւր ունի աղաւնին ըստ բնագի-  
տաց, որոնք կը ցուցընեն հոգւցն սրբոյ եօթն պարգևը՝ որ  
՚ի քա: **Ամս** աղաւնին ջուրի մօտ կը նստի, և կըդիտէ բա-  
զէին և այլ գիշատիչ թուչուններուն շուքը, որ տեսնալով  
փախչի անկից ։ այս յատկութե կիմանամք քի վրայ իմաստութե  
պարգևը: **Երրորդ՝** աղաւնին ընտիր ունդեր կուտէ, գե-  
շերը կը նետէ ։ այս յատկութե կիմանամք քի վրայ գիտութե  
պարգևը: **Երրորդ՝** աղաւնին ուրիշներուն ձագերն ալ կը  
սնուցանէ ։ այս յատկութեամը կիմանամք քի վրայ խորհրդոյ  
պարգևը: **Չորրորդ՝** աղաւնին նեղութե չի սնուցանէր ձա-  
գերը ։ այս յատկութե կիմանամք քի վրայ հանձնարոյ պարգևը:  
**Հինգերորդ՝** աղաւնին սրտին վրայ լեզե չունի ։ այս յատ-  
կութեամը կիմանամք քի վրայ ածակաշութեան պարգևը:  
**Ա եցերորդ՝** աղաւնին իւր բցնը ապաւաժք քարերուն մէջ կը  
գնէ ։ այս յատկութե կիմանամք քի վրայ զօրութե պարգևը:  
**Երրորդ՝** աղաւնին երգոյ փոխարէն՝ ցաւոյ ձայն կը հա-  
նէ ։ այս յատկութե կիմանամք քի վրայ երկիւղի պարգևը:  
**Վ. Հա** այս պատճառաւններով հոգին նը աղաւնտիերպ իջաւ իւր  
եակցին վրայ:

## Հ ։ ԽԴ

Աստուծոյ ամենողորմած մարդասիրութել չի վայէր, որ իւր մատացը մէջ պահէ մեղաւորին մեղաց համբանքը՝ որ յետոյ պատժէ ։ աստ ինչո՞ւ համար ոք Գրիգոր Նարեկացին կըսէ, ի թէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմշարիս՝ մեռայց կենդանւոյն ։ բան, հը ։ 3 ։ :

Պ. Կիտեմ՝ պիտի ըսես թէ մեղքը չար է, և չի վայէր՝ որ չարը աստուծոյ մատացը մէջ մնայ ։ ահա քեզ պատասխանի ։ ՎՃ իրմով կը ճանաչէ բարին միակ միջնորդիւ, այսինքն իւր յատուկ էութեն ըստ Ալպերտի ։ բայց չարը կամ մեղքը կը ճանաչէ իւր թէ երկու միջոցիւ ։ քանզի իւր էութեն կը ճանաչէ այն ունակութիւնը՝ որ չարին ներհականն է, և այն ունակութեն միջնորդութեն կը ճանաչէ բարիին պակասութիւն՝ որ է չարն ։ ինչպէս լցու չեղած ժամանակը՝ գիտեմք որ խաւար է լցութ գոյացական իր ըլլալով՝ մեղմով կընափ գիտանալ, և ոչ թէ պակասութեն ։ բայց խաւարը ոչինչ ըլլալով՝ իւր գոյութեն չի ճանաչվիր, այլ լուսոյն պակասութեն ։ ահա այս է կրկին միջոցիւ չարը կամ մեղքը գիտանալը։ Այս մաքը կըսէ Դաւիթ ոց գիտութեն համար, թէ Ոքը արձակունս ՚ի հեռաստանէ ճանաչէ, (այսինքն զչարս) ։ առզ Ձկ ։ 6 ։ : Այս այսպէս ըլլալը տես Ալպերտի ածարանութեն մէջ ։ Գիրք, առ գլ իջ ։

## Հ ։ ԽԴ

Ուրբ Երրորդութեն Երեք անձինքն անբաժանելի են ՚ի միմեանց ։ աստ ինչո՞ւ համար որդին միածին խաչին վրայ կազազակէր առ հայր, ԱՃ իմ՝ ԱՃ իմ ընդէլը թողէր զիս ։

Պ. Ըիստոս սովորաբար իւր ամմէն գործած գործը առ հայր ած կը վերաբերէր ։ և շատ անգամ մեր բերանովը՝ իւր միջնորդաբար հօր ոց կառաչէր ։ ինչպէս ուրն Կերսէս շնորհալին կըսէ ։ Փարելի բարբառ ընդիմ՝ էլի էլի առ հայր գոչէր ։ Ուրեմն՝ այն ընդէլը թողէր զիս ըսածը՝ իրեն համար աղաւանք չէր, այլ մեղի համար ։ Ուստի Գրիգոր ածարանն յաղագս որդուց այս խօսքին վրայ կըսէ ։ ԱՃ իմ՝ ած իմ, ընդէլը թողէր զիս ։ քանզի և ոչ ինքն թողաւ՝ կամ ՚ի հօրէ՝ կամ յիւրմէ ածութեն, ոոզ թուի ոմանց իբրև զարհութեալ՝ յի չարչարանայն, և յաղագս այնորիկ ամփոփեալ ՚ի չարչարողին ։ Քահով ո՛հարի արտու նմա ՚ի ստորինս իջանելն և ՚ի խոչ Ելա-

նելն , այլ յինքեան՝ որպէս ասացի , տպաւորէ զմերս . վազ զի  
մեք թողեալք և անտես եղեալք՝ փրկեցաք նը չարչարանօքն ՚ի  
չարչարանաց . զի որնդ զյիմարութէ մեր և զմեզն ինքեան ըն-  
տան եցուցանէ , յասելն՝ զեսի եղէ ՚ի փրկութէ խմէ վասն  
բանից յանցանաց իմոց || . և ուսանին նմա զ՞նաղանդութէ , և  
աղաղակն , և արտասուքն , և աղաջէն , և լսելին լինել , և զար-  
հուրանիքն , յարմարի սքանչելապէս յաղագս մեր : Առունելիոս՝  
այս բանիս վրայ , ելի ելի և այլն . կըսէ , || Քա կը խօսէր մարդ-  
կային բնութեան բերանով , որուն երաժխաւոր եղած էր || .  
ասպա եթէ ասես՝ թէ քո մերով բնութէ մեզի համար կաղա-  
ջէր՝ չես սխալիր . քանզի և Շնորհալին այսպէս կըսէ . || Ելի ելի  
աղաղակէր , իմովս ընդ իմ զհայը աղաջէր || :

Դարձեալ՝ Ընդէ՞ր թողեր զիս ըսելը , իբր թէ ըսել  
կուղէ , թէ այս յամառեալ և խստասիրա հրէից համար բնդէ՞ր  
թողեր զիս չարչարիլ , որովհետեւ իմ փրկական չարչարանքովս  
օգուտ ըլլալու չէ ասոնց , այլ ևս առաւել պիտի խստանան :

## Հ . ԽԵ

**Վ**Ճ բոլոր ստեղծուածներուն՝ թէ հոգեորաց և թէ  
մարմառորաց՝ ամմէնուն ալ ած կըսվի . քանզի ամմէն արարած-  
ներուն հիշեն գցացուցիչը ինքնէ . արդ՝ ար գրիգոր Նարեկա-  
ցին ինչո՞ւ համար միայն ԱՃ հոգւոց կանուանէ :

Պ. **Վ**Ճ՝ ած է ստեղծօղ ամմէն արարածոց , այսինքն ամ  
հոգւոց , թէ իմացականաց՝ թէ բանականաց՝ թէ զգայակա-  
նաց՝ թէ շնչառորաց՝ և թէ անկականաց . բայց յատկապէս  
երբ կըսվի ԱՃ հոգւոց , իմանալու և նկատմամբ հրեշտակաց  
և մարդկան . և յիրաւի մարմնոց ևս ած է , բայց որովհետեւ  
հոգին պատուական է քան զմարմինն , ուստի պատուական  
մասէն կանուանի ստեղծօղը :

Ուստուական մասն ասացի , նաև՝ հոգւոյն առ ած նմա-  
նութեանը համար . երկրորդ՝ անմահութէ համար . երրորդ՝  
հոգին պարզ ըլլալով՝ առանց նիւթոյ յատկապէս աստուծմէ  
ստեղծեալ ըլլալուն համար . բայց մարմինը՝ պատճառաւ բը-  
նութեան հոգին կը յառաջանայ : \* Աս ևս մեք մեր հասարակ  
խօսակցութէ մշջ՝ երբեմն մարդը հոգի կանուանեմք . ինչպէս  
կըսեմք՝ քանի՞ հոգի կային Պետրոսին առւնը . մի՛ թէ այն  
ըլլօղները միայն հոգի՞ են , մարմին չունին : Վ. յաղէս իմացին  
և Նտրէկացւոյն ԱՃ հոգւոյ՝ ըսելը :

## Հ • ԽԸ

**Պ**ստուծոյ ամենակարօղ զօրութելը սահման չի գրվեր .  
ինչո՞ւ համար թառվմա Ագուինացին կըսէ . || Ած կարէ առնել  
լաւագցն ինչ քան զոր արարեալն է՝ բաց ՚ի յերեց || : Իբր  
թէ ըսել կուղէ , թէ ած ստեղծածներէն զատ առաւել  
լաւ բան կընայ ընել բաց ՚ի երեք բանէն . արդ՝ ինչ պիտի  
ըլլայ այն երեք բանը :

**Պ**իրաւի հշմարխտ է՝ ինչո՞ւս որ ինքն կըվեսցէ . ահա  
այս երեքին առաջինն է քի մարդեղութելը . երկրորդն՝ երան-  
եալ սրբուհի Ածածինը . երրորդն՝ արդար հոգւոց երանութիւն :  
Եթէ կուղես պատճառը իմանալ , այս է . Քրիստոսի մարդե-  
ղութելը է միաւորութիւն մարդկային բնութել ընդ բանին այ :

**Վ**հա որովհետև յած եղերեցաւ այս գործողութիւնը՝ որ է  
ածագործութիւն , անհնար է քան զայն առաւել բան ընել ,  
քանզի առաւել քան զած բան չիկայ . ինչ կայ քան զայն  
առաւել , որ ած և հող միաւորին :

**Ե**րբորդն՝ որ սրբուհի կցան է , որովհետև այ մայր  
եղաւ , ահա և նորին գերազանցութիւն յած եղերեցաւ . ինչ  
կրնայ ըլլալ քան զայս առաւել . ինչո՞ւս կըսէ Բեռնարդոս ,  
|| Այնպիսի մեծ ածագործութիւն , որ ասաղը՝ արեգակը տարաւ ,  
առուն՝ աղբիւրը , վերջապէս ստեղծուած Մարիամը՝ ստեղծօղ  
ած յար բովանդակեց || . յիրաւի ասկէ առաւել բան չըլլար :

**Ե**րբորդն՝ որ արդարոց մշտնջենաւոր երանութիւն է , որ  
է այ ցանկալի տեսութիւն և զմայլելը յեապէս բարին . որով  
մարդոյս անյագ ցանկութիւն , յօժարութիւն , իդձը՝ կը կշտա-  
նաց և բաւական կըսէ . ահա այս աղ եղերեցաւ յած : Ուրեմն  
չշնարիտ է այն վարդապէտին ըսածը , քանզի այս երեքէն  
առելի բան չըլլար :

## Հ • ԽԸ

**Պ**ստուծոյ պարզ էութիւնը ձեւի կամ կերպարանքի մը  
նելքել չի յնար . և ինքն ըսաւ Մովսէսի . || Մի առնիցես զամ  
նմանութիւն՝ որ ինչ յերկինս ՚ի վեր . բ , օքինաց , կ . 15 || :  
Արդ՝ ինչո՞ւ համար քրիստոնեայք տեղունական պատկեր կը  
նկարեն :

**Պ** . **Ե**րդարև պէտք չէ տէլունական պատկեր նկարել հայե  
լու ՚ի պարզ էութիւն այ , բայց մեք մեր նկարած պատկերնե-

բով՝ ոչ էթե այ պարզ է ութիւնը ցուցունել կաշխատիմք ,  
այլ միայն զգալի կերպով մը՝ այ մարդասիրութիւնը միտքերնիս  
բերելու համար . այսպիսի կերպարանքով կը նկարեմք , ինչ-  
պէս որ մեղե երևցած ունի ,

**Վ**հա որդին միածին՝ որ մարդկային կերպ զգեցաւ՝ մար-  
դց կերպարանքով կը նկարեմք . հոգին աբ՝ որ աղաւնւց կեր-  
պով երևեցաւ , մեք ևս աղաւնակերպ կը նկարեմք . և հայրն  
ած՝ որ ին աւուրց ծերի կերպով երևեցաւ դանիել մարդա-  
րէին , մեք ևս ի կերպ կատարեալ հասակի մարդց կը նկարեմք :

**Ա**յ թէ չեմք գիտէր , որ երեք անձինքն մի պարզ է ութիւ-  
նն՝ անձեւ և անտիպ , խոստովանելով միանգամցն՝ թէ երեք  
անձինքն ՚ի վեր են քան զօրինակ , և անդը քան զննանութիւ :

**Ո**չ ապաքէն նախնի հեթանոսք ևս պարզ կը խոստովա-  
նէին ածային է ութիւն . և երբ այ անունովը պատկեր կը նկա-  
րէին՝ խորհրդական ձեւը կը գործածէին , որպէս երկայնամիտ  
ըլլալուն համար՝ ոտքերը բամպակէ կը նկարէին , և բարկութիւ-  
պատժելցն համար՝ ձեռքերը երկաթէ կը նկարէին , այսպէս  
և այլ զգայարանքները :

### Հ ։ ԽԸ

**Վ**ստուածային է ութիւնը ոչ ծնողէ և ոչ ծնվող , ոչ  
բղիող է և ոչ բղիսրվող . և այս խօսքը ընդհանուր կանոն է  
բոլոր ածաբան վարդապետաց մէջ . արդ՝ որդւց այ ծննդեանը  
համար ինչո՞ւ Նիկիական հանգանակին մէջ կըսվի . || ծնեալն  
յայ հօրե՛ միածին , այսինքն յէ ութէ հօր ||

**Պ** . **Ճ** շմարիտ է այդ ըստած կանոնդ , քանզի է ութիւն չի ծը-  
նանիր զէ ութիւն . է ութիւն չի ծնանիր զանձն . անձն չի ծնանիր  
զէ ութիւն , այլ անձն ծնանի զանձն : Իսայաց Նիկիական հան-  
գանակին , այսինքն հաւատամիքին մէջ՝ որ կըսվի , քու ըստած-  
կանոնիդ դէմ չէ . քանզի հայր ած՝ զօրութիւն է ութէն , որ  
յինքեան կայացեալէ՝ ծնանի , և որդւցն միածնի՝ ծննդեամք  
կը հաղորդի է ութիւն հօր . ինչպէս և հոգւցն սրբց հաղորդ-  
կըլլաց հօր է ութիւն՝ բղիսրվովն ՚ի հօրէ . Ալֆելլա . գիրք , առ-  
գւ , բ : || ւրեմն այս խօսքիս մէջ է ութիւն իմացիր եակցութիւն ,  
այսինքն ենթադրութիւն և անձն :

### Հ ։ ԽԸ

**Ո**րդւցն միածնի համար կըսվի մեր Շարակնոցին մէջ ,  
|| ի ծոցց հօր առաքեալ . այս ծոց բառով ի՞նչ պիտի խմանով :

Պ. Ըստ կամ արդանդ՝ որ կըսվե այ համար՝ այլաբանօրէն իմանալու է՝ որով կիմանամք որդւց այ ՚ի հօրէ ծնունդը բնութեամք՝, որ կը զանազանի ստեղծմամբ արտաքսապէս եղօղներէն:

## Հ. Ճ

**Ա.** և ականջք աստուծոյ՝ ինչպէս կըսվե:

Պ. Երբ կըսվե աչք այ, իմացիր իւր ողորմութէն խնամքը, որ ունի երանեալ անձանց վրայ. ինչպէս են անոնք, որոց երանութիւն կուտար քն իւր տւետարանական վարդապէտութէն մէջ. ևս. Է: Ականջք այ՝ որ կըսվե, անոր համար է՝ Երբ կընդունէ արդարոց և ընարելոց ազօթքը, որ լուց կըսեմք. այս պատճառաւ կըսէ դաւիթ. || Աչք ան ՚ի վը արդարոց, և ականջք նորա՝ յաղօթս նոցա ||:

## Հ. ՃԱ

**Ա.** ախանձն գիշաւոր մոլութէց մէկն է. այ նախանձիւ ըսեւ չե վայլէր. ինչու համար Մովսէս այ համար կըսէ. ԱՃ նախանձու. Է, օրինաց. Պ. 24 ||:

Պ. Երաւի նախանձ բառը ըստ որում մոլութիւն՝ այ չե վայլէր. բայց նախանձը երկու կերպիւ կիմացվի, և երկու կերպիւ կըսահմանվի: Կախ՝ կիմացվի ատելութիւ և ցաւ ուրիշ բարեաց վրայ. մոլութիւ ըսված նախանձը այս է, որ ամենին հեռի է աստուծմէ: Երկըորդ՝ նախանձ կամ նախանձիւ կըսվե, երբ բարիին մէջ չար տեմնըվի. ինչպէս քն տաճարին նախանձու կըմաշէր, տեմնալով չար չըկաները այ բարի տանը մէջ, որ յառաջադցյն մարդարէացեր էր Դաւիթ հոգւով սրբով ՚ի գիմաց քի. || Նախանձ տան քո եկեր զիս, և նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վը իմ. առջ. կը. 10 ||:

Որովհետեւ չար չըկաները հօր այ տունը՝ առուտուրի տեղի ըսեր եին. ահա այս կերպիւ նախանձ բառը կըսվե այ վրայ: Վասնվի այսպիսի նախանձը հրց նման բան մի է, որ երկաթին ժանիկը կըմաքը է, և է ածային նախանձ ջերմացեալ՝ ածային պատճոցն վրէժիսնդիր, որ չէր կընար քն այսպիսի նախանձաւոր ցասումը անցոյտ պահէւ: Այսպիսի էր և նախանձ ծառայիցն այ, այսինքն Փենէհեսի. իւսուց. ինք: Եղեացի. Պ., Բագ. Ժթ. 14: Մատաթեաց. ա, և ակ. Է, 24. և այլոց: Երւ Նիկողայոս Նիւրացին այն բանին վրայ, որ յաւետարանին,

շօհ. ը, 17. կըսէ թէ, || Նախանձն՝ որ աստ կիմացվի, է ջեր-  
մեռանդ և բարկացեալսէր անոնց գէմ, որոնք որ սիրյն ներ-  
հակեալ կըլսան || :

Ա, ախանձն այն ատեն աճային և որ նախանձ է, երբ  
սէրն՝ որ և աճային սէր է, և երբ սիրյն ջերմութիւն և բար-  
կութիւն ուղիղ է, և աճային կամաց հաճութեւ յարմար, որ  
միայն ոյ պատուցն համար կը շարժի: Եւ կուռնելիոս կըսէ  
թէ, || Այս նախանձը եղաւ քի արդար բարկութիւն և հոգւցն  
ջերմութիւնը՝ ոյ պատիւը և անդատուութեան փառքը վեր-  
ցունելու համար || :

Դարձեալ կըսէմ թէ, նախանձը հնացեալ ատելութիւն  
մի է սրտի մէջ, և ուրիշն բարեացը համար մաշումն, որ ոչ  
երբէք կըսվի աստուծց զ վրայ:

### Հ ։ ՏԲ

**Ուկղըն և պատճառ, ինչպէս կըսվին աստուծց վրայ:**

Պ. Ախս՝ գիտնալ պէտք է, որ պատճառը երկու կերպ է.  
ներքին և արտաքին. Ա, երքին պատճառն է բնութենական և  
բնական. ինչպէս իւր տեսակաւը ծնունդ յառաջ բերողին՝  
ոյսինքն ծնողին կըսվի ներքին պատճառ ծնելցն: Ա, բարքին  
ուստանառն այն է՝ որ իրմէ պատճառեալէն ինքը զատ է, ինչպէս  
արհեստաւորը իւր արհեստին հնարքով յառաջ բերած գոր-  
ծէն զատ է. ինչպէս ոսկերիչը մտանիին մէջ չըլլալով, և իւր  
անձէն դուրս չի դարսվ ներգործական պատճառ կըսվի մա-  
տանիին, բայց ոչ արտաքին պատճառ. ապա այս այսպէս գիտ-  
նալով որչափ որ կը լսես՝ թէ հայր աճ պատճառ է որդւց  
և հոգւցն սրբց, ներքին և բնութենական պատճառ. իմա-  
ցիք՝ և ոչ թէ արտաքսապէս:

Դարձեալ պատճառ ըստածդ՝ երբ եղական ստեղծուածոց  
վրայ կըսվի, պէտք է որ յառաջնութիւնը իմացվի պատճառին  
վրայ նկատմամբ պատճառեցելցն. իւր թէ պատճառը՝ թէ  
ըստ ժամանակին՝ թէ ըստ պատուցն՝ տուաւելութիւնը կու-  
նենայ յիւրմէ պատճառեալէն, ինչպէս ծաղիկը՝ որ պատճառ  
է պտղցն, ժամանակաւ յառաջ է պտուղէն. բայց ՚ի սուրբ  
երրորդութեւ, երբ հօր ոյ պատճառ կըսվի ծննդեան որդւց  
և բղիման հոգւցն սրբց, ստեղծական պատճառաց պէտք իմա-  
նալու չէ, այլ պատճառն հայր՝ է համանգամնոյն անսկիզեն և  
յաւբենական լնու որդւց և հոգւցն սրբց. քանիզ ուրբան

Հայրն հայր , ընդ նմին և որդին որդի , և ոք հոգին հոգի ։  
Ուստի ասէ Գրիգոր ածաբան . || Եթէ սկիզբն ասես որդւց ,  
անսկիզբն ասեմ շհայր || . որ չիմացվի՞ թէ հայր սկիզբն ասելով  
որդւց՝ ժամանակաւոր կամ ստեղծական սկիզբն է . քանզի  
ըստ ժամանակին՝ անսկզբնաբար սկսեալէ որդի ՚ի հօրէ . որպէս  
եթէ արեգակը յաւիտենական ըլլար , իւր ճառագայթն ալ  
ընդ նմին կըլլար յաւիտենական . այլ հայր ած յաւիտենա-  
կան է , նցնապէս են և որդին և հոգին ոք . ուրեմն համայա-  
ւիտենականք են հայր՝ որդի՝ և սուրբ հոգի :

Վաս այս երկու բառքն՝ սկիզբն և պատճառ՝ մեկնութե-  
կարօս ըլլալով . ուր որ գրվին կամ ըսվին հօր այ վրայ , պէտք  
է որ իմացվին ըստ ներքին սկզբնաւորութեան և պատճառե-  
լուութե . ուրեմն ինչպէս որ ըսինք , սկիզբն կամ պատճառ ըսե-  
լով պէտք չէ գիտնալ նախկնութիւն մը՝ ոչ ժամանակի՝ ոչ  
գերազանցութեան՝ ոչ պատւց :

### Հ . ՏԳ

Հոգւցն սրբոյ շրջելը ՚ի վր ջուրց ինչպէս իմանալու է :

Պ . Ակտէտ այդ հարցմունքը այսպէս կը մեկնէ մեր Շարա-  
կանն , թէ ՚ի վերայ ջուրց շրջելով հոգին սուրբ՝ զարարածու-  
ստեղծանէը . բայց խորհրդական մեկնութիւն մի ևս ըն-  
ծայեմ հրամանոցդ :

Արովչեակ հոգին ոք է աղբիւր գիտութե , այն է՝ որ  
կուսուցանէ մեղի իմաստից և գիտութե սեմէն տեսակը . այն  
է՝ որ անթարգամանէլի ածային խորհուրդքը մեզի կը յայտնէ .  
այն է՝ որ միշտ կուսուցանէ մեղի՝ այն խորհրդոց վրոյ ինչպէս  
պէտք է խօսիլ . քանզի ինքն է միայն քննօղ և հմուտ ածային  
խորին խորհրդոց :

Վ . Հարեւ օրինակ . ստեղծեալ մարդոյս մտաց խորհուրդը  
հետ մէկը չի գիտէր , միայն՝ հոգին՝ որ ՚ի նմա . նցնապէս անըս-  
տեղծին այ խորին խորհուրդը մարդ չի կրնար գիտնալ , եթէ  
ոչ հոգին այ : Վ . նոր համար որդին միածին կըսէր աշակեր-  
տացը , թէ || Յորժամ եկեսցէ հոգին ճշմարտութե , առաջնոր-  
դեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ . յօհ . ԺՂ . 13 || :

Խ . որովհեակ խորին այ անքննելի են ըստ սրբազան ա-  
ռաքելցն Պօղոսի , նցնապէս և անքննելի հոգին ոք կարէ քըն-  
նել և իմանալ , և ուսուցանէլ կամարարաց իւրոց : Վ . Հար-  
տոյն սբոյ շրջելը ՚ի վր ջուրց , իմացվեցաւ՝ թէ ՚ի վր խորին

Խորհրդոցն այ գոլով տարածեր զայնոսիկ ՚ի միտս հաւատաւթելոց՝ ըստ ընդունակութեն իւրաքանչիւրոց :

### Հ ։ Ճ.Դ

**Վ**ատ անգամ սուրբ գրոց մէջ ածային նախասահմանութիւնն լսած եմ . այս նախասահմանութիւնը՝ ինչ պիտի ըլլայ , կուղեմ որ իմանամ:

Պ. **Ձ**նէ որ ածարանօրէն սահման կուղես նախասահմանութեանը , այսպէս կըսէ Ակօտոս . || Նախասահմանութիւն է ընտրութիւնուր առ ՚ի փառս || : **Վ.** յս ընտրութիւն յաւիտենական է , որովհետեւ ածային ձանալմանէն կը յառաջանայ . և ածային ձանաջումը յաւիտենական ըլլալով , և նախասահմանն աւլքն են ՚ի յաւիտենից :

### Հ ։ Ճ.Ե

**Վ**նչէն կը յառաջանայ նախասահմանութիւնը :

Պ. **Ձ**րովհետեւ պատճառ կը խնդրես նախասահմանութիւն . իմացի՞ր որ պատճառ ըսածդ չորս կերպ է . Արարչական , Կիւթական , Տեսական , և Կատարունական :

### Հ ։ Ճ.Զ

**Վ.** յս չորս պատճառուները կուղեմ որ իմացունես մէկիկ մէկիկ :

Պ. **Ձ**րարչական պատճառ նախասահմանութեան է ածայիւթական պատճառ , է այն նախասահմանետլանձն : Ծեսական պատճառ , է եղանակ կամ կարգ նախասահմանութեանն է կատարունական պատճառ , է սուրբ և անքիծ լինելն մերառաջի աստուծոյ :

### Հ ։ Ճ.Է

**Վ**սիր թէ՞ նիւթական պատճառ նախասահմանեալանձն է . անոր ինչէ՞ն նախասահմանեալ գտնըլեցաւ :

Պ. **Ձ**նախատեսեալ արդեանց , այսինքն իւր բարի գործերը չե գործելէն յառաջ , ած ՚ի յաւիտենից նախատես ըլլալով սահմանեց որ փառաց արժանի ըլլայ . ահա քեզ վկայութիւն այս խօսքիս , որ քո ըստ , կամ թէ ըսելու է արդարոց դասուն

դատաստանին օրը . || Եկայք օրհնեալք հօր իմց՝ ժառանգեցէք  
զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի :  
՚ի սկզբանէ աշխարհի ըսելով ՚ի յաւիտենից իմացիր , քանզի  
ժամանակաւոր ծանօթութիւն չի կայ ոյ միտքին մէջ :

Խւ այսպէս ՚ի նախատեսեալ արդեանց սահմանեալ ըլլալը  
յայտնելու համար , ահա նոյն խօսքէն վկայութիւն . || Զի քաղց-  
եայ և ետուք ինձ ուտել . ծարաւեցայ՝ և արբուցիք ինձ .  
օտար էին և ժողովեցիք զիս . ՚ի բանախ էին և եկիք առ իս || :  
Վհա պատճառը , թէ որ պատրաստեալ արքայութիւնը՝ այն  
նախասահմանելոց է ՚ի սկզբանէ աշխարհի , ուրեմն և ասոնց  
բարեգործ ըլլալը՝ է նախատեսեալ ՚ի սկզբանէ աշխարհի :

### Հ . ԾԲ.

Աւրեմն այլազգեաց ձակատագրութիւն (մուղատտէր) ըսա-  
ծին պէս իմանալու չէ նախասահմանութիւնը :

Պ . Եւ քանզի եթէ այնպէս ըլլար նէ , նախասահմանութիւն  
բունութիւն հարկաւորութիւնը բերած կըլլար նախասահմանելոց  
վրայ . և եթէ այսպէս ըլլար , շատ անյարմարութիւն կը հետեւէր  
ասկից . բարի մարդկանց յանիրաւի պատիժ կը տրվէր , և չարե-  
րուն վարձ կը տրվէր . անիբաւառութիւն կըլլար բարիներուն բարի  
հատուցանելու , և չարերուն չար . և վերջապէս մեր անձնիշխա-  
նութիւն կը խափանէր , թէ որ բունութիւն ըլլար մեր գործքերը :

### Հ . ԾՅ.

Որովհետեւ ըսիր՝ թէ նախասահմանելոց նախասահման-  
եալ ըլլալը՝ հարկ չի բերէր իրենց վրայ . ուրեմն ըստ որում  
մարդ են՝ հնարի է որ մեղաց մէջ իյնան :

Պ . Ե՞ս հնար է , բայց որովհետեւ անոնց ինչ վախճանալ  
կատարինին ած գիտէ ՚ի յաւիտենից , թէ և իյնան , կրնան  
ելլալ , և նոյն նախասահմանութիւն ներբեէն ելած չեն ըլլար :  
Վհա քեզի երկու նախասահմանեալ նոր օրինակ . մէկը ՚ի հնոց՝  
որ է Դաւիթ . որ յիրաւի նախասահմանեալ էր ՚ի փառաւ , բայց  
ինկաւ , շնութիւն գործելով Ռւրիայ Քետացիին կնկանը  
Բերսաբէին հետ , և սպանամնելով անոր այրը Ռւրիան : Վհա  
երկու գլխաւորագցն մեղք , շնութիւն և մարդասպանութիւն .  
տես , ըստ գլխաւորագցն մեղք , շնութիւն և ողորմնութիւնը  
զլջումի կանչեցին Նաթան մարդարէին միջնորդութիւննէ ,

Քնիքն ալ տեղի տալով այս հրաւիրանքին՝ ըստաւ, Մեղայ առն . և  
Նախան ալ ըստաւ, || Տէր անցցց զքե զմեղս քո, և մի՛ մեռցիս .  
Է , թագ . ժը . 13 : || Վ. Հա նախասահմանեալն անկաւ , բայց  
ածային շնորհացը տեղի տալով յարեաւ :

Եշտ միւս օրինակ ևս ՚ի նորոցս՝ որ էր սրբազն առաք-  
եալն Գետրոս , որ նախասահմանեալ էր ՚ի փառս , բայց երեք  
անգամ ուրանալով զքն՝ սարսափելի մեղաց մէջ ինկաւ . բայց  
երբ ասոր ալ Նախանայ պէս խըրկըլած հրաւէր մը եղաւ աս-  
տուժմէ՝ առ ՚ի ապաշխարութի՛ , այնչափ զղջաց և ապաշխա-  
րեց , մինչեւ ինքն ալ իւր վարդապետին նման՝ անոր սիրոցն  
համար խաչվեցաւ : Վ. Հա նախասահմանելցն անկումն , և  
շնորհօք յառնելն :

Ժէ որ ըսես աստուժմէ եղած հրաւէրը՝ Գետրոսի ի՞նչ  
էր , տես յաւետարանին զուկառու՝ ի՞լ , 61 , Դարձաւ առ , և  
հայեցաւ ՚ի պետրոս : Վ. յս հայեցողութե՛ շնորհացը տեղի տա-  
լով սրբազն առաքեալը , նոյն աւետարանիչը կը վկայէ ՚ի նոյն  
տեղին , թէ յետ հայեցմանն յի ՚ի Գետրոս , Գետրոս ելեաւ  
արտաքս , ելաց դառնապէս : Ուրեմն նախասահմանեալքն ըստ  
որում անձնիշխան են , և ըստ որում մարդ են , կրնան իշնաւ  
և դարձեաւ շնորհացն այ տեղի տալով յառնել :

## Հ . Կ

Պախես թէ հարկ կըլլայ ըսել , թէ ինչո՞ւ ած այս ինչ  
մարդ նախասահմանեց , և այս ինչ մարդ չի նախասահմանեց :

Պ . Վ. յս հարցմանը պատասխանի չի կրնար տալ մահկանացու-  
մարդ . քանզի որքան ՚ի մարմնի եմք՝ անձառելի է մեզ , և ան-  
ձառելի լինիլն , ոչ թէ ես ինձէն կըսեմ , այլ և անօթն ընտ-  
րութեան սրբազն առաքեալն Պօղոս կը վկայէ զարմանալով ,  
յասելն՝ || Ո՛վ իսոքք մեծութե՛ և իմաստութեան՝ և գիտութե՛  
աստուժց , որց անզննելի են դատաստանք և անքննելի ճա-  
նապարհք նորին || :

## Հ . ԿԱ

Պ. ախասահմանութե՛ որպիսութի՛ր ըստ բաւտկանին իմա-  
ցանք . եթէ կարելի է , համառօտակի մը նախաշարժութի՛ն ալ  
հասկըցու , որ իմանամք՝ թէ ի՞նչէ , կամ ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . Վ. յդ նախաշարժութի՛ր ածային տեռութե՛ գործն է ,  
ոչ իրականապէս և ՚ի ներքուստ և ներդորժաբար կը շարժէ ած-

մարդուն կամքը առ ՚ի առնել . քանզի իրականապէս շարժել զկամն՝ միայն ոյ է . քանզի գործողաց ամեն ներդործական գորութիւն՝ է ՚ի ձեռին ոյ , զի նա է իշխեցօղ կամաց և արարիչ և պահպանիչ և կառավար նորա :

#### Հ . ԿԲ

Որովհետեւ աստուծմէ է ըսիր այդ նախաշարժութիւն , որով կը շարժէ մարդուս կամքը առ ՚ի առնել , ապա մարդոյն կամքը անձնիշխանութենէն կելայ , և բռնութիւն կը գործէ՝ ինչ որ պիտի գործէ նէ :

Պ . Ենպէս չէ , անձնիշխանութիւն չելար . որովհետեւ այն կամքին ստեղծողը ինքն է , աղատ կը մնայ ևս կամքը և կամեցովը այն գործունեայ շարժութիւն : Ահա ոքն Օդոստինու այս խօսքիս վրայ խօսելով , կը մէ՝ թէ ած զըսր կամն փոխարկէ ՚ի բարի , կամ մարդոյն սիրալ ՚ի բարին յօժարել կուտայ . յայտնի է որ այդ բարի գործը՝ որ ընկել կուտայ մարդոյն , արդիւնաւոր գործ է , որ անոր փոխարէն վարձ պիտի պարգևէ . թէ որ գործը՝ գործողին աղատ կամքով և անձնիշխանութիւնը ըըլլար՝ բռնութիւն ըլլար , պէտք չէր որ վարձ ունենոր՝ կամ արդիւնաւոր ըլլար . և որովհետեւ արդիւնաւոր է վարձուց արժանաւոր , ապա գործողը բռնութեամբ գործած չըլլար , այլ անձնիշխանութեամբ :

#### Հ . ԿԴ

Ձէ որ կարելի է , այս նախաշարժութիւն իրականապէս աստուծմէ ըլլալուն վրայ , ՚ի գրոց վկայութիւն բեր , որ հաստատութեամբ ընդունիմ :

Պ . Եւ թէ միայն յածաշունչ գրոց , այլ և ՚ի սրբոց հարց վկայութիւն բերեմ , թէ և երկարութիւն կը լայ . և նախ յածաշունչ գրոց : Դրեալ ՚ի գիրս եսթերայ . || Տէր թագաւոր ամենակալ , զի քում հրամանիդ սպասէ ամոք . ոչ ոք է՝ որ ընդ գէմ կայ կամաց քոց . եսթեր . ժդ . 9 || : Դարձեալ . || Մի թէ վերանայցէ՞ միայտատ առանց միայտահարի , կամ բարձրանայցէ՞ սղոց առանց ուրուք ձգելոյ . նոյնպէս թէ զգաւազան որ , կամ զիմայտ առնուցու . եաայ . Ժ . 15 : || Ուրագէս սահմանք ջրոց , նցնպէս սիրո թագաւորի ՚ի ձեռս ոյ , ընդ որ կողմ կամի՝ բարձրացանէ զնա , տառի . ին , 1 || : Եթէ սիրտ թագաւորի ՚ի

ձեռին այ , ուրեմն և սիրտ ամ մարդկան : || Փոփոխէ զսիրտ  
իշխանաց երկրի , մոլորեցցց զնոսա ՚ի ձանապարհի , զոր ՚չ  
դիտէին . յօբ . ժը . 24 || : Քետ օճանելցն թագաւոր ՚ի Սա-  
մուելէ , այսպէս ասէ ՚ը գիրն վաստուղայ . || Ըլջեաց նմա-  
ած զսիրտ այլ . առաջ . ժը . 9 || : Եւ Երեմիա ՚ի գիմաց ժողո-  
վրդեանն ասէ առ ած . || Դարձն զիս , և դարձայց՝ զի գու ես  
ար ած իմ . լա , 18 || : Եւ գլուխ ամ վկայութեց որ ՚ի սուրբ  
գրոց , և այն՝ զոր ասէ յովհաննէս . || Ամենայն ինչ նովաւ-  
եղեւ , և առանց նորա եղեւ և ոչինչ , որ ինչ եղեւն . յակ . առ . 3 || :

Կամք ՚ը հարց վկայութեց , որ այդ նախաշարժութեան  
ստուգութել կը վկայէն : Առւրբն Օգոստինս կըսէ . || Ած ՚ի  
կամաց մարդկան առնէ , զոր կամի և յորժամկամի : Առւռնե-  
լիսս այսպէս կըսէ . || Հարժի յայ ամ ինչ իրը յառաջայնց  
շարժողէ , որ թէ ՚չ շարժեսցէ յառաջադոյն՝ հարկ է ոչինչ  
իմիք շարժիլ բնաւ ՚ի յէս || : Վնդրէաս վեգեան այսպէս  
կըսէ . || Ածային զօրութե անձանօթ մերձեցումն , և կամաց  
մերոց սքանչելի շրջումն և հակումն || : Առւրբն Դիմոնեսիոս  
Արխապատացին ասէ . || Ակիզըն է մի միայն՝ յորմէ է գու . և ամ  
զօրութի , ամ ունակութի , ամ ներգործութի և շարժումն :  
Առւրբն Ամերոսիոս ասէ . || Ած է ամենայնի կենագործող  
շարժիչ և կառավար , որպէս հոգին ՚ի մարմնի բովանդակ ամ  
ուրեք աղջէ , կենագործեալ զնա , շարժեալ և կառավարեալ || :  
Առւրբն Բարսեղ ասէ . || Ած տէր է բնութե , և այլաղջ քան  
զիսոստացեալն նորա՝ անհնար է իրին դիսկիլ , զի ամենայնի է  
կարօղ , և ըստ կամ իւր փոփոխէ զամ || : Եւ Ոսկեբերանն  
ասէ . || Ամենայն ինչ յանաշխատ ձեռանէն այ հաստեալ և  
շարժեալ՝ տնօրինի ՚ի մեր փրկութիւն || : Ձմող ուրիշ վկայու-  
թիւնները՝ որ սուրբ գրոց մշջ շատ են :

## Հ . ԿԴ.

Հաւանեցայ բոլոր վկայութեցդ , որ այս իրական նախա-  
շարժութիլ աստուծմէ է , և ամ ինչ նովաւ կըլայ , և նա է  
շարժող զամ գործող ՚ի գործել . ապա ինչո՞ւ հսմար միշտ չի  
շարժէլ մեղի ՚ի բարի գործո՝ ինքն բարի ըլլալով , մանաւանդ-  
շատ անգամ չար գործել կուտայ :

Պ . Ճշմարիտ է՝ որ ած կարօղ է բացարձակապէս ամմէն չա-  
րիքը խափանէլ , և ամենուն միայն բարի գործել տալ իւր  
ամենակարօղ զօրութել , որ մարդ չի կրնար ուրանալ . բայց

ողէ տք չե աճային իմաստութել՝ որ ամենն չարկը խափանէ ։ այլ շատին ալ թոյլ կուտայ, որոնցմէ հասարակաց օդուտ կը յառաջանայ. քանզի թէ որ ամենն չարկի խափանին, շատ բարեք կը պակիսն աշխարհէս։ Ուեւ որ հարածանք և չարչարանք չուլոր հեթանոսներէն, նահատակաց համբերութե վարձը՝ և մարտիրոսական պսակը չէր ըլլար. անոր համար երեխն աճ թոյլ կուտայ չարեաց ըլլալ, որ տիեզերաց գեղեցկութիւնը փոյլե. քանզի պսակերին մէջի սոսուերէն կը յառաջանայ պատկերին գեղեցկութելը. այս մաօք կը դրէ սուրբն Օգոստինոս, թէ՛ ॥ Ծանեաւ նկարին ուր գիցէ զսեորակն գցն՝ զի վայելու և իցէ նկարն. և աճ ոչ գիտիցէ՝ ուր դիցէ զմեղաւորն, զի գեղեցիկ իցեն արարածք ॥:

Աշ որովհեաւ ամենառարի է աճ, չարերէն ևս մեծամեծ բարիք կը հանէ, ինչպէս որ ուրիշ տեղալ խօսեցանք. և նոյն Օդուտինոս վարդապետը կը վկայէ այսպէս ըսելով. Ո՛չ թոյլ տայր աճ չարի ինիք մինիւ ՚ի գործս իւր, եթէ չէր այնպէս ամենազօր և բարի՝ մինչև ՚ի չարեաց առնել բարիս։ ՚Ի արձեալ շատերը կան, որ մեղանչական են և շատ պակասութիւններ ունին, պէտք է որ աճ այնպէս աները այնպէս շարժել, որ թոյլ տայր շատ անդամ անկից չարութի յառաջանալ. թէպէս ինիքն ամեննեին չի մերձենար այն չարին՝ ըստ որում չար։

Վ. յս տեղ փոքր ինչ գժուարութի պիտի երևայ, բայց դիւրին է այն ևս հասկըցունել, ՞ սել կը կամիս, թէ ինչպէս կը լայ, որ ասառուածային շարժութիւնը կը տարածի այն չար գործողութեանց վկայ։

Վ. յային շարժութե տարածվելը այն գործոց վրայ՝ ոչ ըստ որում չար կը տարածվի, այլ միայն ըստ որում գործ։ Վ. յա քեզ գեղեցիկ օրինակ մի. ամենն անդամոց առաջին շարժողը յայտնի է՝ որ մարդոց հոգին է, որ է պարզ էութի մի. բայց ամենն անդամներն ալ մի և նոյն կերպով չեն ընդունէր նորին շարժման զօրութիւնը, այլ ամենն մէկը իրեն պէտք ըլլալուն չափ, ոտքը՝ քայլելու չափ, ձեռքը՝ գործելու չափ, և այլն. թէպէտ շարժող հոգին միակերպ զօրութի ամենն ալ շարժեց՝ և ամեննուն ալ շարժող կը լին։ Ուեւ որ այս անդամոց մէկը նեղ ըլլայ, որպէս եթէ ոտքին մէկը կաղ ըլլայ, յիբաւի միւս ողջ ոտքին նման կը շարժի հոգւոյն մի և նոյն զօրութեամբը, բայց ողջ ոտքին պէս չի կը նար քալել։

Վ. յդ՝ ըսել կուղեմ թէ, հոգին տարածեց իւր զօրութիւնը այն կաղ ոտքին՝ որ շարժի, և ոչ ծուռ քայլէ. քանզի

Ֆռութիլ կամ Ֆռուռ քսյլելը իւր կարութենէն է , և ոչ թէ հոգւցն շարժիչ զօրութէն : Ամանապէս և այ շարժութիւնը՝ ինչպէս որ ըսի , կըտարածի և առ չար գործն , բայց ոչ ըստ որում չար՝ այլ ըստ որում գործ . ինչպէս հոգին պատճառ է շարժման կաղ ոտքին , բայց կաղ գնալը այն շարժմանէն չէ՝ այլ կաղութենէն :

## Հ . ԱԵ

Պ ի՞նչ է հրեշտակն :

Պ . Վրեշտակը իմացական գցացութիւն մի է՝ մշտաշարժ , կամօք անձնիշխան , անմարմին , այ սպասաւոր , ընկալեալ զանմահութիւն ըստ շնորհաց և ոչ ըստ բնութեան :

Վ . Ի՞մացական գցացութիւն ըսվեցաւ , որ զանազանի բանական հոգիէն . քանզի բանական հոգին պատճառաւէն պատճառեցեալը կիմանայ . բայց իմացականը , այսինքն հրեշտակը պատճառոր և պատճառաւեցեալը միապէս գիտէ :

Վ . Մշտաշարժ ըսվեցաւ՝ վասն շարժման սիրոյն , քանզի հրեշտակները քան զամ ստեղծուածս մօտ են՝ եռութիւն բարեցն այ , միշտ շարժմամբ սիրոյն սպասաւորէն հրամանի նը :

Կամօք անձնիշխան ըսվեցաւ . հրեշտակին անձնիշխանութիւն՝ մարդցս անձնիշխանութիւն պէս չէ երբեմն առ բարին և երբեմն առ չարն , այլ այսպէս իմանալ պէտք է . զի միանգամ բարի հրեշտակը՝ անձնիշխանութեամբ բարին ընտրեց , և նցյն ընտրութիւն վրայ կը մնայ միշտ՝ և չի փոփոխիր առ չարն . նցյնպէս են և չար հրեշտակները :

Վ . Ինմարմին ըսվեցաւ . քանզի պարզ էութիւն է ըստ ինքեան կոյացեալ , և ոչ թէ բանական հոգւցն պէս մարմնոյ վիճակեալ :

Վ . Մտուծց սպասաւոր ըսվեցաւ . քանզի իւրաքանչիւր դասք միշտ ածային հրամանաց կամակատար պաշտօնեայ են :

Վ . Նկալեալ զանմահութիւն ըստ շնորհաց և ոչ ըստ բնութիւն ըսվեցաւ . թէ պէտ անմահ է հրեշտակական բնութիւն , բայց այն անմահութիւն բնականաբար ՚ի բնութիւն չունի , ինչպէս կըսակը բնականաբար չերմ է . այլ ՚ի շնորհացն այ ունին , որ թէ չըլլոր նցյն շնորհաց զօրութիւն , ամմէնն ալ յոշինչ կը դառնային :

Հ . ԿԶ

**Հրեշտակները ինչպէս կը ձանաշեն :**

Պ . Հրեշտակները իրենց իրենց գոյացութերը չեն ձանչնար . քանզի իրենց գոյացութիւն պատճառ և ախող կամ գաղտփար չեն իրաց , ինչպէս որ ածային էութիւն է . այլ ածային տեսակներով և բնական իրաց գաղտփարներով և կամ գոյաւոր եղածներով կը ձանչնան . ինչպէս մեր մտացը մէջ բնաւորական եղած է՝ առաջին սկզբանց ունակութիւնը : Ի սկզբ գոյաւոր եղածներով . քանզի հրեշտակները ներդործաբար գոյացեալները գիտեն , և ոչ կարելիները , որ տակաւեն եղած չեն , այլ կարելի է ըլլալին :

Հ . ԿԵ

**Հրեշտակները կրնա՞ն բնապէս ապագայ ըլլալիքները գիտնալ :**

Պ . Ապագայ ըստծոյ երկու կերպով կիմացվի . մէկը հարկեւ ապագայ կըսվի , քանզի իրեն պատճառներուն մէջ վակեալ է . ինչպէս ըսեմք թէ՝ եկած ասրի որովհետեւ այս ինչ մոլորակը այս ինչ շրջանին մէջ պիտի պատահի , վասն որոյ հարկաւ կամ անձրև պիտի գոյ , կամ չորութիւն պիտի ըլլայ . այսպիսի ապագամները հրեշտակները գիտեն : Եւ միւսը ապատ ապագայ կըսվի , որ այսպիսի ապագայն հրեշտակները չեն գիտեր , այլ իբր կարծեօք . քանզի ապատ ապագամները հարկաւորաբար հազորդութիւն չունին երկրորդ պատճառուց հետ , այլ ոչ ապատ վըձուցն և մարդկացին կամաց ընարութեանը կապված են . ուստի այսպիսի արդագաներուն նախագիտութիւն ոյ յատուկ է . այս պատճառուաւ ած կըսէ կուռքերուն Եսայի մարդարէին բերնով . || Պատմեցէք մեղ , որ ինչ ՚ի վասնանին լինիցի՞ և գիտացուք թէ ած իցէք . գլ , խա || : Ծես յածաբանութիւն շարերթի 92 երես : Վարդ ապատ ապագայ ըստծո օրինակաւ մը ևս իմացունեմ :

Ի սեմք թէ եկած տորի յանկարծ աղքատ մը պիտի հաւստանայ շատ ինչք (մալ) գանալով ձամբորդութիւն ըրած տեղը . այդ ինչքը յիրաւի այն աղքատը պիտի գտնայ , թէ որ ածկամի , և ինքն ալ այն ձամբորդութիւնը ընէ նէ , ապա թէ ոչ չի գտնար և չի հարստանար . արդ՝ ո՞վ գիտէ՝ ած պիտի կամենայ , թէ չի պիտի կամենայ . աղքատը ոյն ձամբորդութիւն

ընել կը կամենաց, թէ չի կամենար, քանզի միայն ոյ կամբովը  
չըլլար, այլ աղքատն ալ պիտի կամք ընէ: Ուէ որ այս խօսք  
ծանր երևաւ քեզ, ահա վկայութիւն կամքն ոյ . . . Եթէ  
զկամն մարդոյն հաղորդ իւր ոչ ունիցի, ոչինչ կարէ ներ-  
գործել յարժանաւորացն . մէին . իտի:

Վ. Հա աղատ ապագաները այսպէս են, որոնք հրեշտակնե-  
րը չեն ձանաչէր և չեն գիտէր . ուստի նենդաւոր կախարդաց  
թէ գիրքերուն և թէ բերնին խօսքին չելու չէ . ըսածնին  
ըլլայ ալնէ՝ պատահմանք է . քանզի լուսեղէն հրեշտակն չի  
գիտցածը՝ սպանան հիշ չի գիտէր:

Հ. ԿԲ.

Հրեշտակները մարդոցս սրտին մշջի խորհուրդը գիտէ՞ն:  
Պ. Եթէ ած՝ որ խորհրդոց քննիչն է, չի յայտնէ, ստու-  
դապէս չեն կրնար գիտնալ . կամ այն մարդը իւր սրտին խոր-  
հուրդը չի յայտնէ նէ, հրեշտակները չեն կրնար գիտնալ:  
Վ. Հա վկայութիւն քեզ . || Դու միայն գիտես զսիրսս որդ-  
ոց մարդկան . գ, , թագ . ը . 39 ||:

Հ. ԿԲ.

Հրեշտակները մարդուն սրտին խորհուրդը ինչո՞ւ չեն  
գիտէր:  
Պ. Եմ՝ ոյ յառաջատեսութել կը յանձնեմք, որ սրտից  
մշջի ծածուկ խորհուրդները իւր քննութեանը և դատաս-  
տանին ձգեց:

Հ. Հ

Հրեշտակաց խօսակցութը՝ մէկ զմէկու հետ ինչ կերպ է:  
Պ. Երբ հրեշտակ մը կամք կընէ՝ որ իւր սրտին խորհուրդը  
ուրիշ հրեշտակ մը խմանայ, այն ատեն իւր միտքը կը շակէ:  
գէպի այն միւս հրեշտակին, և այն ալ կիմանայ անոր սրտին  
խորհուրդը. ահա այս կերպովս է հրեշտակաց խօսակցութիւնը  
մէկ զմէկու հետ: Վսոր պէս մէնք ալ որ աղօթքի կը կայնիմք:  
այս ձեռովս ոյ և հրեշտակաց հետ կը խօսիմք:

Հ • ՀԱ

**Հրեշտակները ինչպէս կուտեն :**

Պ. Հրեշտակաց ուտելը՝ տեսակացուցիչ հոգիեն չէ, այլ  
իրենց միաւորեալ օդեղեն մարմինեն՝ որ իրենք կառնեն :  
Վ. Հրեշտեն կերակուրը իրենց մարմինին մէջ, և վաղմա-  
զակի օդի կը փոխարկեն . և ասպա արեգակը՝ երկրային խոնա-  
ռութիւնը կը դարձունէ , և գոլորշեաց նման կայրէ և կը  
ցրուէ . այսպէս կըսէ կուտելիոս :

Հ • ՀԲ

**Հրեշտակաց գոյացական խմասառութիւն՝ արդեօք օր ըստ  
օրէ կաւելանաց :**

Պ. Խ. քանզի գիտութիւն պարգև մի է երանեալ հոգւոց,  
թէ որ նոր ՚ի նորոց օր ըստ օրէ առաւելանային այն գիտութէ,  
կատարելապէս երանեալ չէին ըլլար . քանզի օր ըստ օրէ յա-  
ռաջ գնալը՝ ճանապարհորդին կը լլայ , որ տակաւին յուսացած-  
տեղը հասած չէ : Իսայց հրեշտակները այս կերպը չեն , այլ  
կատարելապէս արժանացեալ են իրենց ցանկացեալ երանութիւն,  
անոր համար օր ըստ օրէ աճելութիւն չունին : Ինչպէս ըսեմք  
թէ կրակը խոր ջերմութեան աստիճանը հասնելու ըլլայ , չի  
կընար այլ ևս ատքնալ , սակայն որքան աւելի նիւթ ունենաց  
այրման , այնքան սուաւել կը տարածի :

Վ. յինպէս և հրեշտակները՝ իրենց գոյացական գիտութիւն  
չեն կրնար աճիլ յինքեանս , եթէ նչ պատահմամբ նորագուն  
լուսաւորութեց , որ աճ կը յայտնէ իրենց ապագայ իրողու-  
թեանց վերաբերեալ կամ գերբնական խորհրդոց վրայով բան  
մը , որ իրենց բնութե բնական զօրութիւնը չեն կրնար իմանալ .  
քանզի շնորհաց խորհուրդը՝ միայն այ կամացը կապված է ,  
և հրեշտակներէն չի գիտցըլիք բնական ճանաչմամբ՝ ՚ի բանն այ :

Հ • ՀԳ

**Արդեօք հրեշտակները տեղեամի եին քի մարդեղութիւնը :**

Պ. Հ. յապէս պատասխան կուտայ աըն Դիոնէսիոս Արիստա-  
քացին . || Տեսանեմք՝ զի և աճային խորհրդոցն յի մարդե-  
ղութեանն՝ նախ հրեշտակք եղեն խորհրդագումամբ , և ասպա

՚ի ձեռն նց ՚ի մեղ էանց նց գիտութեն հանձար || : Վ. յսպէս  
ըսելով յայտնի կը լայ որ տեղեակ էին :

## Հ . ՀԴ

**Ո.** որ տեղեակ էին , լնչու համար քի համբարձման  
ժամանակը՝ անդիտաբար կը հարցընէին՝ || իսկ այս ովկէ որ դիմ-  
եալ գայ յԵղօմայ , կարմրութի ձորձոց իւրոց ՚ի բոսորայ || :

Պ. **Ո.** էպէտ այդ խօսքիդ վրայ կերպ կերպ խորհրդական  
մեկնութիւններ կուտան սրբազն մեկնիչք . բայց մեք հարց-  
մունքիդ կատարեալ պատասխանը տալ նայիմք :

Վ. րիստոսի մարդեղութիւնը ած նախասահմանեալէր ՚ի  
յատիտենից , և ժամանակ ժամանակ հրեշտակաց միջնորդութք  
վորագուրաւ մը կը ցուցունէր մարդարէններուն մտացը . բայց  
քի մարդեղութիւնը՝ ամմէն հանդամանքներով , կամ թէ քի  
գերբնական գործքերուն պատճառը ինչ ըլլալը չէին գի-  
տէր . վ՛ս որոց քի մարմնանալն եաբը՝ եկեղեցւոց գերբնական  
խորհուրդներէն շատ միտք յայտնեցան հրեշտակաց , և հրեշ-  
տակներով յայտնեցաւ գլխաւորացն եկեղեցւոց :

Վ. հա քեզ օրինակ . ԱԾ ըսաւ ադամայ և ևայի համար ,  
թէ || Եղեցին երկոքեան ՚ի մարմին մի || , և քն մեկնեց այդ  
խօսքը՝ այսպէս ըսելով . || Արդ՝ զոր ած զուգեաց՝ մարդ մի/  
մեկնեցէ || : Վ. յս անբաժանելիութիլ՝ ըստ որում օրինակ քի  
միտաւորութէր ոք եկեղեցւոց հետ , հրեշտակաց հիշ մեկը չէր  
գիտէր : Խւ քն յերկինս կը համբառնայր , որ լուսաւորութի  
տոց հրեշտակաց , ՚ի ձեռն նոյցա ուսոցյ և առաքելոց . քանզի  
հրեշտակները առաքելոց ըսին՝ թէ || Այս յա՞ որ վերացաւ ՚ի  
ձենջ , սցնակէս եկեցէ , զոր օրինակ տեսիք զգա երթաւ յեր-  
կինս || : Վ. հա եկեղեցւոց գլուխէն՝ ոյսինքն քնէ սորվեցան  
հրեշտակները բազմապատիկ խմասութի : Ուրեմն ըստ ածա-  
բանից՝ գիտէին հրեշտակները քի մարդեղութիւնը , այլ ոչ  
ամմէն հանդամանքներով ըստ բերեալ վկայութեղ , թէ՝ || իսկ  
այս ովկէ՝ որ գիմեալ գայ յԵղօմայ || :

## Հ . ՀԵ

**Հ.** րեշտակաց երդաբանութիւնը արդեօք ինչէ , կամ  
ինչ ասմունիք կը սեն :

Պ. **Ո.** ուրբը Կերսէս չնորհալին ինն դասուցն ալ յատուկ  
յատուկ օրհնութիւն կը ստհմանէ այսպէս :

Վուաջին դասք Ամոռոց կըսեն . || Ամոռ քո ած յաւիտեանս յաւիտենից . սաղնս . իդ . 7 || :

Երկրորդ դասք Քերովթէից կըսեն . || Օրհնեալեն փառք տեառն ՚ի տեղւոջ իւրում . Եղէիտ . դ . 12 || :

Երրորդ դասք Սերութեանց կըսեն . || Սը ոք ոք տէր զօրութեց , լի է ամ երկիր փառօք նորա . Էսայի . դ . 5 || :

Չորրորդ դասք Տէրութեանց կըսեն . || Աբրայութիք քո՞ աբրայութիւն յաւիտենից , և տէրութիւն քո յազգէ մինչև յազգ . սաղ . ձմդ . 13 || :

Հինգերորդ դասք Զօրութեց կըսեն . || Տէր հզօր զօրութիք իւրով տէր կարօղ ՚ի պատերազմ . սաղնս . իդ . 3 || :

Ու եցերորդ դասք Խշանութեանց կըսեն . || Տացին քեզ հեթանոսք ՚ի ժաւանդութիւն և Խշանութիւն քեզ ընդ ամ ծագս երկրէ . սաղնս . դ . 7 || :

Եսօթներորդ դասք Պետութեց կըսեն . || Պու ես քահանայապետ յաւիտենից՝ և որ ընդ ամմէ քումմէ . սաղնս . ձլժ . 4 || :

Ութերորդ դասք Հրեշտակապետաց կըսեն . || Ողորմմա՞ղու սաերծեր , մի' կորուսաներ . զգործս ձեռաց քոց մի' անտես առներ . յօն . ձդ . 15 . և սաղնս . ձլէ . 8 || :

Խններորդ դասք Հրեշտակաց կըսեն , որք և ասացին ՚ի ծննդեան տն . || Փասք ՚ի բարձունս ոյ , և յերկիր խաղաղութիւն՝ ՚ի մարդիկ հաճութիւն . զահ . դ . 14 || :

Վ.թ՝ սյժմ ըսել կըկամիս թէ , արդեօք յատուկ է ամմէն մէկ դասուն օրհնաբանութե ասմունքը : Եւ թէ արդեօք միշտ սյդ օրհնութիւնները կըսեն , թէ ուրիշ բան :

Վուաջին հարցմանդ սյսպէս կըպատասխանեմ՝ Շնորհալէն առնելով , թէպէտ սյս երգերը յատուկ է ամմէն մէկ դասուց , բայց փոխանցաբար ամմէնն ալ կերգեն . քանզի թէ որ երեքսրբեան փառաբանութիւն միայն Սերովթէից յատկացեալ ըլլար՝ ինչպէս որ ըսվեցաւ , և իրենք ալ միշտ ոյ աթուցն քովն են՝ և տեղ չեն խրկըվը . Եսայի մարդարէն ինչպէս կը լսէր այդ փառաբանութիւն ուրիշ Հրեշտակներէ . ապա վերի ըսած փառաբանութիւններնիս յատուկ է իւրաքանչիւր դասուց , բայց փոխանցաբար ամմէնն ալ կերգեն :

ՈՒւս հարցմանդ սյսպէս կըպատասխանեմ՝ ննջեցի Եսայեցէկիէլք , դ . 12 , մեկնութէն սորվելով , որ ըըլլայ՝ թէ մէկը տգիտաբար կարծէ , թէ ամմէն մէկ դասուն օրհնաբանութիւն միշտ նցյն է . և այսպէս մօտ օրինակ մը կուտայ՝ ըսելով . Երբ ուրախութէ ինձքի մը մէջ , մէկ կտոր քանի մը . քնա-

բահար գտնըլի , յայսմի է՝ որ միշտ մէկ եղանակաւ չեն երգեր . ապա չըեշտակները՝ որ առաւել գերագց են քան զմարդիկ , միշտ մէկ կերպ օրհներդութիւն արդեօք ունենան : Քանզի չըեշտակները՝ որքան բարձր են քան զմեղ տեղեաւ , այնքան և գերազանց են իմաստութե՛ք . և որքան առաւել մօտ են քան զմեղ աճային լուսոյն , այնքան առաւել քան զմեղ կը սիրեն՝ կըպաշտեն՝ կըպատուեն՝ և բազմատեսակ օրհնութեամբ կըգովեն և կըփառաւորեն :

Վ. յդ՝ թէ որ ըսես , հապա ինչո՞ւ Յովհաննէս աւետարանիչ յայտնութե՞ն մէջ կըսէ թէ՝ || Չոքք կենդանիին ՚ի տուել և ՚ի գիշերի ոչ հանգչէին ասելոյ , ոք՝ ոք՝ ոք՝ առ ամենակաշ որ էն , և որ ես , և որ գալոց ես || :

Վ. յդ չորս կենդանեաց օրհնութիվ միայն այդ էր , և միշտ այդ կըսէին . և պէտք էր Աւրովքէից պէս ըսել , || Ա՛ք , ոք , ոք զօրութեց , լի է ամ երկիր փառօք նը || : || Երեմն ըստ նախասացեալ վարդապետին , և մեք կըսեմք թէ՝ Եսոյի մարդարէն ըստ պիտոյից ժամանակին այնքան լսեց , և իմացաւ , քանզի հոգին սուրբք այնքան իմացոյ :

Եւ Յովհաննէս աւետարանիչ՝ որովհետեւ տուածին գտնատենէն ետքը՝ երկրորդ գալուստան ալ նկատելով՝ կըտեմնար նոյն տեսիլը , այն չորս կենդանիներէն աւելեօք իմացաւ . ապա իմանալ արժան է , թէ իւրաքանչիւր ժամանակ հարկ եղածին չափի չափի երգաբանութեան ասմունք երևեցաւ , և ոչ եթէ միապէս միշտ մէկ բան մը կըսէն :

Ա. Ե. Բ. Զ. Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս. Ի. Ն.



# ՔՆԵԱԹԹԻՒՅ ԽՆԳԲԱՑ

## ՄԵՍՆ : Բ

ԵԿԵԳ, ԵՅՐԱԿԱ ԻՐԱԳ, ԱԴԹԵՐԵՑ  
ԱՐԵՅ



### ՀԱՐՑՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ

¶ ուկաս առետարանիչ՝ Յովաննէս Մկրտչի թլփա-  
տութեանը համար երբ կըգրէ, կըսէ թէ՝ Եւ եղել յաւուրն  
ութլփատէ՝ Եկին թլփատէլ զմանուկն, և կոչելին զնա յանուն  
հօր իւրց Զաքարիայ . ըսէ · ա · 59 :: Բայց քի թլփատութենը  
համար որ կըգրէ, չըսէր Եկին թլփատէլ զնա, որով թլփա-  
տութիւն ընօղմը յայտնի չըլլար . միայն այսքան կըսէ,  
|| Իւրեւ լցան աւուրբ ութ թլփատէլ զնա, և կոչեցաւ անուն  
նորա յն . ըսէ · թ · 21 :: Արդ՝ յն ուսկից թլփատվեցաւ,  
որ առետարանիչը չի յիշէր :

### ՊԱՏԱՍԽԱՆԻ

¶ արդապեաք Եկեղեցւց յնը թլփատողը՝ իւր մայրն եր  
կըսէն . որով տիրամայր ածածնի սիրցն գերազանցութիւն կե-  
րեայ մեր վրայ . որ իւր կուսական արիւնը առւած եր որդ-  
ւցն, թափեց մեր սիրոցն համար : Այս խօսքս՝ մատց դէմ  
կամ առակուսելի չիմացվէ, քանզի Սեփօրայ Սուլսէսի կինն  
աւ իւր որդեքը թլփատեց . Ելից . թ · 25, Արդ՝ ըստ ածաքան  
Վարդապետաց՝ տռաւել զարմանալուն համար առետարանիչը՝  
այս բանը չի յայտնեց :

Հ . Բ

**Ք**րիստոսի քառասնօրեայ գալստեան տօնին ինչո՞ւ ՏԱՆ  
ընդ առաջ կըսվի :

Պ . **Ո**րովհետեւ Սիմէօն ծերունին և Ըննա մարդարէն , դի-  
մաւորեցին քրիստոսը՝ երբ տաճարը ընծայվել կը բերէին .  
այդ դիմաւորելուն պատճառաւը ըսվեցաւ այն տօնին՝ Տեառն  
ընդ առաջ :

Հ . Դ

**Վ**ճն հարսանիքը՝ որ ՚ի կանա Գալելեայ Եղաւ , ուր տեղ  
քան և մարդիամ ածածին գայցին . և քան իւր մօրը միջնորդութեր՝  
ջուրը փոխարկեց գինիի , այն հարսանիքին փեսայն ո՞վ էր :

Պ . **Ճ**ակոր ածաբանը կիւրակէից քարոզ գըքին մէջ կը  
հաստատէ Ծմուռն ըլլալը , որ և Սիմոն կանանացի կըսվի .  
այսպէս կըվկայեն ոքն Խոնափոս և ոքն Եպիփան :

Հ . Դ

**Ք**րիստոս իւր պայծառակէրպութեան օրը իրէն հետ  
Եղօղ աշակէրտներուն ինչո՞ւ կըսպատուիրէ , որ մարդու չե-  
զուրցեն տեսածնին , մինչեւ որ որդի մարդոյ ՚ի մեռելոց յա-  
րութիւն չառնէ նէ :

Պ . **Ճ**առ պատճառներ ցոյց կուտայ Եռամեծն Գրիգոր՝ քե-  
այդ պատուէրին , որոնց գլխաւորները միայն ընտրանօք ըսեմք :  
Կախս՝ սքանչելիքները , որոնք յարութեան ժամանակը  
Եղան , յարմար դան և ասլացցոյց ըլլան առաքելոց պատմութեր ,  
որ երկիր շարժեցաւ , վէմք պատառեցան , ըլւսաւորք խա-  
ւարեցան , և այլն :

**Ե**րկրորդ՝ երբ առաքեաները զօրանան ՚ի հոգւցին սրբոց  
հրաշքներ գործելով , այն ատենը քրիստոսի համար ըսածնին  
կընան հաստատել :

**Ե**րրորդ՝ հրեշտակին քարոզած ժամանակը քրիստոսի յա-  
րութիւր , հաւատան՝ թէ այն որ յարոցց ինքը զինքը , կարօղէր  
և Մովսէսը յարուցանել ՚ի մեռելոց :

**Չ**որրորդ՝ երբ երկինքը համբառնայ , այն ժամանակը հա-  
ւատան՝ թէ կարօղէր Եղիա բերել տալ երկինքէն , և լու-  
սափայլ ամպերով երկնալ , և միւսանդամ ամպով գալ , և  
ընտրեաները տմպովք յերկինս յափշտակել :

Հ . Ե

Արդեօք քնչ չէր մարմնանայր, եթէ Ադամը չի մեղանչէր։  
 Պ. Հրիստոսի գալստեան պատճառը՝ երկինքն թափած-  
 հրեշտակներուն տեղը լցունելու համար էր։ Ինչպէս սուրբ  
 Աւետարանին մէջի՝ կորուսեալ ոչխարին և կորուսեալ դրամցն  
 օրինակը յայտնի կընէ։ Երկրորդ՝ քի մարդեղութիւն Ադամոյ  
 մեղքին համար էր՝ որ չէր կընար վճարել, որովհետեւ ոյ ան-  
 հուն բարութեանը դէմ մեղանչէր էր։ Եաւ կորուսեալ  
 իեամքը վերստին ստանալու պատճառաւ մարդացաւ։ ուստի  
 ըստ քրիստոս։ յաշաննէն։ Ժ. 10։

Ա. Ճ. Քի մարդեղութիւն մեղաց բարձման համար էր,  
 անոր համար ըստ Յովհաննէս Մկրտիչ, թէ՝ Ահա գառն ոյ՝  
 որ բառնայ զմեղս աշխարհի։ յաշ. թ. 29։ Եւ թէ՝ Եկեղեցն որդի  
 մարդոց՝ խնդրել և կեցուցանել զկորսուսեալն։ յափ. ժ. 11։  
 Եւ ՚ի հաւատակն այսպէս ասի, Որ վա մերոց փրկութե իջ-  
 եալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ։ Վաս այս վկայութեց իմաստին  
 նացելով թէ որ Ադամը մեղանչէր, քնչ չէր մարմնանայր։

Հ . Զ

Եկեղեցւոյ աստիճաննեն երբ պարզեցան ՚ի քրիստոսէ։

Պ. Արբաղան վարդապէտը եկեղեցւոյ այսպէս կը վկայէն։  
 Բնթերցողութե աստիճան տըլաւ քնչ, երբ Եսայի մարդարէին  
 գերը ընթերցաւ, յակ. դ. 17։ Եսայասարկաւագութե, երբ  
 չունեայ խարաղանաւ տաճարէն գուրս հանեց առուռառուր  
 ընօղները, յակ. դ. 15։ Ասրկաւագութե, երբ լուաց աշակեր-  
 տաց ոսքը, յակ. ժ. դ. 5։ Քահանացութե, իւր մարմինը և ար-  
 իւնը բաշխելով ՚ի սուրբ վերնատունն ։ յափ. իւ. իւ. 26։  
 Եպիսկոպոսութեան, երբ փչեաց յառաքեալն ։ յակ. իւ. 22։  
 Եպիթողիկոսութե, երբ ձեռք դրաւ առաքելոց վրայ ՚ի համ-  
 բաւնալն ։ յակ. իւ. իւ. 49։

Հ . Է

Պ. օրինաց խորհուրդները ինչո՞ւ համար ամենը միա-  
 տեղ չի կարգեց քրիստոս։

Պ. Առարեալը կըսէ, թէ օրէնքն յայ կարգեալ են ։ այլ  
 յարմար կարգը այս է, որ պատճառը իրմէ պատճառեալ դոր-

ծէն յառաջ ըլլայ . արդ՝ քի չարչարանքը նոր օրինաց խորհրդական պատճառն է , քանզի այն չարչարանքով զօրութիւն պիտի ըլլայ խորհրդական ուրեմն պէտք էր քի չարչարանացը՝ նոր օրինաց խորհրդական կարգը լէն յառաջ ըլլալ :

## Հ . Ը

¶ Պոր օրինաց խորհրդական քի չարչարանքէն զօրութիւն ունին , ինչպէս որ ըսիր , ոյլ քի չարչարանքը տանջողութիւն մի էր . և ոյսպիսի տանջողութիւն նշան չերեար պատկին խորհրդին մէջ , մանաւանդ անոր ներհականնը՝ որ է փափկութիւն հեշտութիւն . ապա ինչո՞ւ համար պատկի խորհրդական կանուանեն :

Պ . ¶ Եպէտ պատկը չե կերպարանէր մարդը քի չարչարանացը ըստ նմանութիւն պատճեցն , բոյց կը կերպարանէ քի չարչարանացը ըստ սիրոցն . ինչպէս կը հրամացէ Պօղոս առաքեալը . || Արք սիրեցէք զկանացս ձեր , ո՞ղ և քառ սիրեաց զեկեղեցի , և զանձն իւր մատոց վանը , զի զնա սրբեսցէ սրբութիւն աւագանին բանին բանիւ . Եփեսացաց . Է . 25 || :

## Հ . Ծ

¶ Երբ քո՞ւ խաչել կը տանէին , խաչն ալ կոնակը շալկեցուացէր էին , ինչ կը նշանակէր խաչին շալկելը :

Պ . ♦ Երէից և հեթանոսաց խստասրտութիւն բաւական չե համարելով խաչել տանելէն յառաջ արված չարչարանքնին , ծանր խաչն ալ կոնակը տրվին : Խաչողներուն կողմանէ մեծ անողորմութիւն էր , բոյց խաչեցելցն կողմանէ մեծ խորհրդական գթութիւն էր . որ խաչը իրեն փառաց աթոռ համարելով ինքն կը տանէր , ինչպէս որ մարգարէն կը վկայէ . || Մանուկ ծնաւ մեղ՝ որդի տուաւ մեղ , որց իշխանութիւն ՚ի վր ուսոց իւրոց . Էսայ . թ . 6 || : Եւ ըստ Պօղոսի՝ որ ասէ . || Յանձն էաւ զխաչ արհամարհեաց զամօթ . Եբրայ . ժ . 2 || : Եւ ըստ յովհաննու՝ || Բարձեալ էր ինքնին զխաչափայտն և ելանէր ՚ի տեղին . ժ . 18 || : Ար սց խօսքին վրայ սցսպէս կըսէ Կուռնելիս . ՚ի պրոգեալ լինէին վերքն որ ՚ի ձաղանացն , և բացեալք բերանք վերացն հոսէին արխւնին . վասն որց առաւել նուազիւր արիւնն և զօրութիւն . ուստի առեալ յուսոց նր վասն տկարութիւն . Եդին ՚ի յուսն Սիմոնի Կիւրենացւցն , որպ զե զյան կենականի պահեսցեն , առ ՚ի առաւելանք կըել զատնջանս խաչինք

## Հ ։ Ժ

Պ. Երիստոսի խաչեն Երկայնութիւնը ողբա՞ն էր :  
Պ. Յսպէս կը վկայէ Կուռնելիոս , թէ Երկայնութիւնը  
տասն և ութ քիւ էր , և խստորնակը ինն քիւ :

## Հ ։ ՃԱ

Պ. Երիստոս Երբ դժոխքը իջաւ , արդե՛օք դժոխքին մէջ  
Եղած ամմէն հոգիները աղատեց մի :

Պ. Փարկութեան արժանաւորները աղատեցան , և անոնք որ  
իրենց կենդանութեր քիւ մարդեղութեր պիտի հաւատային ,  
անոնք ալ աղատեցան : Պ. Յսպէս կը վկայէ սուրբ Կիւրեղ  
Ազեքսանդրացին , և Սկեռիանոս Անտիոքացին , և Իգնատիոս  
տասութեազգեացն , և Գրիգոր աստուածաբանն : Եւ Եկեղե-  
ցին մեր յայտնապէս կը քարոզէ ըսելով . || Կենագործեաց հզօ-  
բեղապէս զերամն արդարոց || :

## Հ ։ ԺԲ

Պ. յուրիկ ոմանք կընդդիմանան այսպէս ըսելով .  
|| Աղամ գլուխ էր ազգի մարդկան . թէ որ գլուխը աղատե-  
ցաւ , պէտք է որ անդամներն ալ աղատին || :

Պ. դամայ ապստամբութեր շատ հետեղներ Եղան , բայց  
Աղամայ ապաշխարութեանը քիւ հետեղ Եղան , անոր համար  
ամմէնն ալ չափատեցան : Պ. հա քեղ վկայութիւնը նը Եկեղեց-  
ւոյն , || Որ զմահ գերի առեալ մահուամբ զմահ կոխեցեր , ար-  
ձակելով զերամն մարդարէից յանստուեր քո հանդիսա :

## Հ ։ ԺԳ

Պ. ապ ուրբաթ գիշեր տասներեք մոմ կը վառեն սեղա-  
նը . ինչո՞ւ տասներկուքը կը մարեն , և մէկը վառ կը մնայ :

Պ. յիշն գիշերը առաքեալները մինակ ձգեցին քնը , և իրենք  
ցրուեցան , վասն որց տասներկու մոմը կը մարեն , և մէկը կը  
ձգեն , որով կիմայվի քրիստոսի մինակ մնալը անօրինաց մէջ :  
Եւ Երկրորդական մաածութե ոյսպէս կը մեկնեն ոմանք , թէ  
այն գիշերը առաքելոց բոլոն ալ Երկրայութե մէջ մնացին ,  
բայց միայն նը կցս Ածածինը աներկբայ մնաց , ուստի տասն  
երկու մոմը կը մարեն , և մէկը վառ կը ձգեն :

Պրիստոս հրաման կընէ առաքելոց հաւատացեալնէրը  
մկրտել յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։ ինչո՞ւ հա-  
մար իրենք միայն յանուն մի քի կը մկրտէին ։ ինչպէս որ գըր-  
ված է ։ Գործ ։ Ճ ։ 48 :

Պ. Յ. Եխուսի քի անուամբը մկրտել ըստծող ։ այն տեղ յի-  
քի անունովը՝ քի հաւատքը կիմացվի ։ և քա՞ ոչ միայն իրեն  
յատկացեալ քարոզեց նոյն հաւատքը ։ այլև հօր և հոգւոյն  
սրբոյ ։ ինչպէս որ Արեգուին անունը կըսէմք նէ ։ անոր ձա-  
ռագայթը և ջերմութիւնն ալ միատեղ կիմացվի ։

Պրիստոսի երեքօրեայ թաղումը արդե՛ք ամբողջ երեք  
օր էր ։

Պ. Յ. Պրիստոսի մահը երեք աւուրց հետ հաղորդութի ու-  
նէր ։ որք են՝ ուրբաթ՝ շաբաթ՝ և կիւրակէ ։ և ինչպէս որ  
եթէ մարդոյս մարմարոյն մէկ մասը տկարացած ըլլայ ։ ամեռողջա-  
պէս հիւանդ կը համարի ։ այսպէս և քի մահը երեք աւուրց հետ  
հաղորդութիւն ունենալով երեքօրեայ կըսվի ։

Սուրբ գրոց սուլորութիւն է՝ որ երեքմն մաստիք բոլորը  
կիմացունէ ։ և երեք օրը մէկ մէկի հետ հաղորդութի ունենա-  
լով գիշերի և ցերեկի կըսվին երեք օր ։ ինչպէս ուրբաթ օրը  
երրորդ ժամէն մինչև իրիկուն ։ որ քա՞ հոգին աւանդեց ։ և  
ուրբաթու գիշերը մինչև արուսեկին ծագիլը՝ մէկ օր ։ արու-  
սեկին ծաղմանէն՝ որ մէկ մասն կը համարի ուրբաթ գիշեր-  
վան ։ և շաբաթ աւուրը ցերեկը՝ երկու օր ։ կիրակամուտը  
և իւր առաւօտը՝ երեք օր ։

Երբ քա՞ արն մէր Պիղասոսի և քահանայապէտաց առա-  
եանը կայնէր էր ։ ինչո՞ւ անոնք կընօսէին ։ ինքն պատաս-  
խան չէր իւար ։

Պ. Յ. Ալմա՝ ալմաքը էր Պատիթին ըստծին պէս լուռ կենալ  
մեղսւորաց հակառակութեան ժամանակը ։ ըստ այնո՞ւ ։ Եղի  
ողահապան բերանոյ իմց՝ ՚ի հակառակիւլ մեղսւորին առաջի  
էմ ։ առաջնոր ։ ԼՌ ։ 2 ։

Արկրորդ՝ ինքն ըսեր էր, թէ պէտք չէ որ մարգարիտը  
խողերուն առջին ձգվի, ըստ այնմ՝ || Մի արկանեք զմարգա-  
րիստ ձեր առաջի խողաց . հառ . է . 6 || :

Հրարորդ՝ քո գառին նման կտրիչներուն առջին լուռ  
կայներ էր, ինչպէս կըսէ Եսայի . || Իբրև որոջ առաջի կարչի  
անմուռունչ կայ, այնպէս ոչ բանայ զըերան իւր . Եսայ . ծդ . 7 || :

Չորրորդ՝ Դիմոնէսիոսի ըսածին պէս, ածային խորհրդոց  
թագնութիւնը պէտք է ծածկել անհաւատներէն՝ որ ծաղը  
չընեն, և պարզամիտ եղօղներէն՝ որ իրենց կասկածի պատ-  
ճառ. չըլայ . ուստի չուղեց քո անհաւատ Պիդատոսին առջին,  
և յիմարութեն գինիով արբեալ քահանայապետաց առջին՝ իւր  
թագուն ածութեան զօրութիւր և խորհուրդը յայտնել, որ  
չըլայ թէ ծաղը ընեն՝ կամ գայթակղին :

Հինգերորդ՝ մարգարէին բերնովը ըսած էր . || Եղէ ես  
մարդ՝ որ ոչ խօսի, և ոչ գոն խօսք ՚ի բերան նը . ստղ. լէ . 15 || :

Ո էցերորդ՝ Ցովսեպս այսպէս կըսէ . || Զուր է ծառել  
զօգատկար իրաց . յորժամ լուղին ամեներէան համաձայն միա-  
բանին ՚ի վատթարն կցս . ը, տպ . գլ . ժժ || : Վհա քահանոյա-  
պետները՝ գպիրները՝ և փարիսեցինեցը ժողովէր էին քի վրայ  
վատթար խորհրդով սպանման . վա որց լուռ կենալ կամեցաւ. քո :

Վոթներորդ՝ Եթէ քո անոնց խօսքին պատասխան տայր,  
մէկ խօսքով մը ինքը զինքը կարդարացընէր՝ և մահուանէն կա-  
զատէր, և մէր Փրկըլլելուն գործը անկատար կը մնայր, և հօր  
նոյ նախասահմանութիւնը որդեւցն միածնի մահուանը վրայով  
ընդունայն կըլլար :

### Հ . ԺԷ

Պ սիստոս արն մեր մեռած օրը յարութիւն կընար առնել.  
ինչո՞ւ համար երեք օրէն ետքը յարութիւն առաւ :

Պ . Հըլայ թէ հիշ մէկը երկրայի քի ճշմարտապէս մահուա-  
նը վրայ . անոր համար երեք օրէն ետքը յարութիւն առաւ :  
Եւ թէ երեք օրէն յարութիւն առնելուն պատճառը այս էր,  
որ մեղեց ցցց տայ՝ իւր մահուամբը երեք կերպ մահ խսիա-  
նեց, այսինքն մեղաց մահը, մարմնոց մահը, գժոխոց մահը :

### Հ . ԺԲ

Անչո՞ւ համար քո յարութենէն ետքը յառաջ կանանց  
երևեցաւ :

Պ. Արովիչետե մահաբեր ձայնը յառաջ կնիկե (Եւայէն) յայտնի եղաւ . նցնպէս պէտք էր որ փրկութեն աւետիսն ալ կնիկով տարածվէր :

## Հ . Ժ.Թ.

**Վ**արութենէն եաքը քո ինչո՞ւ համար մագդաղենային կըսէ , || Մի մերձենար յիս . ամաննէն . ի . 17 || :

Պ. Արամեծն Գրիգոր շատ պատճառներ կուտայ այդ խօսքին , և համառօս մը իմացունեմ ձեզ : “Եաւս՝ մի՛ մերձենար յիս ըսելով՝ կիմացունէ , թէ ան որ կըխնդրես , հոգին ոք կուգայ , կըմեկնէ քեզի : Երկրորդ՝ մարմնով մըրտեալ չէր , անոր համար ըստւ մի՛ մերձենար . քանզի չի մըրտեալները կարող չեն քրիստոսի մերձենալ , թէ և իրեններն ալ ըլլան նէ : Երրորդ՝ կիմացունէ , որ միայն էրիկ մարդիկ իշխանութիւն ունին պատարագ մատուցանելու , կանոյք համարձակութիւն չունին այս գործոյն : Զորբորդ՝ քո Մարիամ Մագդաղենացին ըստւ , մի՛ մերձենար յիս . որովհետե անկատար էր՝ ինչպէս որ Եւայ ՚ի ծառն գիտութեն բարուց և չարի . քանզի երբառ հայրս ելլամ՝ որ ինձի բնութեն հայր է . և առ հայր ձեր՝ որ շնորհօք ձեզի հայր է , և առ ած մարմնոց իմց և ած ձեր՝ ըստ հոգւց և ըստ մարմնոց . և նորին աջ կողմը նստելով՝ այն ժամանակը հոգին ոք կիջնայ որտումամբ , և զձեզ կատարեալ կընէ շնորհօք , որով արժան կըլլաս հաղորդութեն մերձենալու՝ մարմինս և արիւնս ձաշակելով :

## Հ . Ի

**Վ**ըստոսի հետ յարութիւն առնօդ սրբոց մէջ՝ սրբուհի կանոյք ալ կային մի :

Պ. Զիկային . քանզի Յակոբ ածաքան կըսէ , որովհետե մայրն աստուծոյ տակաւին չէր վերափոխեալ , վո՞րոյ սրբուհի կանոյք ալ յարութիւն չառին :

## Հ . Ի.Ա.

**Վ**րդեօք Մարիամ ածածինն սկզբնական մեղք ունէ՞ր :

Պ. Ե՞ւ հարցմանքդ հաւատոյ մասն չէ , որ ՚ի ոք գրոց վեսութիւն մը ցուցունեմ քեզի , միայն ածաքանք առաւել 6

Հաւասարութեալով կը վարդապետեն թէ սկզբնաւ-  
կան մեղքը չի ծնաւ ոք կցյան Մարիամ։ Եւ բացարձակապես  
ունէր ալ չես կընար ըսել, վասն զի սուրբ գիրքերը լոռութե  
անցեր են։ վասն որց ողջամիտ քրիստոնէին արժան չէ սուրբ  
գրոց չի յայտնածը՝ մարդկային իմաստութե յայտնել բա-  
ցասելով կամ սառասելով։

## Հ. Ի. Բ.

**Ա.** Արդապեաք եկեղեցւոյ կըսեն, թէ պէտք չէ զարմա-  
նաւ։ քանզի բաւական է այն՝ որ աւետարանիները կըսեն՝  
յորմէ ծնաւ յառ որ այս խօսքով ոք կցյս Ածածնի բողոք կա-  
տարելութիւնները կիմացվի՝ իւր մօրը արդանդին մէջ յղա-  
ցած օրէն մինչեւ վերաբիուման օրը։ Եւ այս չի գրելովնին ի-  
մացունել կուղեն՝ թէ ոք կցյսին աշխարհ գալը և աշխարհէն  
ելլալը ուրիշ կերպիւ է։ և մեր մատաց ըմբռումանըներքեւ չի յ-  
նար, վասն որց չի գրեցին ոչ գալը և ոչ գնալը։

## Հ. Ի. Գ.

**Ա.** Անչո՞ւ համար չի կամեցաւ ած, որ սրբուհի ԾՖածինը  
առանց ամուսնութե մնոյ կամ տաճարին մէջ կամ իւր տանը  
մէջ, այլ Յովսեփոյ հետ ամուսնացեալ ըլլաց։

**Ա.** Ամուսնութե ըստածդ. նախ պէտք է իմանաւ քեզ, բայց  
այս տեղ կարգը չէ, այլ սցն մատենիս բարցական մասին մէջ  
իւր ձարցման Պատասխանը կարդա՛ որ իմանաս։ Արդ՝ սուրբ  
կցյսին Յովսեփոյ հետ ամուսնութե պատճառները կը մտածվի։  
Կախ՝ ի կողմանէ սրբոյ կուսին։ Երկրորդ՝ ի կողմանէ քի։  
Երրորդ՝ ի մեր կողմանէ։

**Ա.** Կողմանէ ոք կուսին մտածելով երեք պատճառ կայ և  
Կախ՝ ին օրինաց մէջ ամմէն աղջիկ ամուսնանալու էր, և թէ  
ոչ անիծից ներքեւ ինկած կը համարվէր։ և որովհետեւ սուրբ  
կուսին չէր վայել այս համբաւը, վառ որց ամուսնանալ ար-  
ժան էր, և մնալով իւր դալար կուսութելը՝ պատուղ բերել.  
ուստի միայն ինքն ըսլեցաւ և եղաւ, Օքնեալ ի կանոյս։  
Երկրորդ՝ որ իրեն արտաքին խնամատար և պահապան ունենայ։

Երրորդ՝ չըլլայ քի իւր միածին որդին ծնանելէն ետքը առանց հօր, քարկոծվի հին օրինաց վճռով:

Դ կողմանէ քի մասածելով ալ երեք պատճառ կայ ։ Եաւս՝ չի կարծըլի՛ թէ ապօրինաւոր է քի ծնունդը, վասոյ այսովէս կըսէ մեկնիչը ։ || Ե կուսէ ամուսնացելոյ ծնանելով յաւետ՝ կամեցաւ կարծիս տալ թէ ծնաւ ՚ի կնոջէ առանց կուսութեն, քան յոչ ամուսնացելոյ ծնանելով՝ կարծիս տալ պոռնկութեն ։ Երրորդ՝ սովորական կարգաւ յայսնի ըլլայ՝ ո՞ր ցեղէ պիտի ծնանի, և պէտք էր որ հայր անունով մէկը ունենայ, քանզի հօրը ցեղը ցցց կուտար ազգը, և ոչ եթէ միայն մօրը ցեղը ։ Երրորդ՝ մօրմէն զատ արտաքին սնուցիչ և պաշտպան մը ունենայ, որ և ոքն խգնատիս կըսէ ։ || Խմաստութին այ կարգաւորեաց, զի ամուսնացի սուրբ Աղյուն ։ որոկ զի ծնունդն յի ծածկեցի ՚ի ստամայէ ։ Ա նացեալ պատճառները տես ՚ի գիրս Պատկեր տօնից ։

### Հ ։ Ի Դ

• Բ ըիստոս տըն մեր ինչնու սրբուհի Կոյսը կին կանուանէ, մայր ըստէր ։

Պ. Ա. յդ հարցմանդ՝ Մատթէոսի տւետարանին մեկնիչը՝ թէպէտ շատ պատճառնէր կըխօսի, բայց մեզի մէկը միայն այս տեղդիտնալ բաւականէ ։ Կըսէ՝ թէ տըն մեր իբրև զնը խօսելով իւր մօրը հետ՝ իւր տընութիւր և ածութիւր ցցց տալով՝ կին կանուանէ ։ և ինքը զինքը որդի կանուանէ մօրը՝ ըստ որում մարդ էր, և ըստ մարդկութեն ՚ի մօրէ ծնեալէր ։ բայց ըստ որում ած էր, և ըստ ածութենն յաւիտենականաբար ՚ի հօրէ ծնեալէր, այդ պատճառաւ իւր մայրը կին կանուանէ, որ ցցց տայ ։ թէ ինքն է ստեղծօղ մօր իւրոյ ։

Եւս մայր է տիրածինն իւր որդւոյն, բայց առաջին պատճառ չէ իւր որդւոյն ծնելութեանը՝ բնական մօր պէս, քանզի մարդկային բնութեան միաւորութիւր յանձն բանին՝ բնական կարգաւ չէր՝ այլ գերբնական ։

Վ. րդ՝ սրբուհի Կոյսը թէպէտ ստոյգ մայր էր քրիստոսի՝ այսինքն բանին մարմնացելոյ, բայց որովհետեւ բնականաբար մարդ էր, վասն որոյ չէր կընար գերբնական ներդորութիւր բանին միաւորութեն և մարմնոյն յառաջ բերել եթէ ոչ իբրև երկրորդական պատճառ ։ ուստի այս մտօք կին անուանեց քն.

իւր մայրը ։

## Հ ։ ԻԵ

|| ուրբք կուսին հասակը քանի՞ տարւոյ էր վերափոխման  
ժամանակը :

Պ. Ա արդապետք կըսեն՝ թէ յիսուն և ութ տարեկան էր  
վերափոխման ժամանակը . քանի՞ երբ յղոցաւ զքն տասն և  
չորս տարեկան էր , և նորին հետ մնաց երեսուն և երեք տարին և  
և քի մահուանէն մնաց աշխարհիս վրայ տասն և մէկ տարի :

## Հ ։ ԻԶ

|| ըրբաղան հաղորդութեան խորհրդոյ հացին վրայ սուրբ  
պատարագ մատուցանելէն ետքը՝ ինչո՞ւ սուրբ հաց կըսվի :

Պ. Ա յս սրբաղան խորհրդոր՝ որովհետեւ մասն հաւատց  
է , և բոլոր նը եկեղեցիք և ուղղափառ նը վարդապետք կը  
վկայեն , թէ պատարագվելէն ետքը հաց և գինի չէ , այլ մար-  
մին և արիւն յի քի . ինչպէս որ այս խորհուրդը ինքն հաս-  
տատեց իւր անսուտ բերանովը , || թէ հացն զօր ես տաց ,  
մարմին իմ է , զոր ես տաց վա կենաց աշխարհի . յուշ . դ . 52 || :  
Ա կայն հաց որ կըսվի , ոչ թէ գոյացապէս հաց է՝ այլ ըստ  
պատահմանց . պատահմունք ըստծըս այսպէս իմացիր , որ  
հացին վրայի գոյնը՝ չափը՝ համը՝ ձեր՝ բատահմունք կըսվին .  
և հացին հացեղինութեան աեսակը՝ գոյացութիւն կըսվի : Ա յս  
պատահմունքները ած պահելու , հացին գոյացութիւնը կը  
փոխէ , որ ո՞յ ամենակարօղ զօրութեր գործն է :

## Հ ։ ԻԵ

Պ ատարագիչ քահանայն երբ էտկան բանը կըսէ սուրբ  
խորհրդոյն վրայ , արդեօք այն ժամանակը կըլլայ գոյափո-  
խութիւն հացին և գինւցն՝ իմարմին և յարիւն տն , եթէ  
ժամանակէ մը ետքը , կամ ուրիշ արարողութեն ժամանակ :

Պ. Ա յէ հարցմունքիդ վրայ գիտունները շատ վհճառքանու-  
թիւններ ըստծ են , բայց ձեր անդորրութեր համար համառօտ  
մը սյապէս իմացունեմ , որ սուրբ պատարագը սկիզբէն մինչեւ  
վերջը քի կենսառիթ անօրէնութեց յիշատակութիւն է , և  
վերջապէս իւր անարատ մարմինը և պատուական արիւնը ՚ի  
թողութիւն մեղաց մեղի աալուն խորին խորհուրդն է :

Պ արդ՝ պատարագիչ քահանայն առ հայր ած կաղօթէ , և  
կը յեշատակէ որդւոյն միածնի տալը . իւր մարմինը և արիւնը

յայտնապէս ըսելով նք խորհրդոյն էական բանը, թէ ॥ Առելք  
կերէք այս է մարմին իմ ॥ . և թէ ॥ Արքէք ՚ի սմանէ ամենե-  
քեան՝ այս է արիւն իմ ॥ . և առ ՚ի յիշատակ իւր մեղի պատ-  
ուիրան աւանդելո միշտ կատարել այս խորհուրդը . և ապա  
գոհութիւն կը մատուցանէ՝ որ մեր անարժանութիւն այսպիսի  
ահաւոր խորհուրդ մատուցանելու արժանի ըրիր քու մարդա-  
սիրութեղի . ուստի կը խնդրէ՝ նք հոգւոյն զօրութելը այն  
առաջի եղեալ հացը և գինին ճշմարտապէս փոխարկել՚ի մար-  
մին և յարիւն տն մերց և փրկչին յի քի:

Վրդ՝ նք խորհրդոյն էական բանը մինչև չըսվի՝ չե կա-  
տարիր խորհուրդը, վն որոյ նոյն էական բանին սկսեալ ժա-  
մանակէն մինչև ՚ի բանն ॥ Փոխարկելով հոգւովդ քով սրբով ॥,  
կըլսայ գոյափոխութի հացին և գինւոյ՝ ՚ի մարմին և յարիւն յի  
քի: Եւ որովհետեւ ՚ի յած սնցեալ և ապառնի ժամանակ չե  
կայ . այլ զամ ներկայաբար գիտէ և ճանաչէ, վասն որոյ այս  
ըսածնիս մեր մտաց ըմբռնմանը կողմանէ է . ուստի հայելով  
անժամանակ նց անսահման կարողութեանը՝ ժամանակ  
չես կընար հաստատել, թէ այս ինչ ժամանակ կամ այն ինչ  
ժամանակ կըլսայ .

## Հ. Ի. Բ.

**ԽԵԼՍԳԱՐ ՄԱՐԴԿԱՆԾ ՀԱՊՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱԼ ԱՐԺԱՆ Է :**

Պ. **ԽԵԼՍԳԱՐ ըսածդ երկու կերպ է . ոմանք տկար միտք ու-  
նենալով տիմար կըսվին, բայց կընան սորվել հաւատոց խոր-  
հուրդը և պատիւը, այսպէսներէն չարգիլվեր նք հաղորդու-  
թիւնը . և ոմանք ամենեին բանականութիւն չունին, միայն կեր-  
պարանքով մարդ են, թէ որ ՚ի ծննդենէ այնպէս են, պէտք  
չե հաղորդութիւն տալ . բայց եթէ նք հաւատքը ընդունելէն  
ժամանակէ մը ետքը պատահած ըլլայ այդ գիպուածը, պէտք  
տալ եթէ փսխելու կամ թքնելու երկիւղմը չե կայնէ :**

## Հ. Ի. Բ.

**Քանի՞ յատիութիւն պէտք է եկեղեցական խորհրդոյն  
կատարելութեանը :**

Պ. **Ուրբ և ուղղափառ հարցն հետեւելով, պէտք է նիւթ՝  
աեսակ՝ գիտաւորութիւն և օրինադրեալ պաշտօնեայ խորհրդոյն՝  
հանդերձ սուրբ հաւատով :**

Հ . 1.

**Խնչ պիտի ըլլայ նիւթը :**

Պ . կեւթն այն է՝ որ ըստ իւրարանչիւր խորհրդոց՝ քի կացուցմնն կերպովը՝ սուրբ եկեղեցին յատկացցց ։ ինչպէս մկրտութեն խորհրդոցն՝ ջուրն նիւթ յատկացցց ։ պատարագին խորհրդոցն՝ հացն և գինին, և այլն։

Հ . 1.5

**Եսակը ի՞նչ է :**

Պ . Եսակը խօսքին ձևն է, որ ՚ի քի կացուցու ։ ինչպէս սուրբ պատարագին բանին ձևն է, || Առեք կերեք այս է մարմին իմ ։ և արբեք ՚ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ ։ | Վայպէս է և միւս խորհուրդներուն։

Հ . 1.6

**Դիտաւորութիւնը ի՞նչ պիտի ըլլայ :**

Պ . Ու տաճելու կամք ունենալ զայն առնելց, զոր առնե եկեղեցին։

Հ . 1.7

**Հերետիկոս քահանային ըրած պատարագը արդե՛օք ընդունելի՞ կըլլայ :**

Պ . Ձեւ որ քահանայն Արիոսի հետեօղ է ընդունելի չեւր պատարագը, քանզի Արիոս պատարագված քի ածութիւր ուրացաւ։ Ձեւ որ Եւնոմիոսի հերձուածոցն հետեօղ է՝ այն աւ ընդունելի չեւ, քանզի Եւնոմիոս հոգւոցն սրբց ածութիւր ուրացաւ՝ որ կատարելագործօղն է ամմէն խորհրդոց։ Ձեւ որ Ապօղնարի հերձուածոցն հետեօղ է՝ ևս ընդունելի չեւ, քանզի Ապօղնար՝ քի բանական հոգին ուրացաւ։ | Վայպէս իմացիր և ուրիշ հերձուածուաց հետեօղ քահանայից պատարագը, որոնք այս հերձուածողութեանց նման հերձուածութիւն կունենան։

Հ . 1.8

**Խնչո՞ւ վարդապէտ ումանք կըսէն, թէ խորհուրդը կատարողն վայց՝ եթէ հաւատոք և սրբարար շնորհք ըլլայ նէ՝ հոգ**

չէ . քանդի ամսեն մարդ կընայ խորհուրդ կատարել , թէ  
հերձուածօղ ըլլայ՝ թէ անհաւատ՝ թէ չար՝ թէ բարի , միայն  
յասուկ կամ հասարակ դիտաւորութիւն ունենայ՝ այնպէս  
ընել , ինչու որ կընէ եկեղեցին :

Պ . Ա յար պաշտօնէիւք խորհուրդ կատարելը բացարձակա-  
պէս չարգիւմն ։ քանդի կըսվի թէ ամսաւոր բժիշկն ալ եր-  
բեմն կընայ հիւանդ բժշկէլ : Բայց անհաւատը՝ որ սուրբ  
երրորդութիւն հաւատացն ծանօթութիւն չունի , և մլրտութիւն  
խորհրդացն դռնովը ոլ եկեղեցին չէ մտեր , կարօղ չէմ ըսել  
թէ կընար խորհուրդ կատարել . քանդի սուրբն Կիպրիանոս  
կըսէ՝ թէ անհաւատից կատարած խորհուրդը խորհուրդ չէ ,  
այլ ծաղրածութիւն խորհրդաց :

## Հ . Ա Յ

Ա յացօղ քահանային կատարած խորհուրդը ինչպէս է :  
Պ . Ա յահանայական կարգին կնիքը անջնջելի կը մնայ ու-  
րացօղ քահանային վրայ . հարկ եղած ժամանակը կընայ կար-  
գին զօրութիւնը խորհուրդ կատարել . բայց շնորհք չի կընար  
բերել իւր գործած գործէն :

## Հ . Ա Զ

Ա յամարար քահանայն երբ ոլ հացը կը բաժանէ , քի  
մարմինն ալ բեկեալ կիմացմի՞մի :

Պ . Ա յակու ածարանն ընդ ամ ուղղափառ վարդապետաց  
կըսէ , թէ || բեկմամը նշնարին՝ ոչ բեկանի , ոչ կըէ , և ոչ  
ցաւի մարմինն քի . ող բեկմամը հայելոցն՝ ոչ բեկանի ծագ-  
եալ ըցան ՚ի վերայ նորա || :

## Հ . Ա Յ

Ա յոշմին խորհուրդը հնար է որ միւսանգամ ըլլայ :

Պ . Ա յու քանդի ածարանք կըսէն , թէ || Յորում տուեալ  
լինի կնիք , ոչ է կարելի կըկնել . և արդ՝ յերիս խորհուրդս  
տուեալ լինի կնիք , այսինքն ՚ի խորհուրդ մլրտութեան ,  
գրոշմին , և կարգին . վասն որպ ոչ կարեն կըկնիլ || :

## Հ . ԼԲ

Պահանայ մը Եթէ միայն էական բանը ըսէ հացին և գինիին վրայ ՚ի խորհուրդ ոք պատարագին , և միւս աղօթքները ըսէ , արդե՛ք այն խորհուրդը կը կատարի՞ :

Պ . Աը կատարի կը սեն ածաբանք . բայց այնպիսի քահանայն մահացու մեղքը կը մեղանչէ :

## Հ . ԼՑ

Ձեւ որ նեղ ժամանակ մը հարկ ըլլայ , հնա՞ր է որ այն գործը առանց մեղաց ըլլայ :

Պ . Ա արդապեաք չէ կը սեն . քանզի հարկաւորութեւ ժամանակ առանց մեղաց միայն մկրտութիւնը կը լայ էական բանիւ , բայց պատարագին խորհուրդը չուլար :

## Հ . Խ

Ա խորհուրդ ոք պատարագին՝ կը հաւասարի , որ սրանց չելեք հացին և գինւցն պատահմունքը կը մնայ , այսինքն գցնը՝ համը՝ չափը՝ և այլն . բայց հացին և գինւցն գցութիւնը չի մնար . այս խորհրդոցն բնականաբար օրինակ մը կը նան տալ , որ խելքս հասնի :

Պ . Ա մաստասիրական ընդհանուր կանոն է , որ սկզբնական պատճուր երկրորդ պատճառէն աւելի ներգործութիւն ունի պատճառեալ էրին վրայ : Վսոր նշանը այն է որ՝ Երբ երկրորդ պատճառը իւր զօրութիւր կը վերցունէ իրմէ պատճառեալէն , սկզբնական պատճառը ամեռողջ կը պահէ նոյն իրը . ինչպէս ծնած մարդուն երկրորդ պատճառը իւր ծնօղնէ , և առաջին սկզբնական պատճառ ծննդեամնն ած և երկնից լուսաւորաց զօրութիւնին են . և Երբ կը վերցըլի երկրորդ պատճառը՝ որ է ծնօղն , պատճառեալը՝ այսինքն ծնեալ մարդը չի ապականիր , քանզի առաջին սկզբնական պատճառէն ևս կառնէ իւր զօրութիւնը , և անուլ կը պահէլի :

Ա յսպէս իմասցիր և քու հարցմունքիդ պատասխանը . պատահմունք ըստածդ պատճառեալ բան մի է , և իրեն երկրորդ պատճառը գցացութիւն է . բայց սկզբնական պատճառը ած է . ուրեմն կը մնայ ած պահէլ պատճառեալ իրը՝ որ է պատահումն , երբ երկրորդ պատճառը կը վերցըլի՝ որ է գցացու-

թիւնն . ուստի առանց ամենայն կարծեաց կըսվի , թէ կարողէ ած պահել զամենայն պատահմունս առանց ենթակայի , այսինքն գոյացութեան :

## Հ . ԽԱ

**Ո.** Եւ հացին և գինիին պատահմունքները կըման , և գոյացութիւնները կըվերցըլին , կերեայ թէ առաջք կամ ստուերի նման բան մը կըձեանայ ճշմարիտ խորհուրդը . քանզի Արիստոտէլ կըսէ , || Սէծ մասն գիտելց մեզ զզենչն՝ պատահմունքն ընձեռեն || . ապա եղաւ որ առանց գոյացութեան պատահմունք ցցց տալ , խաբէութիւն չէ՞մի :

Պ . Արծածիզ պէս չէ . քանզի եթէ գոյացութիր վերցըլի , հարկէ որ պատահմունքները մնան . որուն համար ած աբանք շատ պատճառներ կը խօսին , որոց գլխաւորը դնեմք այս տեղ : Վ . յս խորհուրդը հաւատաց խորհուրդէ , և հաւատք ըստանիս յաներեւութիցէ . ինչպէս ըսենք թէ , ցերեկ ժամանակ մէկը կըսէ քեզի , թէ արեգակը ծագերէ , տեսնալով հա կըսես , այս հաւատք չէ՝ այլ գիտութիր . բայց թէ որ մէկը ըսէ , թէ այս արեգական կառավարը՝ ընդհանրագոյն տէրութիւն մի է ամեն սաեղծուածոց վրայ , թէ որ ասոր հա ըսեմք՝ չի տեսնալով , այն ժամանակը հաւատքէ , որովհետեւ այն ըստանի հանրագոյն տէրութիւնը աչք չեմք տեսնար :

Վ . րդ՝ եթէ քի մարմինը յայտնապէս մը երեար յատուկ կերպով մը սեղանին վրայ , այն ժամանակը հաւատք չէր ըսվէր , այլ յայտնապէս պայծառ աեսութիր . ուրեմն հարկէ որ քի մարմինը հացին պատահմանց ներքեւ պահվի , որով հաւատք ըսվի : Դարձեալ այս խորհուրդս խորհուրդ հաւատաց կըսվի , և հաւատքը ոչ եթէ մեր զգայութիւններէն վերէ , այլ մոքերնուուալ վերէ . ուստի պէտք է ըլլաւ այս խորհուրդոց մէջ այնպիսի բան մը , որ ՚ի վեր ըլլայ քան զիմսու և զզպայութիւն . և մարմնոյն քի հացին փոքր քանակութե ներքեւ ըլլալը ՚ի վերէ քան զիմսու . և որովհետեւ հացին պատահմանց ներքեւ՝ որ զգայութիւնը կըտեսնայ , հացի գոյացութիր չի մնար , այս ալ զգայութենէ վերէ . ուրեմն պատշաճէ՝ որ հացին պատահմունքը առանց ենթակայի ըլլայ :

Հւս այս խորհուրդը հոգեսոր կերակուր կանուանի . ի՞նչ հոգեսորաւթիւն կըմար , թէ որ պատահմունքը մարմնաւոր գոյացութիւն ունենար :

## Հ • ԽԲ

Կաղիսկոպոս ձեռնադրութեան ժամանակը աւետարանը  
ինչո՞ւ համար գլխուն վրայ կը դնեն :

Պ. Ձեռնադրովողին ցցց տալու համար , որ իւր ամեն  
արարմունքին մէջ ոք աւետարանին պատիւը գերազանց պա-  
հէ . և միշտ իւր մոտցը մէջ անոր հրամանները նկարագրէ , և  
անով ածարաշտութե՛ վճիռներուն տեղեակ ըլլայ , և աւետա-  
րանը բոլոր ածային գրեամքներէն առաւել յարգի ունենայ :  
Վ. յս մէկնութիւն ոք դիսնեսիս Արիսպագայիէն սորվեցանք ,  
որ իւր ածարանութե՛ մէջ ածագործութիւն կանուանէ սուրբ  
աւետարանը , որովհետեւ ածային գործքը կը ճառէ , և ածա-  
գործ մարդեղութե՛ն քի խորհուրդը կը յայտնէ :

## Հ • ԽԴ

Կարգաւորներուն հրաման կայ մի ամուսնացելոց հետ  
կամ օտար կանանց հետ բնակել :

Պ. Տիեզերական Նիկից ոք ժողովը այսպէս կը հրամայէ :  
Վ. բգիւեալ է ամենեին համալինակումն եպիսկոպոսին՝ քահա-  
նային սարկաւագին և այլոց ամենեցուն եկեղեցականաց՝ ընդ-  
օտար և ներամուծեալ կանայս . միայն թէ կամ մայր իցէ ,  
կամ քցը , կամ հօրաքցը : Աւ յիրաւի այնպէս է , քանզի  
սատանային բուն կերակուրը ընտրեալ մարդիկն են , որ մէկը  
որսալով շատերն ալ կասկածի մէջ կը ձգէ :

## Հ • ԽԵ

Վ. շխարհական մարդ մը քահանացութեան ինչ ըլլալը չէ  
գիտանալով , և այլոց բռնութե՛ քահանայ ըլլայ , յետոյ իւր  
անարժանութիւնը գիտանալով , արդէօք կրնայ անպարտ ընել  
ինքը զինքը տգիտութեան պատճառաւաը : Այնպէս ձեռնադ-  
րողը չէ գիտանալով ձեռնադրածին անարժանութիւնը , ան-  
պարտ կըլլայ մի :

Պ. Ե՞ւ հարցմանդ պատասխանը Յօհան ուկերանէն սոր-  
վէ , որ այսպէս կըսէ . Աբք ընտրեցանն , չէ նոցա բաւական  
յարդարութիւն ասելն , ոչ ինքնակոչ ինչ եկի , ոչ զգուծն ինչ  
քննեցի և ոչ տեղի ետու : Այնպէս և ոչ ձեռնադրողացն եր-  
բեկք օդնեսցէ ինչ եթէ ասասցեն , թէ մեք զձեռնադրելցն

“ ահենց գիտէաք . այլ վասն այնորիկ մեծ ևս լինին յանցանքն ,  
“ զի զըս ոչն ձանաշէին՝ ՚ի մէջ ընծ-այեցին , և որ պաշտպա-  
“ նութիւն իմ երևի լինել , նոյն առաւելու զբամբասանն :  
Դառ յաղագս քահանայութեան :

## Հ . ԽԵ

**Յ**ովհաննէս մկրտչի ըրած մկրտութիւնը՝ արդե՛ք խոր-  
հուրդ կը համարվէ՞ :

Պ . **Կ**ատամամը իւիք խորհուրդ էր , քանզի խորհուրդն է  
նշան սուրբ իրաց . և որովհէտեւ Յովհաննու մկրտութիւն՝ քի  
մկրտութեանը նշանակ էր՝ որ է ոք իր , ուստի այս մաօք խոր-  
հուրդ էր : Բայց որովհէտեւ նշանակ էր շնորհաց՝ և ոչ պատ-  
ճառ շնորհաց , ըստիր կատարեալ խորհուրդ , քանզի հոգի չէր  
տար . և որովհէտեւ Յովհաննէս մկրտչ մկրտօնները միւսան-  
գամ մկրտվեցան առաքեալներէն , ուրեմն խորհուրդ չէր ,  
քանզի խորհուրդ ըսածդ միւսանգամ չըլլար :

## Հ . ԽԶ

**Ա**րեամը մկրտվելը , այսինքն նահատակ ըլլալը առանց  
խորհրդական մկրտութե՛ բաւական կըլլայ փրկութե :

Պ . **Ե**ն՝ որ արեամը մկրտութե՛ կը մկրտվի , ամմէն մեղքե-  
րէն կարձակվի , և ամմէն պատիժէն կազատի , և աբբայութեան  
արժանաւոր կըլլայ . և այս ոչ եթէ չափահասից միայն յատուկ  
է՝ այլ և տղայոց . քանզի տղայք՝ թէպէտ բանականութիւնը  
նին անձնիշխան կամաց սովորութիւն՝ եթէ քի անուանը համար  
նահատակվին , բայց աբբայութե՛ արժանաւոր կըլլան . այսպէս  
կըվեյցէն աստուած-տըանք :

## Հ . ԽԵ

**♦** նամը է տղայն մկրտել իւր մօրը փորէն չի ծնած :

Պ . **Ե**ւ քանզի Պօղոս առաքեալ ՚ի գիրս կորնթացոց կըսէ .  
|| Բայց ոչ նախ հոգեորն , այլ շնչաւորն և ապա հոգեորն || .  
իսկ վէրստին ծնունդն է հոգեորդական մկրտութիւնն . ապա  
պէտք չէ հոգեոր ծնունդը մարմնաւոր ծնունդէն յառաջ տալ :

Հ ։ ԽԲ

**Ձ** որ երկու քահանայ մէկ տեղ ըլլան , մէկին ձեռքը  
կոտրած՝ և միւսը համը , կրնան ասոնք երախոյ մը մկրտել ,  
Եբ թէ մէկը խորհուրդը ընելով , և միւսը երախայն ջուրը  
ընկղմելով :

**Պ.** Ա ։ Քանզի մկրտութեն խօսքին ձեէն յայտնի է , որ մէկ  
հոգի պիտի ըլլայ խորհուրդը ըսողը՝ և երախայն ջուրը ընկղ-  
մօղը . որ կըսէ՝ Ես մկրտեմ զքեզ . յայտնի է որ՝ մէկ մարդ  
մի է ըսողը և գործը կատարողը : Այսպէս կուսուցանեն  
աստուածաբանք :

Հ ։ ԽԹ

**Ա** ։ Երդ-օք նբց բարեխօսութիւն ընդունելի՞ է առաջի ոյ :

**Պ.** Ա ։ Ռուրը Դրիգոր Նարեկացին այսպէս կը հրամայէ , սրբոց  
բարեխօսութիւն մեզի միջնորդ ունենալ առաջի ոյ , ինքն ած-  
վկայեաց , և ուսոց . ահա Նարեկացիին վկայութիւն . || Զորոց  
(այսինքն սրբոց) կերպարանս և յիշատակս անուանցն աղաքել  
ած իսկ վարդապետեաց , և նոքօք հաճութիւն ի մէջ խոռովու-  
թեան՝ արարչիոդ բան լուսաւորեաց : || Ոէտ որ ըսել կամիս ,  
ած Երբ ուսոց և վկայեաց , թէ նբց բարեխօսութիւն ընդու-  
նելի և հաճոյ է իրեն , ահա վկայութիւն . || Յօք Ճառայ արասցէ  
աղօթս վա ձեր . զի թէ ոչ նմա ակն առեալէր , և թէ ոչ վա  
նորա էր , կորուսեալ էր իմ արդեօք զձեզ . յօհ . իբ ։ 8 ։ 2 ։  
Եւս ած կերեայ Աբիմելքոյ , և Սառայի համար կըսէ ,  
|| Արձակեա զկինդ յայր իւր , զի այր մարդարէ է , և արասցէ  
աղօթս վասն քո՝ և կեցցէս . ծննդոց . ի ։ 7 ։ :

**Վ** ։ Ածնի բարեխօսութիւն ջուրը գինիի փոխել տրվաւ  
հարսանիքին մէջ՝ որ ի կանայ Գալիեացւոց . յօհ . ը ։ 9 ։  
ԱԵ Ստեփանոսի աղօթքով Սօղոսը՝ Պօղոս եղաւ : || Երջապէս  
նբց բարեխօսութիւն ընդունելի ըլլալը՝ կախարդ Ախմանը ան-  
գամ գիտցաւ , և ըսաւ առաքելոց , || Աղաչեցէք գուք վասն  
իմ զտէր . Գործ . ը ։ 24 ։ :

Հ ։ Ծ

**Վ** ։ Երշտակները կամ սուրբերը սրո՞նց համար կընան բա-  
րեխօսել :

Պ. Հրեշտակները կամ սուրբելրը չեն ցաւիր դատապարտեալ մեղաւորաց կորստեանը վրայ . քանզի այ կամաց լուռմը (այսինքն արդարութե վճիռը) դատապարտելց վրայ տեսնաւով կը հանգչին և կուրախանան : Իսյց կրնան բարեխօսել ոմանց հսմար , որոց ապաշխարութելը կիսատ մնացեր էր կենդանութե ժամանակը՝ մահը արագ համելով , և ներելի մեղք եղողներուն ալ կը բարեխօսեն . վերջապէս ածալախ մնացիկ թէ կենդանութե ժամանակին և թէ յետ մահուան՝ հրեշտակաց և սրբոց բարեխօսութեանը արժանի կը լան :

## Հ . ՏԱ

Ոուրբ միւռունը մարմնաւոր ախտերու իբրև դեղ դործ ածել արժան է մի :

Պ. Խ գիրս կանոնաց այսպէս դրված է . || Սի իշխեսցէ քահանայն զմիւռունն ՚ի պէտա դեղոց մերձեցուցանել , կամ յականջս , կամ յատամունս , և որ յանդդնի՝ նզովեալ է :

## Հ . ՏԲ

Կ պէղեցական ասմունքներուն կարդը ինչպէս մտաւ ու աստուածը :

Պ. Խ յապէս կտւանդեն վարդապետք , թէ հնար չեր քի ածային մարմինը խաչէն իջեցընել հոգին աւանդելէն ետքը . քանզի կը ակի նման կայծակունք կելային բեկոններուն վերքերէն և տէ գովլ վիրաւորված կողէն : Եւ յետոյ Յովսէփ Արեմաթագին ծունկ չորելով ձեռքերը տարածեց , և աղօթել սկսաւ այսպէս ըսելով . || Սուրբ ած , սուրբ և հզոր , ուր և անմահ , որ խաչեցար վասն մեր , ողորմեա մեզ || . և այսպէս երեք անդամ կը կնելով քի մարմինը խաչն իջեցուց , ուսափ առաքեալներն ալ կանոն դրին այս աղօթքը ըսել :

Եւ սուրբ ածածնի վերափխաման ժամանակը՝ որովհետեւ բարթուղիմէոս առաքեալ հոն չէր , և երեք օրէն ետքը եկաւ , և ըստ բարձանաց իւրոց ածածնի գերեզմանը բացին՝ մարմինը տեսնալու հսմար , բայց մարմինը հոն չէր , քանզի յերկինս վերափխեալ էր . յայնժամ թովմաս առաքեալ այսպէս աղօթք . || Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կցոյ ածածին Մարիամ՝ մայր քի , մատու զաղաչանս մեր որդւոյ քո և այ մերոյ || : Եւ այս բանն ալ առաքեալները առէն՝ Յովսէփոց

ըսած Սուրբ Պատրիարքին հետ կցեցին , և այն ժամանակէն մինչեւ ցայդմ ըսվիլ սկսաւ եկեղեցիներուն մէջ : Այսպէս կը վկայէ մեր Սիմեօն Կաթոլիկոսը Պարտավճար անուն գըքին մէջ :

### Հ . Տ. Դ

**Ա.** Երջին յարութե՞ օրը՝ յարութի տռնօղները , ինչ հասակաւ կամ ինչ որպիսութեամբ որ մեռան նէ , այնպէս պիտի յարութիւն առնեն , եթէ ուրիշ կերպիւ :

**Պ.** **Ա.** Էկ մարդ մը ինչ կերպ մարմնով մեռանի նէ , այն կերպով յարութի չի պիտի առնեն . քանզի ցորենը՝ մերկ հատ մի է , կը ինչ հողին մէջ և կը մեռանի . բայց այնպէս չի բուսնիր , այլ հագված և զորդարձած : Այնպէս յարութե՞ օրը՝ տղայն և ծերը կարիքի հասակաւ յարութի պիտի առնեն՝ ըստ նմանութեան հասակին քըիստոսի . Եկեառաջ . 7 . 13 :

### Հ . Տ. Դ. Դ

**Ո.** Ապէտ կստուգեն յարութե՞ ուղափառք . բայց քիչ մը անհաւասալի կերևայ ինծի . քանզի չորս տարելըէն գցացած բան մը , որ ապականի՝ մինչեւ իւր առաջին նիւթին փոխվի , ինչպէս կը նորոգի , և սմբող մարդ կը լայ :

**Պ.** **Ե**րաւելի այդ ըսածդ բնութե՞ գործ չէ . թէ որ բնութեան գործ ըլլար , պէտք չէր՝ որ հաւասար մասն ըսվէր , և հարկ էր՝ որ ամ աղջը և աղինք հաւասարյին . բայց որովհեան բնութե՞ ստեղծօղն է այդ գործը կատարողը , և ինքը մեզի կը վկայէ՝ թէ յարութի պիտի տամ ամ աղջի մարդկան , ուրեմն այ կարողութեը նայելով հիշ բան մը չէ : Բնութե՞ գործը և այ գործը՝ այս զանազանութիւնը ունին . առանց հօր և մօր՝ յայտնի է որ , ծնունդ չըլլար , ահա բնութեան գործ . բայց Աղամ առանց հօր և մօր կատարեալ մարդ ըլլալով՝ աշխարհ եկաւ , ահա այ գործ . ուրեմն կարող է ոծ վերսաին նորոգեւ ապականեալ մարմինը :

### Հ . Տ. Ե

**Ը** առ մարդիկ կան , որ մարդու միս կուտեն , և այն միսէն սնունդ ունենալով՝ զաւակ կը ծնանին . եթէ ըսածիդ պէս յարութի կայ , պէտք է որ այն կերպած միսը շատ անձին

վրայ քաժին ըլլայ , որ այս ալ անշարժար քան մի է + ուրեմն  
յարութիւն չի կայ :

Պ. Պ. Ետք չէ՝ որ մէկ մարդ մը բոլոր կենացը մէջ՝ ինչ որ  
ունէր նիւթականապէս՝ յարութե՛ օրը միւսանգամ առնէ .  
այլ այնքան մը որ՝ բաւականութիւն ունենայ կատարեալ հա-  
սակին : Ուէ որ կատարեալ հասակին բաւականութե՛ը բան մը  
պահսեց . ինչպէս ըսենի թէ տղայութե՛ ժամանակը մեռաւ ,  
կամ անդամոց կողմանէ պակասութի՛ ունեցաւ , ածային կարո-  
ղութի՛ կընայ ուրիշ տեղէ լցունել . ինչպէս բնութի՛ ուրիշ  
տեղէ կը կատարէ ծնեալ տղային հասակը՝ բաց ՚ի հօրէն և ՚ի  
մօրէն . նոյնպէս թէպէտ ունանք մարդու միս կուտեն , հարի չէ  
որ յարութի՛ առած ժամանակը այն միսն ալ իւր մարմնայն մէջ  
երկայ . քանզի մարդոյն միսը միշտ կը ունչանայ բնական ջեր-  
մութեան զօրութի՛ և դարձեալ կաձի . բայց կերված միսը  
որոյ միս էր , ըստ հետ յարութի՛ կառնէ , թէ որ պակաս մաս  
մարմնայն լութի՛ ըստ կը կատարի՝ ինչպէս որ սոխիք :

৫০

Ուր հաւասքին զօրութել նայելով թէ որ քրիստոսիւ կաղաստիմք ՚ի մեղաց և ՚ի մահուանէ , պէտք է որ անոնք միայն փրկութե արժանի ըլլան , որոնք որ հալլորդ եղան .քի հաւատցն և խորհրդոցն . բայց շատերը հաղորդ չեղան քի հաւատցն , ուրեմն անոնք յարութիւն չեն առնէր :

¶ Արդին միաձին անոր համար մարդկացին բնութիւն առաւ որ նորոգել տայ . և բնութեա պակասութիւնը որ կայ յարութեան օրը պիտի նորոգվէ , և ամ մարդիկ յարութիւն պիտի առնեն . բայց կատարելապէս չեն նորոգվեր ամեն մարդկանց պակասութիւնքը , այլ միայն անոնց՝ որք քրիստոսի հաւատոցն արժանի գանըլեցան . ինչպէս սրբազն առաքեալը կըսէ , || Ամենեքեան յարիցուք՝ այլ ոչ ամենեքեան նորոգեցուք . առ , չի՞նչացաց . Ժե . 51 || :

5 · 85

Ճթէ լնդհանրապէս ամենն ալ յարութիւ պիտի տռնեն նէ, ինչը կըսէ Դաւիթ մարգարէն, թէ || Ո՛չ յարիցեն ամ լսրիշտք ՚ի դասաստան . առջն . ա . 5 || :

Պ. 4. Աւաւթի խօսքը այսպէս իմացիր • Ո՛չ յարիցեն ամբարիշաք ՚ի դատաստան, այսինքն ՚ի դատաստան քննութեա այլ ՚ի դատապարտութիւն • քանզի հիմնկվընէ դատապարտեալ են • ինչպէս որ արունտել մեկը որ բանտը կըլլայ, վերջապէս երբ կըհանեն դատաւորին ատեանընէ, դատաստանի համար ելլալ չըսվիր անոր, այլ յետին վճիռը լսելու համար • այս է Դատիթ մարգարեին խօսքին միտքը:

Եթէ մարգարեներէն վկայութիւն կուղես • ահա Յօր երանելին կըսէ, || Գիտեմ զի մշտնշնաւոր է՝ որ լուծանելոցն է զես յերկրէ յարուցանել • Ժթ. • 25 ||: Եւ Եսայի մարգարեն կըսէ • || Տեսջիք և խնդասցին սիրաք ձեր, և ոսկեքք ձեր իբրեւ զդալարի զուարձասցին, և ծանիցի ձեռն տն երկիւղածաց իւրոց (ահա յարութիւն արդարոց), և սպառնասցի անհաւատիցն, (ահա յարութիւն մեղաւորաց) ||:

Եւ ինչ պէտք է մեղի մարգարեներէն վկայութիւն մուլալ • ահա տերն մարգարեից ինքն կըսէ • || Եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ՚ի դեբեղմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արապքս • որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ ՚ի յարութիթ դատաստանաց • ՅՆ. • Է. • 28 ||: Ահա ամենեքին կըսէ, և ոչ թէ ոմնիք: Եւ որոց բարիս գործեալ իցէ, ահա արդարոց համար կըսէ • և որոց զչար արարեալ, մեղաւորաց համար կըսէ:

## Հ. ծԲ.

Պաւանեցայ ըսածներուդ, բայց կըսէս՝ թէ դատաստանին ետքը փառքն ալ յաւիտենական է՝ տանշամնքն ալ • թէ որ այ դատաստանը արդար է, պէտք չէ պատիժը մեղքէն շատ ըլլայ • քանզի այնպէս գրած է Ռբ գրցն մէջ • || Ըստ չափու յանցաց եղիցի և պատիժն • Բ, օդին. ին. • 2 ||: Արդ՝ յանցանքը ժամանակաւոր է, ինչը պատիժը յաւիտենական պիտի ըլլայ:

Պ. 5. Արդապետք եկեղեցւոյ այսպէս կըսեն • թէ որ մարդ մը քաղաքական օրինաց դէմ յանցանք գործէ հինգ բոպէի մը չափ, և քաղաքապետը իմանայնէ՝ հինգ բոպէի՞ արդեզը պատիժ կուտայ, եթէ շատ ժամանակի • և պատճառն ինչէ, քանզի մեծին հրամանին դէմ յանցանք գործեց: Խշանաւոր մէկը որքան գերագոյն մեծութիւն ունենայ այն յանցաւոր մարդուն վրայ, այնքան պատիժն ալ առաւել կըլլայ:

Արդ՝ որդին միածին իւր անդին և պատուական արիւնը

Թափեց մեր մեղացը համար, և Եթէ միւսանդամ մեք ընդդեմ  
նոյն անդին արեանը և անհուն մեծութեանն ոյ մեղապարտ  
գտնըլիմք նէ, ած՝ որ յաւիտենական է, յաւիտենական պա-  
տիժ կուտայ մեղի արդարութեամբ:

## Հ. Տ. Տ.

|| ուրբ վերնատանը մէջ եղած ընթրիքէն՝ արդեօք Յուղա-  
հաղորդեցա՞ւ: Կամ որ կըսէ, || թացեալ պատառ՝ տայ յու-  
գայի || այն թացեալ պատառը ՚ի սուրբ խորհրդոյն էր:

Պ. || արդապեաք կըսէն, թէ Յուղա ընդառաքելոց ըն-  
կալաւ հաղորդութեան ածային խորհրդոքը. բայց գիտանալ  
պէտք է, որ երբ Յուղա քրիստոսի ձեռքէն թացեալ պա-  
տառը առաւ, յաւաջուց հաղորդեալ էր. քանզի այն պատառը  
քահանայագործեալ չէր:

## Հ. Տ. Կ

() Կաղկաղաղդի շաբաթ օրը Ղաղարու յարութե յիշատակը  
կըկատարեմք, արդեօք այն օրը Ղաղարու յարութիւն առաւ:

Պ. || յն շաբաթ օրը չէր, որ քայլ յարութե տրվաւ Ղաղա-  
րու, այլ ասան և հինգ օր յառաջ էր. եաքը չըկամներէն հե-  
ռացաւ՝ Եփրոյիմ քաղաքը գնաց, և անկէ միւսանդամ Երիքով  
գնաց, և անկէ Բեթանիա՝ և հացեւրցիթի կընսաի, և այն տեղը  
եղողներուն մէկը Ղաղարու էր. և երբ խմացան Երուսաղէմա-  
ցիները՝ որ հրաշք տեսնալու արժանի եղած էին, միւս օրը  
առաւօտուն՝ արմաւենեաց ոստ առին և դիմաւորեցին, որ  
Ճաղկաղարդին կիւրակէն է, ինչպէս կըվկայէ աւետարանիչը.  
|| Յիսուս վեց աւուրբք յառաջքան ղղատիկն՝ էին ՚ի Բեթա-  
նիա՝ ուր էր Ղաղար, զոր յարցց յառաջնումն գալստեան || :

## Հ. Տ. ԿԱ

|| բբոց խնդիրը ած կըկատարէ. Յակոբ Սծընոյ հայ-  
րապեան ալ երկելի սուրբ էր, ինչո՞ւ համար չի ձգեց ած՝ որ  
նոյի տապանը տեսնոյ:

Պ. || Եւրոբդ բան մի էր ոք Յակոբին այդ խնդիրը. քանզի  
ածային անբաւ զօրութելը ցուցունող ոք եկեղեցին է, որց  
օրինակ էր այն տապանը. ինչ պէտք է բուն խսկականը ձգել,  
8

և երթաւ օրինակը փնտըուել, որ կենդանիներու և անտառուններու ժողովարան մի էր։ Եւ այս խնդիրըին աւելըրդութիւնն անկէ յացանի եղաւ, որ որբան լեռան ծայրը կը մօտենար, թմրութիւնը կուգար վրան, ետքը արթնցած ժամանակը ինքը զինքը լեռան ներքելը կը գտնար։ Բայց այսու ամենայնիւ ամենեին ած զուրկ չել ձգեց իւր խնդիրքէն, այն տապանին փացան մաս մը պարզելով հրեշտակի ձեռքք։

## Հ. ԿԲ.

**Արդեօք մինչեւ այն ժամանակը բոլոր տապանը ամբողջ մնացէլ էր։**

Պ. Ակոք ածաբան գժուարահաւատալի է կըսէ, բայց կարելի է որ կտորները կար, և անկէ մաս մը տրվեցաւ սուրբ Յակոբին։

## Հ. ԿԴ.

**Արբոց նշխարաց պաշտօն տաւ կը վայլէ։**

Պ. Այսիւս կըսէ սրբն Յօհան Ոսկեբերան։ «Արդասէր է ած, և բիւրս ընձեռէ մեղ վրկութե պատճառս, հանգ գերձ այլովքն և զայն ձանապարհ երաց մեղ, որ բաւական է յառաքինութիւն անդը հրաւիրել զմեղ, թողով այժմ առ մեղ զսրբոյն նշխարս։ Վանզի յետ զօրութեան բանիցն՝ զերկըրդ գահ ունին շիրմիք սրբոյն, ՚ի զարթուցանել առ ՚ի նոյն նախանձ զհոգիս տեսողացն զնն։ Եւ յորժամ որ մերձ կայ այսպիսում տապանի, անդէն գեղեցիկս տունու զձաշալ զազդեցութեանն զայնորիկ։ Վանզի տեսութիւն աապանին։ Եինքն կալեալ զհոգին, յափշտակէ զնա և զարթուցանէ, և այնպէս իմն հիացուցանէ, որպէս եթէ ինքն իսկ որ ՚ի նման հանդուցեալ կայ՝ ՚ի միասին աղօթս առնէ, և մերձ կայ և երեխ։ Տես ՚ի ճառն՝ որ ՚ի սուրբն բաքելսս։

## Հ. ԿԴ.

**Արբոց նշխարները տեսնալէն ինչ օդուտ կը լլայ։**

Պ. Շն երանեալ վարդապետը այսպէս կը հրամայէ։ «Եթէ ոք հասեալ ՚ի վիայարան սրբոց, այնպէս ՚ի չափու ունի զանձն, ոոկ եթէ ոք ՚ի պատանեաց ՚ի խրախմանի տեսանելով



„զդաստիարակն՝ զի տուընթեր կայ , և ակնարկի արարեալ  
 „պատուիրէ նմա՝ զի քաջալսյելուց օրինօք արբցէ և կերիցէ  
 „և խօսեսցի և ծիծաղեսցի , և ամենենին պատկառ կոյցէ՝ զի  
 „մի՛ բնաւ ըստ չափն ելեալ աղարտեսցէ դշամբաւ անձինն :  
 „Եւ ՚ի տեսութէ անտի յայնմանէ բարեպաշտագցն ևս յար-  
 „դարեալ և զերանելին զայն ՚ի խորհուրդս իւր նկարեալ ,  
 „վաղվաղակի մատչի ՚ի տապանն . և հասեալ անդր՝ մեծ ևս  
 „ահիւ ըլբեռնի յանձն իւր , և ապա զամ վատութի բովանդակ  
 „յանձնէն ՚ի բաց թօթափեալ և իբրև զթռչուն թեթևաց-  
 „եալ , այնպէս մեկնի ՚ի բաց : Եւ զորս միանդամ ՚ի քաղաքէ  
 „անտի ելեալ՝ ընդառաջեալ գտանէ ՚ի ձանապարհին , նովին  
 „պարկեշտութիք յղէ զնն երթալ զբօսնուլ հոգեորապէս , ոչ  
 „զայն բարբառ միայն արձակելով առ նոսա , Եթէ ցնծացէք  
 „առաջի ան գողութիք . այլև զառաքելականն զայն ՚ի վերայ  
 „բերելով , Եթէ ուտիցէք , Եթէ ըմպիցէք , Եթէ զի՞նչ և առ-  
 „նիցէք , զամենայն ՚ի փառու այ արասցիք :

## Հ . ԿԵ

## Արբոց մասունքները ախտից բժշկութի կրնան շնորհելու

Պ . Այս Եթէ մարմնոյ ախտը կը բժշկեն՝ այլև հոգւց , և  
 գեերը կը խայտառակեն . և ահա նոյն այլ Ոսկեբերանն այսպէս  
 կը վկայէ : Եթէ ոք ՚ի ձենչ վատութիք հոգւցն տանջեսցի ,  
 „Եթէ ոք ախտիւք մարմնոյն , Եթէ հարստահարութիքն , Եթէ  
 „յայլինչ կենցաղական ՚ի վիշտս , Եթէ ՚ի բեռինս մեղաց , հա-  
 „ւատութիք ՚ի նշխարս արց գիմեսցէ , և յամենայնէ անտի զերծ-  
 „եալ բազում խնդութիք գարձից անդրէն , և ՚ի տեսութենէ  
 „անտի՝ միայն զիսիզմ մատացն թեթևագցնս յարդարեսցէ : Տես  
 ՚ի ներըողն՝ ոք ՚ի սուրբն իգնատիսու :

Եւ գեերը հալածելնուն և խայտառակելնուն համար ,  
 նոյն վարդապէտը այսպիսի օրինակաւ կը վկայէ : ՚Օ որօրինակ  
 „(ասէ) . աւաղակապէտը և գերեղմանակրկիւտք՝ յորժամ ուրեք  
 „զարբունական զզէնսն տեսանիցեն վայրանիեալ՝ զրահ , աս-  
 „պար , կամ սաղաւարտք համակ ոսկեմաննչք՝ անդէն խոր-  
 „շին , և չժողովին մօտ երթալ և շօշափել խուճապէալք յան-  
 „հնարին վտանգէն , Եթէ ոք երբէք առ ՚ի նոյն յանգնեսցի ,  
 և այսպիսի և դեք ճշմարիտ աւաղակապէտք՝ ուր ուրեք տեսա-  
 „նէն հանգուցեալ զմարտիրոսացն մարմինս , վաղվաղակի ընդ-  
 ու կը ունիս ՚ի փախուստ խուճապէն :

## Հ • ԿԶ

Արդեօք սրբոց բարեխօսութիւնը օգոստա են մեղաւորին :

Պ. Յ' . քանզի Յակով ածաբան՝ ի վերայ այն բանին՝ որ  
յաւետարանին Մարկոսի, է . 32 . թիւն բերին առաջի նը խուլ  
մի և համը, և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ի վր նը : Ալսէ՝ թէ  
աղաչանօք բերօղացն աղատեցաւ այն խուլն և համըն, Քանզի  
մեղաւորն իբրև համը չի կրնար ինքնին մեղաց թողութիւն տրվո-  
ղին աղաչէլ, այլպէտք է որ ուրիշներուն էզուն փոխ առնէ,  
այսինքն սրբոց բարեխօսութիւնը : Ահա և ինքն ած անսուտա  
բերանովն այսպէս կը վկայէ՝ ասելով առ Եղիփաղ թէ մնացին  
և առ Երկոսին բարեկամն նը, որոնք արդարցն Յօրայ բարե-  
կամք էին . թօք ծառայ իմ աղօթս արասցէ վասն ձեր, զի թէ  
ոչ նմա ակն առեալէր և եթէ ոչ վասն նորա էր, կորուսեալ  
էր իմ արդեօք զձեղ . յօն . Խը . 8 ||:

## Հ • ԿԵ

Եթէ կարգաւոր մը անիրաւ աեղը մէկը բանադրէ, ընդ  
բանադրանօք կը համարի՞ այն բանադրեալը :

Պ. Յ' . քանզի կապէլոյ և արձակէլոյ իշխանութիւն այս-  
պէս տրվեցաւ առաքելոց, թէ զոր միանգամ կապիցէք յերկ-  
րի, եղեցի կապէալ յերկինն . և չըսաւ թէ՝ զոր իրաւամբք  
կապիցէք, եղեցի կապէալ . եթէ այսպէս չըլլար նէ՝ ընդունայն  
կըլլար եկեղեցական կապանքը : Ահա և սրբազն առաքեալք  
Դիեգէ կանոն իւրեանց այսպէս կաւանդէն, թէ Տարապարտ կա-  
պէցէալն ախորժանօք ընդունիցի զկատանսն . թէպէտ կա-  
պօլն զպատիժ պատուհասի ընդունի և ընկալնու, որով-  
չետեւ անիրաւաբար բանադրեաց :

Պ սեմք թէ այգետէր մը իւր այգեգործին հրաման տրված-  
է այգիին ծառերը յօտել, բայց չոր սատերը հանելու դիտա-  
ւորութիւն . թէ որ այգեգործը կանաչ և պաղատու ծառերն ալ  
կտրէ նէ՝ կը կարըլին, բայց յետոյ այգետէրէն պատիժ կը կը :

## Հ • ԿԲ

Եթէ կարգաւոր մը կարգաւորի հեա ոխակալութիւն ունենա-  
լով, կընախ պատրագ մատուցանել :

Պ. Ա. քանզի այսպէս կը հրամայէ ուր Ներսէս շնորհալին ։  
 «Ան որ ՚ի քահանայից պատարագողաց՝ ոխակալութիւն ունելով  
 ՚ի սրտին ընդ ուժեք, մատիցէ յածային խորհրդոյն կատա-  
 րումն, և անընդունելի առնիցէ զպատարագն առաջի ոց, այլ  
 ՚նախ հաշտեսցի ընդ եղբօրն ըստ հրամանին քի, և ապա եկ-  
 ՚եալ մատուցէ զպատարագն։ (Այս սահման ե՚ի վը հաղորդականացն եղեցի։  
 ՚համար կըսէ), Նցն սահման ե՚ի վը հաղորդականացն եղեցի։

## Հ. Կթ.

**Եթէ** քահանայ մը պատուիրանաղանց մէկը բանադրած-  
 բլայ, կընայ պատարագ մատուցանել։

Պ. Եթէ ոյ օրինացը դէմ մեղանչելուն և չի զղալուն հա-  
 մոր բանադրեր է քահանայն, և այն բանադրեալ ալ չէ ուղ-  
 ղըվէր, և չէ խնդրեր քահանայէն թողութիւն, առանց խղձի  
 մոտաց քահանայն կընայ պատարագ մատուցանել, և դատա-  
 պարառութեան ներքե է այն՝ որ չուղղեցաւ, և թողութիւն չի  
 խնդրեց ։ քանզի և քանզի չի հրամայէր վայրապար թողութիւն տալ  
 արտմեցուցանողին, այլ եթէ անկեալ առաջի կը խոստանայ  
 ապաշխարել, || Յայնժամ (ասէ) շնորհեսցի առ ՚ի քէն թողու-  
 թիւն յանցանացն՝ զոք առ քեզն յանցեաւ ||։

## Հ. Հ

**Ո**ւ որ բանադրեալը գայ, և քահանայէն թողութիւն  
 խնդրէ՝ խոստանալով ուղղելու ինքը զինքը, և քահանայն  
 մորմնաւոր պատճառի մը համար թողութիւն չի տայնէ, կընայ  
 պատարագ մատուցանել։

Պ. Հրաման չունի այնպիսի քահանայն պատարագ մատու-  
 ցանելու, մինչեւ ներողութիւն չի տայ այն բանադրեալին, և չի  
 հաշուըլի նորին հետ։ Վ. Հարցյանդ պատասխանը՝ առ ։  
 Շնորհուիին Ընդհանրականին մէջ։

## Հ. ՀԱ

**Վ**նչ կերպ որպիսութիւն ովէտք է ունենալ պատարա-  
 գամատացց քահանայն։

Պ. Հաւը ժամարարութիւն զգեստէն թող հասկընոյ ։ քանզի  
 հաղած խորհրդաւոր զգեստին նսցելով պէտք է իւր անձին

կատարելութե ունենալ . ըստ սաղաւարտին՝ պէտք է ունենալ  
ենթադատողութե ընտրողութե . ըստ շապիճն՝ մաքրութե ողջա-  
խոհութե . ըստ գօտուցն՝ սպանումն մարմնոյ . ըստ բաղանին՝  
քաջութե արիութե . ըստ ուրարին՝ յարամնայութե երկայն-  
մառութեան . ըստ շուրջառոցն՝ կատարելութե սիրոցն :

## Հ . ՀԲ

**Խնչ կերպ որպիսութիւն պէտք է ունենալ ձաշակ առա-  
նողին :**

**Պ .** ատ կատարելութե կարօտութե ունի . քանզի պէտք է  
առաքինութե գործքերով զարդարմիլ , որ այս ոք խորհուրդը՝  
իւր հոգւցն մէջ ընդունելու աեղի ունենայ . պէտք է մտքուր  
խղճմանքով ձաշակել , ինչպէս որ Սերովը ունելոք մերձե-  
ցաւ ՚ի սեղանն ոք . և ահա կը հրամայէ սրբազնի առաքեալն  
Պօղոս , || Փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա ՚ի հացէ անտի  
կերիցէ . առ , չորնթաց-ոց . ժամ , 28 || :

**Պէտք է սրբութե մաքրիլ եօթն մահացու մեղքերէն ,**  
քանզի նախ հպարտութեան մեղքը , որ հըեշտակները քակեց  
իրենց աթոռեն , և յերկիր թօմթափեց . գուգակ , ժիշ . պէտք է  
վերցունել . զի հպարտութե մեղքով մերձեցողը՝ նոյն դասա-  
պարտութեան պատիւթը կը կը :

**Պէտք է մաքուր ունել հոգին ՚ի նախանձուէ . քանզի**  
ինչպէս հոգին ոք իբրև աղաւնի երևեցաւ , որ լեղի չունի ,  
նոյնպէս և հաղորդողին պէտք չէ՝ որ նախանձի լեղիութիւն  
ունենայ իւր սրտին մէջ :

**Պէտք է աղասա ըլլալ բարկութե ախտէն . քանզի ինչպէս**  
Պիղատոսի բարկացող և կատաղի զինւորները չարչարեցին . քանզի ,  
նոյնպէս և բարկութե ախտով ձաշակ առնօղը անոնց կարգը  
կը համարմի , և անոնց պատժակից կը լլոյ :

**Պէտք է զգուշանալ ՚ի ծուլութենէ , և առաքինական**  
արիութե կատարել խոստովահօրը դրած ապաշխարութիւր ,  
և նոյն արիութեամբ դիտաւորութիւն ունենալ միշտ գէմ  
դնելու երեք տեսակ թշնամիներուն , որը են՝ մարմին , աշ-  
խարչ , և սատանայ :

**Պէտք է զգուշանալ յագահուէ՝ որ չի նմանի Յուդայի և**  
որ իւր սրտին մէջ մասնութե երեսուն արծաթը կար , և բե-  
րանցն մէջ յի քի տն մերց մարմին և արիւնը . որուն կողմանէ  
կը գանկատէ առ Դաւիթ մարդարեին . բերանովը այսպէս :

Ա ՈՐ ուտէր զհաց իմ, յտձախեաց առնել ինձ խաբէութիւն +  
սաղնս . Է՞ , 10 || :

**Պէտք է** զգուշանալ յորդիրամութէ . քանզի որկրամու-  
լութէ հետեւակը կուապաշտութիւն , ինչպէս իսրայէլի համար  
կըսէ դաւիթ , || Պղծեցան ՚ի բելփեգովը , զի կերին զզոհեալ  
և զմեռելոտի . սաղնս . ՃԵ . 28 || :

**Պէտք է** զգուշանալ ՚ի պոռնկութէ և ՚ի բղջախութէ .  
քանզի որ հաղորդութէ խորհուրդը՝ հրեշտակաց հաց կան-  
ուանի . ուրեմն ճաշակողը իբրև հրեշտակ պիտի ըլլայ հոգւով .  
իսկ բղջախոհքն ոչ եթէ հրեշտակաց , այլ պիտի անամոնց կը  
նմանին , վասն որոյ արք մեր յա քա արգելուլ կը հրամացէ այն-  
պիսիները սուրբ հաղորդութէն , այսպէս ըսելով || Մի տայք  
զսրբութիւն շանց , և մի' արկանէք զմարդարիսա ձեր առաջե-  
խողաց . հատիւնս . Է . 6 || :

**Ա** Երջապէս ամմէն տեսակ մեղքերէն՝ պէտք է որ մա-  
քուր և որ ըլլայ ճաշակ առնօղը . քանզի զաղիը մեղքով ախ-  
տացեալը և անզեղջը հրաման չունի եկեղեցին ևս մանալու . և  
այս պատճառաւ սարկաւագները կըսէն ողջունի ժամանակ ,  
|| Ուրք ոչ եք կարող հաղորդիլ ածային խորհրդոյս , առ դրունա  
ելք և աղօթեցէք || :

Յիշաւի սրբութիւն կանուանի այս որ խորհուրդը , բայց որքց  
սրբութիւն . վասն որոյ ժամարարը որ խորհուրդը բարձրացուցա-  
նելով՝ բարձրագոչ ձայնիւ կըսէ , ի սրբութիւն սրբոց :

## Հ . ՀԴ

**Ա** նարժանութեամբ ճաշակողները ինչ պատիժ ունին :

**Պ.** **Պ**ատժոց տեսակները անթիւ են . մինչեւ կը համարձա-  
կիմ ըսել թէ աշխարհիս վրայ որբան պատիժ և պատուհատ  
կը պատահէ , շատը անարժանութիւն պատարագողաց՝ և անար-  
ժանութիւնոց որ մարմինը և արիւնը ճաշակողաց է : Բայց  
Ալպերոտ բովանդակն քանի մի պատժովք կը լըմբնցունէ , որոնք  
իբր արմատ են ամպատժոց , և այսպէս կըսէ , ի Անարժան հա-  
ղորդութիւն թակարձէ զմարդն մեղք՝ պատրաստէ զկորուստ || .  
և վկայութիւն կը բերէ Սաղմոսէն . || Եղիցին սեղանք նոցա յորո-  
գայթ || : **Կ**այթակղեցուցանէ զընկերն , ըստ այնմ՝ || Եւ ՚ի հա-  
տուցումն : Կուրացուցանէ զմիսա , ըստ այնմ՝ || Եւ ՚ի գայ-  
թակղութիւն : || Կուրաձէ ՚ի ներքոյ փորձութեան , ըստ այնմ՝  
|| Կուրացումն աչք նոցա՝ զի մի' տեսցէն || : **Օ** այրացուցանէ

զած , ըստ այնմ՝ || ՀԵՂ ՚ի վերաց նց զբարկութիւքո || : Կարձէ-  
զժամանակառոր կեանս , ըստ այնմ՝ || Եղեցին բնակութիւն նց  
աւերտկ || : Կողոպաէ ՚ի շնորհաց , ըստ այնմ՝ || Եւ ՚ի յարկս նց  
մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ . ալոեք . գիք , շ. գլ . ժե || ,

## Հ . ՀԴ.

**Ամէն աղդաց պատարագը արդեօք մի և նոյն է :**

Պ . Եսպէս պատասխան կուտայ որն Ներսէս այդ հարց-  
մանդ : Ո Ո՞ի լինլիք (ասէ) աղայք մաօք , այլ ՚ի չարեաց աղայա-  
ց ցարուք , և մաօք կատարեալ լերուք , քննել զշմարտութին  
և նմին հաւատնել . զի թէ զանազան քնք էին՝ կամ զանազան  
ածք , զանազան զօրութիւն իւրաքանչեւր աղդացն տիրեալք  
աշխարտիւ էր կարծիք . , և ունէր զանազանութիւն պատարա-  
ցին հակառակամարտի ածոցն զօրութիւն կատարել , զի այն  
աղդին ածն զիւր զօրութիւն փառացն ՚ի նորա պատարագն  
ատպաւորէր՝ և այսմ ՚ի սորացն : Խսկ թէ ասիցես՝ քա մի է ,  
բայց տունա հաւատովն սորա զանազանապէս բերին : Ծա-  
նիք , զի զոր վա այսր բան ընդարձակ ուսուցաք ող զքս մի է , և  
զսորտ հաւատոն միապէս՝ որ առ նոտ : Վ պա թէ քա մի է , և  
մեր ամենեցուն առ ՚այս յցսն միով օրինակաւ , և մի հոգի  
անուանեալքս յանուն նը , յիւրաքանչեւր աղդս ընկալաք ,  
և չիք խտիր ՚ի հաւատոցն Աբրահամու որդւոցս ծնելոց .  
յացտ է թէ մի է եկ եղեցի ընդ տիեզերս , և միով հոգւով  
՚ի նոն կատարեալ պատարագն : Օ ՚ի որպ դու խնդրես զհո-  
գին կատարիչ քուար նուիրանացն , այնպէս և նա խնդրէ  
իւրումն : Խւ թէ զանազան են լեզուքն , բայց ոչ թէ զա-  
նազան հոգիս խնդրուք՝ այլմի , մնանաւանդ զի և մի բանիւք  
աղօթից , և մի ձեւակերպութիւն առ ՚ի նոյն ամա աղդաց քրիս-  
տոնէից խորհրդածութիւն :

Պ . ՚Ի արձեալ՝ որո՞շ արեգակն մի է , որ զիմն զգալի աչս և  
զնորացն լուսաւորէ և սրբէ , և իմանալի տշաց լցս պարզեէ :  
Խսկ եթէ որ ՚ի չարութիւն դրդեալ ասիցէ , ես միայն տեսա-  
նեմ զարեգակն և ոչ դու՝ միայն զիւրն չարութիւն ցուցանէ ,  
և ոչ զիս ՚ի համապիւռ լուսացն զրկէ , որչափ մնարու է իմ  
հայեցուածն : Վ յապէս աղդ որ զազդ անկատար և թերի  
յաջաղէ՝ յորց վլու անունն քի է , զիւրն չարութիւն ցուցանէ .  
և ոչ թէ զնոն ՚ի հասարակաց շնորհէն զրկէ : Զիք ապա զա-  
նազանութիւն մից քի պաշտօնէիցս ՚ի մի խորհրդածութիւն :

ո Եւ որք զայս այսպէս կարծեն՝ զանձինս իւրեանց դատա-  
ռ պարաեն, և ոչ թէ զիւղութեան հոգին յաշաղանաց ախտի  
ո ծառայեցուցանել կարեն:

Ա. Եւ նիւթք ասեն զանաղանք են պատարագին, որոց  
այսպէս պատասխան կուտայ: « Եշթէ հաց և գինի ոչ են՝  
ո ըստ որում ՚ի քէ աւանդեցաւ, յայտ է թէ ոչ կարեն զներ-  
ո գործութիւ հոգւոյն ըստ այսմ խորհրդոյ ընդունել, և մարմին  
ո լինիլ քի, ապա թէ հաց և գինի է, ատնի ստուգապէս զլցոյ  
ո զօրութեան սուրբ հոգւոյն, որպէս և ապակին զարեգակն:

## Հ. ՀԵ

**Ուրեմն մի և նցն են խմորեալն և անխմորն՝ ջրախառն  
գինին և անարակն:**

Պ. « Եցն սուրբ վարդապետը այսպէս կըսէ: « Ո՞ւ յան-  
ո գոնութեղ՝ և անօդուտ հակառակութեղ, որ ձգէ զմեղ՝  
ո շամիսութիւ. ած զմերոյ գրեալ օրինակն ՚ի մէջ. եթէ խառ-  
ո նեփ ընդ ապակին սրակութիւ ինչ գունոյ ՚ի պէտս վայելուեն,  
ո թերեւս այն տկարտցուցանէ՛ զնա տանել զլցոյ արեգականն,  
ո կարծեմ և ոչ բնաւ, ապա մի՛ զօրութիւ հոգւոյն նիւթոյ  
ո աղագաւ՝ քան զարեգականն եղականի տկարացուցուք:

Եւ այսաւ գիտնաւ ալետք է, որ ընդհանուր վճիռ է  
ածաբանից ՚ի վլր իւրաքանչիւր աղքաց քրիստոնէից, հաստա-  
տուն պահել իրենց եկեղեցւոյն արարողութիւնը և ծէսը:

## Հ. ՀԶ

**Անչպէս մի մարմին քի կըսիլ բոլոր եկեղեցեաց մէջ ՚ի  
պատաքագելն:**

Պ. « Եցն վարդապետը ևս այսպէս օրինակ կուտայ, արե-  
գական մէջ զատ զատ քանի մի ապակի գիր, նցն մէկ արեգա-  
կան լցուը չէ՛ որ ամենուն վրայ ալ կը ծագէ, և մէկ չէ՞ն ան-  
ոււանիր սցն զատ եղածները, և մէկ լուսոյ զօրութիւ ընդու-  
նու չէ՞ն մի: « Եցնպէս բոլոր աշխարհիս մէջ թէպէտ զատ  
զատ են եկեղեցիք, բոյց մէկ նիւթ կըդրվի պատարագին,  
այսինքն հաց և գինի, որուն վրայ կը ծագի համատարած արե-  
գակն մի՝ այսինքն հոգի ոչ, և ամենն ալ մի մարմին քի կընէ:

## Հ ։ Հ Ե

Պ րիոտոս միանդամ պատարագեալ խաչին վըսյ՝ մեռաւ, մեք ամեն օր պատարագելով՝ քրիստոսի մահը միւսնդամ կընէմք:

Պ ամւ լիցի ։ որչոփ յամ եկեղեցիս կըպատարագեմք, ոչ եթէ քի մահը կը կրկնեմք, այլ նոյն խորհրդայ յիշատակը առաջի հօր այ կը կատարեմք, որով իբր թէ կըսեմք ։ Ո՛վ հայր ած՝ հայեաց ՚ի գրաւականս մեր ։, այսինքն քո միաձնիդ մարմնոցն և արեանը, որ իւր մահուանը յիշատակ ձգեց, և մեր մեղաց թողութեա և քեզի հետ հաշտութեա միջնորդ ըրաւ, որ մեղմէ առաւ այն՝ որ այժմ քեզ ընծայ կը մասուցանեմք, և ասով քեզմէ մեղաց թողութեա և շնորհ կը խնդրեմք:

## Հ ։ Հ Ը

Պ աքելոց ժամանակը պատարագի արարողութեան ասմունքները ի՞նչ էին:

Պ աքելոց ժամանակը որովհետեւ հաւատոյ գարունը նոր ծաղկեր էր, և ամեն ալ լի էին հոգւով սրբով, և նորին շնորհաք իրենց միաքէն կը շարագրէին, և կըսէին աղօթքները ինչպէս որ հարկ և արժան էր՝ թէ պատարագի խորհրդոցն և թէ այլ սրբաղնագործութեց: Իսյոյ յետոյ երբ նուազեցաւ ՚ի մարդկանէ այն շնորհաց լուստիպյութիւնը, որ և հոգեկիր վարդապէտք եկեղեցւոյ՝ այս արժանաւոր եղած տղօթքները և ասմունքները մեղ յետագայիցս աւանդեցին, ինչպէս որ կը վկայէ և սուրբ Ներսէս շնորհալին:

## Հ ։ Հ Ձ

Պ ուրբ պատարագին մէջ՝ Ողջոյն տնեք միմեանց՝ և քանի մէջ մեր յայտնեցաւը, ի՞նչ կը նշանակէ:

Պ եղանին վըսյի ընծայքը՝ քո կը նշանակէն, և սարկաւագը այս ըսելով՝ իմացունել կուղէ, թէ ձվ գումարեալ ժողովուրդք՝ պէտք է ձեզի իբր մի անձն ըլլալ սիրով մէկողիկու հետ, և այն սէրը մէկզմէկու ողջոյն ատլով՝ յայտնել, և որոնք որ ոխ ունին իրարու հետ, եկեղեցին գուրս ելան և աղօթեն, քանզի ոխակալք արժանի չեն որ խորհրդոցն յանդիման կանդնելու, ուստի այն ողջունին փոխարէն դպիրք պա-

տասխան կուտան ժողովը եան կողմանէ , թէ թշնամութիւնը  
մեղմէ հեռացէր է , և սէրը ամմէնուս վրայ տարած վէր է , և մի  
մարմին եմք յիսուսի քրիստոսի գլուխն մերց :

## Հ . 2

**Ա.** Ժդ ողջունին ժամանակը՝ ժամարարը կիսով չափ սը-  
կիհը կը բանայ , և սեղանցն մէկ կողմը կը կանգնի , այս ինչ  
միտք պիտի ըլլայ :

**Պ.** Խորհուրդ ամենասուրբ կուսական ծննդեան տեսառն  
մերց յիսուսի քի , որ ՚ի սուրբ կուսէն ծնանելով՝ երևեցաւ  
՚ի մէջ մարդկան :

## Հ . 25

**Վ.** Քրբ քրիստոս առաքեալքը քարողութէ զրկեց , պատ-  
ուիրեց՝ թէ ՍՄի բառնայք զքասկ , մի՛ մախալ , մի՛ կօշեկս || .  
այս ինչ միտք պիտի ըլլայ :

**Պ.** Քանզի իրենց հոգը՝ իրենց պիտոյքին վրայ ըլլայ , այլ  
իրենք խրկողին՝ ոյսինքն ոյ վրայ ըլլայ . որ երկնից թռչունքը  
կը հոգայ , առաւել ևս և իւր աշակերտները :

## Հ . 26

**Ա.** Եւս այն ժամանակը պատուիրեց ըսելով , թէ || Ի ձանա-  
պարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք || . այս ինչ միտք է :

**Պ.** Յառաջ իմանալ պէտք է ողջունին մեկնութիւր , քանզի  
ողջոյնը՝ որու որ կը տրվի , անոր փրկութէ շնորհ ունենալուն՝  
և երկնային փառաց արժանի ըլլալուն հայցուածք մի է յոց :  
Վաղա ինչո՞ւ համար ՚ի ձանապարհին արգիլեց . ձանապարհորդ  
եղողը զրադանց մէջ ըլլալով՝ ողջունին պատիւը չի կը ընար  
գիտնալ , և ըստ արժանւոյն պատասխան տալ , անոր համար  
ըսաւ՝ || Ի ձանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք || . Ես և ըսաւ՝  
թէ || Յոր տուն մասնիցէք , նախ ասած զի՞ր ողջոյն տանս այս-  
միկ || . Տուն ըսելով՝ եկեղեցի կիմանամք , և ՚ի մէջ ձանապարհի  
եղողը՝ արտաքոյ եկեղեցւոյ ըլլօղն է , և ՚ի հարկէ քրիստոսական  
ողջունին արժանաւոր չէ այնպիսին , ուստի ըսաւ՝ || Ի ձանա-  
պարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք || :

**Ա.** Երջապէն՝ ձանապարհը յայտնի է որ երկրոյդին ձանա-

ողարհէ , որով կիմանտիք աշխարհի հեշտութե և մեղաց ձանապարհ գացօղները , որոնք ոչ թէ միայն ողջունի արժանաւոր չեն , այլ և արդիւեալէ այնպիսիներուն ընկեր ըլլալ ՚ի ձանապարհորդութե . որոց համար կըսէ Սողոմոն . || Մի երթար ՚ի ձանապարհ ընդ նոսա , խոտորեա զոտն քո ՚ի շաւղաց նոցա . տուաէ . առ 15 || . «Բանզի այնպէսները իբրև աղք ոտից կոխան են՝ և որպէս զիաւ գուեհաց :

## Հ . 24

**Վ**ուաքելոց քարոզութեան վիճակը ո՞յք էին :

Պ . Հակոբ ածաբան առեալ ՚ի կանոնաց սրբոց առաքելոց այսպէս կըգրէ . Հոօմ և ամ իտալիա , Ապանիա , Բըիտանիա , Կոլլիա , Սիւրիա , Կիլիկիա , Գաղատիա , մինչև Յպոնտոս Պէտրոսի առաքելոցն վիճակն էր :

Երուսաղէմ , և ամ աշխարհն Պատեստինոց , և Սամարացիք , Փղացացիք , Արաբիա , Փիւնիկէ , և բնակիչքն Կեսարից առին ձեռնադրութիւն ՚ի Յակոբ տեառնեղբօրէ :

Վ զեքսանդրիա , Թերացիդ , Եգիպտոս , մինչև ՚ի սահմանս Հնդկաց Եթովպից , առին ձեռնադրութիւն Մարկոս առետարանչէ :

Վ րեւելեան Հնդիկը մինչև ՚ի Տով վերջին , առին ձեռնադրութիւն Թովմաս առաքեալէն :

Եփեսոս և Թեսաղոնիկէ , և բոլոր փոքրն Ասիա , Կորնթոս և Աքայիա առին ձեռնադրութիւն Յովհաննէս առետարանչէ :

Ա իկիա և Նիկոմիդիա , և աշխարհն Բիւթանացոց և Գուտահացիք առին ձեռնադրութիւն Անդրէաս առաքեալէն :

Ի ւղանդիա և աշխարհն Թրակացոց մինչև ցմեծ գեւան , որ որոշէ ցաշխարհն բարբարոսաց՝ Ղուկաս առետարանչէ :

Ուրհամ , Մծքին , Միջագետք , Հայք՝ ՚ի Հիւսիսոց մինչև ցհարբաւ՝ Թաղէոս առաքեալէն :

Պարսկ և Պարթիկը , Ասորեստան և Հրանկացք Բաքիլոնի , մինչև ՚ի սահմանս Գթաց , կերպասադործ Ադրէէն :

## Հ . 25

**Վ**ուիստոսի պայծառակերպութե Ժամանակը ՚ի միասին Եղող առաքեալները՝ Մովսէսը և Եղիան ինչէն ձանցան , Քանզի Մովսէս շատ տարի յառաջ մեռած էր , և Եղիա հըեղէն կառօք ամբարձեալէր :

Պ. Այսպէս կըսեն ոմանք , թէ Մովսէսի և Եղիայի պատկերները ունեին առաքեալք , անկից ձանչցան . բայց այս անյարսար խօսք է , քանզի այն ժամանակը սովորութիւնը մարդու պատկեր նկարելը . ուրեմն կերեւայ՝ թէ քա անուննին տալով , առաքեալք ալ գիտցան . կամ թէ Մովսէս ՚ի մեռելոց յարուցեալ ըլլալով տակաւին մեռելութէն նշան ուներ , և Եղիա ողջ ըլլալով՝ դրախտին անմահութէն հոսը կը բուրէր :

Աշ կամ առաքեալք լսեր էին Մովսէսի համար՝ թէ սակաւամօրուս և թէթևախօս է , և Եղիայի համար՝ թէ մազոտ և համարձակախօս է , անկից գիտցան : Այս խօսքերը հաւանական են , բայց առաւել հաւանականագոյն է , թէ քա՞ որ արժան համարեցաւ այն առաքեալները մասամբ իւիք տեսնալ իւր ածութեան փառքը , այս մասնաւոր շնորհքն ալ տըմաւ , որ իրենց չեւ տեսած և ժամանակակից չեղած Մովսէսը և Եղիան ձանչնան :

## Հ . ԶԵ

Աւետարանիչները ինչո՞ւ համար չորս են , և ոչ աւելի կամ պակաս :

Պ. Եպէտ կոյին ուրիշ աւետարանիչներ , բայց սրբազան հոգրապետք այս չորսը ընարեցին , և խորհրդաւոր պատճառներ կուտան՝ ըսելով , թէ քի վերաբերեալ աւետարանչութիւնը գլխաւորաբար չորս բանի վրայ էր , այսինքն մարդեղութէլ , թագաւորութեանը , խաչին վերայ զենմանը , և փառքը յերկինս համբարձմանը :

Ահա Մատթէոս՝ ըստ մեծի մասին քի մարդեղութեանը վրայ կը խօսի . Մարկոս՝ առիւծակերպ թագաւորութէլ վրայ կը խօսի . Ղուկաս՝ պարաբրակ Եղին նման զենմանը վրայ կը խօսի . Յովհաննէս՝ արծուոյ նման փառաց և բարձրագոյն խորհրդոց ածութեանը վրայ կը խօսի :

Աշ այս պատճառաւ երբ այս չորս աւետարանչաց պատկերը կը նկարեն , այս ըսած չորս կենդանեաց պատկերն ալ ՚ի միսաին կը դնեն , որոնք իւրաքանչիւրոց իւր խորհրդաւոր ցուցակն են : Աշ թէպէտ չորս են , բայց մի միայն սկիզբն ունին . ինչպէս որ Եղիւմական գրախտէն բղիած աղբիւրը մի էր , բայց չորս բաժին կըլլար . նցնպէս և չորս աւետարանիչք ՚ի մի միայն աղբերէ հոգւոյն ոյ յառաջանալով աշխարհիս չորս կողմը ածածանօթութեամբ փայլեցուցին :

## Հ . 22

**Պ**արիստոս յետ յարուեն երբ առաքելոց երևեցաւ, ինչո՞ւ այնպէս յարմարեց, որ թափմաս անոնց մէջ չե գտնըլեցաւ:

Պ. Աստ սրբազն վարդապետաց համառօտ մը իմացունեմք. քանզի եթէ առմէն առաքեալք ՚ի միասին անկասկած հաւասային, ըսօղ կըլլար թէ խարվեր են անմիտ մարդկանց նման, որ առանց քննութեան վաղլազակի հաւատացեր են, ուստի թափմաս գուրս ձգեց, որ երկրորդ երևման ժամանակը սրբազն առաքեալք առաւելես հաստատին՝ ՚ի հաւատասու: Ճշու ըստ Ոսկեբերանին՝ ՅԵՏ ութ առուր երեկի թափմայի և աչ առ ժամայն, որպէս թէ յաւուրսան յայնոսիկ կըթեսցի յաշակերտաց, և առաւել սէրն բորբոքեալ լցոցի ՚ի աեսանելն զբան:

## Հ . 24

**Խ**ւաղբեր կանայք արդեօք ովկ էին:

Պ. **Վ**արիսամ Մագդաղենացի քոյրն Ղաղարու, և Մարիսամ Կղէովայ. Սողոմէ՝ մայր որդւոցն Զերեթեայ. Մարթա՝ քոյր Մարիսամու Մագդաղենացւոյն. Յօհաննա՝ որ էր կին Քուզայ Հերովդէսի հաղարապետին. և Շուշան՝ որ կը յիշատակէ Ղուկաս տւետարանիչ. ը. 3:

## Հ . 25

**Լ**որեք սովորութիւն կայ՝ որ աւագ շաբաթ օր գերեզմանասուն կերթան, այս ինչ միտք պիտի ըլլայ:

Պ. Աս Ոսկեբերանին և այլ վարդապետաց՝ որովհետեւ այն օրը քանի ՚ի գժաւ ՚ի գժուխս հոգիները աղատելու համար, նոյպէս և քի փոխանորդք՝ այսինքն սրբազն կարդատորքը այցելութե կելլան ննջեցելոց հոգւոց ՚ի գերեզմանատունս գնալով, և փրկաւէտ օրհնութե պաղատին առ քանի զի որով իւրով մարդասիրութեն ՚ի նոյն աւուր էջ առ կատեալսն՝ որք էին ՚ի գերութեն սատանայի, նոյն գթութե ողըրմեալ գթասցի ՚ի հոգիս ննջեցելոց մերոց՝ որք միշտ ակնկալեալ մնան ողըրմութեան նորին: **Լ**յա պատճառաւ և տեալք ննջեցելոց կը պարդեն զողորմութիւն՝ քի բարեկամաց, այսինքն կարօտելոց և աղքատաց:

**Ա**սրաշէն եկեղեցին լնչու համոր կօրհնեն, և սրբալոյս  
միւռոնիւ կօծեն:

Պ. **Հինգ** պատճառ կուտան սրբազնն վարդապետք: **Ամս**  
որ սատանայական իշխանութիւնը անկէ հալածի ։ այս պատ-  
ճառաւ սուրբ կանոնաց մէջ այնպէս հրաման եղերէ ։ Եթէ  
ուղղափառք՝ արիանոսաց եկեղեցի մը ունենալու ըլլան, ա-  
ռանց օծութեան այն տեղը եկեղեցական խորհուրդ մատու-  
ցանելու հրաման չի կայ ։ քանզի արիանոսաց եկեղեցին է  
բնակարան դիւաց:

**Երկրորդ**՝ անոր համար կօծվի եկեղեցին՝ զի օծելոյն այ  
յի քի հարսն պիտի անուանի, և ինչպէս երկնաւոր փեսայն  
իւր մարդեղութեամբը ընկալաւ եօթնարփեան շնորհս փա-  
ռակից սուրբ հոգւոյն, հարկէ և նոյն շնորհօք իւր հար-  
սն զարդարեալ ըլլառ:

**Երրորդ**՝ ինչ կերպ որ յանցաւոր ըլլայ մարդ մը, և եր-  
թոյ յեկեղեցին իբրև յօծեալ արքայարան և ՚ի տաճար երկ-  
նաւոր թագաւորին, ալ չի բռնըլիք, և չի պատժըլիք, և  
այս է ՚ի մէջ կանոնաց եկեղեցւոյ սահմանեալ:

**Չորրորդ**՝ անոր համար կօծվի, որ այն տեղի եղած ա-  
ղօթքը առաւել համց ըլլայ այ ։ ինչպէս Սողոմոն յետ օրհ-  
նութեան և օծման տաճարին, այսպէս ինդիբք ըրաւ տա-  
տուծմէ ։ || Ո՛ոք աղաւեսցէ զքեղ՚ի տեղւոծս յայսմիկ՝ ըւիցես  
նմա տէր || ։ **Վանզի** ըստ վարդապետաց՝ այ սիրու՝ աչքը՝ և  
ականջը եկեղեցւոյն մէջ են, սիրոն յողորմել, աչքն ՚ի տեսանել  
զարտասուս աղօթողացն, և ականջն ՚ի լսել զձայն նոցա:

**Հինգերորդ**՝ այ սուրբ խորհրդոց սրբազնագործու-  
թիւնները՝ այն օծեալ տաճարին մէջ պիտի կատարվին: **Եթէ**  
ստուերական պատարագին մատուցումը յօրհնեալ տեղւոծ  
պիտի ըլլար, ՚ի հարկէ ևս առաւել փրկական խորհուրդք  
շնորհական սրբոյ օրինաց:

**Խնչ** կերպով պէտք է մեղի յեկեղեցին մտնալ:

Պ. **Ա**նոք է մեղի աբ սիրտ և խոնարհ հոգի ունենալ, որ  
արհամարհ չերեսոմք առաջի երկնաւոր թագաւորին, որ ան-  
տեսաքար բազմեալ կայ ՚ի վերաց սրբոյ սեղանոցն, և որշափ

որ սուրբ Եկեղեցւոյն մէջ Եմք , պէտք է մեղե՞ որ միշտ քի  
ներկայութիւնը մեր միտքին մէջ ունենամք :

Այս պէտք է մեր արտաքին հինգ զգայարանին բը բա-  
րի գործովք պատրաստ ունենալ : Վ. չքերնիս պատրաստել ՚ի  
տեսութիւն խղճալեաց : Վ. կանջնիս՝ ՚ի լսել զգաստութիւն զհո-  
դենուագ բանս մաղթանաց , որք Երգին ՚ի մէջ ոք Եկեղեցւոյ :  
Հոստուելիքնիս՝ ՚ի զմոյլումն անցը հոաց Երկնաւոր փեսային ,  
որ անտեսաբար բազմեալ կայ ՚ի վր ոք սեղանոյն , որ կարօղ  
ըլլամիք ըստ բանի Երգոցն ըսել , || Զ հետ քո ՚ի հոտ իւղոց քոց  
ընթացուք . Երգ . առ 3 : Իւրաննիս՝ մաքուր պահել առ ՚ի  
մասուցանել այ պատարագ օրհնութեն : Ը օշափելիքնիս հան-  
դերձ ամ մարմնով կորացընել , և միշտ ծնրագրութիւն և աղօ-  
թիւք աշխատիլ , և ՚ի վր այսր ամենայնի պարտ է զիմոս մեր  
միայն առ ան ունենալ և աչ յայլ ինչ զբաղումն :

### Հ . ԴԱ

Եկեղեցւոյ համար ինչպէս կըսվի գերազանց քան զեր-  
կինս :

Պ . 1. Ն հնումն՝ որ Երբեմն Երկնից համար աթոռ այ ըստե-  
ցաւ , և Երկրի համար պատուանդան ոտիցն այ . այժմ սուրբ  
սեղանն է աթոռ մարմնացեալ բանին , և Երկինն պատուան-  
դան ոտից նորա :

### Հ . ԴԲ

Եթէ հեթանոսք Եկեղեցւոյ մէջ մտնան , Եկեղեցին  
պղծեալ կը համարվի՞ :

Պ . 1. Տ . քանզի Սողոմօնի տաճարին մէջ հեթանոսք ալ կը  
մտնային Երկրպագութիւն ընել . ահ . ժը . 20 : Եւ տիկինն  
Սաբոյ՝ Սողոմօնի տաճարը մտաւ , և ողջակէ զքը տեսաւ . դ ,  
թագ . ժ . 5 : Եւ Մակաբայեցւոց ժամանակը շտա անդամ հե-  
թանոսք կելային կը մտնային տաճարը , բայց ոք գրոց մէջ հիշ  
տեղմը ըսված չէ , թէ հեթանոսաց տաճարը մտնալով և ելա-  
լով՝ նորէն սրբագործեցին և օծեցին տաճարը :

### Հ . ԴԳ

Ապա քանի՞ պատճառաւաւ պղծեալ կը համարվի Եկեղեցին ,  
մինչև վերստին օծվելու կարօտ ըլլաց :

Պ. Աւետար յածառան վարդապետաց՝ ասեմք։ Կամ է-թէ բոնութեամբ մարդասպանութիւնը եկեղեցւոյն մէջ, վերստին օծելու է։

Եշրկրորդ՝ թէ որ այն տեղ թաղված ըլլայ անհաւատի կամ բանագրեալի մը մարմին, պէտք է այն եկեղեցին վերստին օծել։

Երրորդ՝ թէ որ անպատշաճ և անյեշելի մեղք մը գործալած ըլլայ եկեղեցւոյն մէջ, ինչպէս շնութիւն և այն, պէտք է վերստին օծել։

Չորրորդ՝ եթէ եկեղեցւոյ գլխաւոր տեղերը այրի, որող ըսեմք թէ՝ պատերը, սեղանը, պէտք է օծել. և եթէ միայն առաստաղը այրած ըլլայ՝ վերստին օծել տրժան չէ, քանզի յառաջուց ալ առաստաղը օծութիւն չունի։

Հինգերորդ՝ եթէ օծումէն ետքը սեղանին վրայ երկաթեայ գործիքով բան բանել հարկ ըլլայ, վերստին պէտք է օծել։

Ա հցերորդ՝ եթէ սեղանը տեղէն խախտի՝ կամ կոտրի, վերստին պէտք է օծել։

Եսօթներորդ՝ այրեալ սեղանը, թէ և լըման ֆնացած ըլլայ, պէտք է կրկնել օծումը, բայց միայն սեղանը պէտք է օծել և ոչ եկեղեցին, եթէ վերց գրեալ պատահմունքներուն նման բան մը եղած չէ նէ։

Աւթերորդ՝ թէ որ ծեփը վար եկած ըլլայ, և նորէն ծեփին, այն նորոգեալ տեղերը օծել պէտք է։

Իններորդ՝ եթէ եկեղեցին օծողը բանագրեալ ըլլայ, կամ այնպիսի հերետիկոսական աղանդոյ հետևած ըլլայ, որ կատարելապէս հաւատացեալ չըլլայ ՚ի սուրբ երրորդութիւն, այնպիսի օծում ընօղին մլրառութիւն և օծումը ընդունելի չէ, աղա վերստին պէտք է օծել։

Տասներորդ՝ եթէ ակամայ կամ պատահական սպանութիւն եղած ըլլայ, ինչպէս ըսեմք թէ պատահմումը մէկին վրայ քար մը իննալով մեռնի, կամ թէ խելագար մը ինքը զերը պատէն ձգելով մեռնի, այս պատճառաւ պէտք չէ վերստին օծել։

### Հ. Դ. Դ.

Եթէ բոնութիւնը մարդասպանութիւնը ըլլայ տաճարին մէջ, պէտք է՝ որ վերստին օծվե ըսիր։ Ա հա Զաքարիաքահանայտ-պէտը սպաննը վեցաւ տաճարին որահին մէջ, և կամ թէ ինչպէս քո կը վեսայէ ॥ Ընդ մէջ տաճարին և սեղանոյն ॥ ինչո՞ւ տաճարը վերստին չի սրբագործեցաւ, բայց ինչ 22 :

Պ. Օ աքարիսյն սպանանօղ Յովս թագաւորը՝ յիրաւի  
անօրէնութե գործ գործեց, բայց Զաքարիա քահանայապե-  
աին արիւնը անբիծ ըլլալով՝ ոչ եթէ տաճարը պղծեցաւ, այլ  
առաւելևս մարտիրոսական արեսով սրբեցաւ:

## Հ. ՂԵ

Լարդ տըվօղ եպիսկոպոսը, թէ որ ձեռնադրածին որպի-  
սութեանը տեղէ կութիւն չունենայ, պակասութիւն կունենայ  
մի ձեռնադրողը:

Պ. Ձեռնադրողը՝ ես չէի գիտէր ձեռնադրեալին որպիսու-  
թիւնը ըսելով, չի կրնար արդարանալ. քանզի սրբազն առա-  
քեալն Պողոս այսպէս կը գրէ իւր հարազատ Տիմոթէոս տշա-  
կերախն. || Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցէս, և մի  
կցորդ լինիցիս մեղաց օտարաց. ա, տի. Է. 22 ||:

Գեղեցիկ կը գրէ Յօհան ոսկեքերան. „ ԱԿԵԾ ևս (տաէ)  
„ լինին յանցանիքն, ասէ այնպիսեաց, զի զոր ոչն ձանացէին՝ ի  
„ մէջ ընծայեցին, և որ պաշապանութի իմն երեխ լինել, նոյն  
„ առաւելու ըրտմբասանսն: Քանզի զիարդ չիցէ անտեղի,  
„ եթէ ոք յանաշխարհիկս զոր գնել կամեսցին, բժշկաց ցուց-  
„ ցեն, և յերաշխաւորաց գնոյն պահանջեսցեն, և ՚ի մերձաւո-  
„ րաց անտի նոր ստուգեսցեն, և յետ ամենայնի այսորիկ՝ և ոչ  
„ գարձեալ գլխովին վսասհ եղեալք, և ժամանակ ևս բաղում  
„ ՚ի վերայ խնդրեսցեն ՚ի փորձել զնա: Խակ որք միանգամհան-  
„ գերձեալն իցեն գրել զոր յայդչափ սպասաւորութիւնդ,  
„ թերեւս կարծեսցէ ոք՝ եթէ անխորհուրդ և վարկապարազի՝  
„ կամ ՚ի շնորհս այլոց, կամ ՚ի չարակնութի՝ վկայութի տացեն  
„ և գատեսցեն, ոչինչ այլ ՚ի ներքս բերելով քննութի: Եւ ո՞  
„ ոք առա վա մեր արդահատեսցէ յայնժամ, յորժամորք պար-  
„ տապան էին վերակացու լինել, և նորա գլխովին վերակացուաց  
„ ոմանց կարօտք եղիցին: ՚Ի ձառն՝ յաղագս քահանայութէ:

## Հ. ՂՋ

Եթէ ձեռնադրը անարժան ըլլաց, և քանի մի ան-  
ձինք վկայեն՝ արժանաւոր ե ըսելով, ձեռնադրողին քով  
յանցանիք կը մնայ մի:

Պ. Ձեռնադրողը գնենէ քաղաքական իրողութեանց վերա-  
բերեալ կանոնով ընդունի վկայից վկայութիը. ինչպէս ըսեմք

թէ մէկը ծանրագին բեհեղմը կը ծախէ , և դնօղը չի գիտէր արժողութիւնը , եթէ իրեն հարազատ և անկեղծ բարեկամաց մէկը ըսէ , թէ այդ բեհեղը այսչափ արժողութիւն ունի , և իրենք աւ չի հասկըցող ըլլան այն բեհեղին արժողութիւնը . արդեօք այն մարդը ատոնց վկայութիւն կընդունի՞ , յայտնի է որ չէ : ՚Այնպէս եթէ քանի մի անձինք ընծայացուի մը համար իբր արժանաւոր ըսելով վկայեն , պէտք է ձեռնադրողին նախ տեսնալ , թէ վկաները քահանայական կարգին որպիսութեանը՝ և պատուցն արդեօք տեղեակ են , և ապա ինքն թնդ սկսի քննել այն ընծայացուն :

՚Հա այն վկայից և ձեռնադրողին պատիմը վերստին կուսանիմք յնսկերերանէն , որ այսպէս կըսէ առ ձեռնադրողն : ՚Քանդի թէպէտ և զընտրօղն կցորդս ունիցի տանջանաց ՚ի մեղմն անդ , այլ սակայն և ոչ ինքն յաղագս այդորիկ ապարեսցի ինչ ՚ի պատուհանէն , նա առաւել ևս պատժեսցի , ո միայն եթէ ոչ ՚ի պատճառս մարդկային ինչ խնդրոյ ընդդէմ ՚քաջախորհուրդ տեսութե իւրեանց գործեսցեն նոքա յընտրութեան անդ : ՚Օ կ եթէ ՚ի գոյն յանցանս ըմբռնեսցին ո երբէք , և գիտելով զանարժանն՝ զնա ՚ի պատճառս ինչ յառաջ կոչեսցեն , զնոյն օրինակ տանջեսցին ընդ նոսա , այլ ՚թերես և առաւել քան զնա՝ որ ոչ ՚ի ներքս ընծայեցց ո զյարմարաւորն : ՚Քանդի որ միանդամ զիշխանութիւն ՚ի ձեռս տայ այնմ , որ խանդարէլն կամիցի զեկեղեցի , նա ինքն է պատճառ չարեաց գործոց նը : ՚Կ ձառն՝ յաղագս քահանայութե :

## Հ . Դ .

**՚Ն**շպէս հաղորդ կըլլայ ձեռնադրողը անարժ ան ընծայացուին գործեալ մեղայը :

՚ ՚Այն վարդապետէն կուսանիմք , որ այսպէս կըսէ : ՚Քանդի իշխանութիւն ՚ի ձեռս ընծայես ապիրատութեն : ՚Եւ զոր օրինակ՝ որ զսուրն սրեալ , մոլեգնելոցն ՚ի ձեռս տացէ՝ կամ անմտին , և նա մոլեալ սպանութիւն գործեսցէ նուվաւ . նա ինքն որ զսուրն ետք ընդ բամբասանօք է մեղացն . այսպէս և որ զիշխանութիւն պատուցս այսորիկ ՚ի ձեռս տայ առան ապիրատի , բովանդակ զիշուր մեղացն այնոցիկ և զյանդ գոնութեանցն յիւրականն կուտեսցէ գլուխ : ՚Քանդի որ զարմանան շնորհէ , նա և բովանդակ ամենայնին՝ որ ՚ի նմանէն շտուաւիղէ , սպատճառ է : ՚Կ ներքողն՝ որ ՚ի ուրն իգնատիս :

## Հ . Պ.Բ.

|| Առլը յարութեան Երբորդ կիւրակէ օրը՝ ինչո՞ւ համար Աշխարհամատրան կիւրակէ կըսեմք :

Պ. Ա. աւակատիս է սրբոյ տաճարին՝ որ յԵրուսաղէմ, և նաւակատիսն՝ եկեղեցւոյ նորոգութիւն լսելէ, որ և նցն օրը լրացաւ շինութիւն այն գերաստորը տաճարին, զոր և Մակարիոս Եպիսկոպոս օծեց: Ճշւ ևս ինչպէս որ ամէն տաղաւարաց տօներուն երկրորդ օրը՝ մեռելոց կըսեմք, նոյնպէս և այս կիւրակէիս՝ առաջին կիւրակէն ետքը, կըտօնեմք որ յարութեաճարին բոլոր եկեղեցեաց մօրը տօնը: Վ.հա այս է Աշխարհամատրան կիւրակէի տօն կատարելոյ պատճառը:

## Հ . Պ.Բ.

|| Ինչո՞ւ համար Երբեմն անդամատանաւ աշխարհիս չորս կողմը կօրհնեմք ՚ի մէջ սուլը եկեղեցւոյ :

Պ. Ա. արմարական խորհրդով կուսուցանեն մեղ ոք վարդապէտք այսպէս: իբր թէ գոհութիւն տալով ածային պարգևաց չորս կողմը կօրհնեմք, միտք բերելով ան մերց յի քի փրկական տնօրէնութիւնը, որոյ չնորհօք բոլոր աշխարհի տարածեցաւ ոք տւետարանին քարոզութեած այնը ՚ի ձեռն առաքելոց, և մինչև ՚ի ծագս աշխարհի կը քարոզի անոնց վարդապետութիւնը, որ յառաջուց Դաւիթ հոգւով սրբով գուշակեալէր:

Վ. Ա. նախ արևելքան կողմը օրհնելով այսպէս կիմանամք, որ ինչպէս առաւտօնեան ժամուն յարեւելից կողմանէ արեգական ծագեալ ձառագայթը գիշերային մթութիւնը կը փարատէ մեր վրայէն, և կսկսիմք այն լուսով արարածոց գեղեցկութիւն կատել: ահա նոյնպէս և ձառագայթ փառացն հօրորդին միածին՝ յիմանալի արեգակնէ հօր ոյ ծագեալ, փարատեաց մեզմէ անածութեած խտարը, և գեղեցկացոց աշխարհս ածգիտութեած լուսով. ինչպէս որ ինքն վկայեաց: || Ես եկի՛ զի զիեանս ունիցին, և առաւել ևս ունիցին: Զալ. Ֆ. 10 ||:

Վ. Ա. մտեան կողմը օրհնելով այսպէս կիմանամք, թէ որ արևմտաքը ցերեկվան վերջն է և գիշերվան սկիզբը, նոյնպէս դատաստանին օրը այս աշխարհիս աւուր վերջն է, և սկիզբն յաւետենական գիշերոյ: և ինչպէս ծնանին քի ՚ի կուսէն՝ և օր դատաստանին պիտի ըլլայ ՚ի մէջ գիշերի, ուստի արևմտեան, կողմամբ ցոյց կուտամք՝ թէ նա է որ կենդանեաց և մեռելոց:

և քրիստոնէից թագաւորութիւն կը յիշատակեմք, ո՞պ զե իրենք  
իրենց ստուեր ըլլալը դիտնան, և զորդին այ միայն թագաւ-  
որ ձանաշեն երկնի և երկրի՝ փառս և պատիւս մատուցանե-  
լով նմա, ըստ այնմ՝ || Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք  
զած • սաղնս • կէ • 33 || :

Հարաւային կողմը՝ որ է ջերմ, միտք բերեմք մարդացելցն  
այ անձառելի սէրը՝ որ առ մարդկային բնութիւնս մեր, որց  
ջերմութիւն և իւր սիրովը ըորըսոքեալ, սկսաք առաքինութեն  
պտուղներ տալ, և այս խորհրդով երբ այն կողմը կօրհնեմք,  
երկիր, անդաստան, և պտղաբերութիւն տարւցա կըսեմք:

Հիւսիսային կողմը օրհնելով, որ է բարձրագոյնն ՚ի չո-  
րից կողմանց աշխարհի, կիմանամք որ անքննելի սիրովն այ  
բարձրացաք քան զամ ազգս և աղինս՝ շնորհական որդիս լի-  
նելով մեր հոգեորական ծննդեամք սուրբ աւազանին :

## Հ ։ Ճ

**Խ**նչ է խորհուրդ մասին՝ որ յետ արձակման պատարա-  
գին կը բաշխի ժողովրդոց ՚ի մէջ ոք եկեղեցւոյ :

Պ. **||** ըստնք որ չեն կրնար հաղորդել քահանային կամ ար-  
ժանաւորաց հետ ոք խորհրդոյն, գոնէ օրհնեալ և ոք մասին  
հաղորդելով, հաղորդ կըլլան շնորհաց այն ոք խորհրդոյն, որպէ  
թէ ՚ի փշըանաց սեղանոյ տն այ կերակրելով :

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ



# ՔԵՆԱՌԹԻԵՐԵ ԽՆԴՐԱՑ ՄԵՍՆ · Գ

ՄԵԿՆԵԼԻ ՀԱՐՑՄՐԱՑ  
ԱՐԵՑ



ՀԱՐՑՈՒՄՆ ԱՌԱՋՏՆ

Իսրայէլի աղքէրը ած է ստեղծէր , ինչո՞ւ համար միայն  
Իսրայէլի աղքին համար կըսէ , թէ ի Ես ստեղծի զքեզ || . և  
այս խօսքն ալ շատ կայ մարդարէական գրոց մէջ . ինչպէս  
եսայի , խդ · 1 :

ՊԱՏԱՍԽԱՆ

Այս ամմէն աղքն ալ ած ստեղծէր է , բայց յատկաբար  
չըէից աղքը , քանզի ուրիշ աղքաց նման եւտքէն չի սերե-  
ցան , այլ յատուկ այ ձեռաց զօրութիւնը : Քանզի յայտնի է  
որ Իսրայէլի սկզբնաւորութիւնը խսահակէն և Յակովէն է ,  
որ շատ տեղալ սուրբ գրոց մէջ մասնաւորաբար Իսրայէլի  
աղքը Յակով կանուանէ :

Երդ՝ Աբրահամու որդին խսահակ՝ ամուլ Սառայէն  
ծնաւ բնական կարգէ գուրս , քանզի Սառայի յղանալուն  
ժամանակը անցեր էր . ծնն . ժը . 14 : Եւ Յակով նահապէտը՝  
որ ՚ի Ռեբեկայ ծնաւ՝ այն ալ ամուլ էր , որ և այս ալ բնութե-  
կարգաւ յղանալու տեղի չունէր . ծնն . ին . 21 : Եւ որովհետեւ  
խսահակաւ և Յակովաւ բոլը Իսրայէլի աղքը յառաջ եկաւ ,  
ասոնք ալ լոկ սրանչէլոք ծնան՝ և ոչ թէ բնական կերպով ,  
ուստի Իսրայէլի աղքին համար կըսէ , ի Ես ստեղծի զքեզ || :

**Վ**արդոյս համար կըսվել ըստ պատկերի այ ստեղծուած +  
ինչ պիտի ըլլայ ըստ պատկերի այ ըսելը :

Պ. **Վ**արդէս կըպատասխանէ աբն Ոսկերերան , ըստ պատ-  
կերի այ ըսելը այս է . ինչպէս յերկինս ՚ի վեր քան զած մէկը  
չի կայ , նոյնպէս յերկրի գերագոյն քան զմարդ կենդանի մը չի  
կայ : Եշտ ածաբանք կըսեն՝ թէ մարդն կըսվել ըստ պատկերի  
այ , որովհետեւ այ նմանութիւնունի ներքց և արտաքց . քանզի  
՚ի ներքց ունի նմանութիւն յիշողականութիւն՝ իմացտկանութիւն՝  
և կամօք , ինչպէս հրեշտակիներն աւայս նմանութիւնը ունին : Եշտ  
արտաքուսա ևս ունի նմանութիւն զոր չունին հրեշտակ , քանզի  
ինչպէս որդին միածին՝ է ՚ի հօրէ այ նոյն բնութիւն , այսպէս  
և մարդն է ՚ի մարդոյ նոյն բնութիւն : Եշտ ինչպէս իշխողէ ած-  
բոլոր ստեղծուածոց՝ որ ՚ի ներքց ինքեան , նոյնպէս և իշխող  
է մարդ այնոցիկ՝ որ ՚ի ներքց ինքեան . ըստ այնմ՝ || Զամ ինչ  
հնազանդ արարեր ՚ի ներքց ոտից նորա . ստուռ . ը . 8 || :

**Վ**այենի մատաղին համար ած կըսէ Կայենին , || Ո՛չ ապա-  
քէն ուղեղ մատուցանես , և ուղեղ ոչ բաժանես՝ մեղար .  
ծննդոց . դ . 7 || : Ինչ պիտի ըլլայ այս ուղեղ մատուցանելը ,  
և ոչ ուղեղ բաժանելը :

Պ. **Ուղեղ մատուցանելը՝** պարզաբար լսելով , կիմացվեած թէ  
մատուցանելցորդ գործը ուղեղիւն . որովհետեւ պէտք է մարդոցս ,  
երկրի բերքերուն՝ որոնք այ տուրբովը կըվայելէմք , մէկ մասը  
՚ի փառս պարզեռողին այ ընծայել : Բայց ուղեղ ոչ բաժանես  
ըսելը այս է , որ երկրի բերքերուն աղէ կը իրեն պահէց , և  
գէշերը աստուծոց մատոյց :

**Ինչո՞ւ այս Կայենի մեղքը թողութիւն չունեցաւ :**

Պ. **Ք**անզի Կայեն կըսէր , թէ || Մէծ է պատիժ իմ՝ քան  
զթողութ զիս || . ծնն . դ . 13 || : Որով ըսել կըկամէր , թէ իմ  
մեղքս քու ողորմութիւնէդ մէծ է . արդ՝ առ ողորմութիւն այ  
նայելով աշխարհի բոլոր մեղքը ջուրի կաթիւն կընմանին :

## Հ . Ե

Աստուածաշունչին մէջ նախաստեղծից համար կըսվի ,  
թէ Եւ անուանեաց զանուն նոցա Ադամ , յաւուր յորում  
արար զնոսա . Ճննդայ . Ե . 2 || : Ո՞ւր կը մնայ արդեօք կո-  
ղակցին Եւայ անունը :

Պ . Ադամ բառը՝ առաջին մտօք յատուկ անուն է , և երկ-  
րորդ մտօք՝ հասարակ անուն է : Ուստի երկրորդ մտօք Ադամ ,  
մարդ ըսելէ . և որովհետեւ մարդ բառը հասարակ է , թէ այր  
մարդու և թէ կնոջ , նցնպէս և Ադամ բառը : Եւ և ըստ  
եբրայական լեզուին՝ բառս Ադամ , դնի Ադամա , որ ըսելէ՝  
հող ՚ի հողայ . ուստի Եւայ ըսելն ալ Ադամ ըսելէ , այսինքն  
մարդ , որ է հող : Երկուքին ալ մէկ անուն դրաւ ած , որ  
գիտնան կողակիցները՝ թէ մէկ մարդու պէս են իրարու հետա-  
երկու մարդինի մէջ . և ինչպէս որ անունով մէկ են , նցնպէս  
պէտք է իրենց հոգւով և կամօք միաւորիլ , և մի հոգի և մի  
կամք ըլլալ :

## Հ . Զ

Ադամին մեղանչելէն ետքը ած կը կանչէ ըսելով , || Ո՞ւր  
ես || . արդեօք ուր ըլլալը չէ՞ր գիտէր ած :

Պ . Ամեր լեցի , ամ ինչ յայտնի է իրեն . բայց որ կըսէ ,  
ո՞ւր ես , ըսել կուղէ , թէ ես քեզի անմեղ ստեղծեցի , եօթ-  
նարփեան շնորհօք զարդարեցի , այժմ ո՞ւր մնացիր , ինչո՞ւ մեր-  
կացար այդ ածապարզեւ փառքը : Եւ և յանցանք ունեցող  
մարդը յայտնի է՝ որ կամչնայ երեւալ , բայց ածապարին անձա-  
ռելի ներողութիւր ամեննեին յետս չի քաշեց իւր մարդասիրու-  
թիւնը Ադամայ վրայէն , այլ համարձակութեւ տեղի կուտայ ,  
սիրա կուտայ , ուր ես ըսելով , որ գնացէ այն ալ յանցանքը  
Ճանչնալով , մեղայ գոչէ . սակայն Ադամ արժանի ընել չի  
տըլաւ ինքը զինքը զզչման շնորհաց :

## Հ . Է

Պ . Եհեղեղէն ետքը տապանին մէջէն նոյ ագռաւ մը  
թող կուտայ , և կըսէ ոք գիրը , թէ Եւ ագռաւն , և անդքէն  
նչ գարձաւ . Ճնն . Ե . 7 || : Եւ յետոյ աղաւնին թող տալուն  
համար կըսվի , թէ՝ || Զգտեալ հանդիսատ տղաւնցն ոտից իւրոց ,

դարձաւ առ նոյ ՚ի տապանն . ջնն . ը . 9 || : Արդ՝ եթէ աեղի  
չի կար աղաւնիին դադարելու , ագուաւը ուր դադարեցաւ :

Պ . Արդաւը երբ թողարվեցաւ , իւր ուղածին պէս իրեն  
ուտելիք գտաւ ջուրին երեսը , որ էր խզդրվող կենդանեաց և  
մարդկան մարմինները . բայց աղաւնիին յարմար ընդեղէն բան  
մը տակաւին չէր երեւար , վասն որոյ աղաւնին իւր սնուցանօ-  
ղին քով վերստին դարձաւ :

## Հ . Բ

**Ա**րք Ղովտ Սորոմ քաղաքէն կելլար , ինչո՞ւ ած պատուի  
ըեց հրեշտակաց միջնորդութ՝ որ ետել չի նայի . ծնն . ժթ . 17 :

Պ . Հորս պատճառ կուտայ կուռնելիոս : “Եաւ” Ղովտայ  
հնաղանդութիւր փորձելու համար : Երկրորդ՝ չէր ուղէր ած ,  
որ պատժրվողներուն դառնալով Ղովտ , ցաւակից ըլլայ անոնց :  
Երրորդ՝ արագ հեռանալու համար : Չորրորդ՝ չըլլայ , որ  
Ղովտայ միտքը դառնայ : Վսկեց մեղալ պէտք է սորվիլ , մե-  
ղաց կամ անզեղը մեղաւորի վրայ չի նայիլ , քանզի այ կա-  
մացը դէմ է :

## Հ . Ծ

**Ա**ռվայ կնոջը համար կըսվի , թէ արձան աղի եղաւ .  
այդ ինչպէս չի հալիր անձրևէն :

Պ . Ո՞ի զարմանար չի հալելուն , քանզի աղին անձրևէն հա-  
լելը՝ բնութեան գործ է . բայց ածային կարողութիւր աէր և  
իշխան է բնութեն , ուրեմն ած ինչ որ կը գործէ , գործոյն որ-  
պիսութիւր մի՛ հարցըներ : Եւ քան զարցըմունքդ աւելի՝ զար-  
մանալի ինչ կայ այդ կնոջը վրայ , քանզի կըսեն ոմանք ոյս-  
պէս , եթէ կտորմը կտրես այդ արձան աղին , վաղմաղակի  
արիւն կը հոսավի , և տեղը կը լցիլ : Եթէ ըսես , արձան է՝  
ինչպէս արիւն կը հոսէ , կըսեմ՝ թէ ըստ օրինակի վիմին , որ  
իսրայէլացւոց ջուր կը բղնէր յանապատին . ահա և անկեն-  
դան արձանն արիւն կը հոսէ :

## Հ . Ժ

**Ա**սրայէլացւոց աղքին գերի մնալուն համար Եգիպտոսի  
մէջ՝ սուրբ գիրը չորս հարիւր երեսուն տարի կը գրէ . || Եւ  
բնակութիւն որդւոցն իսրայէլ՝ զոր բնակեցան յէրկրին

Եգիպտացւոց, և յերկրին քանանացւոց ինքեանք և հարք իւրեանց, ամք չորեք հարիւր և երեսուն . էլզ . ժբ . 40 // Եւսնցն նը գիրն է, որ կըվկայէ, զոր ասաց ած առ Աբրահամ. // Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ եղեցի զաւակ քոյ յերկիր ոչ իւր իցէ, և ծառայեցուսցեն զնն, և չարշարեսցեն, և տառապեցուսցեն զնոսա ամս չորեք հարիւր . ծնն . ժե . 13 // Խնչ պիտի ըլլայ այս ներհակութիր, որ մէկ տեղ չորս հարիւր կըսէ, և միւս տեղ չորս հարիւր և երեսուն կըսէ :

Պ. մենեին ընդդիմութի չեկայ այս խօսքերուն մէջ . երկուքն ալ Մովսէսի բանքն են, միթէ ինքը իւր գրածին կը ներհակի՞, քա՛ւ լիցի . այլ երկուքն ալ ձմարիտ են: ՀՅայտնի է՝ որ Յովսէփի իւր եղբայրներէն գերի ծախվեցաւ յԵգիպտասո, և յետոյ Եգիպտասի առ եղաւ. և սղութե՛ տարին ցորենի համար եկող իւր հարազատ եղբայրը ծանօթութի տըլաւ, անոնք ալ գացին՝ իրենց հօրը իմացուցին, որ և այն ալ իւր բոլոր պարագայինքը յԵգիպտաս եկաւ՝ և հոն բնակեցաւ:

Պ. բթէ Խորայելացւոց աղգին Եգիպտասի մէջ ըրած գերութիւնը՝ չորս հարիւր երեսուն տարի իմանաս, գիտցի որ Յովսէփոյ գերի ծախվելէն է սկիզբը . և երբ չորս հարիւր տարի իմանաս, գիտցի որ Յակով նահապետին յԵգիպտաս մտնալէն է սկիզբը, քանզի Յովսէփի երեսուն տարի յառաջ ծախված էր . տպա եթէ մտադիւր քննութե՛ կարդաս սուրբ գերբը, քաջ կիմանաս ասոնց ամմէնը:

### Հ. ԺԱ

Խնչ ցոյց կուտայ Մովսէսի գաւաղանը, որ յօձ դարձաւ:

Պ. իմացվի Եբրայեցւոց աղգը, որ Յովսէփին ժամանակը իշխանութե գաւաղան ունէր Եգիպտացւոց մէջ . երբ Յովսէփի մեռաւ, Եբրայեցիք Եգիպտացւոց մէջ օձու նման տաելե և գարշելե եղան . բայց ածային այցելութե վերսաին գաւաղան եղան Մովսէսի միջնորդութեամբ:

### Հ. ԺԲ

Խնչ ցոյց կուտայ Մովսէսի ձեռքը ծոցը տանիլը՝ և բորոտ հանելը, և վերսաին բժշկելը:

Պ. Մովսէսի ձեռքը՝ Եբրայեցւոց ժողովուրդը կը նշանակէր, որ երբ սկսան Մովսէսի կամացը հակառակ խատութե

վարիւ, իբրև բորսա համարեցան . և Երբ Մովսէս գթութե՛ք զած կաղաքէր անոնց համար , և յանցանքնին կը ներվէր , բորսութենէ սրբըլած կը համարվէին :

Հ . Ճ.Դ

**Վ**ովսէսի՝ գետէն ջուր առնել և յարիւն դարձունելը ի՞նչ ցցց կուտար :

Պ . **Ա**լ նշանակէր Եբրայեցւոց արու զաւկըներուն ջուրը թափիլը Եգիպտացւոց անիրաւութե՛ը , որ Փարաւոն թագաւորին ժամանակը կընէին . որ և յետոյ այ վրեժինդրութե՛ը իրենք աւ կարմիր ծովուն մէջ խղդըլվեցան :

Հ . Ճ.Դ

**Վ**որենին՝ որ Մովսէսի Երկեցաւ , որ կը վառէր և չէր այրէր , ի՞նչ ցցց կուտար ներկայապէս (իբր այն ժամանակին) , և զի՞նչ տպագայապէս :

Պ . **Վ**որենին մէջի կը ակը կը նշանակէր ած , և մորենին՝ Եբրայեցւոց ազգը , որոնք խրատական գաւաղանտւ կը տանջըլէին ՚ի ձեռս Եգիպտացւոց , բայց օրէ օր կը զօրանային՝ և չէին ոչնչանար , ինչպէս որ մորենին կը վառէր և չէր այրէր , այս մեկնութիւնը ներկայապէս է : Այսկայն ըստ տպագային և ըստ խորհրդական մեկնութեան՝ ամեն ած-աբանք և վարդապէտ եկեղեցւոյ՝ կիմանան յիսուսի քի ան մերոյ ամենասուրբ ծնունդը ՚ի կուտսէն Մարիամայ , յոր վառեցաւ հուրն ած-ային որդին միածին , և անխախտ պահեաց զկուսութիւն ամենամաքուր ծնողին իւրոյ :

Հ . Ճ.Ը

**Հ**ին օրինաց մէջ զգեստուց մէկը տախտակ դատաստանի կըսվէր , որ քահանայապէտալ կուրծքին վրայ կը կըէր՝ որ մեծագին բան մի եր , և վրան գրել արվածէր ած , յանդիմանութիւն և ճշմարտութիւն . ի՞նչ մեկնութիւնին այս Երկու բառը :

Պ . **Ձ**եւ Եօթանասուն թարգմանիչքն՝ և թէ մեր թարգմանիչքն այս մեկնութիւն կուտան , այսինքն յանդիմանութիւն , կամ յայտնութիւն կամոցն այ , և ճշմարտութիւն տպագայից և գաղտնեց , որ ած կը յայտնէր քահանայապէտին՝ այն խոր-

Հրդաւոր տախտակին միջնորդութեղը , անոր համար հրաման եղաւ գրել այդ երկու բառը այն տախտակին վասյ , և միշտ կուրծքերնուն վասյ ունենալ՝ երբ ՚ի սրբութիւն կը մտնայ առաջի տն : Իւարցականապէս սորվել պէտք է և մեր քահանայից և քահանայապէտաց՝ միշտ սրտին մէջ ունենալ զյանդիմանութիւն հրամանացն այ՝ իրենց պաշտօնին նայելով , և ձշմարտութեղ գործ ածել թէ իրենք իրենց , և թէ իրենց ժողովրդոց վասյ :

### Հ . Ժ.2

**Ա**ռուեալ մորենիին համար ներկայապէս և աղագոյապէս և խորհրդապէս մէկնութիւն արվեր . եթէ կարելի և այլաբանօրէն մէկնութիւն մի ևս տներ :

Պ . **Ա**յսպէս կուսուցանէ սուրբն Գրիգոր ածաբան :  
Առուեալ մորենեաւ՝ զի՞նչ ինչ այլ իմասցուք , կամ թէ զի՞նչ  
այլ եցցյ մեղ ած , եթէ ոչ զի յայնմանէ ժողովրդենէ ելա-  
նելոց էր՝ որ ՚ի հրում ածութե , զցաւսն մարմար մերց ,  
իբրև զփուշ մորենեաց ընդունելոց , և զանծախելի գոյա-  
ցութիւն մարդկութե մերց՝ ևս ինքեան բոցում ածութե  
պահելոց : Այսինքն ինչպէս մորենին կը վառէր և չէր հատ-  
նէր , նցյանպէս քի առած մարդկային բնութիւնը մեզմէ , որ  
ածաբան անձին հետ միաւորեց , մորենւոց փշի նման եղեալ  
մարդկային բնութիւնը , չի ոչնչացաւ ՚ի հրց ածութե :

**Ա**նձառելի զօրութեան՝ գործ ամենահրաշ , որ նախ՝  
զգալի օրինակօք ցցյ կուտայ , որ յետոյ ըսած ժամանակնիւ  
չի կասկածինք :

### Հ . Ժ.3

**Փ**արաւոնի առջև Մովսէսի ըրած սքանչելիքներուն հա-  
մար՝ մէկ երկու հարցմունք ունենալուս պատճառաւ , նախ՝  
սքանչելիքն ինչէ՝ այն կուզեմ իմանալ :

Պ . **Ա**քանչելիքն է յաղթօղ ամ զօրութե բնութեան և ամ-  
բնական պատճառաց և կարողութե մարդկան և հրեշտակաց :  
Այս սահմանէն իմանալ պէտք է մեղի , գործ մը՝ կամ հնարք  
մը՝ որ արհեստի ճարտարութեղ , կամ հրեշտակաց զօրութեղ՝  
կամ բնութե հեղինակութեղ կը լլայ , սքանչելիք չըսվեր . քանզի  
սքանչելիքն այն է , որ ասոնց ամենուն կարողութէն գերա-  
զանց պիտի ըլլայ , մինչեւ որ լսեա թէ մատն այ է ՚ի սմա , ահա  
այս է կատարելապէս գործ սքանչելեաց :

Այս ըստածէդ հարցընելհարկ եղաւ, կախարդները՝ կամ թէ դևերը՝ որ կախարդաց առ են, զարմանալի գործեր կընան գործել և ցուցընել, անոնց պահնչելիք չըսէ՞մք:

Պ. Որովհետեւ ըսի՞ թէ սքանչելիք ածային կարողութ գործ են, ապա գեր սքանչելիք չեն կընար գործել. բայց մարդ կային մտաց զարմանալի քաներ կընեն. ինչպէս առ աչօք բան մը ցոյց կուտան շատերուն՝ որ իրականապէս չէ. ըսեմք թէ առ աչօք մէկին գլուխը կը կարէ՝ և վերստին տեղը կը դնէ. եթէ կարած գլխոյն արը իրաւցընէ մեռաւ՝ և յետոյ կենդանացաւ, հաւատամ սքանչելիք ըլլալուն: Եւ եթէ սուտ և առ աչօք ըլլալը կուզես հաստատել գու կարէ այն մարդուն գլուխը՝ թռղ այն կախարդը կենդանացընէ. յայտնի է որ չի կընար:

Վ. բագ արագ տեղափոխութիւն կընեն, որովհետեւ թեթև և պարզ հոգիք են հրեշտակաց նման, ինչպէս որ Աթմօն կախարդը յօդը հանեցին արագութեալը մը՝ բայց վար ձգելն եարը՝ կտորվանքները անթիւ եղան:

Վնկենդան իրաց մէջ կը բնակին և խօսել կուտան, ինչ պէս կուոց մէջ: Ո՞արդոյ կամ կենդանիի մարմին կառնեն, և կը պըտըախն գիշերը՝ որ երկիւղ տան մարդոց, և իրենց ծառայող կախարդներուն ժողովուրդը շատընեն՝ նուսխայ գրելաւալով:

Ո՞արդ կային կիբըը կայլային, ըսեմք թէ երկու սիրել եաց մէջ թշնամութիւն կը ձգեն: Ինական պատճառոք ներկայանալ կուտան մէկ գործի մը արագատիւս. ինչպէս ըսեմք՝ թէ բնական պատճառոք՝ այսինքն տարերօք շատ ժամանակի կարօտ եղած բան մը՝ որ յառաջդայ, այն տարերաց զօրութիւն սասակացընելով՝ քիչ ժամանակի մէջ յառաջ կը բերեն:

Վասնց բոլը հնարքները ոչինչ կըլլան ճշմարիտ քրիստոնէին առջին, երբ միշտ իւր հոգեւորական զէնքրովը վառեալ և պատըաստ կըլլայ. ինչպէս որ կը հրամանացէ Դաւիթ: Ո Անիցին ՚ի կողմանէ քումմէ հաղարք, և բիւրը ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին. սովոր 7 ||:

Ո՞ւր Փարաւօնի կախարդները իրենց գաւառանները գետինը ձգեցին՝ այն գաւառանները օձ գարձան. ատոնք ճշմարիտ օձ էին, եթէ սուտ:

Պ. Ամանք սուտա երևմունք կը համարին , և ոմանք ճշմարիտ էր կըսեն . քանզի այս պատճառը կը խօսին՝ եթէ սուտա ըլլար , ապա Ահարօնի օձը՝ որ այն օձերը կըլլեց , այն ալ սուտա կըլլար : Եւ եթէ ըսես՝ ի՞նչպէս ըրին , ահա վերի ըսած պատասխանէս իմացիր . որովհետեւ ՚ի բնական պատճառաց օձ կըլլայ , բայց ժամանակի կարօտ է . գեւերը նոյն պատճառաց զօրութիւնը սաստկացընելով արագ մը ընել կուտան , ինչպէս վերը ըսի . կամ ուրիշ կերպիւ :

## Հ . Ի

Արիշ կերպիւ ըսածդ ի՞նչպէս է :

Պ. Հարօնի նման ածային զօրութիւնը չի կըցին գաւազանին փայտեղէն գոյացութիւնը՝ ՚ի գոյացութիւն ճշմարիտ մարմնեղէն օձի փօխարկել . այլ գիււաց միջնորդութիւնը ուրիշ տեղէ կենդանի օձեր բերել արվին , և խակցն այն գաւազանները անտես ընելով անոնց տեղը կանգնեցուցին , Վայպէս իմացիր այլ միւս կախարդական գործքերնին , որոնցմով իբր նմանեցան Մովսէսի :

## Հ . ՏԱ

Անչու ած այդչափ թոյլուռութիւն կընէ կախարդներուն , որ այդ զարմանալի բաները կընեն :

Պ. Ամացընելու համար թէ՝ որչափ մոգութէ արհեստը կըրնայ տչք կապել . ևս կախարդները Մովսէսէն յաղթըլելով յայտնի ըլլայ , որ Մովսէսի գործը աստուծովէ՝ և ոչ թէ արհեստիւ : Եւ զի ցոյց տայ՝ որ միշտ չարերը բարեաց հակառակ են , բայց բարեաց հաւատքով՝ ոչինչ կըլլան չարասէրին հընարքները . և վերջապէս ածային զօրութեան պատիւը կախարդաց անգամ փարաւօնի և Եգիպտացւոց առջին խոսառվանցնելու տայ , թէ մատն այ է այդ :

## Հ . ԻԲ

Վըչափ և ի՞նչ էին Եգիպտացւոց պատիւնները , որ Մովսէսի ձեռքով կըլլայն :

Պ. Ասն էին : Վուաջինն ջուրին յարիւն փոխվիլն էր : Երկրորդ՝ գործերուն դալն էր : Երրորդ՝ մուն , այսինքն սիվրիսինէ էն էր : Չորրորդ՝ շանաձանձն էր : Հինգերորդ՝

կենդանեաց ժանտամահ և սատակումն էր : Ա էցերորդ՝ մարդոց և անասնոց վրայ պալար՝ այսինքն խապառձըս , և ուռուցեալ վէրքերն էր : Եօթներորդ՝ անհնարին որոտումն՝ կարկուտ՝ և փայլատակմունք էր : Ութերորդ՝ մարախն էր : Խններորդ՝ երեքօրեայ թանձրամած խաւարն էր : Տասներորդ՝ անդրանկաց կոտորումն էր :

## Հ . Ի Դ

Ո շատ ժամանակ տեսեց այդ պատիժները :  
Պ . Առուռնելիոս կըսէ՝ թէ քսան և եօթն օր տեսեց :

## Հ . Ի Դ

Ա յդ ըսած պատիժներուդ մէկը ջուրին յարիւն փոխվիլն էր , որ Փարաւօնի կախարդներն ալ ըբին , ինչպէս որ կը վկայէ սուրբ գիրքը . Եթէ Եգիպտոսի բոլոր ջուրերը յարիւն փոխվեցաւ . ի՞նչ ջուր էր՝ որ կախարդները յարիւն փոխեցին :

Պ . Օ անազան մէկնիչք՝ զանազան մէկնութիւն կուտան այդ հարցմանդ . բայց Օդուստինոս կըսէ՝ թէ Գեւեմայ երկիրէն բերին , որ Եգիպտոսի մօտ է : Կուռնելիոս կըսէ՝ թէ Մովսէս տրվաւ այդ ջուրը կախարդներուն , քանզի Եբրայեցւոց ջուրը յարիւն փոխված չէր : Եւ ինչպէս որ մեւս ինն պատիժներուն հաղորդ չէին Եբրայեցիք Եգիպտացացւոց հետ , նցնպէս ջուրին յարիւն փոխվելուն ալ հաղորդ չեղան :

## Հ . Ի Ե

Ա նչու Փարաւօնի խղուված ծովուն՝ կարմիր կըսվի :  
Պ . Ա լերպ կերպ կը խօսին զանազան անձինք , բայց մէզի հաւանականը այս է որ , այն ծովուն յատակի աւազը կարմիր է , անոր համար կարմիր կըսվի : Եւս ոմանք կարմիր ըսվելուն պատճառ կուտան՝ թէ այդ ծովուն մէջ բուսա (մէրձան) կը բուսնի :

## Հ . Ի Զ

Ա մպեղէն սիւնը՝ որ առաջնորդ եղաւ Խորոյեցւոց . Երբ Եգիպտոսէ ազատեցան՝ և աւետեաց Երկիրը կերթային , ինչու համար ցերեկը ամնի նման կերւար , և գիշերը հըց նման :

Պ. Այսպէս կը վարդապէտէն՝ թէ ցերեկը՝ այսինքն ՚ի կեանս արդարոց ամզի նման հովանաւորութիւն ունի քայլուց գիշերը՝ այսինքն ՚ի կեանս մեղաւորաց է իբրև հրեղէն և զարհուրելի:

### Հ. Ի. Հ.

Անչու թող չէր տար ած Երբացեցւոց՝ յերկնից իջեալ մանանայն շատ ժողվել, այլ օրվան բաւականին չափ ժողվել հրաման ըրաւ:

Պ. Այս պատճառաւաւն էր՝ որ ոյ նախատեսութել կապվին, և սորվին՝ թէ ինքն է օր ըստ օրէ կերակրօղը. և չի հոգան իրենց տարեկան կամ շաբթըլվան ուտելիքը. ինչպէս որ և մեք սորվեցանք հանտպաղորդական հացը խնդրել աստուծմէ:

### Հ. Ի. Հ.

Վնչ է ածային այս հրամանին մեկնութիւնը՝ սեղանի շինութե համար, որ կըսէ Սեղան հողեղէն արասջէք ինձ. . . տպա եթէ սեղան ՚ի քարանց առնիցես ինձ, մի՛ շինեցես զնա կոփածոյս (չեքիձով տաշած) • է լէց. ի. 24 ||:

Պ. Ին բարունեաց մեկնութիւնները մէկ գի ձգելով ըստ կուռնելիսի տսեմք, թէ Սեղան ՚ի հողոյ կամ յանտաշ քարանց արասցես ինձ. քանզի Երբացեցեք գէպ ՚ի կուպաշտութեան կողմը գիւրաւ կըսահէին, անոր համար ձուլածոյ կամ տաշած կամ ձարտարութէ շինված սեղան չի ուղէր, որ կուպաշտութէ հեռի մնան: Խւս հաւանական չորս պատճառ կը խօսին:

Կախ՝ հին կտակարանի պատարագքն՝ կամ զոհքն՝ կոպիտ և տղեղէին, այսինքն միայն իբր օրինակ էին պատարագքն մի քի, որ ՚ի սեղան խաչեն միանգամ արիւնաթաթախ եղեւ:

Երկրորդ՝ որ ցցց տար, թէ որըան խիստ և անտաշ պիտի ըլլոր՝ քի նցն որ սեղանը, այսինքն որ խաչը:

Երրորդ՝ անկարգ և անկանոն ընել կուտայ, որով իմացընէ հին պատարագին անհիմն ըլլալը, մանաւանդ ժամանակէ ետքը խափանվիլը:

Չորրորդ՝ ինքն ած՝ որ ընդունօղն է այն զոհին, առաւել ՚ի զոհն հայի քան թէ ՚ի սեղանն, և առաւելապէս անոնց մաքրութեանը և սրբութել ունէր հաշիլ՝ քան թէ սեղանին յարմտը կամ անյարմտը ըլլալուն:

Վնչ նշանակութե՛ ունին այս չորս նիւթերը , բեհեղն , կարմիրն , ծիրանին , և կապուտակն , որոնցմէ եղաւ հին խորանը :

Պ . Առողջելիոս կըսէ՛ թէ այս չորս նիւթքը՝ չորս տարերքը և բուրս աշխարհը կը ցուցունեն , որոյ օրինակ էր հին խորանը . քանզի բեհեղն կը ցուցունէ հողը . ծիրանին՝ ծովը . կապուտակը՝ օդը . կարմիրն՝ հուրը : Վսոնք կը ներկայացընեն այ հանգիսավեհութիր , և օրինակ խրառուէ մեզի , թէ ինչպէս յարգութե՛ և մաքրութե՛ մտնալ պէտք է ՚ի խորանն և ՚ի տաճարն :

Հին խորանը՝ ինչո՞ւ սուրբ գրոց մէջ խորան վկայութեան կըսվի :

Պ . Առողջելիոս կըսէ՛ թէ խորանը կը պարունակէր օրէնքը , որ էր վկայութիւն ածային կամաց և ածային ուխտի , ասոր համար խորան վկայութեան կըսվէր :

Վոլսէս երբ Աինէական լեռը ածախօսութե՛ գնաց և ուշացաւ , Խարայէլացիք ժողվութեցան Ահարօնի վրայ , և ըսին թէ՝ Մովլսէս գնաց չեկաւ , մեզի ած մը ըրէ՝ որ պաշտեմք : և Ահարօն ալ ոսկեղէն զարդերնին ուղեց , և ձուլածց որիժ մը շինեց՝ որ պաշտեն , ինչո՞ւ ուրիշ կենդանիի կերպարանքով բան մը չի շինեց :

Պ . Յայտնի է որ Եբրայեցիք Եգիպտացւոց հետ սորվածէին , և Եգիպտացիք կուռք կը պաշտէին , և պաշտած կուռքերնուն անուննը Սարապիս կամ Սերապիս էր . այս կուռքը եղի կերպարանքով էր , որոնք Եգիպտասի մէջ շատ տեսած էին , վասն որոյ եղի կերպարանքով շինեց :

Վեղադրելի չէ՞ Ահարօն այդ գործոյն համար :

Պ . Աւոր ուղելովը չի գործեց Ահարօն այդ գործը՝ այլ երակիւղէն , եթէ քիչ մը գեմ խօսած ըլլար՝ պիտի քարկոծէին . և ինքն ալ իւր իշխանական պատիւը չի կըցաւ գործ ածել ,

ուղեց որ հնաբըռվմը արդիլէ այդ գործը . և այս պատճառաւ ըստ՝ թէ ձեր կանանց զարդերը բերեք , որ ձեզի ձուլածոց ամ ընեմ : Արովիշեամ կանանց զարդը և սկեղէն ինչքը երենց հոգիէն աւելի է , վա որց էրիկ մարդոց ըստ՝ թէ կնիկներուուդ սկեղէն զարդերը բերեք , իբր այս մտօք՝ թէ կնիկները իրենց զարդերը չեն իտար :

Դաս Ահարօն մասածեց ձուլածոց շինել , որ մինչեւ գալափարը շինվի՝ և սկեղէն զարդերը հալին , Մովսէս կուգայ լեռնէն , և ինքն ալ կազտաի : Իսյց այդ կարծիքները ոչինչ ելաւ , քանզի այնքան կուապաշտութէն ախտը աիրել էր Եբրայեցւոց սրախն վրայ , որ չէ թէ իրենց կանանց զարդը , այլ բողոք ինչքերնին եթէ ուղեր՝ պիտի տային :

Հինած կուռքն ալ եզի կերպարանքով շինելուն՝ այնպէս կը կարծէր , թէ որովիշեամ Եգիպտացիք այդ կերպարանքով կուռք ունեին , որ ոչ պատիժները կրցաւ արդիլել , և ոչ ալ Փարաւաօն կարմիր ծովէն ազատել , և գնացէ Եբրայեցիք ալ այդ միաք բերելով՝ կամք չի տան այդպիսի կուռքի : Իսյց ասոնց բողոքը ընդունայն եղաւ , և Ահարօն ակամայ և տկարութեամբ մեղանչեց , և յետոյ ըստ օրինացն արարողութեանց քաւեցաւ ՚ի մեղաց :

#### Հ . Լ. Դ.

Մովսէս երբ տեսաւ ժողովուրդը կուապաշտութէն մէջ ինկած , ինչո՞ւ լեռնէն բերած ածային պատուիրանաց երկու տախտակը՝ բարկութեամբ մը կոտըեց :

Պ . Յապէս կըսեն ածաբանք , թէ ՚ի սուրբ նախանձուէ շարժեալ՝ անոնց հրապարակական ամբարշտութեամը գէմարժանի չի տեսաւ , որ ածային օրէնքը այնպիսի մոլէգնեալ և արբեալ ժողովը եան բերէր :

#### Հ . Լ. Դ.

Յն որթը ինչո՞ւ Մովսէս այրեց , և խարտեց , և ջուրին երեսը ցանեց , և խմյուց խրայէլացւոց . եւէյ . լը . 20 :

Պ . Ահամարհէլ ցոյց տալու համար իրենց պաշտած կուռքը . և խարտելով խմյուց , որ յետոյ տեսնան իրենց ասաւածոցն ինչ ըլլալը , և գիտան անոր անդօրութիւնը և անտրդութիւնը :

## Հ . Ա. Ե

Պրբ Խարայէլացւոց ազգը Եղիսպառսի դերութէն ազատեցաւ , քառասուն տարին անապատին մէջ մնաց , ուսկից հանդերձ կառնէր կը հագնէր այնքան տարիին մէջ :

Պ . Ե Եղիսպառսէն ինչ հանդերձով որ ելան՝ անով մնացին , քանզի այն քառասուն տարիին մէջ հանդերձնին չե հինգաւաճային նախախնամութք , ինչպէս որ կը վկայէ ևս նոյն նախամարդարէն Մովսէս , որ կըսէ իւր ժողովը որը . || Եւ ահա էտծ զնեղ զքառասուն ամն ընդ անապատ , ոչ հնացան ձորձք ձեր , և ոչ մաշեցան կօշեկք յուալց ձերոց . ք , օքն . իթ . 5 || :

## Հ . Ա. Զ

Խարայէլացւոց ազգին վրայ Մովսէսի ունեցած երախտեցը համար Դաւթիթ մարդարէն կը դրէ , || Ի վեմէ մեղը յագեցցց նոցա || . սուրբ Գերեին մէջ տեղմը գրված չէ , թէ Մովսէս վէմէն մեղը վաղցուց . Դաւթի այս խօսքը ինչպէս իմանալ պէտք է :

Պ . Ե յապէս կըսէ Յովհան ոսկերերան , թէ ժողովուրդը երբ անապատին մէջ ծարաւ մնաց , յայտնի է՝ որ այ հրամանաւ Մովսէս ջուր բղինեցց ապառաժէն : Ժաղովուրդը կարի ծարաւ և ջուրի կարօտ ըլլալով՝ յանկարծ այն պաղ և պարզ ջուրին վրայ որ թափեցան , այնքան անցյ եկաւ իրենց , որ ըսին՝ թէ այս ջուր չէ , այլ մեղը է , վարց մարդարէն կըսէ . || Ի վեմէ մեղը յագեցց նոցա || :

## Հ . Ա. Ա

Մովսէս մարդարէին պատկերը երբ կը նկարեն , դլուխը երկու եղջեւը ինան բան կը դնեն , այս ինչ նշան պիտի ըլլայ , կամ ինչ միտք է այդ եղջեւըները :

Պ . Ե բեայք կըսէն , թէ երբ Մովսէս Սինէական լեռնէն կիջնար օրինաց տախտակները բերելով , լուսերէն երկու եղջիւր կերեւար ձակատը . իբր բերած օրէնքը խեթիիշ (պոյշնուղով զարնօղ) և ծառայեցուցիչ էր . ուստի ահ և երկիւղ տալուն նայելով եղծ տկան էր , և անդ բափոխելի էր աւետարանական քաղցր և համեղ շնորհաց օրէնքին , անոր համար և քայ կըսէր , || Լուծն իմ քաղցր է , և բեռն իմ փոքրոգի || :

## Հ . ԱՅ

Վոլսէս մարմնոց բորոտութեան սեպհական եղած՝ արարողութիւնները աւտոդելէն ետքը, կըսէ և հանդերձի բորոտութե համար, || Եւ ձորձ՝ յորում լիցի արած բորոտութե, և այլն . զեպացոց . ժդ . 47 || : Վարմինը բորոտութեան կը պատահէ, բայց հանդերձը ինչպէս կը բորոտի:

Պ . Ամանք իմացան, թէ հանդերձին բորոտութիւնը ցեցին կերածն է, բայց անյարմար է այդ մեկնութիւնը, քանզի ցեցին կերածը միայն բըդեղէնը կըլլայ, և հանդերձ ըսածդուրիշնիւթերէ ալ կըլլայ, և Մոլսէսի խօսածնները ցեցի կերած հանդերձի համար իմանալ չի վայէր:

Քարմար մեկնութիւն այս է՝ որ բորոտեալ հանդերձ ըսելով, բորոտ անձանց հանդերձը պիտի իմանամք՝ մանաւանդ շապիկներնին . քանզի հոտած շարաւ մը՝ կամ ուրիշ խիժային ժանո կծու հիւթմը, որ բորոտին մարմինէն կը վաղէ, և կը տարածի հանդերձնուն վրայ, այն ժանանակը Մովլէսի ըսածդոյները կը ցուցունէր հանդերձին վրայ՝ կարմիր՝ կանաչ՝ գեղին, և կծութեամբը հանդերձը հուտաէ և կը մաշէ: Եթէ լըվացվի այն հանդերձը՝ հազիւ կը պատռի, և վրայի արատները գժուարաւ կը մաքրին: Ուստի կը հրամայէ Մովլէս՝ այնպիսի ապականեալ հանդերձը այրել, որ ըըլլայ թէ մէկը հագնի և բորոտի . քանզի օգուտ չունի բորոտեալին՝ Եթէ գեղը ընես, քանի որ այն շարաւոտ հանդերձը վրան է:

Լ. յս կանոնը բժիշկներն ալ կը գործ ածեն, երբ սյապիտի ախտաւորի կերթան, նոր հանդերձ կը հազցունեն, որ ըըլլայ թէ հին հանդերձին ախտը անդարձ ըլլայ:

## Հ . ԱՅ

Ջանց բորոտութիւնը ինչ պիտի ըլլայ:

Պ . Ամանք ՚ի գիտնոց փիլիսոփայօրէն կը մեկնեն տանց բորոտութիւնը սյապէս, թէ պատին քարերուն անյարմար շարքէն կըլլայ, և պատճառն ալ այս է որ՝ աղի և բորակի և ծծումքի մասնիկներն են՝ որ օգոյն խոնաւութիւնը կը թուլնան, և քարին քարակ ծակաւացը մէջ միշտ ներս վասէլով, կուտեն կը մաշն քարին գյացութե մածուցիկ յօդուածները, որոնցմով քարին ամներ կտորվանքը աւաղի պէս կը փշըն, և անկից կանաչ՝ կարմիր արատներ կը տարածին պատին երեսը, ինչպէս բորոտութիւն

մարդոցն մարմնոցն վրայ։ Երբ պատին երեսի ծեփը թափիլ կըսկըսի, և գեշ բորակիլը շոգիներ այն պատէն գուգան այն տանը մէջ, և օդը ապականելով կերպ կերպ ախտերու պատճառ կըլան այն տանը կամ սենեակին մէջ բնակօղներուն։ Եւ Եթէ այսպիսի տուներուն հոգ չե տարվի՝ և շատ մաս, տունն ալ վտանգի մէջ կըլայ, և այն խոնաւութէ շատութիր՝ մէջը եղօղներուն բոլորն ալ կապականէ։

Իսայց սուրբ գրցն երևելի մեկնիչներէն ոմանք կըսեն, թէ ինչպէս Խրայելացւոց նորանշան պատիմները, նցնապէս և այս մասնաւոր պատիմնը կը Համարին աստուծմէ իրենց վրայ մեղքերնուն համար։ Այս մեկնութիւն Մովսէսի խօսքը կը Հաստատվի, որ ՚ի գիմաց աստուծոց կըսէ, Ո Յորժամ մասնիցէր յերկիրն քանանացւոց, զոր ես տաց ձեզ ՚ի ստացուածու, և տայցեմ արած բորոտութեան ՚ի տունս երկրին ստացուածոց ձերոց։ Վաղացաց · Ժ-Դ · 34 ։

Վպա այն տանց բորոտութիւնը ուրիշ թունաւոր որպիտութեամբ էին, կամ այժմեան փիլխոփայից ըսածին պէս այնպիսի մասնկունք էին, որ ոչ միայն պատերուն մէջ, այլև տանը բնակիչներուն և ընչեց էրնան ապականութիւննին ներգործէլ, և անով փոխադրական ախտ մը պատճառել. անոր համար հրամացեց Մովսէս, տունը ՚ի հիմանէ քակէլ, և այն քակածը բանի մը չե գործ ածէլ ոչ քարը և ոչ փայտը։ Ո էրջապէս այս տանց բորոտութիւնը պատիմ կը Համարիմ, և ոչ բնական ինչ։

## Հ · Խ

Մովսէս և Ահարոն այ առջին նախապատիւ էին Խրայելացւոց ազգին մէջ։ Իսայց ժողովութիւն ձանապարհին զանազան մոլութիւն գործելով, Մովսէս և Ահարոն չե կրցին մտնաւ Աւետեաց երկիրը. ասոնց յանցանքը ինչէր, ինչո՞ւ արժանի չեղան։

Պ. Ա. յդ ձանապարհորդութիւն մէջ երը Խրայելացիք Կադէս եկան, ջուր չե գտնըլելուն համար տրտունչ ըրին՝ ըսելով, թէ բերկը մեղք այս անապատ տեղը, որ ծարաւ պիտի ջարդէք. Մովսէս շատ բարկացաւ ժողովրդոց, և անոնց ապերախտութեամնը համար կասկածեցաւ, թէ կամք չընէր անձիւնց ողորմիւ. վե որոց երկբացութիւն ըսաւ, Ո Մի թէ ՚ի վիմէս յայսմանէ հանիցէմք ձեզ ջուր։ այսպէս ըսելով իրը իմացունել կուզէր, որպէս թէ ած իրենց հետ չեր այն ժամանակիւ։

Բայց աճ ըստ Մովսէսի և իւր եղբօրը , որ խօսքով հրաման ընեն ապառաժ քարին՝ որ ջուր բղիկ , բայց չի խօսեցան , այլ Մովսէս միանգամ գաւաղանաւը քարին զարկաւ և ջուր չելաւ , քանզի աճ ուշացոյց իւր սքանչելիքը՝ իրենց երկմառնաթեսն պատճառաւը , ինչպէս և ոք հարք կը վկայեն . ապա հարկ եղաւ , երկրորդ անգամ ևս զարկաւ Մովսէս գաւաղանաւը այն քարին , և առատ ջուր բղիկեց :

Վ. Ժմ երկբայցութիւններնուն համար՝ որ ժողովը եան առջին ցոյց արվին , և ոյ հրամանը ըսածին պէս չի կատարել նուն համար , այսինքն ապառաժ քարին հրաման չընելնուն համար՝ Աւետեաց երկիրը մտնալու արժանի չեղան . և ոք գիրն աւ կը վկայէ ՚ի դիմաց ոյ այսպէս . || Խօսեցաւ որ ընդ Մովսէսի և ընդ Ահարօնի՝ և ասէ , յաւելցի Ահարօն առ ժողովուրդ իւր , զի մի՛ մացեք յերկիրն՝ զոր ետու որդւոցն Խորայէլի՛ , քանզի բարկացուցիք զիս ՚ի վերայ ջուրցն բամբասանաց . Եսաց . ի . 24 || :

Բայց ըստ Խորհրդական մտաց , որովհետեւ Մովսէս և Ահարօն ոչ իրենք մասն Աւետեաց երկիրը , և իրենց ձեռքովը Խորայէլացւոց ազգը մտաւ , ասոնք երկու եղբայր կը նշանակէին հին օրէնքը , որ չի կը ըցաւ Աւետեաց երկիրը՝ այսինքն երկինից արբայցութիւնը տանիւլ իւր ժողովուրդը , որովհետեւ այդ շնորհը նոր օրինաց յատկացեալ պահված էր յի քի ձեռքով , որց օրինակ եղեւ Յեսու :

## Հ . ԽԱ

Մովսէս երբ յետին օրհնութիւնը տըլաւ ժողովըոց , սկսեց Խորայէլի երկուասան ցեղը մէկիկ մէկիկ անունով յիշել . նախ Ուուբենէն սկսեց այսպէս ըսելով , || Կեցցէ՛ Ուուբեն և մի՛ մեռցի , և եղիցի բազմաւոր թուով . ը , օքէն . լէ . 6 || : Յակոբ նահապէտ այս երկուասան տղաքը երբ օրհնեց , Ուուբենի համար ըստաւ . || Ուուբեն անդրանիկ իմ , դու զօրութի իմ և սկիզբն որդւոց , խստութիւն գնացեր , և խստութիւն յանդգնութեան թշնամանեցեր , իւրեւ զջուր մի՛ եռասցիս , զի ելեր յանկողինս հօրքո . յայնժամ պղծեցեր զանկողինն՝ յոր ելեր . (քանզի շնացեր էր բաղդայի հետ՝ որ իւր հօրը հարձն էր) . ծնն . լէ . 22 || : Եւ անէծքը տես ծննդոց , գլ , խթ . 3 : Վ. Ժմ՝ շատ զանազանութիւն կերեայ Յակոբոյ և Մովսէսի խօսքերուն մէջ Ուուբենի վրայ , ինչպէս պէտք է իմանալ :

Պ. Ամենեւին զանազանութիւն չի կայ Երկուքին ալ խօսքին մէջ . մի և նոյն է Յակոբայ և Մովսէսի օրհնութեց միտքը : Մովսէս կըսէ՝ Կեցցէ , օրհնութեն մի՛ իմանար , այլ ցեղը չի պակսելու համար կըսէ : || Եւ եղեցի բազմաւոր թուով || ըսաւ , որով իմացունել կուղէ , թէ բազմաւոր թիւն ցեղի նորա եղեցի թուով , ոչսինքն չափաւոր համրանքով , որ ըսել կուղէ՝ թէ չի շատնայ՝ չի աճի՝ այլ միսյն մնայ : Կոյնոպէս և Յակոբայ ըսածը առ որդին իւր Ռութեն , թէ || Իբրև զջուր մի՛ եռասցիս , || իբր ըսել կուղէ՝ թէ ջուրի պէս չի եռաւ , այլ ինչ ես նէ՝ նոյն մնաս : Վհա այսոպէս Յակոբայ և Մովսէսի խօսքը առ Ռութեն՝ Երկուքն ալ մէկ միտք ըլլալը յայտնի եղաւ , և ոչ թէ միմեանց ներհակ խօսքեր են :

## Հ . ԽԲ

Մովսէս այս օրհնութեանը մէջ Խրացելի տասն և մէկ ցեղին նահապետաց անունները կարգաւ կը յիշէ , բայց Ըմաւոնը բերան չի բերէր . այս ինչ միտք պիտի ըլլայ :

Պ. Անին չէ Ըմաւոնի անունը չի յիշելը , որուն համար զանազան կարծիքներ կերւայ : Ոմանք կըսեն , թէ Ըմաւոնի օրհնութեը Յուղայի օրհնութեն մէջ կիմացվէ , քանզի իրենց բաժինները մէկզմէկու սահմանակից արվեցաւ , և Ըմաւոնի ցեղը Յուղայի ցեղին բաժինին մէջ խառնըլեցաւ , և իրարու հետ առաւել միտքան և սիրելի էին , ինչպէս որ յայտնի է ՚ի գիրս Յեսուսայ , գլ , մթ . 1 :

Եւ ոմանք կըսեն , թէ Երկուտասան եղբարց մէջ՝ նախ և յառաջ Ըմաւոն անօրիննեցաւ , և իրենց փոքր եղբայրնին՝ Յովսէփը սոլանաննելու կամ ծախսելու խորհրդոցն գլուխ գրանըլեցաւ . թէպէտ սուրբ գիրքը Յովսէփայ պատմութեան մէջ այս խօսքը չի յայտնէր :

Եւ ոմանք ևս կըսեն , թէ Մովսէս անոր համար չի յիշեց Ըմաւոնը , քանզի Խրայելացւոց աղջին մէջ միշտ Ըմաւոնի ցեղը առաստամբաց գլուխ գտնըլեցաւ , ուստի և ածային պատիմը ասոր ցեղին վրային անպակաս էր :

Վայս մեկնութիւն թէպէտ ընդունելի է , սակայն կարելի է որ՝ Մովսէսի միտքը ինկաւ Յակոբին անիծելը Ըմաւոնը և զիին , վասորց Ըմաւոնը չի յիշեց : Վայս գիտեմ՝ որ այս տեղ Երկու հարցմանք ունիս . մէկը զիին և Ըմաւոնը ինչո՞ւ անիծեց Յակոբ . և միւս՝ եթէ Մովսէս այդ պատճառաւ չի

յիշեց Շմաւօնը , պէտք էր որ Ղեկ ալ չե յիշեց :

Վաղին հարցմանդ պատասխանը տես՝ ՚ի գիրս ծննդոց , գլուխ , մինչեւ ՚ի վերջն նցյ գլխոյն , ուր տեղ յայտնի կըլսոյ անիծ ելցյն պատճառը ի՞նչ յանցանք ըլլալը :

Վիւս հարցմանը պատասխանը այս է , այն մեղքը՝ որ Շմաւօն և Ղեկ միատեղ գործեցին , Ղեկայ ցեղը առաքինի արարողութե ըստ հին օրինաց քաւել արվաւ . բայց Շմաւօնի ցեղը օր քան զօր առատացաւ յցդ ՚ի գործս չարութե , վայրութե ։  
Մովսէս՝ Ղեկին կը յիշէ , և Շմաւօնը չե յիշեց :

#### Հ • ԽԳ

**Ա**ռվակ վախճանելը ի՞նչպէս եղաւ :

Պ . Արագարական ողջոյնը և մարգարեական օրհնութիւնը տալէն ետքը՝ այ հրամանաւ գէալ ՚ի Նարաւ լեառը կերթայ՝ որ Մովսէս Երկիրն էր , և ժողովուրդը հեռուեն արտասուօք անոր կը նայէր Ետևեն , քանզի հրաման չի կար՝ որ հետը մարդ Երթայ : Ուստի Մովսէս Մէրայէլ հրեշտակապետը իրեն ընկեր ունենալով լեռը կելլէ , (քանզի ըստ հասարակ կարծեաց վարդապետաց՝ Մէրայէլ հրեշտակապետն էր , որ միշտ Մովսէսի կերեար , և իւր հետ կը խօսէր ՚ի դիմաց այ , իւր թէ դեսպան էր իրեն) : Վ. յն լեռան մէջ իւր հոդին աւանդ ելով Մովսէս ՚ի ձեռս այ , մարմինը ձգեց ՚ի ձեռս հրեշտակին :

#### Հ • ԽԴ

**Ա**ռուդա առաքեալը Մովսէսի մարմացն համար այսպէս կը գրէ . Ուր Մէրայէլ հրեշտակապետ՝ յորժամընդքանսարկուին սատանայի վիճեալ տայը պատասխանի՝ վա Մովսիսեան մարմացն , և այլն . յառաջ . առաջ . այս ի՞նչ վիճունք պիտի ըլլայ :

Պ . **Ա**յսպէս կը վարդապետեն՝ թէ յետ մահուան Մովսէսի մեծ հակառակութիւն եղաւ Մէրայէլ հրեշտակապետին և բանսարկու սատանային մէջ . քանզի սատանայն կաշխատէր՝ որ Մովսէսի մարմինը Աւետեաց Երկիրը տանի , յուսալով որ ժամանակէ մը ետքը ժողովուրդին կուապաշտութիւն լնել կուտայ , և այն մարմինցն ածային պատիւ տալ կուտայ :

Վ. Մէրայէլ հրեշտակապետ գիտնալով այդ վտանգը՝ դէմ կեցաւ , և ինքն իրեն չի կը ընալով կամ իւր իշխանութե ը հածել չար սատանայն Դ այ անուամբը սատեց և հալած էց . և

Մովսէսի մարմինը Մովաքայ ձորցն մէջ թաղեց , և անյայտ ըրաւ գերեզմանը , որ այն ժամանակը մարդ չի գիտցաւ :

## Հ . ԽԵ

**Յ**օբայ պատմութեան մէջ գրված է , թէ Աշկեն հրեշտակը այս կալառաջի ան , եկն և ստունայ ընդ նու . . . և ասէ այնա ար , նոյեցանը մտօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յօբ , զի ան գոյ երբեւ զնա ՚ի վլը երկրի այր անարատ՝ ճշմարիտ՝ անձանաշատ՝ մեկնեալ յամ իրաց չարաց : Այս պատասխանի սատանայ . . . ու թէ ձրի՞ պաշտիցէ Յօբ զտէր , և այլն : Օտրմանալի կերեւայ ինձի այս խօսքը , ստանայն ինչ համարձակութիւն ունի գալ այս առջին , և անձ ալ Յօբայ վրայ պարծի ստանայի դէմ :

**Պ.** Առաջին մասին մէջ ըսինք , թէ սր գրոց մէջ երբ կըսվէ՝ Ած խօսեցաւ , Ած երևեցաւ , այն խսկապէս այս էռւթիւնը՝ այլ հրեշտակ այ , որ ՚ի դիմաց այս խօսելով՝ և իբր փոխանորդ այ գոլով ած կանուանի : Այնպէս Յօբայ տանը պահապան հրեշտակները երբ խորհուրդ կընէին , թէ ինչպէս պէտք է Յօբայ տանը վարվիլ փորձութե՛ ժամանակը՝ որ մօտեցեր էր , քանզի ած այն հրեշտակաց յայտնէր էր . այդ խորհրդացն մէջ ստանայն ալ եկաւ . և հրեշտակաց մէջի նախապատիւը՝ որ էր ՚ի դիմաց այ , գովել սկսաւ Յօբայ ածպաշտութիւնը :

Արովշետե բարեգործ մարդիկ՝ թէպէտ ուրախութիւ և պարծանք են բոլոր հրեշտակաց , բայց առաւելապէս իրենց պահապան հրեշտակներուն . ստանայն ըսաւ այն հրեշտակին , Մի թէ Յօբ ձրի՞ կըպաշտէ իւր ածը , ոչ ապագէն դուն հաստատեր և լցեր ես իւր տանը ներբին և արտապին բարեկըները . առ իրմէն իւր բոլոր ինչքը , տես ինչպէս երեսդ ՚ի վլը քեզ կանիծէ : Այս հրեշտակը ՚ի դիմաց այս թող տըվաւ ստանային , նախ որդիքը և ինչքը և բոլոր բարեկը ցրուել , և յետոյ մարմինը զանազան ախտերով և վէքերով լւցունել , և այլն , ըստ կարգին , տես ՚ի գերն Յօբայ :

## Հ . ԽԶ

**Ի**նչո՞ւ համար ած ըսաւ Մովսէսի հրաշքներուն ժամանակը Եգիպտոսի մէջ , թէ Ահարօնի տաւր գաւազանը՝ որ Փաքաւօնի առջին ձգէ . և Մովսէսի ձգէւ չի տըվաւ . Եւց է . ց :

Պ. Առասուցանեն վարդապէտք այսորէս , թէ Որովհետեւ  
Մովսէս՝ Փարաւոնի պալատին մէջ սնեալէր , ապէրախտ չե  
գտնըլէլու համար Ահարօնի հրաման ըրաւ || :

Հ . ԽԵ

Յ մովհեւ մարդարէն ՚ի դիմաց հօր այ կըսէ , Ո Յաւուր  
յայնմիկ հեղեց յոդւց իմմէ ՚ի վր ամմարմնց ։ Յ ՎԵԼ Ի ։ 28 || :  
Վ ՐԴ ՚ հոդւցն սրբոյ գալստեան ժամանակը , արդեզք բոլորն  
ալ հոդւցն սրբոյ շնորհը առինքն :

Պ. Ա մենայն , կամ Ամենեքեան բառը , գրոց մէջ միշտ բոլո  
րը մէկ աեղ զատ զատ , այսինքն մէկը անդամ դուրս չե ձգե-  
լով չիմացընէր . վասն որոց սուրբ գրոց մէջ այսպիսի բառերը  
երբեմն ըստ տեղւցն կիմացվին : Վ ՀԱ քեղ օրինակ մի , ծննդոց  
գրքին մէջ կըսին , թէ Ո Ապականեաց ամմարմին զնանապարհ  
իւր ՚ի վերայ երկրի . Ճնն . Ղ . 12 || : Յ այտնի է՝ որ ՚սց և իւր  
որդիքը իրենց ճանապարհը չեն ապականէր : Կ ցնապէս իմա-  
ցիր և քու հարցմունքիդ միաքը :

Հ . ԽԵ

Յ աւուրս դատաւորացն Խորայէլի երբ Յեփթայէ պա-  
տերազմի կերթար Ամմօնաց որդւոց վրայ , ուխտ ըրաւ այ հետ  
ըսելով , եթէ Ամմօնաց որդիքը յաղթեւ տաս ինծի , և երբ  
տունս դառնամ , ով որ իմ տանս մէջէն նախ առջես ելսայ ,  
քեզի մատաղ ընեմ . Դատաւորաց . Ժան . 30 :

Յ եփթայէ յաղթութէր ըրաւ , և առւն դարձաւ , և նախ  
իւր մէկ հատիկ աղջիկը դիմացը ելսաւ , և ինքն ալ տրտմեցաւ  
որովհետեւ խոստացեր եր՝ որ մատաղ պիտի ընէ : Վ Դ ջիկը որ  
իմացաւ՝ յօժարութեամբ յանձնառու եղաւ , և հօրը ըսաւ  
մի՛ արտամիը , ուխտող կտտարէ՛ . միայն երկու ամիս ժամանակ  
տնօւր ինծի , որ երթամ ընկերներուս հետ կուսութէս լսմ ,  
և լեռները շըջնմ :

Կ երթայ աղջիկը և երկու ամիսէն ետքը կուգայ . սուրբ  
գիրը կըսէ՛ || Եւ արար (հայր աղջկանն) նովաւ զուխտն  
զոր ուխտեաց , և ոչ գիտէր նա զայր , և այն || :

Վ ՐԴ ՚ եթէ այդ մարդը աղջիկը սպաննեց մատաղ ըրաւ ,  
եղաւ մէղք որդեսպանութէր և մարդասպանութէր , որ այ կա-  
մացը դէմ է . եթէ ըստպաննեց՝ ինչո՞ւ կըսէ սուրբ գիրը , || Եւ  
արար նովաւ զուխտն՝ զոր ուխտեաց || :

Պ. Այդ երկար հարցմանդ՝ Երկար պատասխանի պէտք է .  
զանազան մեկնութի կայ այդ հարցմանդ , որոնցմով հասկըցու-  
նեմքեզի , թէ ի՞նչ ուխտ ըրաւ , և ի՞նչպէս կատարեց : Հին  
և նոր վարդապետներէն շատերը՝ Յեփթայեայ ուխտ ըրածը  
կիմնան յատուկ այ մատուցանելի ողջակէզ՝ ըստ հին օրինաց  
մորթելով և այրելով . և որովհետեւ իւր աղջիկը պատահեցաւ՝  
կը հաստատեն անխոչէմ ուխտ ըլլալը , բայց կարդարացընեն  
Յեփթայէն՝ գհնէ ՚ի ծանր մեղաց , իբր կըսէն՝ թէ Յեփթայէ  
պատերազմօղ մարդ ըլլալով , և այն ժամանակը բոլորովին բոր-  
քոքեր եր աղջին փրկութեը համար , ուստի միայն կը խորհէր  
այ և աղջին թշնամիները ցրուել , վա որոյ առանց զգուշութե  
և հարկաւոր ընտրողութե , մանաւանդ ըստ ոմանց՝ անյաղթելի  
տգիսութե , համարելով՝ այ ընդունելի մեծ բան մը ընել ,  
այնպէս անորոշ ուխտ մը ըրաւ : Խւ ոմանք ՚ի ոք գիրն հայե-  
լով , որ ուխտին խօսքէն յառաջ գրված է , || Եւ եղել ՚ի վկ  
Յեփթայեայ հոգի տեառն . դաստարաց . ժամանակ . ժամանակ . 29 :

Վսկեց կը հտմարին թէ , հոգւոյն սրբոյ աղջեցութեամբը  
ըրած կըսայ այն ուխտը՝ առանց մանաւոր անուն մը դնելոյ .  
և այս միաբը՝ կըսէն թէ , իւր լացը և ողը և հանդերձները  
պատուելը կը հաստատէ , երբ դառնալուն յանկարծ աղջիկը  
գիմացը ելած տեսաւ : Խւ այսպիսի բարեմատութե մեկնելով  
կարդարացընեն Յեփթայէն , թէ ուխտած ուխտին համար՝ և  
թէ կատարելուն համար . մանաւանդ կըսէն , թէ ան որգեեց  
իրեն այն յաղթութիւր , որուն համար այն խոստմունքը ըրաւ ,  
կերեայ թէ համեցաւ ուխտողին բարեմատութեը , որ կը կար-  
ծէր թէ անով ան պիտի փառաւորէ , և ոչ թէ պիտի դառ-  
նացուցնէ : Վ. յս մասին գոնեցէ արդարանայ Յեփթայէ՝ գհնէ  
՚ի ծանր մեղաց՝ վերը գրված պատճառներուն համար . բայց  
ևս տարակուսութիւննիս կը մնայ խոստմանը կատարման վայ :

Իազումք կան , որ անցյին սաստիկ պատուիրանքը գիտ-  
նալով , որ ան գրոց մէջ կարգիւէ մորդ զոհելը , չեն հաւանիր՝  
թէ Յեփթայէ մորթելով մասապ ըրած ըլլայ իւր աղջիկը :  
Ճշմարիտ է , որ աղջիկը երկու ամիս ժամանակ ուղեց՝ իւր  
կուսութիւնը լալու համար , ինչպէս սուրբ գիրքը կը վկայէ ,  
|| Թողացն ինձ զերկուս ամիսս , և երթայց շըջեցայց ընդ լե-  
րինս , և լացից զկուսութիւն իմ : || Խւ այս ժամանակը առաւ ,  
և իւր կուսութիւր լեռներուն վայ լացաւ : Վ. յս տեղ մեռնե-  
լու խօսք չիկայ կըսէն , այլ միայն ողը իւր կուսութիւր համար  
որ առանց երիկ մարդու մնալու եր իւր բոլոր կենացը մէջ :

Ալբեն թէ , Եթէ առաջին ըսօղներուն պէս տգիտութէր ըրաւ Յեփթայէ այդ խոստմունքին , մի՛ թէ այն երկու ամսը վան մէջ չի կը ըցած՝ քահանաներէն կամ իշխաններէն ճշմարտութիւնը սորվել . կամ անոնք այնքան տգէ՞ա եղան , մինչ զի հարկ համարին որդեսպան ըլլալը՝ խոստմունքը կատարելու համար : Եւ թէ անոնցմէ սորվեցաւ , ինչպէս հաւանական կերեայ , ովկ կը հաւասաայ՝ թէ Յեփթայէ իւր մոլար խղճմբանացը վրայ այնքան յամառեալ մնաց , մինչ զի սրտի կսկծանօք այն գործը գործեց , որ գիտէր ոյ հաճոյ ըսլալը . ուրեմն ասոնց կարծեացը նայելով Յեփթայէ իւր խոստմունքը այնպէս կատարեց , ինչպէս որ կարելի է օրինօք և սրբութէ կատարել , իւր աղջըկան քաղաքական կեանքը մեռցընելով՝ և ոչ թէ բնական կեանքը , քանզի զըկեց ինքը զենքը իւր յօժարակամ հաւանութէր՝ ոչ եթէ միայն ամեն կերպ մարդու հետ կենակցութէն , այլ որդենութէն յցսէն , որ այն ժամանակները նախատելի և ընդ նզրվեւք բան մի էր համարված , պարտաւոր ըրած կը լայ մշտնջենաւոր կուսութէ ծառայելով , ըստ ոմանց՝ առանձնանաւով տան մը մէջ՝ վկայութէն խորանին մօտ , կամ ըստ ոմանց՝ իւր հօրը տան մէջ առանձին ըլլալով իբր թէ այսպիսի կեանք վարելն աւ կենդանի ողջակեղ կը համարվի՝ առանց սրց և հրց մատաղ ընծայել իւր հոգին և մարմինը , որ չի զանազանիր արիւնահեղ զոհէն :

Վասնք կըսէն թէ , կերևսց որ ուը գիւըը ևս այդ միտքը կը դիտէ , քանզի ինչպէս որ ըսելէն յառաջ , նոյնպէս և ըսելէն ետքը , թէ կատարեաց զուխան , չի յայտնէր զաւակին մահը , այլ միայն կուսութիլը՝ և առանց էրիկ մարդու մնալը . ինչպէս որ կըսէ՝ ॥ Յետ երկուց ամսոց դարձաւ առ հայր իւր , և արտք նովաւ զուխան՝ զըր ուխատեաց , և ոչ գիտէր զայր ॥ : Իբր թէ ըսել կուզէ , թէ հայրը խոստմունքը ըրաւ , բայց ինչպէս , իւր կամօքը և հաւանութեամբը չի կարգեց ինքը զենքը . և այդ ճգնողական կուսութեամբը կեանքը կենդանի մատաղ ըլլալու պէս բան մի է :

Վարդ՝ այս երկու կարծեացը վոտյով շատ վարդապետք և մեկնիչք՝ ողջակեղ բառին նայելով , արիւնաւոր մատաղ ընել իմացան . ողջակեղ ուխտեց կըսէն՝ ուրեմն ողջակեղ մատաց . և այս կարծեացը միտքան ըլլալով՝ միայն ուխտին որպիսութիլ յայտնեցին , որ ոմանք՝ ինչպէս յառաջ ըսինք , կը համարին թէ յաղեցութէ հոգւցն սրբոյ ըրաւ , և նոյն հոգւցն շնորհօքը կատարեց . այն պատճառաւաւ կըսէն՝ թէ գովութէ կը խօսէ

Պողոս առաքեալ Յեփթայեայ յիշատակը . Եբայ . Ժա . 32 :  
 Եւ ոմանք՝ թէպէտ կըդովեն Յեփթայեայ պաշտօնասիրութիր՝  
 որով ըստ այս ուխտը , բայց կըսեն՝ իւր զինուորական փա-  
 փաքին ջերմութենէն յաստուծոյ կարգեալ սահմանէն դուրս  
 ինկաւ՝ առանց մտածութեան ուխտագրութիւն ընելով , որ  
 անյարմար բարեպաշտութե և հաւատով յետոյ կատարեց ,  
 իւր ըսել կուզեն՝ թէ մորթեց :

Ճերոնիմոս ՚ի մեկնութեն Երեմիայի , գլ , է , կըսէ՝ եթէ  
 || Յեփթայե մատոյց զդուսարն իւր կոյս ոյ , ոչ պատարագն է  
 համց , այլ անձն մատուցողին || : Եւ Ամերոսիոս կըսէ , || Ո՛չ  
 կարեմ ամբաստանէլ զտոնէն , որ հարկեցաւ նոուլ զոր ուխտ-  
 եան էր , բայց աշխարելի հարկ՝ որ որդեսպանութեն վճարի || :  
 Եւ Եղիշէ վարդապետն մեր կըսէ , „ Վ՞՞ որ զմիս զուարակաց  
 ոչ ուտէ , և զարիւն նոխազաց ոչ ըմպէ , զիանդ արիւն մար-  
 ու դց քաղցրանացցէ նմա , զոր և մարդոյս բնութին ոչ առնու-  
 յանձն . . . իսկ ընդէլ ասեն պատարագեցաւ դուսարն  
 ։ Յեփթայեայ . . . թուի ինձ՝ թէ պատարագն այն ընդու-  
 նելի չէ . . . այլ վրիպական բանք ելին ՚ի տագնապ ժա-  
 մանակին . . . մի՛ դատարկաբանութիւն ինչ թուիցի քեզ  
 ։ այսպիսի խնդրուածու աղջրկանն ( վասն լալց զկուսութին ) .  
 ։ լաւագոյն է քան զյանձնառութիւն պատարագելցն . . . մի՛  
 ։ որ ամենեին յանուսութիւն զայս պատարագ ոյ կարծիցէ  
 ։ համարեալ համցական :

Եւ ՚ի վլր այսր ամենայնի ոք հարք չեն երկմաիր ՚ի կարգ-  
 արդարոց և սրբոց դասել զՅեփթայե . բայց որոնք որ աղջրկան  
 կուսական անարիւն մատաղ ըլլալ կընտրեն իմանալ , նայելով  
 այն ծանր գժուարութեց վրայ՝ որ արիւնաւոր մատաղ ըլլալէն  
 յառաջ կուգայ , օտար բան մը չէ կըսեն ոք գրոց շաբադու-  
 թին , որ բոլորական ընծայումն անձին՝ այլաբանօրիէն զոհ կամ  
 ողջակէզ ըսելէ . ինչպէս որ ած նայելով յընծայումն հեթա-  
 նոսաց ՚ի հաւատն քի , ասէ Եսայեայ բերանով . || Ողջակէզք  
 նց և պատարագը նց ընդունելի եղեցին ՚ի վլր սեղանոց իմց .  
 Եսայ . ծու . ծ || :

Ոինչև այս տեղը ըսված կարծիքները և մեկնութիները  
 որ գրինք , որուն կըհաւանիս նէ , քու կամացդ կը յանձնեմք :  
 Ինձ այնպէս համց է գիտնալ , զի որովհետեւ պատերազմը ած-ա-  
 կոյս կողմանէ է , Յեփթայեայ յաղթութիւն ըլլօղը ած է , և իւր  
 խոստմունքն ալ ընդունողը ած է , չի կամիր ած իւր կարգեալ  
 օբինացը գէմ մեղմէ զոհ և ողջակէզ ընդունիլ :

Աշեւ ըսես Յեփթայէ իւր յամառութել աղջեկը մատաղ ըրաւ, կըսեմ թէ՝ որովհետեւ ածային օրինաց դէմէ այդ գործը, ուկ'աք չէր՝ որ սրբազն առաքեալը Յեփթայէն նը նահապետաց կարգը շարէր։ Եւ թէ՝ այս խոստմունքէն յառաջ նը գերը կըսէ, և Եւ եղեւ հոգի տն ՚ի վր Յեփթայէայ ։ Եթէ նը հոգւոյն շնորհը ունէր իւր վրայ, ապա նը հոգւոյն դէմգործչէր կըսնար գործէլ։ Եւ եթէ կատարեց իւր անորոշապէս խոստմունքը՝ թշնամեաց յաղթութե փափարով, բայց կատարեց աղջըկանը յօժարութեամբը՝ կուտութեամբ և սրբութել անարիւն մատաղ ընծայելով նոյ:

Եւ թէ արիւնաւոր մատաղին բարեգործութե արարութիւն՝ մէկ օրվան առաքինութե գործէ, բայց բոլոր կենացը մէջ իւր անձը անարիւն մատաղ ընծայելը նոյ՝ մաքրութե, սրբութել, և կուտութել, հանապաղընծայ մատաղէ ։ և որբան որ մարդը առաւելագոյն է քան զանթան անասունն, այնքան նախապատիւէ և այսպիսի նուիրումն նորա:

### Հ • Խթ

Ամփսոն ՚ի կարգս նահապետաց կը դրվի, ես կը զորմանամ՝ որ իւր վախճանը անձնասպանութել և մորդասպանութել եղաւ։ Անձնասպանութել՝ որովհետեւ անձնասպան գանըվեցաւ Դագոնի տաճարին ներքեւը։ Ամարդասպան՝ որովհետեւ սյն տեղը իրեն հետ երեք հազար մարդ սպաննեց ։ այսպիսէ մարդը նահապետաց կարգը ի՞նչպէս կըսնայ ըլլալ։

Պ. յսպէս կը պատասխանէ Օդոսինս «Օ այս արար Ամփսոն՝ ոչ մարդկօրէն խաբեալ, այլ յաստուածուատ հրանուալ, ոչ մոլորեալ՝ այլ հնազանդեալ, չէ մարթ մեղ այլ ՚ինչ հաւատալ վ՛նորա ։ ՚որժամ ած հրամայէ, և ներքին լուսով ցուցանէ զկամն իւր՝ որում չէ մարթ կալ հակառակ, ո՞վ իշխեսցէ իրեւ ամբարիշտ յանդիմանէլ զնա, որ ակնարկութեն տն նոյ իւրց հնազանդի։ ՚այսնի է՝ որ ած հաճեցաւ Ամփսոնի մահուանը, և զօրութի արվաւ իրեն, որ սյն յետին գործողութիւնը պանչելեօք գործեց։

Ոմանք ևս կըսեն, թէ Ամփսոն առանց մասնաւոր և ներքին ածային յօյանութե ևս, միայն իւր պաշտամամբը՝ որ էր գատաւոր, կըսնար իւր ժողովրդեան թշնամիները ջարդել, թէ և կըտեսնար՝ որ իւր անձն ալ պիտի չապրի, և անոնց հետ

ինքն աւ պիտի մեռնի : Բայց Օգոստինոսի առաջին կարծէքը  
առաւել ընդունելի է :

## Հ . Տ

**Ա**բիսողմայ համար թագաւորաց գրքին մէջ այսպէս  
գրված է . || Բայց Աբիսողոմինչեռ կենդանի էր՝ կանդնեաց  
զիւր արձան , և կանգնեաց ՚ի Յաքին զարձանն ՚ի հովհանն թա-  
գաւորաց , քանզի ասաց թէ չեք իւր որդի , որ յիշեցէ զանուն  
նորա . ք , թագ . ժը . 18 || : Եւ այս բանէն կը հետեւի՝ որ  
Աբիսողոմ որդի չուներ : Եւս նցն թագաւորաց գրքին մէջ՝  
ժէ , 27 . կըսվի , || Եւ ծնան Աբիսողմայ երեք ուստեղք և  
գուստը մի || . արդ՝ ինչո՞ւ համար անդաւակ կըսվի :

**Պ**. **Ա**բիսողմի գեղեցկութեանը նման գեղեցիկ մը չե կար  
երկրի վրայ , քանզի ամեննեխն պակասութի կամ արտա մը չու-  
նէր իւր անձին վրայ . և իրեն պէս գեղեցիկ զաւակ չունենա-  
լուն համար կըսվի անդաւակ . և յիրաւի երեք տզայ և մէկ աղ-  
ջեկ ուներ , բայց իրեն նման գեղեցիկ չէին :

## Հ . ՏԱ

**Կ**. **Ե**ր կենաց կըսվի երբեմն սուրբ գրոց մէջ , ինչ պիտի  
ըլլայ այդ Գիր կենաց ըսվածը :

**Պ**. **Ա**ստուծոյ անմոռաց յիշումն է , որ յաւիտենականուպէս  
փրկելիները անմոռաց և անջնջելի կըսպահէ անձ , իւր մոտացը  
մէջ , որ հնար չէ անկից ջնջովել . բայց ժամանակաւոր դըպ-  
րութի և գիր կենաց առարինութիւնք կըսվին , որոնցմէ մարդու  
կըսնաց ինքը զինքը ջնջել :

## Հ . ՏԲ

**Ա**թէ առաջին ըստած Գիր կենացին մէջ գրվօղները չեն  
ջնջովել . ինչո՞ւ համար Մովսէս՝ ոյ արտաշանք ըրած տեղը ժո-  
ղվորոց համար՝ կըսէ թէ || Եթէ թողուս զմելս ժողովրդեան՝  
թնդ , ապա թէ ո՞չ ջնջեալ զիս ՚ի գործութենէ քումմէ՝ յոր  
գրեցէր . եւից . լե . 32 || :

**Պ**. **Ա**ռուռնելիս այսպէս կըսպատասիանէ , Մովսէսի այնպէս  
ըսելը՝ ժողովրդեան փրկութեր համար իւր սաստիկ իղձը ցցց  
կուտար . ինչպէս ըսեմք թէ , մարդ մը ունի որդի մը և ծառաց

մը . որդին տեսաւ որ՝ հայրը դուրս կընէ ծառայն . և որովհէտեւ որդին այն ծառայն շատ կըսիրէ , հօրը կաղաչէ և կըսէ , մի՛ վլնտեր այս ծառայն , և եթէ վլնտես՝ զիս զաւկութէդ հանէ : “Եցնալէս Մովսէս կըսէր , կամ ժողովրդոց յանցանքը ներէ՛ , կամ զիս ջնջէ՛ . և ոչ եթէ ձմարտապէս ջնջըվիլ կըցանկայր , քանզի այն անկարելի էր . այլ մանաւանդ այն խօսքին կարգէն առաւելապէս սիրով աղաչելուն եղանակը յայտնի կընէր :

## Հ . Տ. Դ.

|| Ուրբ գրոյն մէջ Սաւուղ թագաւորին համար կըդրվի թէ , || Ուրդի տարեոր Սաւուղ ՚ի թագաւորել իւրում . ա , իւագ . ժամ . 1 || : Խըր թէ մէկ տարեկան էր . արդ՝ մէկ տարեկանը ինչպէս կըրնայ թագաւոր ըլլալ :

Պ . | Ճրկու անդամ օծվեցաւ Սաւուղ թագաւոր , մէկ մը տես ՚ի գիրս ա , իւագ . ժ . 1 : Իսայց երկրորդ՝ Նասս Ամօնացին զարնելէն ետքը վերսաին օծվեցաւ և թագաւոր եղաւ բոլը Խսրայէլի վրայ . տեսս ա , իւագ . ժամ . 15 : Վրդ՝ որդի տարեկոր էր Սաւուղ , իւր մէկ տարեկան օծված առաջին օծութենէն մինչև երկրորդ օծումը :

## Հ . Տ. Դ.

| Խսրայէլացւոց յէդիպտոսէն ելլալու ժամանակին համար Ելից գըքին մէջ կըդրվի , թէ գիշեր էր , ինչպէս որ կըսէ , || Գիշերի՝ որ յառաջապահէւստ էր ան , հանել զնոսա յերկրէն Եդիպտացւոց ելեց . ժը . 42 || : Խուուց գըքին մէջ կըդրվի , թէ առաւաօտ էր , || Զայդց զտոկին Ելին որդիքին Խսրայէլի . իւաց . լէ . 3 || : Երկրորդ օրինաց գըքին մէջ կըդրվի , թէ իրիկուն էր , ինչպէս որ կըսէ , || Զենցես զզատիկին առ երեկո ընդ արեւմուտս ՚ի ժամանակին՝ յորում ելեր յէդիպտոսէ . ը , տէնաց . ժկ . 6 || : Վ. յս խօսքերը մէկզմէկու յարմար չեն , ինչպէս պիտի իմանամք :

Պ . | Ուռունելիոս Մովսէսի հինգ գրոց վրայ ըրած կանոններուն մէջ , այսպէս կըսէ . || Եբրայէցին առնուն զբանս արդէն կատարեալս ներգործութը , մըրթ ՚ի շարունակութէ և մէրթ յսկաման , զի առնելն նցնէ՝ որ և պսակիլ , հնարել զենուլ , և սկսիլ առնել զիր ինչ : Վիսք բանին այս է , իւր

Ելբայեցւոց համար ուրեք գրված է իրիկունը Ելանին , ուրեք գիշերը , և ուրեք ևս առաւօտուն : Վանդի իրիկվան ժամանակ զատկական գտուը մորթեցին , որ Ելալու պատճառ և սկիզբն եղու : Կիշերն ալ՝ որ Ելբայեցւոց անդրանիկները ջարդը լովով՝ Փարաւոն թագաւորը թող տրվաւ իրենց Ելալ , որ Եգիպտացւոց կանանց զարդերովը և իրենց բոլոր կարասեօքը Ելալ սկսեցին , և առաւօտուն ալ ամբողջ Ելան : ուստի Երեք տեսակ գրվածն ալ Ճշմարիս են :

## Հ . ՏԵ

**Ա**լախարդ կինը կենդանի ցցց տըլաւ Սամուել մարդարէն՝ Սաւուղ թագաւորին . արդեօք կախարդական զօրութեանի էր , կամ Սամուել էր սացդ երեցօղը , եթէ սուտ Երեցթ մի էր :

Պ . **Ձ**եղեա կան ոմանկը՝ որք կախարդական արհեստիւ Եղաւ կըսեն . բայց շատերը այսպէս կը հասատեն ըսելով , թէ այն կախարդ կինը իւր կախարդական գործերը Երբ կը պատրաստէր , և ած ալ կուղէր՝ որ այս վերջին անդամին ալ Սաւուղին յօդնութի համար , որ դարձի գայ այն յետին ժամանակը , որ պիտի մեռնէր . կնոջը կախարդութենէն յառաջ վազվաղակի սքանչելիք ըրաւ ած , որ այն կախարդ կինը իւր բոլոր դիւտական հնապրներովը կարօղ չէր ընել . այլ միւյն սատանայի միջնորդութիւն գուցէ ցնորդ մը ցուցունէր , կամ սուտ օրինակ մը Սամուելի կերպարանով : Բայց գժոխոց բոլոր զօրութիւն կարօղ չէ՝ որ մեռելներէն մէկը ողջ ընցունէ , և կարօղ չէն՝ որ ապագայ բանը ուղղութեամբ գուշակեն :

## Հ . Տ.Զ

**Ա**րված է թէ || Ասէ Դաւիթ յաւուր յացնմիկ , ամ որ հարկանիցէ սրով զՅերուսացին , և մատիցէ սրով ՚ի կաղան և ՚ի կցըս յատելիս անձին Դաւիթի , վասն այնորիկ սաեն՝ կցըս և կաղք մի՛ մացեն ՚ի տուն տեսուն . ը , թափ . ե . 6 ||

**Դ**. յս տեղերկու տարակուսելի բան կայ . նախ՝ որ ըստ , ամոր հարկանիցէ , և չլքացցց խօսքը՝ թէ ինչ կըլսայ . և երկը ըորդ՝ ինչո՞ւ ըստ , կցըս և կաղք մի՛ մացեն ՚ի տուն ան :

Պ . **Ե**րբ Դաւիթ Երուսաղէմի մէջի բերդը պաշարեց , ուր աել Յեփուսացիք պատարվէր էին , ասոնք բերդին մէջ

կցըրերը և կաղերը դրին՝ Դաւթի հետ պատերազմելու համար, սրով պարբռապին ամրութիւն և Դաւթի տկարութիւնը իմացուցին, և հասկըցուցին՝ թէ կաղերը և կցըրերը անգամ քաղաքը կը ընան պահպանել. և այս կաղերը և կցըրերը իրենց լիրք յանդգնութեանը ապաւինելով՝ Դաւթի դէմ գրին իրենց կաղ և կցըր ըլլալնուն չի նայելով, վն որոց առաւել հավաբառութիւն համարեցաւ կաղերուն և կցըրերուն լրբութիւն՝ առողջ եղօղներուն ըրածէն եվէլ. և այս պատճառաւ վճիռ եղաւ իրենց վրայ՝ չի մտնալ ՚ի տուն տեսան, թէ և չի կըցին Յեփուսացւոց հետ անգամ դէմ կանգնիւ:

Եւ միւս տարակուսութիւնդ որ էր՝ || Ամբո՞ր հարկանիցէ սրով զջեբուսացին || , որոց հետեւութիւն այս կըդնեն մեկնիչք, Զօրապետ ըլլայ Խարայէլացւոց զօրքերուն, որ և Յովաք զօրապետը՝ որ ինկած էր Դաւթի Երեսէն, կը խնդրէր կտրիչութէն յարմար ժամանակ մը, որ առաջին աստիճանին հասնի, վն որոց ամմէնէն յառաջ անցաւ, ելաւ բերդին վրայ՝ զարկաւստկըցուց կաղերը և կցըրերը, և արժանի եղաւ իւր քաջութեանը և յաղթութէր պարզելին. բայց ինչպէս ըլլալը՝ թէրի գրված է այդ խօսքով ըուն ընադրին մէջ, որ կը ձգեմք ներս հուն խմասանց քննութեանը:

### Հ ։ Տ է

Երբ այ տապանակը Ամինադաբին տունն էր, կամեցաւ Դաւթիթ անկէ վերցունել բերել ՚ի քեբրօն. դրին տապանակը սայլի վրայ, և սկսան բերել. և սայլը քիչմը ծռելով՝ տապանակն ալ ծռեցաւ, այն տեղ Ամինադաբին տղայն Ոզաձեռքը երկնցուց՝ տապանակը բռնեց՝ որ չի ծռի. այդ գիրը կըսէ, թէ Բարկացաւ տը Ոզայ, և Եհար զնա անդ ած վասն յանդգնութէն, և մեռաւ անդէն առ տապանակին տն առաջի այ. բ, Բադ. Ղ. 7 || : Ի՞նչէր այդ մարդուն մեղքը :

Պ. || մանք կըսէն, թէ քահանայ չէր՝ և հրսման ըունէր, որ ձեռք զարնէ տապանակին՝ անոր համար պատժը վեցաւ. բայց թէ որ քահանայ չըլլար՝ այն տեղ գտնը վօղ քահանայնէրը չէին թողուր՝ որ երթայ տապանակին մօտենայ: || մանք ևս կըսէն, թէ այն հնարեց տապանակը սայլի վրայ դնելը, որ անկանոն էր, սցլ քահանայք լժակօք ուսելինուն վրայ կառնէին, և այս պատճառաւ պատժը վեցաւ: || մանք ևս կըսէն, թէ Ոզայ ձեռք ձգելով թէրեհաւառութիւն պատճառեց ժռ-

զովդոց, որպէս թէ ած կարօղ չեր պահպանել եթէ ինքը չեր բռնէր, և այն պատճառաւ պատժը լիւցաւ: Ոմանք ևս կըսեն, թէ առանց մտածութե՞ա յանկալծ տապանակը ծըւած տեսնալով ապշեցաւ, և վաղվաղակի շտկեց, որ և յանկալծ պատժը վիւը իրեն մեղացը քաւութիւն համարեցաւ:

Բայց ոք Գրիգոր Կարեկացին՝ ի խորհութեղ ոք եկեղեցւոյ շարադրեալ ձառին մէջ՝ տապանակը օրինակ տանելով ոք եկեղեցւոյ՝ Ողիսցի պատժը լիւը բարոյականապէս այսպէս կը մէկնէ. «Ինդ Ռղիկի անտուսա սատակէ, եթէ ոչ խոչապէս «յոդի բերիցի սպանանէ վասնեալ վաղվաղակի առ ժաման, «եթէ անսանսայինն ըստեցութեամբ երկրասիրալար գետնակոխ սայլիւք՝ եբը զանօթ ինչ ձեռնազնին բարձեալ ունիցի: Որով կուսուցանէ մեղ, թէ Ռղիկի առանց բաւական ողջախոհութե՞ և մաքրութե՞, եբը մարմինը խաչեալ չունելով մերձեցաւ ՚ի տապանակն առն. և կամ այն տապանակը քաշող սայլին կենդանեացը նման, երկրասիրութե՞ և հեշտութե՞ յօժարեալ ըլլալով՝ ածային աջով պատժը լիւցաւ: Ծորմէ օրինակ կառնէ ոք վարդապետը, թէ որ մէկը այսպիսի անդուշութեամբ՝ առանց սրբութեան և մաքրութե՞ ՚ի սուրբ եկեղեցին մանայ, կամ մանաւանդ սրբազն խորհրդոյն մերձենայ, հոգւով մահացեալ և դատապարտեալ կը լսայ արդար իրաւամբքն ոց, ինչպէս եղեւ Ռղիսա հին օրինաց մէջ:

### Հ ։ Ծ.Բ.

Անչ խմանամք այն խօսքով, որ անսպասին մէջ Մովսէս կը խնդրէր՝ ոյ փառքը տեսնալ ծննդոց լիւ ։ 16 ։

Պ. Այս փառքը մէկնիչները շատ զանազան բան կիմանան. ոմանք ածային մտաց մէջի նախագաղափարները կիմանան. ոմանք քի մարդկութե փառքը կիմանան, որ այլակերպութե ժամանակը ցցց տըլւա. ոմանք ևս ածային էութիւր կիմանան: Բայց կուռնելիոս այս փառքով կիմանայ այն հրեշտակը, որ ածային ահճը կը կըէր, որ ամզով ծածկը կը լսու կը կուղէր Մովսէս՝ որ այն ամզը վերցըլի, և պարզապէս փառաց կը բարը տեսնայ. և այս պայծառ տեսութիւր կարօղ ըլլայ քարոզել ժողովերոց աստուծոց փառքը:

### Հ ։ Ծ.Բ.

Այր. կը հիւտնդանայ Աղերաց Ասորւոց Թագաւորին աղայն, այս թագաւորը Աղայէլ կը խըրէ Եղիսէ մտրդարէին

քով , որ իմանայ՝ թէ արդե՛օք տղայն հիւանդութէն պիտի՞  
տղատի : Աերթայ Ազայէլ , և Եղիսէ այսպէս պատասխանի  
կուտայ , գնա և ըսէ իրեն , || Կելով կեցցես . և Եցոյց ինձ  
տէր զի մահու մեռանիցի . դժ . Եադ . ը . 16 || : Վարդե՛օք ինչ  
պիտի ըլլայ այս երկու կերպ խօսքին միտքը , որ կեցցես  
կըսէ , և մեռանիցի կըսէ :

Պ . Առւրբ գրոց մէջ սուլորութի՞ է , և սեպհական ոճ մի է.  
Եւրոցեցւոց լեզուին , որ հրամայական բառը երբեմն ապառնի  
ժամանակի տեղ կը գործածիլի . ուստի գնա և ըսէ իրեն ըսա-  
ծը , ըսէլէ՝ թէ պիտի երթաս և ըսես իրեն՝ Կելով կեցցես :  
Որ ասկից յայտնի է՝ որ Եղիսէ երկու կերպ մարդարէութի՞  
ըստա . մէկ մը Ազայէլի երթաւ սուտ զուրցելը , թէ մարդարէն  
ըստա՝ Կելով կեցցես . և միւս՝ որ Ճշմարիտ է , թէ Մահու  
մեռանիցի . Իբր թէ ըսէլկուղէր մարդարէն , թէ գիտեմ՝ դու  
պիտի երթաս սուտ զուրցես այսպէս , թէ մարդարէն ըստա՝  
Կելով կեցցես , ահա քու ըսէլքդ էս մարդարէացայ . բայց  
Ճշմարիտ ըլլալիքը ած ինձի ցոյց արվաւ , Մահու մեռանիցի :

## Հ . Կ

Արքանութիւն գործելով իրեն հօրը Դաւթի  
դէմ , բանութի՞ հօրը թագաւորութի՞ յափշտակել կուղէր .  
և երբ Արքանութ պատերազմին մէջ կը մեռնի , ինչո՞ւ այնքան  
սուդ կը պահէ և կուլայ Դաւթիթ այնպիսի զաւակին վրայ .  
Է , Եադասորայ . Ժ . 33 :

Պ . Ախտէր Դաւթիթ , որ Արքանութայ մահուանէն որբան  
բարիք պիտի յառաջանայր իւր անձին և իւր թագաւորութի՞լ ,  
և որքան չարիք պիտի խափանին . քանզի՞ որբան կենդանի էր  
Արքանութ , միշտ նոր խռովութի՞ կը հաներ : Բայց Դաւթի  
սուդը և լացը այնպիսի որդւոյն վրայ՝ ոչ մարմաւոր մահուանը  
համար էր , այլ հոգւոյն յաւիտենական մահուանը համար , որ  
այնքան չարութի՞ գործելէն եաքը՝ զղջալու և ատաշխարելու  
ժամանակ չունեցաւ , որով և յաւիտենականաբար դատա-  
պարտեցաւ :

## Հ . ԿԱ

Արքանութ իւր գլխայն մազէն կաղնի ծառէ մը կախվե-  
ցաւ բանակին մէջ վախած ժամանակը . և այնպէս Յովալ

սպարապետը նետով ղարկաւ մեռցց ։ Է , թագա . ժը . ց :

Վ. բդեօք ինչո՞ւ ուրիշ կերպիւ չե պատահեցաւ մահը :

Պ . Արովշետե ապստամբը էր հօրը հրամանին դէմ , վարոյ մեղանչական գտնըլեցաւ ոյ դէմ և բոլոր ժողովըդոցը դէմ . քանզի թագաւորը ոյ փոխանորդ է , և թագաւորին դէմ մեղանչելով ոյ դէմ մեղանչեց . և ժողովըդոց դէմ մեղանչեց , որովշետե ժողովուրդը այնպիսի ածընտիր թագաւորին կառավարութէն հանել ուղեց , և անիրաւաքար պատերազմելով իւր հօրը զօքքերը և իւր զօքքերը ջարդել կուզեր , վան որոյ ածալին արդար վճիռը այնպէս ուղեց , որ երկնի և երկրի մէջ տեղ կախվելով մեռնի :

## Հ . ԿԲ

Երբ Յովապետը Դաւթի կողմանէ Աբէլ քաղըը և բեթմարոց պարիսպը պաշարեց էր՝ կործանելու դիտաւորութեամբ , իմաստուն կին մի ելաւ պարապին վսայ , և Յովաբը կանչեց , ըստ իրեն . „ Իւան Ճառէր յառաջինս՝ և ասէին . հարցանելով հարցաւ յԱբէլ և ի Դան . Եթէ պական սեցուցեն , Եթէ ասպատակիցեն , հաւատարիմք իսրայէլի , ո հարցանելով հարցցեն յԱբէլ , և տապ Եթէ պակասեցուցանիցեն : Խս Եմ խաղաղաբար հաստատութէ իսրայէլի . և դուն խնդրես կոտորել զքաղաքս իսրայէլի , ընդէլ ընկզմես զժառանդութիւնն . Է , թագ . ի . 18 : Այս խօսքէն բան մը չե հասկըցվեր , ինչպիսի ըլլայ միտք բանին :

Պ . Արդարե մթին խօսք մի է այդ , որ ըստ սյն իմաստուն կինը , որով ըսել կուզեր , թէ յառաջուց կը զուրցեն և կըսեն . Երբ հակառակութիւն կըլլար Աբէլի և Դանայ մէջ , նախ կը հարցունէին՝ թէ հնազանդութիւնը պիտի պակսեցընէն մի , այսինքն ապստամբ պիտի ըլլան այն հնազանդութենէն՝ որ իսրայէլի հաւատարիմքը դրին : Պիտք է այժմ ևս այնպէս ընել , նախ հարցունէլ Աբէլ քաղաքին , և յետոյ թէ որ պակսեցընէն հնազանդութիւն՝ պատմըլին : Խւ վերսախն քաղաքին բերնէն կըսկըսի այն կինը ըսել . Ես ոչ թէ ապստամբ եմ , այլ խաղաղաբար հաստատութէ Եմ իսրայէլի՝ իմ իմաստուն խորհրդականաց շատութը . և առանց հարցունէլոյ ջարդել կուզես այսպիսի մայրաքաղաք մը , և ոյ ժառանդութիւնը ջնջել :

Ահա այս է կնոջը ըսած խօսքին միտքը :

## Հ . ԿՊ.

Այսնի է՝ որ Դաւիթ մարդարեին ժամանակը Խորացէլի մէջ կոտորիչ հրեշտակ ինկաւ ։ ոք գիրը կըսէ թէ, || Մէռաւ ՚ ժողովոդենէ անտի ՚ի Դանայ մինչև ցբերսարեէ՛ եօթանասուն հազար արանց ։ Շ, թա՛ ։ ի՞՛ ։ 15 || : Վրդեօք կին մարդ չի մեռ՝, որ միայն այր մարդոց համբանքը կըդնէ :

Պ . Ա՛ ։ կին մարդ չի մեռաւ . քանզի Դաւիթ ժողովուրդը համբելուն համար՝ այդ պատիճը տրվաւ ած, և համբած ժողովուրդն ալ զէնք կըրօղ և պատերազմող կարեճներ էին, այս պատճառաւ պատճը վօղները միայն էրիկ մարդ էին, և կին չի կար մէջերնին :

## Հ . ԿՊ.

Պատուիրած էր ած Խորացէլացւոց ազգին՝ որ այլազգեաց հետ խնամութիւն չընեն, ինչպէս կըսէ ՚ Եւ մի՛ առնիցես զինամութիւն ընդ նոսա, զդուսատը քո մի՛ տացես ուստեր նը, և զդուսատը նը մի՛ առնուցուս ուստեր քում ։ Շ, օքնաց ։ Է ։ 3 || : Սողոմն թագաւորը ինչո՞ւ այս հրամանին գէմ՝ Եգիպտացւոց Փարաւոն թագաւորին աղջիկը իրեն կնութեն առաւ, ինչպէս գրած է ։ Եւ ՚ի հաստատիլ թագաւորութեն Սողոմնի, խնամութիւն արար Սողոմն ընդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց, և էաւ զդուսատը նը ։ Շ, թա՛ ։ Շ ։ 1 || :

Պ . Ա՛ ։ Եկնիչք սուրբ գրոց անպարտ կը համարին Սողոմնը այս գործոյն համար :

՚լախ՝ ոք գիրը գովութ՛ կը խօսի Սողոմնի համար այս ըանին վրայ, և այ կամացը հանց և հաւան կերեայ Սողոմն . քանզի նոր ամուսնացեալ էր այդ Փարաւոնի աղջիկան հետ, էրը տեսպեամբ երեւեցւ նաև ած, և բազմապատիկ առաւ և լութեամբ խնդիրը կատարեց :

Երկրորդ՝ այլազգեաց հետ խնամութիւն չըլսոյ որ ըսվեցու, այլազգեաց ազգին անուններն ալ կըտըրվե, որք են Ամօրհացիք, Քանանացիք, Քետացիք, Փերեղացիք, Խեւացիք, Գերդեսացիք, և Յեփուսացիք, ասոնց մէջ Եգիպտացւոց անունը անյիշելի է . քանզի այս ըսած ազգերէն զատ եղած այլազգեաց ազգերը՝ այնչափ մոլիք և կատաղի չէին կոոց սիրով, և իրենց աղջիկները չէին յօժարեր, որ իրենց էրիկ մարդիկը կուապաշտեան մէջ ձգեն, և կը յուսացվէր՝ որ ճշմարտին

ոյ պաշտօնեայ կըլլան : Վ'նչ և իցէ՝ որովհետեւ օրէնսդիրն ածմեղապարտ չի համարիր Սողոմօնը այս գործոյն համար , հարկ է որ մեք ևս մեղադրելի չի համարիմք :

## Հ . ԿԵ

|| Սողոմօնեան տաճարին համար սուրբ գրոյն մէջ կըսվի . || Եւ ՚ ի շինել տան . . . մուրձ (չէքիձ) և ամ ինչ երկաթի՝ աչ հնչեաց ՚ի շինելնորա . ՚ գ , ՚ առ ՚ զ . ՚ շ : Վ . յս ինչպէս կըլլայ՝ որ տաճար մը շինվի , և երկաթեղին գործիքի մը ձայն չէլլայ շինած ժամանակը :

Պ . Ը ինութեան վերաբերեալ բոլոր նիւթերը՝ քարեղէն , փայտեղէն , և այն , այնպէս տաշած և կոկած և պատշաճապէս մը չափած յարմարէր էին , մինչ զի գործածութե ժամանակը՝ ամմէն մէկուն իւր տեղը գիտնալ և շարել պէտք էր : Եւ անոնք որ բեկեռով հասատելու բան էին , որոց մուրձ պէտք էր , անոնց բեկեռները սրածայր չէր , այլ ոլորածոյ (պուրմալը) , որ աբցանով տեղը կանցունէին՝ ձայն չի հանելով : Եւ այսպէս այս խորհրդով ըրին , որ սորվեցընեն ժողովրդոյ՝ թէ անշունչ և անզգայ իրաց անգամ լուռութի կըվայլէ այն տեղ , և իրենք ալ այն ՚ ը տանը պատիւր պահած ըլլան :

Վ . յն՝ որ օրինակ էր այժմեան ՚ ը եկեղեցւոյս՝ այսպիսի յարգանօք Սողոմօն թագաւոր կըմեծարէ . մեղի ինչ կերպ պարկեշտութիւն կը վայլէ ունենալ սուրբ եկեղեցւոյ մէջ , որ օրինակ չէ , այլ նոյն իսկն է :

## Հ . ԿԶ

Պ . ոլոր մարգարէները ած ընտրեց իւր կամքը քարոզելու համար . ինչո՞ւ միայն Եղեայի՝ Այլ ասառուծոյ կըսվի , և ուրիշներուն ըստվիր :

Պ . Վ . իսցն Եղեայի՝ Այլ ՚ այ ըստելուն պատճառը շատ է : ՚ ախ՝ զի կուսութե անցոց իւր կեանքը . քանզի Եղեայի և Եղեակի ամուսնութեան համար բան մը գրված չէ , ինչպէս Եսոյեաց և Սամուէլի համար ևս գրված չէ . և որովհետեւ կուսութիր առանձին անմարմանոց ընուելը կըվայելէ ըստ Նիւսաց-ոյն՝ և անապականուե մօտ է , մը որց Այլ ՚ այ ըստեցաւ Եղեա :

Երկրորդ՝ Եղեա նախանձախնդիր եղաւ ՚ այ փառացը՝ իւր սրախ բորբոքմամբը , և դուրսէն իւր կըսակ կերւար , ինչպէս

որ ինքը կըսէր . || Կախանձեցայ զնախանձ առն այ ամենակալի || : Եւ այս նախանձը Սիրաք հուր կանուանէ , ըստ այնմա || Յարեաւ Եղիսա մարգարէ իբրև զհուր . սէրահ . իւր . 2 || : Եւ որովհետեւ ած խմանալի հուր կըսվի , Եղիսա ալ այ նմանութիւր ունենալով ըսվեցաւ Այր աստուծոյ :

Երրորդ՝ Այր այ ըլլալը ինքն Եղիսա յայտնեց՝ Երկինքէն կրակ իջեցընելով . դ . թագ . ա . 9 : « Քանզի յիսնապետները ծաղաբանութիւր ընելով՝ ըսին իրեն Այր այ . և ինքն ալ իրաւցնէ Այր այ ըլլալը հաստատեց՝ Երկինքէն կրակ իջեցընելով :

Չորրորդ՝ Այր այ ըսվեցաւ՝ իւր անկեղծ վարքին և աշառութիւր ընելով ըրած սպառնալեացը համար , ինչպէս որ քան Կաթանացէլի համար ըստաւ՝ Ճշմարիտ խրացէլացի՝ իւր աննենդ բարուցը և Խղճմանացը մաքրութել նայելով :

Հինգերորդ՝ Այր այ ըսվեցաւ , որ այ պէս հրաշքներ կընէր , Երկինքը փակելով և բանալով՝ մեռեալ յարուցանելով՝ վերացման օրը ջուրը բաժնելով :

### Հ . Կէ

Ասուծոյ Խօսակցութիւր մարգարէից հետ՝ միսյն Եղեկիէլի հետ շատ կըլսայ , և Որդի մարդոյ կանուանէ . և ուրիշներուն այս անունը չի ասար . ասոր պատճառը ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . Ուռունելիոս չորս մարգարէից մեկնութեան յառաջորանութել մէջ սյսպէս կըսէ , չորս քերովը կիները՝ որ Եղեկիէլ տեսաւ , Խորհրդապէս չորս մարգարէները կընշանակեն , որոնք սպասաւոր են նախակին Ճշմարտութել և անսատեղծ իմաստութել : « Քանզի առիւծը կըկայէ Եսայեայ , Եղն՝ Երեմիայ , մարդն՝ Եղեկիէլի , և արծիւն՝ Դանիէլի :

Վ . բրդ՝ առիւծը Եսայի մարգարէին օրինակ ըլլալը յացանի կերեայ իւր Խօսքերէն՝ որ կըսէ , Այսպէս ասաց ցիս տէր . գնա դու անձամբ անձին դէա լինիջիր , և զոր ինչ աւսանիցէս՝ պատմեսջիր . գւ . իա . 6 || : Եւ գարձեալ համար 8 . || Եւ կոչեաց առիւծն (ըստ այլ թարդ) կացի զտիւն ողջոյն և զգիշըրն ամ ՚ի վերայ բանակին || : « Քանզի առիւծը իւր զգուշութել համար օրինակ է դէաի կամ պահապանի : Ուստի Եսայի կըկանչէ և կորոտայ , և կայծակահար է առիւծի նման ըսելով » || հւր Երկին , և ունկն դիր Երկիր . . . լայ աղքի մեղանուորի . ժողովուրդ որ լի է մեղք , սերմն ժամա , որդիք անօն ըէնք , թողին զար , հայհցեցին զանուն խրացէլի , օտարացան

և և յետո կացին . . . • լուարնեք զբան ան իշխանք Սովոմաց-  
ւոց , ունկնդիք օրինացն այ ժողովուրդք Գոմրացւոց . . . .  
ո զիարդ եղե պառնիկ քաղաքն հաւատարիմ լի հաւատով  
յորում արդարութիւնն հանգուցեալ էր՝ և արդ սպանօղք  
եղեն , իշխանք ձեր ապատամբք գողակից են գողոց , սիրեն  
զկաշառս , վըիժաղործք գլ , ա 1 :

**Եշն՝** Երեմիուցի օրինակ էր , յայտնի է իւր անձանձիք  
ջանքեն , որով հերկեց այ արտը՝ այսինքն Խրացէլի ազգը , և  
միշտ նեղութի քաշեց Հրեաներէն , որոնք վերջապէս իբրև զոհ  
այ մատուցին , և քարկոծելով մարտիրոս ըրին : **Վհա** անոր  
խօսքերը , || Եւ ես իբրև զգառն անմեղ (ըստ Երացեցւոց իբրև  
զեղն) վարեալ ՚իսպանդ՝ ոչ գիտացի թէ զինէն խորհեցան  
խորհուրդս՝ և ասեն , արկցուկ փայտ ՚ի հաց նորա , և ջնջես-  
ցնք զնա յերկրէն կենդանեաց . գլ , ճ ա 19 ||:

**Արդին՝** Եղեկիելի օրինակ էր՝ ինքն ած սորմեցցյ .  
քանզի երբ իւր հրամանը Եղեկիելի կը յայտնէր , միշտ որդի  
մարդց կանուանէր . ՚ի ա գլ , այսպէս կըսէ . || Եւ խօսէր  
ընդիս՝ և ասէր , որդի մարդց՝ կաց ՚ի վր ոսից քոց՝ և խօսե-  
ցաց ընդ քեզ : || Եւ թէ՝ || Ո՛րդի մարդց , ես առաքեցից  
զքեզ առ որդիսն Խրացէլի առ ազգս ուրացօղս : || Եւ թէ՝  
|| Ո՛րդի մարդց , առ քեզ աղիւս մի , և այն : ||

**Վրձիւն՝** օրինակ էր Դանիելի . քանզի Դանիել շտա-  
իմաստուն էր իւր ժամանակակից մարդիկներէն : || Լւստի ած-  
ծաղը ընելով Տիւրոս թագաւորը՝ որ ինքը զինքը շատ իմաս-  
տուն կը համարէր , կըսէ . || Մի թէ իմաստնագոյն իցես քան  
զիանիել , ամ խորհուրդ չէ ծածկեալ ՚ի քէն . եղէն . իը . 3 : ||  
Քանզի գանիել ամեննեին գինի չէր խմէր , և արծիւի նման  
բարձրաթռիչ գէպ ՚ի երկինքը սլանալով մտօք , և միշտ այ  
խօսելով յաւխտենակութիւր կը նկատէր , իբր թէ արծիւի աշ-  
քով անւր մը աեսաւ հետևեալ տարիներուն անընդ հասութիւր ,  
և հմուտ եղաւ աշխարհի վրայ ապագայ բաներուն :

### Հ ։ ԿԸ

**Անչու** Սերովըէն կայծակամբ մերձեցաւ Եսայի մարդա-  
րէն շրթանցը . եսայի . գ 5 :

Պ . || Ուռնելոս կըսէ՝ թէ մարդարէն շրթանց մեղքը պատ-  
ժելու և քաւելու համար՝ կայծակամբ այրեց . քանզի Եսայի  
մեղանչեց Ողեան չի սաստելովը , որ սեղանին կայծակունքը և

Եսունկը յափշտակեց . ուստի կայծակամբ պատժեցաւ , ինչպէս  
որ և Սերովութէն կըսէ՞ ॥ Ահա մերձեցաւ այս ՚ի շրժունս քո ,  
և հանցէ զանօրէնութիւնս քո , և այլն ॥ :

## Հ . ԿԸ

**Ա**նչպէս իմանալ պէտք է մարդարէին այն խօսքը , որ  
կըսէ՞ ॥ Գնա ժողովուրդ իմ , մուտ ՚ի շտեմարանս քո , փակէա  
զուուրս քո , թագիլ առ ժամանակ մի՞ մինչեւ անցցէ բար-  
կութիւն տեառն . Եսայ . իշ . 20 ॥ :

Պ . **Վ**որհրդականաբար այսպէս կը մեկնէ կուռնելիոս ,  
”Պանացէք ովլ մարտիրոսք՝ ովլ արդարք ՚ի գերեզմանս , և այն  
”աեղննչեցէք ժամանակ մը , մինչեւ որ անօրէնները պատժեմ ,  
”և յետոյ կազթնցընեմ ձեզի մահուան քնէն՝ երջանիկ կենա-  
”ցը արժանացընելու համար :

## Հ . Հ

**Ե**սուեամբ երկեցաւ դանիէլն՝ որ չորս գաղան կելլոր  
ծովլն , որոց առաջինը էդ առիւծի նման թեւաւոր էր . երկ-  
րորդը արջու նման էր . և երրորդը ընձու նման . և չորրորդը  
ահեղ և զարմանալի : **Ա**յս չորս գաղաններով ինչպէտք է ի-  
մանալ . դանիէլ . է . 3 :

Պ . **Ա**յս չորս գաղանները՝ չորս թագաւորութիք են . էդ  
առիւծը՝ Ասորեստաննայց տէրութին է . արջը՝ Պարսից տէ-  
րութին է . ինձը՝ Յունաց տէրութին է . և չորրորդ գաղանը՝  
Հռովմայցէք են : **Ա**յս չորրորդէն ելլան պիտի տասն եղ-  
ջեւքք , պահինքն տասն թագաւորք՝ և այն ՚ի ժամանակս կա-  
տարածի աշխարհի : **Ե**ւ փոքրիկ եղջեւքն՝ է նեռն , որ յաղթէ  
պիտի երեք թագաւորաց , և յետոյ մասցեալ եօթն տէրու-  
թիւնները յօժարութիք պիտի հնապանդին նեռին : **Ա**յսպէս  
կըսէ կուռնելիոս :

## Հ . ՀԱ

**Ա**նչու համար մարդարէից խօսքերը Խրթնութիք գրվե-  
ցան , և ոչ պարզաբար :

Պ . **Ա**յտ հարցմանդ այսպէս կը պատասխանէ չերոնիմոս .  
”**Ա**սասցուք՝ թէ ուր գրեանքն են հիւսեալք դժուարութիք ,  
”և մանաւանգապէս մարդարէք՝ որք են լի առակօք , վասն զի

“ դժուարութիւն բանից պատիցէ զդժուարութիւն մասց, զի մի  
“ դիւրապէս արձակիցի սուրբն՝ շանց, և մարգարիտք՝ խողաց,  
“ և սրբութիւն սրբոց՝ աղտեղեաց :

## Հ . ՀԲ

**Ա**սորուոց թագաւորին այսինքն Ազերայ որդւոյն զօրապետը Նէկման Ասորին էր՝ որ բորոտեալ էր . այս Նէկմանը Յովսամայ Խորսյէլացւոց թագաւորին քով Խրկեց՝ ինչ և իցէ բժշկեցաւ . և որովհետեւ Նէկման և իւր թագաւորին ալ կոապացաւ էին . Նէկման բժշկը լովլ ածաղաշտ եղաւ, և եկաւ Եղիսէի շնորհակալութիւն տալ, և յետոյ այսպէս ըսաւ, “ Իւեւեսցէ տէր զծառայ քո՞ ՚ի մասնել տեառն իմց ՚ի տուն “ Ուեմանայ Երկիրպագանելնմա, յորժամ յենուցու ՚ի ձեռու ՚իմ, և Երկիրպագանիցեմ ՚ի տանն Ուեմանայ . . . և քաւեսցէ “ տէր զծառայ քո վասն բանին այնորիկ: Եշտ ասէ Եղիսէ ացՆէկման, Երթ խաղաղութե՛ . դէ, թագ . եւ 18:

**Վ**իտք բանին այս է, որովհետեւ Նէկմանայ թագաւորը կոապացաւ էր . և Նէկման Եղիսէի կըսէ, թէ թողութիւն տուր ինձ, որ Երբ իմ թագաւորս Ուեմանայ կոքատունը կերթայ Երկիրպագութիւն ընել Հարկաւ ես ալ հետո կըդանըլլոմ, և ձեռացս վրայ կոթընելով Երկիրպագութիւն ըրած ժամանակը՝ յայտնի է որ ես ալ գլուխ պիտի խոնարհեցընեմ հետո, ինձի ներողութիւնը այս բանին համար: Վ. յն ալ կըսէ՝ թէ Երթ խաղաղութեամբ, որ կերեսայ՝ թէ աղաղանիքը ընդունած է. այս ինչպէս իմանալու է:

**Պ.** Եդ Հարցմունքիիդ վրայ շատ վիճաբանութիւն կըլլայ մեկնաց և ածարանից մէջ: Ոմանք պարզապէս այդ խօսքը կարդալով՝ Նէկմանայ գործն ալ գատապարտելի կըհամարին, և մարգարէին տուած պատասխանն ալ, իբր թէ կեղծաւորութիւն էր (կըսեն) ՚ի հաւատոյս . մոքով ած պաշտելը՝ և յայտնապէս յաչս մարդկան կոապացաւ ձեանալը:

Ոմանք ես կուզեն՝ որ Երկուքն ալ բանիքասանքէ աղատեն, այդ խօսքը՝ անցեալ մեղացը կըվերաբերեն, իբր մարգարէն աղօթք ընե Նէկմանայ համար՝ որ անցեալ կոապաշտութեան մեղացը՝ ներողութիւնը ըլլայ, կամ թերեւս այդ ըսր սովորութիւն իրմէն վերցըլի, որ սովորութիւն ըրած էր՝ իւր թագաւորին հետ Ուեմանայ կուռքին Երկիրպագութիւն ընել:

**Վ.** յս միտքը բնադրին չելլայէց: Ուրեմն ըստ մե ծագոյն

մասին ողջամիտ մէկնչաց և ածարանից ասելի է, թէ Կէէմանայ խօսքը իւր անցեալ կռապաշտութեանը համար չէր, և ոչ ալ հրտման խնդրելէր՝ յաչս մարդկան երկրպագութիւն ընելու կող, և Եղիսէ ալ այդ մաօք թոյլտուութիւն չըրաւ։ Ա. Ճ. լոկի կռապատունը երթաւ մի էր թագաւորին հետ, և թագաւորին երկրպագութիւն ըրած տեղը՝ ձեռք տալ իրեն, որով հարկ կըլար իրեն ալ խոնարհիլ։

‘Ե, Եմանայ այս գործողութիւն արտաքին՝ պարզ՝ և քաղաքական պաշտօն մի էր, որ թագաւորին կընէր՝ ոչ միայն կուսանանըմէջ, այլ ամմէն տեղ՝ ուր որ կերթար թագաւորը։ Եւ Նէման կատարելապէս միաբը յայտնեց Եղիսէր, ոչ քածկաբար՝ այլ յայտնապէս բոլոր Ասորւոց առջին, որոնք այն տեղ գտնըվեցան իրեն հետ։ քանզի գիտցու հշմարտապէս, թէ ոչ գց ած ՚ի վերայ երկրի։ Եւ խոստացաւ այնուհետեւ մատաղ ընել օտար ածներու՝ այլ միայն ան երկնի և երկրի։ ուստի Խորսոյէլի երկիրէն հող ուղեց, որ հետը Դամասկոս տանի, և այն տեղ առանձին սեղան մը կանգնեցընէ՝ յայտնապէս ած պաշտելու համար։

Արդ՝ օտար ածնելը սյսպէս յայտնի դուրս ձգելը, և  
բոլորին առջին խրացէլին այ պաշտօն մատուցանելը՝ բաւա-  
կան էր ամեն կերպ կասկածը և կեղծաւորութեան միտքերը  
իրմէն վերցընել, որ բոլորին ալ յայտնի ցցց արվաւ՝ թէ  
այն գործը քաղաքական պաշտօն մի է միայն իւր թագաւո-  
րին, բայց խղճմանքը չի տանելուն համար Եղիսէէն ներո-  
ղութիւն խնդրեց։ Այս սյսպէս ըլլալը՝ և Կէէմանայ միտ-  
քին շխատկութիւնը՝ Եղիսէ ածային հոգեցյն շնորհօքը գիտ-  
նալով, թցլ արվաւ Կէէմանայ ոչ մարդկօրէն կարծեօք, այլ  
երկնաւոր լուսով, որ մայ իւր աստիճանին վրայ ածպաշտու-  
թեանը փնաս մի չի բերելով։

59

Ասոյեայ մարգարեռւթելմէջ դրված է, „Բռուռն հար-  
„կանիցեն եօթն կանայք զառնե միողէ, և ասիցեն՝ հաց զմեր  
„կերպուք, և հանդերձ զմեր զպեցցուք, բայց միայն անուն քո  
„կոչեսցի ՚ի վերաց մեր, բարձ ՚ի մշնջ զնախատինս մեր. Դ. 1:

Պ. Արտվշեակ Երրորդ գլուխն մէջ Հռովմայեցւոց ձեռքովը  
Երուաստիմի կործանումը կը մարդարէանայ , և այս չը բրորդ-

Գլուխէն Ետքը՝ այն կործանմանէն ինչոր կըհետևի՝ այն ցոյց կուտայ ։ քանզի այնքան մարդ պիտի ջարդ-ըվի, թէ սղութք՝ թէ պատերազմաւ՝ և թէ ուրիշ կերպ նեղութք՝, որ հազեւ եօթն կնկան մէկ էրիկ մարդ մը պիտի լյնար։ Այսպէս կը մեկնեն ձերոնիմոս և Կիւրեղ ըստ նկարագրական մեկնութե։

Խսէ սուրբն Բարսեղ՝ եօթն կանայքը հին օրինաց բոլոր ժողովարանն է կըսէ ։ իւր հացովը՝ այսինքն իւր օրէնքովը ըլլալով՝ կը բռնէ մէկ մարդ մը՝ այսինքն զքո՛, կուզէ որ հոգեւոր ամիսութեն նախատինքէն ազատի ։ ահա այս ալ յարմարական մեկնութիւն մի է ։ Ինյաց մեզի խորհրդական մեկնութիւն մը տալ կը վայելէ ։ որ եօթն կնիկով այնչափ ժողովուրդը կիմանակի՞ որք ՚ի հեթանոսաց եկին քրիստոնէական հաւատքին, որք քի սիրով հասատա ունելով այն հաւատքը, կըսէն՝ մեք մեք հացը կուտաենք, իւր թէ որ հաւատք կուզես, ահա քանանացիին հաւատքին նման հաւատք ։ Եթէ կուզես հաւատքը բարի գործով զարդարեալ ըլլալ՝ իւր հանդերձով, ահա քեզ ջաքէոսին գործոյն նման գործ, որ իւր ընչեց կէսը աղքատաց արվաւ, և որուն որ զրկանք ըրեր էր՝ չորեքիին փոխարէնը տրվաւ, միայն քրիստոնէական անունը մեք վրայ ըլլայ։ Ա էրցիւ մեք վրայէն նախատանաց անունը, այսինքն հեթանոս բառը, և մի՛ ըսէր՝ ॥ թէ ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն խրայէլ ॥։

### Հ ։ ՀՊ.

Բարը գըքէրը գիտութիւն կը գովեն ։ ինչո՞ւ համար Սիրաք կըսէ, ॥ Որ յաւելանայ ՚ի գիտութիւն, յաւելանայ ՚ի ցաւս ։ սիրաք ։ ա ։ 18 ॥։

Պ. Ճշմարիտ է, քանզի որց որ քաղցր կերևայ խմատութիւն, և անովալ առաքինութիւն, լեզի կերևայ իրեն բոլոր մարմնաւոր զրօսանքները՝ այս է ըսելն Յաւելանայ ՚ի ցաւս։ Քանզի կըսէ Օգոստինոս, ॥ Յետ ձաշակման հոգւոյն՝ դառնանայ մարմինն ։ Լուս՝ գիտուն մարդուն շատ ցաւալի կերևայ չար մարդոց վարքը, ինչպէս որ Դաւիթ կըսէր, ॥ Հայէի յանագործնան և մաշէի, զի զապատուիրանն քո ոչ պահեցին ։ առշ. ճժ. 158 ։ Ա հա այսպիսի ցաւեր է՝ որ կատարեալ գիտունը իւր գիտութենէն կստանայ ։ վասն որոց ըստ Սիրաք, ॥ Որ յաւելանայ ՚ի գիտութիւն, յաւելանայ ՚ի ցաւս ։

## Հ ։ ՀԵ

Պատայի մարդարէին բերանով կըսէ ած Հրէից ժողովրդէան , || Ո՞վէ՝ որ տրտմակից լինի քեզ , երկու ինչ հակառակ կան քեզ , կործանումն և բեկումն , սով և սուր . ծած , 19 || :

Վրդ՝ երկու ըսաւ , և չորս յայտնեց . այս ինչ միտք պիտի ըլլայ :

Պ . Առծանումն և բեկումն՝ պատիժ քաղաքին է , մի է . սով և սուր՝ պատիժ քաղաքացւոց է , այն ալ մի է . ահա այս պէս երկու եղաւ ըստ առաջարկեալ հարցմանդ :

## Հ ։ ՀԶ

Խնչ պիտի ըլլայ Եսայի մարդարէին բանին միտքը , որ կըսէ . || Մի լցի անդ տարաժամ աւուրց , և ծեր որց ոչ իցել լցէալ զժամանակս իւր , զի եղիցի կըստեր որդին՝ հարիւրաման , և որ հարիւրամեանն մեռանիցի , մեղաւոր և անիծեալ կոչեսցի . կե . 20 || :

Պ . Այդ խօսքը այսպէս կը մեկնեն . Տարաժամն աւուրց (այսինքն տակաւին չի հասած) երախայ (այսինքն տղայ) կանուանէ , որ շատ օրեր և տարիներ ունի իւր հասակին մէջ , բայց խմասութեն և բարի բարուց կողմանէ՝ երախայ է :

Վրդ՝ աւուրց երախայ ըսածը կիմացվի մանուկ հարիւր ամաց , իբր թէ քի ժամանակը ճշմարիտ քրիստոնեաները մէկ հասակաւ մը չեն ըլլար . որոնք իրենց բարուց թիւրութելը և թեթեւութելը մանկունք են , բայց ամէնն ալ կենաց մաքրութել և շնորհօք և առաքինութել կըլլան այր կատարեալ . թէպէտ աստիճանաւ մէկ զմէկու յարմար չեն գալ . քանզի ումանք մեծ կըլլան սրբութեամբ՝ և ումանք փոքր :

Դարձեալ հոգեորապէս ծնեալքն մկրտութել՝ սակաւ աւուրց երախայ չեն համարիր , այլ որպէս շնորհիւ կատարեալ արտնց՝ առաքինութել կատարեալ կըլլան իսկցն , ինչպէս էին առաջին քրիստոնեաները : Վ. յս խօսքին միտքը այս ըլլալը հետևեալ խօսքէն յայտնի է , և ծեր՝ որ ոչ լուաւ զաւուրս իւր , այսինքն՝ որ նոր օրինաց մէջ երախայ չըլլար , և ոչ ծեր աւուրբնք՝ այսինքն որ իւր օրէնքը չի կտարեր առաքինութել . ապա ծերըն քրիստոնէութեն մէջ՝ նմանապէս և մանկունք՝ կը կատարեն իրենց տարիները առաքինութեամբ :

Բայց որ կըսէ՝ կըստեր որդին հարիւրամեան , և այն . այսպէս կը մեկնըվի . նոր օրէնքին մէջ մեղաւոր հաւատացեալ

չի մեռնիր, այսինքն նոր օրինաց մէջի հաւատացեալ մեղաւորը եկեղեցիէն դուրս չի ձգվեր՝ չի անիծվեր, մինչև հարիւր տարեկան ըըլայ. Հարիւր տարեկան ըսածա՝ տարի մի՛ իմանար, այլ անոր կըսվի հարիւր տարեկան որ՝ ինչպէս հարիւր թիւր կատարեալ համրանք է, նոյնպէս հարիւր տարեկան այն պիտի իմանամք, որ մեղօք կատարեալ եղած կըլայ՝ և մեղք գործելը իրեն տվորութիւն կըլայ, և լիոր և անամօթ կանուանի:

**Վ**սկից կիմացվի՛ որ տգիտութիւր մեղանչողը եկեղեցիէն դուրս չի ձգվեր, մինչև որ մեղաց վրայ տոլորութիւն ըլլալու հասակը կատարեալ ըըլայ, ահա այնպիսին պիոջ և անիծեալ կըսվի. այնպիսին է հարիւրամեայ ծերը, այն է՝ որ կըսվի հարիւր տարեկան մեռած:

**Ե**ւս՝ ոմանք այսպէս կըմեկնեն, քի եկեղեցւոյն մէջ մանկունք անգամ՝ որ ՚ի ոք աւազանէ կը ծննանին, իմաստութիւր և քրիստոնէական առաքինութիւր կատարեալ մարդիկ են. և ասկից կը հետեւի՝ որ տարիկով կատարեալ եղօղը՝ եթէ ՚ի շնորհաց լութենէ թերի ըլլայ՝ մեղաւոր և անիծեալ կանուանի:

## Հ ։ Հ Ե

**Ա**լլուզեմ սորվել Եղեկիէլի առաջին տեսլեան մեկնութիւր՝ որ ՚ի գլուխն մէկ մինչև ՚ի վերջ գլխոցն բայց երկար ըլլալուն համար համառօտելովմը զուրուցեմ, որ պատասխանը տաս: «**Վ**սէ նա ինքն Եղեկիէլ (երբ ժողովողոց հետ էր ՚ի ժամանակս գերութե ՚ի բարելոն) Մինչ կայի յերկրին Քաղղէ-ացւոց ՚ի վեր Քորեար գետայ, անդ եղեւ ձեռն տն ՚ի վեր խմ, և ահա հողմ մըրկեալ. և ամպ՝ և հուր՝ և փայլատակումն ագստը ՚ի հիւսիսայ: **Վ**այ ամպ, անօսրագոյն ՚ի ծայրս՝ երևէր ունել շուրջանակի իրը լուսեղէն վերջաւորս կամ քանցու: «**Խ**ակ ՚ի մէջն՝ վաւումն գոլորշեաց իրեւ հուր շաւագոյն ձառ, ուագայթեալ, և բերեր զնմանութիւն բաղմագունի ական: «**Խ**մէջ հրցն երևէին կերպարանք չորից կենդանեաց, որք թուեին իրը բաղկացութիւն հրեշտոր. ձեւ իւրաքանչեւրոց առ հասարակ՝ էր ըստ կազմութե մարմաց մարդոց, այլ ուագ նոցա կճղակաբաշն՝ նման ոտից որթուց, և կայծակունք թօն, թափէին ՚ի նոցանէ իրեւ ՚ի հրացեալ պղնձոց: **Խ**ւրաքանչեւր ՚ի նոցանէ՝ ուներ չորս թեւս, յորոց երկուքն տարածեալ ՚ի վերուստ իրեւ հանդերձք ծածկէին զմարմինս իւրեանց, և ՚ի երկուքն եին բացեալ և սաւառնեալ իրը ՚ի թռիչս պատրաստեալ: **Խ**ներքուստ թեւոց նց ելանէր երկու ձեռն մար-

"դց , և զի անցնիւր ՚ի հրէշից անտի էին ՚ի չորեսին անկիւնս  
 "մեծի կառաց . վասն այնորիկ յամ անկիւնս կառաց երևէին  
 "երկու ձեռք մարդց : Ի կրծոց մարդցն ելանէր պարանոց ,  
 "և ՚ի վերայ նը գլուխ մարդց . առ որով ՚ի վը աջ թիկան էր  
 "դէմք առիւծու , և ՚ի վը ձախոյ թիկան դէմք եղին , և ՚ի վը  
 "գլխոյ մարդցն ցցուեալ կայր՝ և իբր թէ անտի ելեալ՝ գլուխ  
 "արծուց : Ի . յն չոքք գէմք միացեալ հայէին միաբան ՚ի մի  
 "կողմն , և ՚ի շարժիւ իւրեանց ոչ գարձուցանէին յետս զե-  
 "րես , այլ իւրաքանչեւր հանդէպ երեսաց իւրեանց գնացին  
 "ուղիղ առ մի կէտ , ոչ յաջ և յահեակ խոտորեալ , յոր կողմն  
 "հրամայէր նց ած երազս ընթանային և թեթևս դառնային .  
 "բայց միշտ ընդ գիծ ուղիղ հանդէպ երեսաց իւրեանց :  
 "Հողմ էր նց առաջնորդ և ուղիղ , ընդ որ կցս շնչէր՝ ընդ  
 "այն վարեր զնն , և յընթացից նց թուէր կայծականց թօթա-  
 "փիլ և փայլատականց հատանիլ : Ի . յն ինչ հայէր Եզէկիէլ  
 "հիամամբ ՚ի հրէշս այնոսիկ , ետես զհետ նց կառս քառա-  
 "նիւ , այլ նորա ոչ ձգէին զնա , և ոչ ընթանային յառաջ  
 "իբրև լծեալ ՚ի նա . բայց միայն զի իւրաքանչեւր գաղան էր  
 "մօտ առ մի անիւ : Քարձունք էին անիւքն , և կերպարանք նց  
 "և գործուած նման միմեանց՝ ող թէ ՚ի մի գաղափար գործեալ ,  
 "իւ ՚ի գնաւ իւրեանց այնպէս զուգահետ ընթանային , զի ՚ի  
 "մաղէ ոչ թէքէին արտաքր գծի , և իբր մի միայն անիւ երևէին :  
 "իւ շարժումն նց ոչ կցը ընթացք , քանզի լի էին աչօք շրջա-  
 "նակը նց . և այնպէս իմն երևէին որպէս թէ տեսանել զնանա-  
 "պարհ ընթացից իւրեանց : իւ թէպէտ ոչ շարժէին ՚ի ձգէ-  
 "լց գաղանացն , բայց այնպէս կշռէին զգնացս իւրեանց ընդ  
 "գնացից գաղանաց , զի ընդ նո՞ գնացին , ընդ նո՞ վերանային ,  
 "և ընդ նոսա զտեղի տւնուին ըստ վարելց հողմոցն և ամպցն ,  
 "և երևէր հոգի կենդանութէ լինել յանիւսն : Հասատառու-  
 "թիւնն կամ երկինք պշնը հրաշտեսիլ կառաց , որ տարած-  
 "եալ ձգէր ՚ի վը անուոց և ՚ի վերայ գլխոյ գաղանաց՝ բերէր  
 "զտեպէլ ական վանուց՝ որ զօրէն հայէլոց երևեցուցանէր  
 "փայլակնացայտ կայծակունս՝ և ցողմունս հրց , որով և տե-  
 "սիլ հասատութէն աշաւոր իմն երևէր . գցն անուոց՝ նման  
 "էր ականց թարշչի , կոմ ող ընթեռնու լատինն ծովագոյն .  
 "և շարժումն նց իբրև մըրիկ ինչ , որպէս թէ շրջեցի անիւ ՚ի  
 "մէջ անուոց : իւ նոցա ՚ի սաւառնելն հնչէին իբրև զնայն  
 "ջուրց բազմաց . այլ յորժամ բայլսէին զթէս ՚ի թոփիս ,  
 "հնչէին իբրև զծայն պտտերազմօղ բանտի , իբր շաշիւն

„զինուց, շառաջիւն կառաց, փոնչիւն երիվարաց, հնջիւն փո-  
“ղոց, գոյշիւն զօրաց, և ոտնաձայն բաղմութե՛, որ և էր իբր  
“երրորդ իմն ձայն և ահարկու ամբոխումն։ Ավագ հաստատու-  
“թեան՝ որ ՚ի վլ՛ կառացն, գցը աթոռ իբրև զաեսիլ ական  
“շափիզայ, և ՚ի վերայ աթուոյն՝ նմանութի կերպարանաց մար-  
“դց, որոյ ստորին մասն միջովք չափ ՚ի խոնարհ նմանութիւն  
“հրց ։ իսկ վերին մասն իբրև գտեսիլ ական բազմագունի ։ և  
“յաշացն երեկը բոց հրց ցոլանալ շուրջանակի ։ և շուրջ զա-  
“թոռովն տարածեր նմանութ աղեղան՝ որ ձեանայ յերկինս։  
Վ.յ տեսիլքին մէջ երեցածներուն խորհութը ինչ պիտի  
ըլլայ։

Պ. Յ ածացց տեսիլքը՝ երեկիլի մեկնիչք զանազան կեր-  
պիւ կը մեկնեն, մանաւանդ խորհրդական մեկնութե՛ ։ բայց  
մէք յոմանց մեկնչաց առեալ զգարական մեկնութի սորին՝ գնեմք  
այս տեղ, որ յարմար կուգայ պարագայից ժամանակին ։ ապա  
մէկ մէկ մասն առնելով տեսլեան մէջի խօսքերը՝ զատ զատ խօ-  
սիմք։ Հայց արվաւ ած Եղեկիլի այս տեսլեանս մէջ, Երու-  
սաղէմի կործանման նշանը մօտ ժամանակէ մը։

Վ.բդ՝ որ ըստաւ, || Հրէշքառադէմեքառապատկեալ՚ի չո-  
րեսին անկիւնս կառաց։ Վ.յ Նաբուքողոնուոր թագաւորն  
է, որ պատրաստ էր ունենալ իւր ցեղին մէջ՝ Խորայելացւոց  
Յուգայի ցեղին թագաւորութե՛ ։ չորս անգամ գերի լնելը ։  
առաջին անգամին իւր մեծ պապը՝ Մանսու թագաւորը գերի  
ըրաւ, որ Յուգայեան ցեղին թագաւորն էր ։ Երկրորդ՝ ինքը  
գերի ըրաւ Յովակիմ թագաւորը ։ Երրորդ՝ գերի ըրաւ  
Յերոնիմ թագաւորը ։ չորրորդ՝ պակաս մասցածներն ալ Սեղե-  
կիս թագաւորին գերութեամբը կատարեցաւ։

Վ.արդոյ կերպարանք՝ որ էր գլխաւոր ՚ի հրէշն այն, որ  
և յինքն ուներ պատուաստեալ զայլ հրէշ, նա ինքն էր Նա-  
բուքողոնուոր թագաւորն, քանզի Երուսաղէմ քաղաքին կոր-  
ծանմանէն ետքը՝ ինքը պատրաստ եղեր էր գլխաւոր ըլլալու։

Վ.իւծով՝ Պարսից թագաւորութիւնը իմացիր։ Եզր՝  
Ասորեստանեաց թագաւորութիւն է, որ այն ժամանակը Քաղ-  
դէացւոց ընցն ներքե ինկած էր։

Վ.բդիւլ՝ որ ամբարձեալ ունէր զգլուխն ՚ի վլ՛ այլոց,  
Մարաց թագաւորութիւն է, որ այն միաբանութե՛լ մէջ՝ Նա-  
բուքողոնուորայ Հետ ծովային կրթութի կընէր՝ և կըզօրա-  
նայր, և պատրաստ եղած էր ուրիշներուն վրայ ծեծի ելլաւ,  
որ Արաաշէսի և իւր որդւոյն Պարէհի ժամանակը եղաւ, որ

իւր իշխանութել ներքել ասուաւ Պատրսից ազգը՝ Ասորեստանցիները՝ և Քաղղէայիները՝ որ այժմ միաբանեալ են Երբայցւոց դէմ:

Վիաւորութիւն երեսաց չորից հրեշեց՝ ուղղեալ ՚ի մի կողմն, և յառաջախաղաց հանդէպ երեսաց իւրեանց, այն երեք թագաւորաց սերտ միաբանութիւնը ցցց կուտար՝ որ Երբայցւոց ազգը նեղեն:

Ազղակ որթու յոտս, ուրիշ փոքրիկ իշխանութիւնները ցցց կուտար, ինչպէս Փղշացիք՝ Եղովմայեցիք՝ Ամճնացիք, որոց եղջնւորը որթու Եղջնւորի նման առկաւին ակար էին զարնելու, բայց և այնպէս՝ իրենց Եղունդները օդնութե՛ գրին Երուսաղէմի կործանմանը:

Ջեւերը՝ արագութեան նշանակ են: Բարցք և փայլատա-կունք՝ կարծը խստութեան նշանակ են:

Ջեռն մարդոց ՚ի չորեսին անկիւնս, նշան է ընդ հանրա-պէս կողոպտելց և յափշտակելց, որ պատրաստ էին ընել ամմէն բանի ձեռք զարնելով:

Վնիւքն լի աջօք, և զուգընթաց ՚ի գնացս ընդ գտպանաց, ասոնք զինուորաց արագութելը օրինակ են, որոնք ամմէն բան կը կատարեն իրենց գլխաւորին հրամանաւը, և ցուցակ են ար-թուն և զգաստ ըլլալու պահպանութե՛ վրայ, որ ամենին ձա-նապարհ չիտան փախստեան զարնըլած Երբայցւոց:

Եւ ծովագոյն աեսիլ անուոցն, ցցց կուտար զօրքին ան-համար բազմութիւր, որ ծովու նման ամմէն կողմցըսւած էին:

Գաղանք՝ որք ՚ի սկզբան աեսլեանն յառաջադէմ գնացին, և զերեսս իւրեանց ՚ի գնան յետս ընդդէմնէ գարձուցանէին, ցցց կուտան ձիաւոր զօրքերը, որ գառնալու չելն իրենց եր-կիրը՝ մինչև չել կործանեն Երուսաղէմ քաղաքը:

Եւ յերկրորդում տեսլեան՝ զի երևէին գնաւ և՚ի դառ-նաւ ցցց կուտան ձիաւոր զօրքերուն յշգիպասս երթաւ զարնելու, և Եշգիպացիք փախցընելէն ետքը իրենց երկիրը դառնալնին:

Վթուն՝ որ էր ՚ի վր հաստատութե՛ կաւացն, և մարդն նստեաւ ՚ի նա՝ ցուցանէր զած, որ իւր ակնարկութեամբը այս ամմէնը պիտի ըլլար:

Վզեղն՝ որ կայր շուրջ զաթուովն, ցցց կուտար՝ որ յետոյ ած պիտի հաշարվի ժողովրդեան հետ, և Երբայցւոց ազգը վերստին պիտի նորոգվի:

Վհա՛ գրական մեկնութիւն տեսլեան Եղեկիւլ մարդա-րէին, թէպէտ վարդապէտք շատ խորհրդական մեկնութիւն կուտան, և ոյս աեղ մեղել պէտք եղածը ըսածնիս էր:

**Վ**եսիլը մեկնելէդ ետքը, այս համառօտ յայտնութեր ևս ըսէ՛, որ նցն մարդարէին յայտնեցաւ ոչ տեսլէամբ՝ այլ ըսէլով.  
|| Եւ տեսի ձայն թեոց գաղանացն սաւառնելոց ընդ միմեանս,  
և ձայն անուոց զհետ նոցա, և ձայն շարժման եղէ ։ Պ ։ 13 ։

Պ. **Յ**ս ձայնը ցոյց կուտար՝ սյն թագաւորաց միաբանութիւնն է, որ տռաջին տեսիլքին մէջ ըսինք, որ միշտ չեպիտի մնայ. և յետոյ այն միաբան եղողները մէկ զմէկու վրայ պատերազմ պիտի բանան . որ կատարեցաւ Արտաշես թագաւորին օրը, և Պարսից ազգը նոււաճեց, և յետոյ Քաղդեացւոց ազգը և Կիւրոսը հնազանդեցոյց, և ամէնն ալ իւր իշխանութեան նեղքել տռաւու։

**Վ**ատ տեղ սուրբ գրոց մէջ՝ Գոդ Աբրահամու գրված  
է, ի՞նչ հասկընալու է այդ խօսքը:

Պ. **Ո**ուրբն Գիոնեսիոս՝ արդարոց երանական հանգիստը  
կիմանայ . քանզի ինչպէս որ տղայքը իրենց ծնողաց գոդը՝  
անհոգ և աներկիւղ կըհանգչին, նցնպէս արդարոց գասպը՝  
այն երանական հանգստեանը մէջ հանգիստ կըլլան . և իրենց  
կամացը հակառակ բան մը ամենեին չեկընար տերեւ.

**Վ**արցուցած հարցմունքին նման՝ Երբեմն սուրբ գրոց  
մէջ՝ Երկիր կենդանեաց կըսվի . ի՞նչ պիտի ըլլայ այդ կեն-  
դանեաց Երկիրը:

Պ. **Ե**րկիր կենդանեաց ըսելով արքայութիւնը իմացիր, որոց  
փառքը վայելողները՝ մահկանացու չեն ըսվիր, նցնպէս եթե-  
րական Երկինքն ալ՝ որ անմահ հրեշտակաց բնակարանն է, այն ալ  
Երկիր կենդանեաց կըսվի, քանզի բնակօղները անմահ են :

**Վ**աճութին համար Երբեմն սուրբ գրոց մէջ ի՞նչո՞ւ հա-  
մար Գեհետան ալ կըսվի:

Պ. **Ո**մանք տռաջին կռապաշտներէն իրենց որդեքը Բահար  
կռութին զոհ կընէին, որ Ամօնացւոց չածն եր, կը բերէին

տղայքը՝ պիոն կուռքին բերանը կը դնէին՝ որ փորը կիջնար՝  
և կայրէր, որուն իրենց կցը մոգը կըսէին՝ թէ չածները  
յափշտակեցին։ Եւ կամ կուռքին գիրկը կը դնէին, և ներ-  
քէն ալ կրակ վառելով կայրէին։ կամ երկու ձողի ծայր  
կանցունէին տղայքը՝ և կուռքին բերանը կուտային։ Եւ այդ-  
զոհեալ տղայոց լացը և ողը ծնօղքները ըրլսելու համար՝  
կոոց չարասիրաքուրմերը կըսէլու թմբուկով (տափուրով)  
դափով (թէ ժով) աղմուկ համել, այս անշահ ձայներուն պատ-  
ճառաւ, այսպիսի տեղերուն գեհ՛ կամ գեհեան կըսէր։ և  
որովհետեւ դժոխիրին մէջ ալ անողորմ տանջանք կըլլայ դասա-  
պարաելոց, վասն որոյ անոր ալ գեհեան կըսվի։

## Հ • ԶԲ

Աանիէլի մարդարեռւթէ մէջ Նաբուքոդոնոսոր թա-  
գաւորին համար կըսվի, ի մարդկանէ հալածեցաւ, և խոռ  
իրեւ զարջառ ուտելը, և ՚իցող երկնից մարմին նը ներկաւ,  
և այլն . բան . դաս . դաս . 30 ||։ Վարդեօք բոլորովին գազան եղալ մի։

Պ . մանկը կարծեցին՝ թէ մարդկային գցացութիր մնալով,  
միայն մարմնոյն արտաքին ձեւը փոխակերպեցաւ՝ վայրենի անա-  
սունի նման։ մանկը ալ կըսէն, թէ ամենեւին իրական փոփո-  
խութիր մը չեղաւ մարմինին մէկ մասին անգամ, այլ արտաքին  
երեցիթը միայն այլակերպեցաւ, ինչողեւ որ կախարդութէ մէջ  
կը պատահի, որ առջեկ եղած իրաց կերպերը այլայլելով այն-  
պէս մը կերեցունէ, որ իրօք այնպէս չէ։ ՞ցյնպէս թագաւորը  
տեսնօղները, կըսէն թէ իրենց վայրենի անասունի նման  
կերեար, որ ինքը իրականապէս այնպէս չէր։

Եւ ունանք ևս այս երկու կարծերէն դուքս կըսէն, թէ  
ոչ իրօք անասունի նման եղաւ, և ոչ տեսնօղները այնպէս կը  
տեսնային ինքը՝ կամ այնպէս կերեար, այլ միայն խելքը ցնո-  
րած ըլլալով ինքը զինքը վայրենի անասուն կը համարէր, վա-  
որոյ անասունի կերակուր կուտէր՝ անասունի բունի մէջ կը  
քնակէր՝ անասունի որպիսութիր կունենար։ Իսց ածաբան  
վարդապէտք կըսէն Նաբուքոդոնոսորաց երազոյն վրաց՝ այն  
երեցած ծառին արմատոցն շառաւիղին համար, որ կըսվի՝ թո-  
ղուլ երկաթապատ և պղնձապատ . բանիէլ . դաս . 12 :

Իսկ Դանիէլ որ երազը կը մեկնէ, այդ երկաթներուն  
համար բան չի խօսիր . և երկինքն եկած ձայնն ալ այդ եր-  
կաթները չի լիւստրելը, որ Նաբուքոդոնոսոր արթուն ժամա-

նտկը լսեց . և շատ դժուարութիւն կը լսր թագաւորին փախ-  
չելը և պահվելը անտառին մէջ՝ Եթէ կապված ըլլար Երկա-  
թով , ուրեմն կերեւայ՝ թէ Նարուքողոնոսոր չի կապվեցաւ , և  
թէ այն Երազցն մէջի Երկաթները՝ պարզ այլաբանութիւն մի  
էին , ցցց տալով՝ թէ այն Եօթն տարվանը մէջ այն անտառնե-  
րէն դուրս չի պիտի Ելլայ , այլ աներեւոյթ զըրութեամբ այն  
տեղ կապեալ պիտի մնայ :

Եւ կըսեն ածաբանք , թէ կըսվե այն Երազցն մէջ || Անրո  
նը ՚ի մարդկանէ փոխեացի , և սիրա գաղանի տացի նմա : || Վ.յլ  
ածուսցյ մեկնիչը այն Երազցն՝ իւր մեկնութելը մէջ չի քննէր  
այդ բառերը՝ և զատ մեկնութել չի խօսիր , այլ ընդհանրապէս  
մը կըսէ , || Ընդ գաղանս անապատի Եղիցի բնակութիւն նորա , և  
խոտ իւրեւ արջառոյ ջամբեւոցն նմա : || Եւ ոչ Նաբուքողոնո-  
սորաց Երկինքէն Եկած ձայնին մէջ այդ բառերը կը կրկնըվին ,  
ասկից իմանալ պէտք է որ՝ այս աւ այլաբանական մարով ըսվե-  
ցաւ , որ գուշակութիւն աւելի հասաւառութիւն մը ըլլայ՝ գաղտ-  
նաց հետ բնակելցն անապատին մէջ , և այն տեղ բնակելուն  
պէտք չէր ոչ ներքին և ոչ արոտքին այլափոխութիւն կեր-  
պարանաց , և ոչ աւ իրեն կամ ուրիշն անուրջքին մէջ այլա-  
փոխեալ Երեւալ :

Եւ ևս կըսվե , թէ || Ընդ գաղանս անապատի բաժին  
նորա . . . ՚ի դաւար վայրի : || Վ.յլ բառերէն յայտնի կը լսայ  
այն ամմէնը , որ սահմանվէր էր Նաբուքողոնոսորայ՝ անասունի  
նմանիւ այսինքն խոտ ուտել , որ առանց մշակութե ինքնին կը  
բուսնի . և ուրիշ կերպիւ մը նմանութիւն չերեւցընէր Նաբու-  
գողոնոսորայ՝ անասունի նմանիլը , այլ միայն կերակուրի կողմա-  
նէ՝ որ խոտ կուտեէր . և այս այսպէս ըլլալով հարկ չէ ըսել ,  
թէ չորս ուրէն գնալով անասունի նման խոտ կը կրծէր . և  
խոտ ուտելով՝ ծառի բողընջ և արմատ կրծելով պէտք չէր յի-  
մար և խելագար ըլլալ , մինչեւ որ ինքը զինքը անասուն կար-  
ծէ . որովհետեւ իւր կեանքը ազատելու համար հարկ եղաւ  
իրեն փախչել և պահվել անտառին մէջ՝ աներեւոյթ ՚ի մարդ-  
կանէ , և ուտել անտառին մէջ գանըվածը :

Եթէ ոմանց ըսածին նման ինքը զինքը վայրենի անասուն  
համարէր , և անասունի ախորժակ ունենար , այն անասուռ իրեն  
զըօսարան կը լսար . ուր տեղ ած ինքը պատժոյ համար իրկեր  
էր : || Եթէ միտքն ալ վըսն ըլլար և չի գիտնար մարդ ըլլալը ,  
կարօղ չէր այն անասնական յիմարութելը մէջ զած ՚ի միտս իւր  
բերէլ և ոչ աւ իւր զըօսամին ուշանալը իրեն մեղք կը համար-

ՔԵՐ • քանզի յիմարը ըլլալով՝ աղատ իշխանութիւն չունեց դառնալու և զղջալու:

Եւ յիրաւի մարդկային յիմարութե՛ յիմար էր, քանզի երկար ժամանակ իւր յամառութեանը մէջ մնալով ՚ի ներբոյ պատուհասին, արագ մը չախատեցաւ առաջի այ խոնարհիլ: Վ. յսպիսի յիմարութի ընդհանրապէս բոլոր մեղաւորներն ալ ունին, որոնք մեծ մոլութե՛ մը մէջ երկար ժամանակ մնալով մինչև որ այն մոլութիւնը իրենց վրայ կը տիրէ, յետք յամառութի ընել կուտայ իրենց, թէպէտ միշա աղատ են զղջալու՝ բայց չեն զղջար, և մամիկ կընեն իրենց չար սովորութե՛ը՝ քան թէ բանականութեան լուսցն, և ոչ եթէ չեն խմանար՝ կամ անձնիշխանութիւն չունին, այլ չեն կամիր՝ որ ինքը զննինին նուաձնն: Ուէ որ անոնց ըածին պէս Նաբուքոդոնոսոր յիմար եղած էր, և ինքը զինքը վայրենի անասուն մը հասկըցած էր, թէպէտ թշուառ էր, և իւր թշուառութե՛ը չի գիտնալով կը նեղոսրտէր, բայց չէր խմանար. և իւր տանջանքը չիմանալով՝ այն պատիժը իրեն հանգիստ կը համարէր՝ և իբր զուարծութիւն. այսպէս են յիմարութե՛ սովորական գործքերը՝ որ միշտ խելացնոր եղօղները կը բեցընեն:

Վ. յւ անպատմելի նեղութի և դառնութիւն Նաբուքոդոնոսորին սրախն այն էր՝ որ իրեն պատիժ էր, ինքը զինքը մարդ գիտնալը՝ թագաւոր ըլլալը, և ժողովրդոց ապստամբութե՛ երկիւղէն, որ իւր կարծէքովը սպաննեին պիտի ինքը, ակամոց փախցիւ և գաղանաց հետ բնակիլը, և անասունի պէս խոտ ուտելը: Վ. անզի լուլով այն ահարկու ապստամբաց աղմուկը՝ որ միտքաներ էին իրեն դէմ, անհնարին երկիւղիւ փախաւ քաղաքէն, և գնաց բցն գրաւ անասուաց ծառերուն մէջ, և այն աեղ անաես ՚ի մարդկանէ կեցաւ երկնից ցօղցն նեղքե, և կրեց անձրեւ և ձիւն և օդոյն տաքութիւնը և ցըրտութիւնը և բոլոր մնասակար հողմերը:

Եւ ժամանակէ ետքը հանդերձները մտշելով մերկ մնաց, և գլխուն մազը և մօրուքը առիւծի մազի նման խառնըվեցաւ, եղունդները թռչնոց մտգիլի նման եղաւ, երեսը նիհարացաւ և չորցաւ, և մարմինը օդոյն խստութէն պղնձի գցն եղաւ և ցամաքեցաւ, գլեթէ լոկ մորթովմը պատաճ մեռելի ոսկորներունման բան մը եղաւ, միայն թէ կենդանութե՛ հոգի մը ուներ վրան, և մարմացն բոլոր ձեւը այլանդակ եղեր էր: Վ. ողոր ածառնիք միայն այսպէս Նաբուքուքոդոնոսոր թագաւորին կերպը փոխվեցաւ կըսեն, և այն ալո՞ւ յանկարծակի՝ այլ ծանր ծանր +

քանդի և ինքն Նաբուքողոնոսոր ուրիշ կերպիւ վոփիխութիւ  
մը չի խօսիր՝ գլխուն եկածները պատմած ժամանակը . ապա և  
հասարակաց կարծիք է , որ թագաւորին առաջին կերպարանքը  
և ձեւը չայլափոխեցաւ :

## Հ . 29

**Ո**րդին միածին յաւիտենական գիտեմք , և կը գաւանիմք  
ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ . ինչո՞ւ համար հայրն ած բե-  
րանով Դաւիթ մարգարեին կըսէ առ որդին . || Որդի իմ ես  
դու , ես այսօր ծնայ զքեղ • սաղնո • ը . 7 || :

**Պ** . **յ** որդ բանին մէջ Այսօր բառը ժամանակ ցոյց չետար ,  
այլ անժամանակ մշտնչենաւորութիւ . քանդի մեր մէջ և բոլոր  
փոփօխական իրաց մէջ Այսօր բառը կը զանազանի եւրեկեան  
և վաղուեան օրէն , բայց այ Այսօրը՝ անբաժանելի յաւիտե-  
նականութիւն մի է . ուրեմն այսպէս իմացիք Այսօրը , որով  
անընդհատ հաղորդի որդւոյն աստուծոյ ՚ի հօրէն այ էութիւն  
ածային՝ ինչպէս որ կը հաղորդէր յաւածքան զլինելն աշ-  
խարհի , ինչպէս որ կըսէ՝ || Յաւածքան զարուսեակ ծնայ  
զքեղ . սաղնո , ձթ . 3 || :

Երբ կըսեմք՝ բանն յաւիտենական ունի կամկալու զն-  
դումն իւր ՚ի հօրէ այ , այդ բառերը թերի կերեւան բառի  
աղքատութե պատճառաւաւ . քանդի չունիմք այնպէս բառ մը՝  
որ համանգտմայն ցոյց տայ ներկայ և անցեալ և ասպառնի ժա-  
մանակը՝ անշարժելի և անբաժանելի տեղողութեամբ մը . ապա  
Այսօր որ կըսիլ , յաջորդական ժամանակ մի՛ իմանար , այլ  
յաւիտենականութիւ՝ որ ոչ սկիզբն ունի և ոչ վախճան :

## Հ . 29

**Հ**րեից աղջը քի գալստեանը չի հաւատանուն վկայու-  
թիւն կառնեն իրենց՝ թէ յետին օրերը պիտի ըլլոյ մարգա-  
րեին ըսածին պէս , || Եղիցի յաւուրս յետինս յայտնի չետոն  
ոն . եռաց , ը . 2 || : || Ե՞ր ինչպէս իմանամք այս յետին օրը :

**Պ** . **յ** յսպէս կըմեկնէ կուռանելիս այս բանը . || Յատկաղէս  
քի ժամանակը յետին կըսիլ , քանդի քո՛ է վախճան օրինաց և  
մարգարեից . և յետին կըսիլ նայելով ՚ի սկիզբն և ՚ի մասն  
աշխարհի : || սեմք թէ եթէ ՚ի սկզբանէ աշխարհի բոլոր ժա-  
մանակը բաժանես , առաջին՝ միջին՝ և յետին , կամ երեք

օրինաց ժամանակի բաժանես , բնութե օրէնք՝ մովսիսական օրէնք՝ և շնորհական օրէնք , այն ժամանակը շնորհական օրէնքը կըլլայ վերջին , որ անկէ ետքը ուրիշ օրէնք չի պիտի գայ , ապա այն օրինաց ժամանակին կըսկե յետին օր :

## Հ . ԶԵ

|| ուրբ կուսին յղութե ժամանակը՝ աւետիս տըլօդ հրեշտակը քի համար ըստաւ , || Տացէ նմա տէր ած զաթոռն դաւթի ։ Չու քա դաւորական աթոռը չի նստաւ , ինչ իմանալու է այդ դաւթի աթոռ ըսելով :

Պ . 4 || Կաւթի աթոռ ըսելով մարմաւոր աթոռ չի պիտի իմանամք , կամ դաւթի Սիօն քաղաքը՝ կամ Երուսաղէմ ։ մանաւանդ աթոռ անունով թագաւորական իրաւանց իշխանութիր պիտի իմացվի . և այսպէս քա ունէր դաւթի թագաւորութիր իբր որդի և ժառանգ գոլով : Ճաէպէտ իւր փառքը և հրամանը մարմաւոր թագաւորի նման չէր գործ ածէր . այլ ինչպէս որ ած գոլով իոնարհութի գործեց , նոյնպէս հեղութք և խոնարհութեամբ թագաւորեց . բայց երկրորդ գալստեան ժամանակը գործ ածէ պիտի ամենին կերպ փառքը , և անոնք՝ որ չէին ուղէր իրենց վայ թագաւորելը , յաւիտենական մահուամբ պիտի կորսնցընէ :

## Հ . ԶԶ

|| Կարիսմ ածածին կցս կըդաւանեն ամ եկեղեցիք . ինչո՞ւ համար որդին միածին կին կանուանէ կանայ Գալիլեացւոց հարսանիքին մէջ , ըսելով || Կին գու՝ չւ է հասեալ ժամանակ իմ . յօդ . ք . 4 || :

Պ . 5 || Ուրբ գրոց մէջ կին անունը հասարակէ թէ կուսից և թէ ամուսնացելոց . ինչպէս և Յովսէփայ ալ ըսվեցաւ , || Առ քեզ զմարիամ կին քո . յագ . ամ . 20 || : Եւ յայտնի է՝ որ իւրմէն յղացեալը ՚ի հոգւցն սրբց էր : ՞ ակու նահապեալ իրեն համար նշանված Ռաքէլ աղջիկը՝ իրեն կին կանուանէր : Քանզի ինչպէս հայ անունը՝ ընդհանրապէս խմորուն հացին և բաղարջ հային ալ կըսկի , նոյնպէս կին անունը . ինչպէս որ և առաքեալը ՚ի կուսէ ըսելուն տեղը ՚ի կնոջէ կըսէ՝ պապէս , || Առաքեաց ած զորդի իւր , որ եղէ ՚ի կնոջէ՝ և եմուտ ընդօրինօք , Գաղառացոյ . դ . 4 || :

|| Առւրբ ածածնի կուսութելը ուրացօղները՝ աւետարանն շին այս խօսքովը կը հաստատեն , || Ո՛չ Գիտաց զնա , մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ . Յառ . առ . 25 || : Վ. յա խօսքէն կը հետեցընեն՝ թէ ուրեմն յետ այնորիկ գիտաց : Վ'եք ի՞նչ-պէս խմանամք այդ խօսքը :

Պ . || Ի՞նչեւ՝ ըսած բառը միշտ սահմանաւոր ժամանակ ցոյց չխարը ո՞ր գրոց մէջ , այլ երեւմն յաւիտենականութի : Վ հա հայրն ած Դաւթի բերանով կըսէ միածին որդւցն , || Նիստ ընդ աջմէ իմի՞շ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց . ասու . ձ՛ք . 1 || : Վ. բր՝ թշնամին իւր ոտքին ներքեւ գնելն ետքը՝ ձգէ՞ պիտի իւր որդին յաջ կողմէն , քա՛ւ լիցի . այսպէս խմանալու է և աւետարանին խօսքը :

Եւ Յօհան ոսկեթերան կարի յարմարապէս կը մեկնէ այս բանը . || Եւ գիտաց՝ տաէ , Յովլէփ զկցան , մինչեւ ծնաւ զոր- ո դին , այսինքն թէպէտ ՚ի հրեշտակէն լուեալ էր , թէ յլաց- ո եալն ՚ի նմանէ ՚ի հոգւցն սրբոյ է , այլ չէր ամենեին հաս- ոտատ ՚ի գիտութիւնն՝ մինչեւ ծնաւ զորդին , զոյ ՚ի յերկնից ՚ի հրեշտակաց սպասաւորեալ , և ՚ի յերկը ՚ի թագաւորաց ո երկրպագեալ ետես : || Երեմն կատարելապէս չեւ գիտաւ սուրբ Կուսամին արժանաւորութիւնը՝ մինչեւ իւր անդրանիկ որդին ծնաւ :

Եւս կը ներհակին ըսելով , ի՞նչպէս անդրանիկ կըսվե- քն , եթէ ուրիշ եղբայր չուներ իւր մօրմէն :

Պ . || Նդրանիկ կըսվի՞ ոչ եթէ իրմէ ետքը ծնանող եղբարցը նայելով , այլ յառաջ ծնելուն համար , թէ և չունենայ իրմէ ետքը ծնած եղբայր : Եթէ այսպէս չուլար՝ անդրանիկ չէր համարվէր յառաջ ծնածը՝ մինչեւ որ երկրորդը ետքէն չի ծնա- նէր , և այս ճշմարիտ չէ ըստ օրինացն Մովլէսի : Քանզի հին օրինաց մէջ հրաման էր , որ ամեն անդրանիկ զաւակը ծնա- նելուն քառասուն օրէն ետքը՝ տաճարը կըտանէին առաջի այ . չեռ . ժ՛ք . 4 : Վի՞թէ մինչեւ քառասուն օր մայրը ուրիշ զա- ւակ կը ծնանէր , որ յետաց առաջին ծնածը անդրանիկ համար- վէր . ապա յայտնի է՝ որ եթէ ունենայ և եթէ չունենայ եղ- բայր , անդրանիկ կըսվե յառաջ ծնելուն համար :

## Հ • ԶԹ

Յովհաննու աւետարանին մէջ գրված է՝ || Յետ այսորիկ  
էջ յա՞ ի կափառնասցում, ինքն և մայր իւր՝ և եղբարք իւր.  
թ. 12 || : Եղբայր անոր կըսվի՝ որ մէկ հօրե և մէկ մօրե ծնած  
կըլսայ ուրեմն կերեայ՝ թէ սուրբ Կոյսն ուրիշ զաւակ աւ  
ուներ, կամ իւրմէն կամ Յովհաննու վեհապետն :

Պ. Յառաւածաբանք չորս կերպիւ Եղբայր կոյ կըսեն սուրբ  
գրոց մէջ: “Ատիս՝ բնական, որ մէկ մօրե կըլսան, և այս կեր-  
պիւ քն եղբայր չուներ, քանզի ոք ածածին քնէ զաւակ  
չուներ, և Յովհաննու որդի, քանզի կցս էր՝ ինչպէս  
շատերը կը վկայեն: Խըկըորդ՝ որ մէկ ցեղէ կամ մէկ ազգէ  
կըլսան, եղբայր կըսվին: Խըրորդ՝ Եղբայր կը համարին, եթէ  
առաջական ըլլան իրարու: Չորրորդ՝ Եղբայր կըսվին՝ որոնք  
իրարու հետ եղբայրական սէր ունեին:

Վ. րդ՝ Եղբայր կըսվին քի, ոչ եթէ Յովհաննու որդիքն են՝  
ուրիշ կնիկէ ըլլալով ինչպէս վարդապետք ոմանք կըսեն.՝  
ապաքէն եղբարք կըսվին քի՝ սիրելի աշակերտները, մանաւանդ  
Զեբեթեայ որդիքը Յակոբոս և Յովհաննես մօտ ազգական  
էին, ածածնի մօր քրոջը տղաքը ըլլալով. քանզի Սաղօմէ՝  
Անհայի քոյր կըսվի, ինչպէս որ կը վկայէ Կուռնելիոս. և ու-  
ղել չէ՝ Սաղօմէ՝ Յովհաննու ածահօրը աղջիկն է ըսելը:

## Հ • Դ

Յովհաննես Մկրտչին ծնունդը՝ Ղուկաս աւետարանիչ  
պատմելէն յետայ, կըսէ, || Եւ մանուկն աներ և զօրանսցը հոդ-  
ւով. և էր յանապատաս մինչև յօր երեւելց նորա Խորացէլի.՝  
շ. 1. ա. 80 || : Վ. րդ. ոք ինչ հասակի էր՝ որ գնաց, կամ  
ինչո՞ւ գնաց յանապատա:

Պ. մանք կըսեն՝ թէ տասն և ութ ամսըլտն էր՝ որ մայրը  
տարաւ յանապատ, և այն տեղ պահէլցաւ և ձեռամք հրեշ-  
տակի մնաւ. ոմանք երեք տարեկան էր կըսեն, և ոմանք հինգ  
տարեկան: Վ. յլ այս տեղ կը մնայ մեղի իմանաւ ինչնւ եր-  
թալը: Ոուրբն Գետարոս Աղեքանդրացի և այլք կըսեն, թէ  
Եղիսաբէթ մայրը՝ իւր մանուկը յանապատ փախոց, որ ման-  
կակոտոր չերովդէսին սուրէն աղատէ:

Խւ միբաւի՝ մանկանց կոտորումը թեթէհեմի մէջ եղաւ,  
բայց որովհեաւ Յուղայի երկըն հաջակվէր էր Յովհաննու

Հրաշալի ծնունդը, վառ որոյ երկիւղ կունենային ծնօղքը, թէ  
չըլսոյ որ այն չար բունաւորը իրենց մանկանն աւ քննուել ելսոյ,  
ահա քան զայս հաւանական պատճառ՝ չեմք իրընար գըտնալ:

## Հ. ՊԱ

**Յ**ովիշաննէս Մկրտչի համար կըսէ քա, թէ || ԶԵ յա-  
րուցեալ ՚ի ծնունդս կանանց՝ մեծ քան զՅովիշաննէս, (ուր  
զուկաս կաւելցունէ) մարդարէ մեծ քան զՅովիշաննէս Մկրտ-  
տիւ, բայց փոքրիկն յաբբայութե երկնից մեծ է քան զնա || .  
այս խօսքը ինչպէս պիտի իմանամք :

**Պ.** յս հարցմունքը երեք բաժին ընելով, երեք պատաս-  
խան տալ հարկ կըսլայ: ՚լախ՝ արդեօք Յովիշաննէս մեծ և  
առաւելէ քան զմարդարէ: Երկրորդ՝ ինչո՞ւ կըսվի մեծ քան  
զնմ մարդարէս: Երրորդ՝ ո՞վէ փոքրիկն յաբբայութեան:

**Վ**րաջնցն այսպէս կըպատասխաննէմ, յիրաւի Յովիշաննէս  
մեծ և առաւելէ քան զմարդարէ: քանզի ոչ եթէ միայն բե-  
րանով մարդարէացաւ քի համար՝ ուրիշ մարդարէից նման,  
այլև մատամբ ցցց տըվաւ, թէ Ա՛ է որդին աստուծց:

Երկրորդ հարցմանդ պատասխանն այս է, անոր համար  
կըսվի մեծ քան զնմ մարդարէ, որովհետեւ ինքն միայն առան-  
ձին շնորհք ունեցաւ, քանզի եր ապաշխարող, քարոզիչ,  
մարտիրոս, և մարդարէացաւ մօրը արդանդին մէջ քի համար.  
և իւր յլութիւնը ՚ի հրեշտակէն յայսնի եղաւ, ծնած ժա-  
մանակը հօրը լեզուն բացվեցաւ, և այլ շատ շնորհքներ ու-  
նեցաւ, որ ուրիշ մարդարէները չունէին: այս պատճառաւ  
կըսվի մեծ քան զնմենայն մարդարէս:

Երրորդ՝ ըսիր, ո՞վէ փոքրիկն յաբբայութե, այն է՝ որ  
ունի փոքրիկ աստիճան մը սրբարար շնորհայ՝ քան զըարձը աս-  
տիճան մարդարէութե ունեցողէն, քանզի մարդարէութիւը ըստ  
ինքեան չի կատարելագործէր զինքը ունեցողը, և չի կըսնար  
հաճց ընել այ. բայց սրբարար շնորհքը կը կատարելագործէ՝  
և ոյ բարեկամ կընէ: ուստի շատ առաւելէ արդար ըլլու  
քան թէ մարդարէ: Եւ Յովիշաննէս առաւել յարդի եր այն  
շնորհացը կողմաննէ՝ որով սրբեցաւ, քան մարդարէութեան  
կողմաննէ՝ որով զարմանալի երկեցաւ:

## Հ. ՊԲ

**Ք**ըիստոսի ծննդեան ժամանակի ընծայաբեր մոգերը,  
արդեօք ձշմարտապէս թագաւորի էին:

Պ. Արովէնետեւ աւետարանիշը թագաւոր անուամբ չէ յիշառակէր, այս պատճառառաւ ոմանք ըսին՝ թէ թագաւոր չէին. բայց թագաւոր ըլլանին վկայութե՛ որոց մարդարէից կը հստատալի . || Գնացին թագաւորը ՚ի լոյս քո, և հեթանոսք ՚ի ծագել լուսոյ քո. Եսայ. ՚ի. 3 || : Եւ Դաւիթ կըսէ, || Առաջենորա նախ Հնդիկք անկցին, և թշնամիք նորա հող կերիցեն: Թագաւորը թարսոի և կղզեաց պատարագս մատուցեն նմա, թագաւորը Արաբոյ և Սարայ պատարագս բերցեն նմա. Առաջան. Հա. 9 || : Աւը ըստ սուրբ Գրոց թագաւորը թարսոի ըսելովը, Տովեղերեաց նահանգաց թագաւորները կիմացվին: ապա կերեի՝ որ այն մոդերը թագաւոր էին:

## Հ. Պ. Դ.

Ո՞ր կողմէ եկան այս երեք թագաւորները:

Պ. Ոմանք կըսեն, թէ ասոնց թագաւորութե՛ երկիրը էր ՚ի ծոցն Արաբից, ոմանք կըսեն՝ ՚ի Սաբայ, ոմանք՝ յերկիրն Մաղիանացոց, որ Երուսաղէմի համեմատելով՝ յարեւելց կողմանէ կիյանան դէպ ՚ի հարաւ, վասն որոյ ըսին իրենք ալ, տեսաք զասաղն նը յարեւելս: Եւ ոմանք ալ կըսեն, թէ ՚ի միջագետաց կողմանէ եկան: Իսոնց այսպէս կարծենին ձանապարհը կարծըցունելու պատճառաւէ, որ կարելի ըլլայ տասն երեք օրովլ Բեթլէհէմհամնիլ: Ոմանք ևս Մղըըպաց կամ Պարսից երկիրէն բերել կուտան, ասոնց կարծիքին պատճառը մոդ ըսած բառն է. քանզի Մղըըպիք կամ Պարսիկք մոդ կանուանէին իմաստունները և աստեղագետները:

Վետարանիշը թագաւոր շանուանէր՝ այլ մոդ, քանզի այս անունը առաւել յարմար էր այն երեցած աստղին՝ որ իրենք բերաւ. և ևս քի մեծ փառք և պատիւ էր երկրպագիլ յիմաստնոց՝ քան թէ ՚ի թագաւորաց. քանզի իմաստունը առաւել զգօնամիտ և խելացի է քան զթագաւորս և զիշմանաւորս:

## Հ. Պ. Դ.

Երեւեցաւ մոդուց այն ասաղը:

Պ. Արիսասոսի ծնունդէն Երկու տարի յառաջ Երեցաւ կըսեն ոմանք. Ճերովդէսի յերկեմենից և ՚ի խոնարհ եղող մանեկունքները ջարդելէն առնելով. քանզի կըսեն ըստուգեց մոդերէն աստղին երևնալը, վասն որոյ յերկեմենից և ՚ի խոնարհ ըսելով հրաման ըրաւ ջարդել:

Եւ ոմանք կըսեն , թէ մոգերէն զատ ուրիշ մարդ չէր գիտէր , և իրենց խօսրէն առաւել յայտնի կերեւոյ , թէ երբ երեւցաւ իրենց այն հրաշալի ասաղը . յա ծնեալէր , քանզի ըսին , || Ո՞ւր է՝ որ ծնաւ արբայն հրէից , զի տեսաք զաստղըն նորա , և եկաք երկիրպագանէլ նմա || : Վոյա աստղը տեսնալով գիտցան որ փրկիչը ծնած էր , յորմէ կը հետեւի՝ թէ աստղը քրիստոսի ծնունդէն յառաջ երեւցած չէր :

## Հ . Պ. Ե.

Աւթէ հէմի մանկունքը՝ որ ջարդըլեցան ձերովուէսի հը բամանու , խելքերնին հտած չէր՝ որ յօժարութէ քի անուանը համար նահատակ ըլլան . և իրենց ծնողքն ալ կամօք և հաւանութեամբ նահատակ ընել չի արլին . ինչո՞ւ եկեղեցին մարտիրոս անուամբ ասոնց տօնը կը կատարէ :

Պ . Անքն յա քա իրեր ողջակեղ ընդունեց զիրենք , քանզի իւր անձին տեղը սպանվեցան մանկակուսոր չար թագաւորէն . ուստի և գերահրաշ մարտիրոս համարվեցան առանձնական շընորհօք , և նահատակութեան պատկը քրիստոսէ վայելցին :

## Հ . Պ. Զ.

Իսուսի մկրտութէն ետքը աւետարանիները կըսեն , || Յիսուս վարիւր հոգւովն յանապատ՝ փորձիլ՚ի սատանայէ || . արդեօք սատանայն չի՞ն գիտէր որդի սաստծոց ըլլալը :

Պ . Ձթէ աղեկ միտք դրած ըլլար նը գրոց ներքին խմատիցը , կընմար գիտանալ . բայց տրդիլեց ած այդ շնորհաց ըլլասափայլութիւն՝ և այն պատճառու տարակուսութէ մէջ մացեր էր : Խւր ամբարտաւանութէնը նայելով՝ մահնար կերեւոր իրեն այ մարդեղութիւնը , մանաւանդ նախատինք կը համարէր՝ մարդարէից գուշակած չարչարանիքները յանձն առնելը . և Եսայելոյ մարդարէութենէն գիտէր չար սատանայն , որ յա մեծամեծ հրաշքներ պիտի գործէ , կը նայեր՝ որ մինչեւ այն ժամանակ այնպիսի բան մը չըրաւաւ :

Եննդեան ժամանակը տեսած էր եղեւալ սրանչելիքները , օտար թագաւորաց երկիրպագութէ գալը նորասեսիլ սատղին առաջնորդութէնը . բայց յետց որ մանկակուսոր ձերովուէսին ահէն փախսաւ յշդիպաս գնայ , աարակուսեցաւ՝ թէ այսչափ նուասա ըլլալ այ կը վայելէ՞մի : Խանցաւ որդի այ ըլլալը ,

Երբ տեսաւ տասներկու տարեկան եղած ժամանակը տաճարին մէջ նստիլը՝ և չրէից վարդապետաց հետ խօսիլը , և այնպիսի գերիմաստութեամբ արամաբանելը . բայց յետոյ Յովսէ փայ որդիական նուռաստութիւն ցայց տալը տեսնալով վերըստին տարակուսեցաւ :

Ակըսութեն օրը երկնից բացվելը՝ հոգւցն սրբոյ աղաւնակերպ իջումն՝ հօր այց վկայելը՝ || Դա է որդի իմ սիրելի լուելը՝ գիտէր . բայց արդեօք էական որդի է , եթէ շնորհական որդի , ատոր նելքը չի հասաւ : Տեսաւ՝ որ յանապատին մէջ քառասուն օր ծամ կեցաւ , կարծեց որդի այց ըլլալը , բայց յետոյ երբ քաղցեաւ , վերստին տարակուսեցաւ՝ ըսելով թէ այս լոկ մարդ է Մովսէսի և Եղիայի նման . որովհետեւ անոնք ալ քառասուն օր պահեցին :

Ա էրջապէս ստուգիւ բանմը չի կըցաւ իմանալ , թէ նա է իսկապէս որդին այց . ինչպէս որ սրբազնն առաքեալով Պօղոս ևս կը վկայէ ըսելով , || Ո՛չ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ . զի եթէ էր ծանուցեալ ոչ արդեօք զտէրն իմաստաց ՚ի խաչ հանեին . առ առն . բ . 8 || : Այսինքն եթէ ստանային կամ իւր հետեւակաց խելքը հասած ըլլար , թէ յու որդի ասառուծց , Յուգայի և չրէից միաբը չէին թելսդրէր՝ որ քրիստոնը ՚ի խաչ հանեն . ապա չի գիտնալուն պատճառաւալը սկսաւ անապատին մէջ փորձելով քննել :

### Հ . Պ.

Աստանային երեք կերպ ըրած փորձութեն հարցմունքները ըսեմ , և պատասխանը տուր : Կախ՝ որ ըստու . || Եթէ որդի էս այց ասաք զի քարինքս այտոքիկ հաց լինիցին . ևս . բ . 3 || :

Պ . Աստանային այս բանին գլխաւոր միաբը այս էր , եթէ քն կարօղ ըլլայ քարերը հաց ընել , խմնայ՝ թէ ճշմարտապէս որդի այց է : Բայց թէ որ ըսէր՝ չեմ կարօղ , խմանար պիտի՝ թէ չեմ որդի այց . և եթէ ըսէր՝ կարօղ եմ , բայց չեմ կամիր , խմնար պիտի՝ թէ սոսկական մարդ մի է : Բայց երկու գիտուրութիւնն ալ ոչինչ եղաւ . քանզի քն ոչ կարօղ ըլլալը և ոչ չետամիլը յայտնի ըրաւ , այլ ածային գրով ամաչեցցց ըսելով , || Գրեալէ՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամենայն բանիւ այց . բ . առն . բ . 3 || : Եւ այսպէս փորձելը իւր փափաքին չի հասաւ :

Արկրորդ՝ "Քայնժամառեալածե զնտ սատանայ ՚ի քա-  
" ղաքն սուրբ, և կացուցանէ զնա ՚ի վշը աշտարակի տաճարին,  
" և ասէ ցնա եթէ որդի ես ոյ՝ արկ զքեղ աստի ՚ի վայր, զի  
" գրեալէ, թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալէ վասն քո, և  
" ՚ի վերաց ձեռաց բարձեն զքեղ՝ զի մի երբէք հարցես զքարի  
" զոտն քո ։ Խոռ ։ Դ ։ 5 ։ Վ. Ես ի՞նչպիտի ըլլայ:

Պ. Որովհետեւ սատանայն առաջին փորձութե հարցմունքին  
պատասխանը՝ նը գրոց վկայութիւնը լսեց քնէ ։ այս երկրորդ  
հարցմունքին կը նայի՛ որ ինքն ալ նը գրոց վկայութիւնը որաց ։  
բայց բերած վկայութե մեկնութե միտքը փոխեց ։ Քանզի  
յայտնի է՝ որ ած միջնորդութիւնը հրեշտակաց օգնական կը լսայ  
իւր սիրելեացը, եթէ խոհեմութեամբ իրենց գործքը կա-  
տարեն կամ կառավարեն ։ և ոչ եթէ լըբութեամբ յայտնի ե-  
ղած վտանգի մէջ ձգեն ինքը զինքնին:

Խոհեմութիւնն է՝ աշտարակէն վար ձգելը ինքը զինքը,  
յուսալով թէ ես արդար եմ, ինձի բան ըրլար ։ ոչ ընդդէմ  
է այս ածային հրամանաց ։ Աստանայն գիտէր՝ որ աշտարակէն  
վար քն ինքը զինքը չէր նետէր, բայց այնպէս կը կարծէր  
թէ եթէ որդի ոյ չէ, այս խօսքով իրեն պարծանք մը կը լսայ,  
և ի մեզս հպարտութե կիյնայ ։ և եթէ որդի ոյ է՝ կը բարկա-  
նայ, և կըսէ՝ եթէ զիս վար ձգեմ՝ հրեշտակաց միջնորդու-  
թեամբ կամ օգնութեանը կարօտ եմ, և այսպէս յայտնի կը լ-  
սայ որդի ոյ ըլլալը կամ ըրլալը ։ Բայց իւր կարծիքներէն  
գուրս՝ ուրիշ կերպիւ պապանձեցոց ինքը քրիստոս, ըսելով  
։ Գրեալէ թէ, ոչ փորձեացես զտէր ած քո ։ Վ. Հա և այս  
երկրորդ փորձական հարցմանքը՝ փորձիչը խայտառակեցաւ,  
և իւր տարակուտառութիւնը անլցծ մնաց :

Արրորդ՝ "Վուեալածէ զնտ սատանայ ՚ի լեառն մի բարձր  
" յցդ, և ցուցանէ նմա զամ թագաւորութիւնս աշխարհի՝ և  
" զփառս նց, և ասէ ցնա, զայս ամ քեղ տաց՝ եթէ անկեալ եր-  
" կիրապագանիցես ինձ ։ Խոռ ։ Դ ։ 8 ։ Վ. Ես ի՞նչ միտք պիտի ըլլայ :

Պ. Վուաջին և երկրորդ հարցմունքները ոչինչ ըլլալուն հա-  
մար՝ բանսարկուն աշխատեցաւ, որ բարկացընելու բան մը  
խօսի ։ Տարաւ բարձր Եռան մը վրայ, և սկսաւ իւր մատամիւ-

ցուցունել՝ թէ այս տեղ Ասորւոց թագաւորութին է , այս  
ինչ տեղ Քաղղէացւոյն է , և այն . ահա ասոնց ամմէնը քեղի  
կուտամ , եթէ ինձի երկրպագութի ընես : Խնքը իւր հարա-  
տութեանը նայելով կըսէր , եթէ այս որդի այ է , պէտք է  
որ այս խօսքէն առաւել բարկանայ՝ ըսելով , ի՞նչ կըսես ով  
չար բանսարկու , ես մարդացեալ ած ըլլալով՝ քեզի երկր-  
պագութիւն ընեմ . ես ճշմարիս որդի աստուծոյ ըլլալով՝  
քեզի նման չար ծառացին երկրպագեմ :

Ի՞այց այս անգամ ևս իւր փափաքը չելեցվեցաւ , և խայ-  
տառակեցաւ առաջիններէն աւելի . քանզի սատանայն մարդ-  
կային կերպիւ երկեցած էր յի . և մինչեւ այս հարցմանը ժա-  
մանակը յու այնպէս ձեւացաւ , որպէս թէ չէր գիտէր սատանայ  
ըլլալը . բայց այժմ մեծ խայտառակութե՛ հալածեց զինքը ,  
ըսելով ॥ Ե՛րթ յետս իմ սատանայ . զի գրեալէ , ո՞ն այ քում  
երկիրպագանիցես , և զնա միայն պաշտեսցես ॥ : Դր վաղվազակի  
հալածեցաւ պիղծ բանսարկուն , և իւր փափաքին գննէ ձեռով  
մը չելեցաւ հասնիլ , և որդի աստուծոյ ըլլալը չելեցաւ :

## Հ . Ճ

Ի՞նչ պիտի ըլլայ այս խօսքին միտքը՝ որ կըսէ , ॥ Ոյ՛  
գուցէ՝ տացի նմա և յաւելցի . և ոյր ո՞չն գուցէ՝ և զոր ու-  
նիցին , բարձի ՚ի նմանէ . հառ . ժ՛կ . 12 ॥ :

Պ . Ք րիստոսի աշակերանները և բոլոր հաւատացեալները ,  
որ հարուստ են ածային ծանօթութեք քի վարդապետութե՛ ,  
երբ սիրով կընդունէին՝ կեվելցուննէր երկնաւոր վարդապետը  
վերսարին նոր ծանօթութիւններ՝ առակաց մեկնութե՛ , որպէ-  
ս կեվելային գիտութե՛ փրկութե՛ հարկաւոր ըլլալուն չափ :  
Ի՞այց ձրէանները և բոլոր անհաւանները՝ թէ և գիտուն կե-  
րեացին , բայց աղքատ էին պէտք ըլլալու հմտութիւն . քանզի  
չէին ուզէր որ այն գիտութեամբ ուրիշ ծանօթութիւններ  
ստանան , այլ նախանձով և հպարտութեամբ ունեցածնին ալ  
կը կորսնցընէին :

## Հ . ՃԱ

Պ . Ք րիստոս կըսէ , ॥ Ո՛չ ևս տեսանիցէք զիս , մինչեւ ասի-  
ցէք օրհնէալ եկեալ յանուն տեսան . զո՞կ . ժ՛կ . 35 ॥ : Ի՞նչ  
պիտի ըլլայ այս խօսքին միտքը :

Պ. 4. կալելեայի մէջ էր քն երբ այս խօսքը ըստու , որով կուսուցանէր լսօղներուն , թէ ասկից զատվելես ետքը՝ դուք ալ երբ յերուսաղէմ կուրպայք , այն ժամանակիս կը տեսնացք զիս արմաւենեաց օրը , որ այն օր բոլորն ալզիս կը բարեբանեն :

## Հ . ՃԲ

Խնչպէս իմանալու է այս խօսքը . || Ի դատաստան եկի յաշխարհս այս , զիս որք ոչն տեսանեն՝ տեսցեն , և որք տեսնենն՝ կուրասցին . աջ . թ . 39 || :

Պ. 5. ստուածաբանք այսպէս կը մեկնեն . Յիսուս յաշխարհ եկաւ զատել ընարեալները՝ յանարդ մարդիկներէն . իբր թէ անոնք՝ որ յառաջ կըր էին՝ ածային խորհրդոց ժանօթութիւնունենալով , ճշմարիտ հաւատով այն ժանօթութիւնը ստանան և լուսաւորին . և անոնք՝ որ ինքը զինքնին քաջարէս կը համարին , իրենց կուրութեանը մէջ մնան :

## Հ . ՃԳ

Ասուրք երրորդութէն մարդացեալ ամէը միայն որդին գիտեմք . բայց այս գիտցածնուս հակառակ բան մը կիմանալիք քի ըստ խօսքէն՝ որ կըսէ , || Ո՛չ կարէ որդի մարդոց առնել յանձնէ և ոչինչ , եթէ ոչ տեսանիցէ զհայրն՝ զիս առնէ . զի զոր նայն տռնէ , զնոյն և որդին նմին նման գործէ . աջ . ե . 19 || : Վպա կերեւայ՝ որ հայր ած յառաջմանէ մարդ եղած էր , որ որդին տեսնալով ինքն ալ մարդացաւ :

Պ. 6. Եետարանին այդ մէկ խօսքը որ հարցուցիր , այդ տունէն առաջին տունն ալ կարգաւ , որ հարցմունքիդ մէկնութիւր ըսեմ : Վ. Հա ասկից յառաջ եղածը այս է . || Խնդրէին ձրէայքն սպանանել զնոտ , զի ոչ միայն լուծանէր զշաբաթու՝ այլև հայր իւր կոչէր զած , և հաւատար առնէր զանձն ոչյ || :

Վպա գլխաւորապէս կոիւր շաբաթ օրը անդամուլցիքը բժժէեն էր . արդ՝ ճշմարիտ միաք բանին այս էր , ող թէ կուզէր ըսել ձրէից . գուք յանցանք կը համարիք ինծի շաբաթ օրը գործ գործելս . ես այնպիսի գործ կը գործեմ , որ իմ հայրս ալ կը գործէ . քանզի ըստ ածութէն՝ մի բնութիւն՝ մի և նոյն կամք է ի հայր և յիս . բայց ըստ մարդկութէն՝ թէպէտ մարդկային կամքս այլէ ի կամաց հօր ոչյ , որ ոչինչ կը ըստամը ընել անոր կամացըդէմ : Եւ ինչպէս

որ ինքը չել կըսնար ստել և մեղանչել նոյնպէս ես ալ չեմ կըսնար մեղանչել ուստի եթէ մեղք եր և հակտուակ կամաց հօր այ շաբաթ որ հրաշք գործելը, ես ոչ եթէ միայն չեի կամէր, այլև չեի կըսնար գործել, քանզի չեմ կըսնար մեղանչել և ինչ որ կըսնեմ ես, նա և ըստ որում մարդ՝ չեմ կըսնար ընել ինքիրենս, այլի հօրէ աստուծոյ ինչոյն յայտնութիւն ըլլոյ ինձի՝ այնպէս կըսնամ ընել:

Ինչ որ հայր ած կըսնէ՝ ես ալ նոյնը կըսնեմ, քանզի իւր կամքը և կարողութիւր ուրիշ չել իմ կամքէս և կարողութիւս իմէպէտ ըստ որում մարդ՝ ունիմ կարողութիւր և կամք մարդ կային զանազան յած-այնպն, բայց հայր կըսիրէ զիս նաև ըստ որում մարդ, և հաղորդեալ է ինձ կարողութիւր և կամք առնելց՝ ոչ որբան տեսիք և լսեցիք, այլևս մեծամեծու որ պիտի տեսնայք և զարմանայք: Այս ոյս է հաշարատ միտք հարցմանդ ըստ մեկնութեան երևելի վարդապէտաց:

### Հ ։ Շ Դ

|| Անչու համար քբիստոսի կենսառիթ անօրէնութեանց սուրբ գիւղին Աւետարան կըսվի:

Պ. Անզի այն տեղ հաւաքեալ է աստուծոյ խոսամանց կտարկիւլուն աւետիսը, ինչ որ խոսացեր եր հին օրինաց մէջ մարդարէից միջնորդութեամբ, որ կատարեցաւ որդւոյն միածնի յաշխարհ գալովը:

### Հ ։ Շ Ե

|| Եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրոց աշակերտ, 22 ||: Այի թէ հայր և հոգի սուրբ հաղորդ չեն դատապական իշխանութեան:

Պ. Այի այդպէս կարծէր, ընդհանուր վճիռ է բոլոր ածառանից, թէ գործք նոր երրորդութե առ արտաքս, հասարակ են երից անձանց սրբոյ երրորդութեան: Վաս և ընդ որդւոյ դատէ և հայր ած և հոգին սուրբ ած ։ բայց այն խօսքը՝ որ կըսէ, || Զամենայն դատաստան ետ որդւոյ ||, ըստ որում նա միայն դատաւորական կերպ պիտի ունենայ դատաստանին օրը, նա միայն պիտի խօսի և լսել ասյ իւր ձայնը՝ և ինքն պիտի տայ անդարձ վճիռը, արդարոց՝ || Եկայք օրհնեալք հօր իմց ||, և մեղաւորաց՝ || Երթայք յինէն անիծեալք ||:

Արդին էր՝ որ քարոզեց յաւիտենական կենաց փրկութիւն, այն պիտի նստի յաթու դատողական, որ իւր քարոզութեան հետևողները վայելեն իրենց փառքը և պատիւը, և ունկնդիր չեղողները կրեն իրենց անվախճան տանջանքը։

**Չամ** դատասատան ետ որդւոյ իւրում՝ ըսելովը, շիմանաս՝ թէ ժամանակաւոր պարգև մի է ՚ի հօրէ ոյ առ որդի, այլ հաղորդեալէր անձին որդւոյ ՚ի յաւիտենից՝ ածային ծնընդեալըն ՚ի հօրէ ։ ինչպէս ՚ի յաւիտենից հաղորդեալէր հայր ած իւր միաձնին զածային գցացութիւնն և զբնութիւնն, նցյնպէս հաղորդեալէր զերարողութիւն՝ զարդարութիւն՝ և զամենայն կատարելութիւն։

Վայ մերս մեկնութե առ՚ի հաստատութի՝ այսպէս կըսէ ոքն Ամբրոսիոս։ || Չամ դատասատան ետ որդւոյ ։ Ետ արդարե ծնտնելով և ոչ առատաձեռնելով։ Եւ ոքն Ոսկեբերան կըսէ՝ || Ետ նմա զամ դատասատան, զի դատաւոր ծնաւ զնա։

### Հ · ՃԶ

**Վ**ատթէոս աւետարանից յիսուսի համար կը գրէ, և կետալ բնակեցաւ ՚ի Նաղարէթ, զի լցցի բան մարդարէին, թէ Նաղովըցի կոչեսցի ։ Է ։ 23։ || Վայ խօսքը ո՞ր մարդարէն գրած է, որ չեմք ըսեր։

Պ · Շ ատ կերպ կարծէքական մեկնութի՝ կայ այդ հարցմանդ վրայ ։ բայց հասարակ կարծէիք յետին մեկնչաց այսպէս կը հաստատեն մարդարէից խօսքը, և ծաղիկ կանուանեն յար, Եսայի մարդարէի խօսքէն առնելով, որ կըսէ՝ || Ելցէ ծաղիկ յարմատոյ անաի, Ժ ։ 1։ || Եւ որովհետեւ Նաղովըթ բառին արմատը՝ Եբրայեցւոց լեզուով ծաղիկ ըսելէ ։ աւետարանիշը այս նշանակութելնայելով ըսաւ, || Զի լցցի բան մարդարէիցն, թէ Նաղովըցի կոչեսցի։ || Խըր ըսելէ թէ, յի բնակելովը ծաղիկ անուանեալ քաղաքին մէջ, ճշմարիտ կըսայ մարդարէից խօսքը, իբր թէ ծաղիկ կամ ծաղիկեցի կոչեսցի։

### Հ · ՃԷ

**Վ**արք քն տէրն մեր փարիսեցիին առւնը հրաւիրվէր էր, և այն տէղ գտնրվող օրինականները յանդիմաննելով ըսաւ, || Վայ ձեզ, զի շնորհ զշերիմն մարդարէից, և հարքն ձեր սպանին զնոսա ։ ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց ։ զի նոքա կոտորեցին զնս, և գուք զգերեզմանս

նոցա շինէք . զլ-կ . ժ-թ . 47 || : Ա . բդ՝ այն օրինականաց հարբը  
որ մարդարէները ըստաննեցին , այն պարտաւոր են . բայց  
տղայքը՝ որ անոնց գերեզմանները կը շինեն , ինչ յանցանք  
ունին , որ անոնց աւ վայ կուտասյ :

Պ . Պարաչար սպաննըված մարդցին՝ փառաւոր գերեզման  
շինելուն չորս պատճառ կուտան վարդապետք , որ և յար-  
ատքին պարագայից յայտնի կըլլան :

Ա . ախ՝ հնար է շինվիլ միոցն սպաննըվօղին փառքին հա-  
մար . ինչպէս որ նախնի քըլիստոնեայք մեծ մեծ գերեզմաններ  
կը շինէին ՚ի փառս և ՚ի միշտոտակ սրբոց մարտիրոսաց :

Երկրորդ՝ փառաւոր գերեզման կը շինվիլ յանիրաւի ըս-  
տաննըվօղներուն , որ սպաննողին յանդիմանութիւն ըլլայ , և  
ըստ բաւականին հատուցումն ըլլայ այն անիրաւաբար մեռնո-  
ղին , իբր կեանք չի կըննալ տալով մարմնցն փառք տըլված-  
ըլլան : Քն այս երկու կերպին համար չի խօսիր այս տեղ՝ որ  
գովելի են , քանզի կը պախարակէ գերեզման շինելու :

Երրորդ՝ կընայ մարդ հցակապ գերեզման մը շինել  
սպաննըված արին փառաւորութէլ համար , բոյց պարզապէս  
հպարտութէն մաօք՝ որ ուրիշին առջին մեծագործ և բարեպաշտ  
համարվին . այսպիսի հպարտութէլ թէպէտ պարստուելի է ,  
բոյց մարդասպանութեան հետ կամակցութիւն ունենալ չէ :

Չորրորդ՝ այսպիսի մեծածախ գերեզմաններ կը շինեն ,  
ոչ եթէ սպաննըվօղին փառքին համար՝ այլ սպաննողին կարո-  
ղութիւնը ցցց տալու համար , իբր ըսել կամելով թէ իմ  
նախնիք այնպիսի կարողութէն տէր էին , որ կըցան այսպիսի  
փառաւոր մարդկանց կեանքը վերցունել , որովհետեւ իրենց  
կամացը հակասակ եղան . և այսպիսի չար պարծանօք հասարա-  
կութիւնը իրենցմէ կը վախցունեն . այս մոօք սպաննըվօղնե-  
րուն վրայ գերեզման շինելը , հաւանութիւն և կամակցութի  
ցցց կուտայ սպաննողին հետ :

Վ . հա այսպէս էր և փարիսեցոց կամ օրինականաց գե-  
րեզման շինելը մարդարէներուն մարմնոյն վրայ , և այս պատճա-  
ռաւ քն յանդիմանեց զիրենք , և ըսաւ , || Ապա ուրեմն վկայէք  
եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց , զի նոքա կոտորեցին  
զնա (այսինքն զմարդարէս) , և դուք զգերեզմանս նց շինէք || :

### Հ . ՃԸ

Պապիրք և փարիսեցիք էրք կը հարցընեն քի շնացեալ  
ինո՞լը համար , աւետարանիչը կըսէ՝ || Ի խոնարհ նայելով

ԴԵՒՅ մատամբն յերկրի . ահ . ը . 6 || : Խնչ պիտի հասկընամք  
այդ գրութեամբ :

Պ . Ա մանք կըսեն թէ՝ աւետարանը պարզաբար կըսէ , թէ  
|| Յիսուս գրէր մատամբն յերկրի || : Բայց անյարմար չէ այս  
կարծիքը ոմանց , իբր թէ այն աեղ՝ որ այնքան ժողովուրդ  
կայր , փոշիով լցուն էր , և այն փոշիին վրայ մատամբ գրե-  
լով աշքի կերևար դիմերը . և կամ ըստ ոմանց՝ ածային աջն  
երեւելի գոյն մը կը տարաւորէր այն գրված գիրերուն վրայ ,  
որ գիւրաւ մը կարդացվին :

Վ . ՃԼ ԻՆՑ էր գրածը պիտի ըսես . կերեւի թէ այն ամբաս-  
տանօղ մարդկանց գաղանի մեղքերը կը գրէր . քանզի ըստ  
աւետարանին՝ առաջին անգամ գրելէն եաքը ըստ Ժիսուս ,  
|| Անմեղն ՚ի ձէնջ նախ նա ընկեցէ քար ՚ի վր գորս || . և գարձ-  
եալ սկսաւ գրել : Երբ լսեցին ամբաստանօղը այս խօսքը ,  
ամենն աւ մշկիկ մշկիկ անկից զատվեցան : Եւ թէ ինչէ՞ն վախ  
ցան , կամ ինչո՞ւ ուրիշ հարցմաւնք մը չի կըցին ընել , յայտնի  
է՝ որ իւրաքանչեւը որ իւր գաղանի մեղքերը գրված տեսաւ :

### Հ . ՃԹ

Վ . Րիստոս բժշկեց Գերդեսացւոց երկրին մէջ գիւտհա-  
րը , ինչպէս որ կըպամէ Մարկոս աւետարանին , գլ . եւ :  
Վ . Ճս գիւտհարին ունեցած գեւերը շատ էին , և երբ գիւտ-  
հարը քի գէմ եկաւ , սկսան գեւերը տղաչել քի , և ըսել ,  
|| Զի մի' առաքեսցէ զնոսա արտաքս քան զայխարհն || . և այն  
աեղ խողի երամակ մը կայր , հրաման ուղեցին՝ որ գիւտհարէն  
ելլան , այն խողերուն փորը մանան . այս գիւտաց երկու աղա-  
շանքը քս ընդունեց : || Եւ իւրեւ ելլն (կըսէ) այսքն պիղծք ,  
մտին ՚ի խողսն , և գիւմեաց երամակն ՚ի գարեւ անտի ՚ի ծովին ,  
և հեղձնուին ՚ի ծովին || :

Վ . Ճմ երկու հարցմաւնք ունիմ այս ըանին վրայ : Վախ  
քս ինչո՞ւ գիւտաց աղաշանքը ընդունեց : Երկրորդ՝ գեւերը  
որ իւրենց ուղելովը՝ խողերուն փորը մանան , և այն խողերն աւ  
ծովը խղղըվեցան , ատոնց տիրոջը յանցանքը ինչ էր , որ  
այդ վնասը կըեցին :

Պ . Վ . Րիստոս գիւտաց աղաշանքը ընդունելով երկու բան  
մեղի իմացոյց . մէկ մը որ առանց իւր թոյլառութեր գեւերը  
իշխանութիւն չունին ամենեւին մէկը տանջելու , կամ փոքրիկ  
ինչ արտաքսոց ինսան մը հասցունելու : Ոխո՞ւ աղէկ իմանան

կախարդաց հետեւօղները , և պառաւանց բերանով չի խօսին՝  
թէ չարը չարով կը փրկըլի:

Եշրկրորդ՝ միտքը աղաշանք ընդունել չէր . գեերը գի-  
տէին՝ որ յա քա մարդացեալն ած ՚ի կատարածի աշխարհիս՝  
երբ դաստողական աթոռը նստի՝ դատել զարդարս և զմեղաւո-  
րըս , այն ժամանակը աշխարհիս վրոյ կամ օդոյն մէջ եղած-  
դուերը պիտի խրկըլին դժոխային յաւիտենական անհանդին  
մէջ բոյց երբ ըլլալը չի գիտանալով կարծեցին թէ այն ժամա-  
նակը պիտի խրկէ . և դիւաց կարծիքը այսպէս ըլլալը իրենց  
խօսքէն յայտի կըլլայ , որ ամենինը մէկէն ըսին , || Զի՞ կոյ մեր  
և քո՞յ յա որդի այ , եկիքը տարածամաննշել զմեղ . նառ . ը . 29 || :  
Խըր տուանց ժամանակի եկար մեղի դժոխաքը խրկելու , և անոր  
համար աղաշեցին , զի՞ մի՛ առաքեսցէ զնոսա քան զաշխարհն .  
ապա քրիստոսի միտքը աղաշանք ընդունել չէր :

Եշրորդ՝ որ ըսիր , թէ խողերուն տիրոջը յանցանքը  
ինչէր : Վ. յն գերդեսացւոց երկիրը՝ Եբրայեցւոց ազգին էր ,  
բոյց և հեթանոսոք ալ կը ընակիին . յայտնի չէ՝ թէ խողերուն  
տէրերը Եբրայեցի՞ էին թէ հեթանոս : Եթէ Եբրայեցի էին ,  
յայտնի է որ հին օրինաց մէջ արդիկեալէր Եբրայեցւոց խող  
ուաելը , քանզի պիզճ կենդանի է . ապա մեղաց պատճառ . և  
օրինազանցութեան ինչք ըլլալուն համոր՝ ած խզդել տըլու-  
այդ կենդանիները , որոց տէրերը զգաստանան , և յի՞ օրէնադիր  
և տէր օինաց ըլլալը գիտնան . քանզի շատ կը պատահի՝ որ  
մեր հոգեւոյն կորսաւեան պատճառ . Եղող ասացուածքը կամ իշ-  
խանութիւնը՝ ած մեր ձեռքէն կառնէ , որ զգաստանաք :

Եթէ հեթանոս էին խողերուն աերերը , ուզեց ած՝ որ  
այս երկելի գործով . որ երկու հաղոր խողէին , այն հեթա-  
նոսները քի՞ ամենակարօղ զօրութիւնը իմանան , և առ և արա-  
րիչ արարածոց խօսաւուանին , քանզի աւեւարանիչն կըսէ այս  
այսպէս ըլլալէն եաբը . || Եւ խողարածքն իմաստեան . և պատճե-  
ցին ՚ի քաղաքին և յագուրակս , և ելին տեսանել զի՞նչ իցէ  
որ գործեցաւն || : Վ. հա՞ այս է երկու կերպ հարցմանդ պա-  
տասխանին :

## Հ . ՃԺ.

Յիսուս՝ Յովաննէս աւեւարանչի համար ըսաւ , || Կամիմա  
զի կացցէ դա՝ մինչեւ ես դամ . 28 . ի 22 || : Վ. նշպէս իմա-  
նալ պէտք է այս խօսքը :

Պ. Այս բանին միտքը սրբազն հարը և մեկնէք պատկեռ  
կը գըեն . Յովհաննու կւանիքը բռնութեամբ չի բարձրվի , այլ  
պահի մնայ մինչեւ յա դայ՝ և քաղցը և խաղաղական մահուամբ  
տանի : || Կամիմ զի կացե դա՝ մինչեւ ես դամ || . իր թէ՝  
չեմ կամիր՝ որ ուրիշ առաքելոց նման մարաիրոսական չարչա-  
րանօք աշխարհէս ելսոյ , այլ մնայ պիտի մինչեւ ՚ի խաղաղական  
արձակումն իւր մարմնցն . երբ ես դամ , տանիմ պիտի զինքը  
՚ի յաւիտենական երանութիւնն :

## Հ . ՃԺԸ

Հիսուս ըստ Պետրոսի , || Լուացելցն չէ ինչ պիտոյ ,  
բայց զի զոտսն լուանացյէ . աջ . ժդ . 10 || : Այս բանին մեկ-  
նութիւնը ինչ է :

Պ. Պետրոս լուացեալ էր մկրտութէ , սուրբ էր՝ սրբարար  
չնորհաց միջնորդութէ . և ով որ այն չնորհը անարատ կը պա-  
հէ , ամենեին ոք է՝ և չէ ինչ պիտոյ . եթէ ոչ՝ զի զոտս լուա-  
նացյէ ըսելով , ցցց կուտար ներելի մեղաց փոշին և անկատա-  
րութիւնը , որ սրբոց վրայ կը գտնըլի քանի որ այս աշխարհիս  
մէջ են : Եւթէ՝ գլուխ ինքն քն է , և առաքեալք և բոլոր  
հաւատացեալք տնդանի նը , առա անդամոցն արժան է լըլաց-  
վել և սրբիւ յաղտոյ , զի գլուխն է ամերիծ և անարատ :

## Հ . ՃԺԲ

Վ. Երիստոս տրն մեր իւր կենարար քարոզութէը մէջ երբ  
սերմանց առակը կը խօսի , Յաք . դ . 3 : Վրակին խօսքը լըմին-  
ցունելին ետքը՝ ժողովուրդութը կը ցրուին , և աշակերտները  
առանձին կը հարցըլնեն առակին մեկնութիւն , և քն ալ կը պա-  
տասխանէ այսպէս . || Զեղ տուեալ է գիտել զիսորհուրդս ար-  
քայութեան երկնից . և նոցա չէ տուեալ , եթէ ոչ առակօք || :  
Տարակուսութիս այս է , եթէ չի հաւատացողներուն չէ տու-  
եալ գիտնալ , առա ինչ յանցանք ունին չի հաւատալ մինին :

Պ. Եցա ոչ է տուեալ ըսածը՝ մի՛ իմանար , թէ այնպիսի-  
ները արդիլեալ են ՚ի հաւատալոյ . կամ աղատ անձնիշխանութիւն  
չունին՝ որ հաւատան , քա՛ւ լիցի . քանզի ած կամի՛ || Զի ամ-  
մարդիկ կեցցեն՝ և ՚ի գիտութիւն ճշմարտութէ եկեսցեն || . բայց  
այն արտաքնոց տուեալ չըլալը , իրենց խստասըտութիւնը և  
յամառութիւն իմացիր , որ իրենք իրենց կտանցը պատուհանը

կը գոցեն , որ ճշմարիտ հարատաղ ճառագայթը իրենց սրախն մէջ չի մտնայ . բայց հարցմանդ մեկնութիւն այսպէս կուտան ածաթանք , իմանալով ՚ի վերայ որդւոց փրկութեան և որդւոց կորստեան . իբր թէ ոմանք՝ որբ երկնից արքայութե խորհրդագոցը հաղորդ եղած են , ՚ի յաւիտենից սահմանեալ են , և հաղորդ չեզօները անարգեալ են :

Եւ ոմանք ևս կըսեն , թէ առաքեալք առաւելագոյն գիտութեց արժանանաւոր էին , բայց ուրիշները արժանաւոր չէին : Վոաքեալք արժանանաւոր էին՝ քանզի լսելով շահեցան և իմացան , և ցանկացան լսել և իմանալ առ ՚ի շահիլ դժոգեռական օգուտ , և բոլորով սրտիւ կուղէին՝ որ իրենց հոգւցն աչքը լուսաւորվի : Իսայց ուրիշները անարժան էին , քանզի չէին շահեր , և չէին խնդրէր այն շնորհաց լցուը՝ որ իրենց մտացը մէջ ճառագայթի , և իմանան . ապա այնպիսեացն ալ ծած կեալ չէին այն երկնից արքայութե խորհրդաց ծանօթութիւնները , այլ միայն առակօք կըսվէր իրենց . որբ կըսնոյին քննել և խնդրէլ . և եթէ խնդրէին՝ արժանի պիտի ըլլային :

Համառօտ մը ըսեմ , խորայէլացւոց ազգին համար եկաւ քայ յաշխարհ , ինչպէս որ ինքն կըսէ , || Ո՛չուրէք առաքեցայ , եթէ ոչառ ոչխարս կորուսեալս տանն Խորայէլի || . բայց իրենք որ ընդունեցին , մի՛ թէ հեթանոսք՝ որբ յետոյ եկան ՚ի հաւասար , ընդունելի չեղան մի , քամ լիցի . այլ ընդունելի ըլլալ նուն եաբը , եկեղեցին ևս՝ եկեղեցի հեթանոսաց լավեցաւ . այս պատճառաւ սրբազն աւետարանին Յովհաննէս կըսէ . || Յիւրան էին , և իւրքն զնա ոչ ընկալան : Խոկ որբ ընկալանն զնա , ետ նոցա իշխանութիւն որդիս այ լինիլ || :

Խւրբն ըսածը , բուն Եբրայէցւոց սիրելի ազգն էր , որ ոչ միայն ընդունեցին , այլև վերջապէս ինչոր ըրին՝ յացանի է : || Խոկ որբ ընկալանն || , ահա հեթանոսաց ազգն է , ոչ թէ միայն ինքն ալ անոնք ընդունեց , ոչ թէ միայն պատուեց , ոչ թէ միայն սիրեց , այլև Ետ նոցա իշխանութի՝ որդիս այ լինիլ || : || Խւրեմի՝ Նոցա ոչ է առւեալ ըսածը՝ մի՛ իմանար ՚ի կողմանէ այ խնայէլ , քանզի զարեգանի իւր ծագէ ՚ի վերայ շարաց և բարեաց , այլ ՚ի կողմանէ չարութեան սրաից նոցա :

### Հ . ՃՃԳ

Ա ՃՆԷ կուրին աչքը լուայած աւաղանին անունը ինչո՞ւ Սելովամ կըսվի :

Պ. յապէս կըսեն , թէ Եսացի մարդարէն չե ողացվելէն յառաջ երբ բանտին մէջ էր , ծարաւեցաւ և ջուր խնդրեց . հրամանաւն աստուծոյ այն տեղ ջուր բղխեցաւ , և ըսլեցաւ Աւալ , որ թարգմանի առաքեալ , որովհետեւ աստուծմէ Խըր կըլեցաւ ՚ի պատիւ մարդարէին :

## Հ . ՃԺ.Դ.

Ասւիթ՝ սրբազն առաքելոց համար ՚ի դիմաց քի այսպէս կըմարդարէանայ . || Սուր Երկասյրի ետ ՚ի ձեռս նց , առնուլ զշտուցումն ՚ի հեթանոսաց || . այս ինչ կերպ հատուցմունք՝ կամ պատերազմական յաղթութիւն իմանալու է :

Պ. յապէս կըսէ Օդոսաթինոս . „Հեթանոսք սպանեալ լինէին՝ մինչ քրիստոնէայ լինէին . վազ զի խնդրեմ զշեթանոս , և ոչ գտանեմ , ուրեմն մեռեալ է հեթանոսն . Օ ի Եթէ ոչ սպանեալ լինէին , զիսարդ ասի ցԳետարսա՝ զէն և կէր : Այս պէս սպանաւ Գօլոս հալածօղն , և յարեաւ Գօլոս քարոզիչ :

## Հ . ՃԺ.Ե

Քրիստոսի ողջացուցեալ կուրին համար , որ ՚ի Բեթսայիդայ՝ այսպէս կը գրէ աւետարանիչն Մարկոս . „Հայան զեցըն արտաքոյ շինին , եթուք յաս նը , և ձեռն եդ ՚ի վերայ նը , և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ինչ : Քացաւ և ասէր , աւ սանեմ զմարդ իկ զի շրջին իբրև զժառու : Դարձեալ եդ զձեռն ՚ի վր աչաց նը . երաց՝ և տեսանէր , և ողջացաւ . և տեսանէր համարձակ զամ : Տարակուսութիւննիս այս տեղայս է , ուրիշ հրաշքները միտին խօսքով կընէր , այս ինչո՞ւ թուքով ըրաւ . ինչո՞ւ յառաջ կիսատ բացաւ , և ինչո՞ւ շինիրէն դուրս հանեց :

Պ. յա հրաշքը թուքով ընելին պէտք է որ խնանանք , զի քրիստոսի ածային անձին հետ միաւորեալ մարդկային բնութիւնն ևս հազորդ էր ածային ամենակարօղ զօրութեանը , որ ինչպէս ըստ որում ած բանիւ կը բժշկէր , նցնապէս նցն մարդացեալն ած՝ իւր մարդկային բնութեն թուքովն ևս ածապէս հրաշք կը գործէ . ուրեմն երբ յի համար մարդ՝ կամ որդի մարդոյ կը լսես , նցն և կտարեալ ած խնայիր : Եւ ոչ եթէ միայն մարդկային բնութեան մարմառվը ած ային հրաշք կը գործէ , այլև այն մարմառն ունեցած հանդերձիւն . ինչպէս որ տեռատես կինն ՚ի քանցս հանդերձին մերձենալով փրկեցաւ իւր ախտէն :

Եւ ինչո՞ւ համար յառաջ կիսատ բացաւ աչքը այն պատ-  
ճառաւ եր՝ որ կցըը տակաւին կատարեալ հաւատք ըունէր քի  
ածութեր վրայ , վե որոյ յառաջ կիսատ հրաշք մը ցցց տըվաւ  
իրեն , որով զօրանայ և կատարեալ հաւատք ունենայ , և ապա  
աչքին բժշկութե կատարեալ շնորհին արժանի ըլլայ : Եւ այս  
այսպէս ըլլալը կուրին խօսքէն յայտնի է՝ որ ըստ , || Տեսանեմ  
զմարդիկ՝ զի շրջեն իրըև ղծառս || . որ իւր հաւատքին որպի-  
սութին էր այն տեսքը , որ տակաւին ծառի նման օդցն կատ-  
ված էր հասաւատութիւնը . և այսքան տեմնալովմը՝ որ ՚ի բնէ  
ամենեին կցը էր , այն ժամանակը կատարելապէս հաւատաց՝ և  
կատարեալ շնորհին արժանի եղաւ :

Խակ շնորհէն գուրս հանելուն համար բարոյականատպէս  
պէտք է իմանալ . որ եթէ կամք ունենամք հոգեւորական կու-  
րութենէ աղատիլ և ածային շնորհաց լուսցն արժանի ըլլալ ,  
պէտք է աշխարհական հեշտութենէ գուրս ելլալ , ուղիղ մաօք  
ածային խոկմանց պարապիլ , և միշտ անկեղծ սիրով առ ած-  
միաւորիլ : Եւ ոչ եթէ ձգնաւորը և միտնաւունք կըրնան ունե-  
նալ աշխարհէւս հեռանալով , այլև ամ մարդ կըրնայ այսպիսի  
կեանք վարել . ահա նահապեաք՝ ոք թագաւորը՝ և ընտիր իշ-  
խանք , ոք աշխարհի մէջ ապրելով , աշխարհի մէջ վախճանե-  
լով , երկնային պահատց արժանի եղան , և ոք եկեղեցին անոնց  
յիշտաակը տօնիւ և պատուով կը կատարէ :

#### Հ . ՃԺԶ

**Պ**րկիչն մեր Եսայի մարդարէին բերնովը իրեն համար  
կըսէ , || Հոգի ոն ՚ի վրէ իմ , վե որոյ և էօծ խակ զիս , աւետա-  
րանել աղքատաց տառքեաց զիս . Էսայ . կա . 1 || : Այի թէ միայն  
աղքատաց աւետարանելով համար եկաւ , ընդհանրապէս զինքը  
ընդունողներուն համար չեկա՞ :

Պ . **Ա**ստուածաբանք՝ աղքատ բառով հեթանոսաց աղքը կի-  
մանան , ոքը մեղաց համար աղքատաց . և թողված էին ՚ի փլր-  
կութենէ և ՚ի շնորհաց : Եւս ոմանք հոգւով աղքատները կի-  
մանան , քանզի անոնց աւետարանեց քո՛ երանութիւր ըսելով ,  
|| Երանի աղքատաց հոգւով զի նց է աղքայութին երկնից || :  
Հնոր է այս տեղ իմանալ և յատկապէս աղքատները , որոնք  
քրիստոնի սիրոյն համար ձգելով ամենն բան՝ չարչարանաց  
խաչը յօժարութեամբ կը կը են :

## Հ • ՃՃԵ

Վրիստոս ինչո՞ւ համար իւր մարդեղութե օրերուն մէջ առաւելապէս խորհրդակից ըրաւ իւր աշակերտներէն՝ զետրութե Յակոբոսը՝ և Յովաննէսը ։ ինչպէս այլակերպութե օրը հետք առաւ, որում վկայեն Մատթէոս՝ Մարկոս և Ղուկաս ։ Եւ ՚ի գեթսեմանի, ոոյ վկայէ Մարկոս ։ ժդ ։ 33 ։ Եւ ՚ի առն ժողովրդապէտին, որպէս վկայէ Ղուկաս ։ լ. 51. և այլն :

Պ. Յապէս ուսաք ՚ի մեկնութե աղօթից ննջմանն Յովհաննու աւետարտնչին, թէ քո կամեցաւ՝ երկնային հրեշտակաց դասուց կարգը՝ երկրիս վրայ ևս ՚ի պատիւ պաշտաման իւր նկարել, սցսինքն ինչպէս ՚ի յերկինս ուսաք զի՞ դասն և զերիս կարգն անընդմիջաբար ՚ի պաշտօն ածութեն միշտ հետևեալ, որք կըսվին Աթոռք՝ Քերովրէք՝ Սերովրէք, և ասոնց միջնորդութեամբը ստորին դասուց հաղորդեալ :

Ա. Համան առ ՚ի յարմար օրինակ՝ երկրի վրայ ընտրեց զետրոսը՝ Յակովոսը՝ և Յովհաննէսը՝ իւր խորհրդոցը խորհրդակից, որոնցմէ և կըսորվէին և միւս առաքեալնէրը, ըստ օրինակի երկնային դասակարգութեցն հրեշտակաց :

## Հ • ՃՃԲ

Վրիստոսի աձեցուցած հացէն աւելցած փշրանաց եօթն զամբէիւղը ո՞ւր մնաց :

Պ. Յակոբ ածարան կը վկայէ, թէ Կոստանդնուպոլսոց մէջ կոթող (աէքիլի թաշ) մը կայ՝ Վէղիր խանին մօտ, այն կոթողին նեցրեն է. և այն եօթն զամբէիւղը հոն ըլլալուն նշանը՝ այն կոթողին եօթնագօտի (եօթը աղօղումիու) ըլլալն է։ Եւ կըսվի՝ թէ ժամանակաւ դեսպան մը կուգուց քրիստոնէից տէրութեն, և այն կոթողին մօտ տեղմը կը բնակի՝ այն զամբէիւղները և օրհնեալ հացը համնելու համար, այլազգները իմանալով կարգիլեն, և այն տեղն ալ պանդոկ (խան) կը շննեն, և այն պատճառաւ կլէիսան կանուանեն :

## Հ • ՃՃԹ

Ա. Եծատանը և զաղարու առակին մէջ ինչո՞ւ Ղաղարու տնունը կը յիշվի, և մեծատանը անունը չի յիշվիր :

Պ. Եծատանը անունը յիշատակելու արժանի չըլլալուն համար չըավեցաւ. քանզի ած Դաւիթ մարդարէին քերանուլը

այսողիսի ամբարշտաց համար կըսէ ։ ॥ Ո՛չ յեւցից զանուանունոցա ՚ի շրթունս իմ ։ առջ ։ ժէ ։ 4 ։ :

### Հ ։ ՃԻ

**Ա**յդ առակին մէջ մեծատանը համար կըսի, ॥ Մեռաւ մեծատանն և թաղեցաւ ՚ի գժոխս ։ ամբարձ զաշսն իւր մինչ ՚ի տանջանան էր, ետես զ Աբրահամ ՚ի հեռաստանէ, և զ Պաղարոս ՚ի գող նորա հանգուցեալ ։ ինչպէս կըրնայ ըլլաւ այս աեսութիւնը:

**Պ**ղքտտ Վազարսի միիթարութիւն մտաւորական տեսութեամբ ցուցցյ ած՝ այն մեծատանը, և ոչ թէ մեղի պէս զգալի աչք և հայեցողութիւն էր ։ բայց որովհեան որքան որ ՚ի մարմնի եմք, խմանալի եղած իրերը զգալի կերպով միայն կըրնայ խմանալ վէ որոյ մարմաւորաց կերպով կըպատճիւնի մեղի։ Եւ մեծատանը խօսիլը Աբրահամու հետ և Աբրահամինը մեծատանը հետ զգալի ձայնի և բերանոյ խօսակցութիւնի խմանար քանզի հրեշտակները և գեւերը և մարմինէն զտաված հոգիները մէկ զմէկու հետ կը խօսին, և խորհուրդնին մէկ զմէկու կը հաղորդեն, բայց ոչ մեղի նման բարձր ձայնիւ։

**Դ**իւրին օրինակ մը ըսեմքեզի ։ երեմն կըպատահի՞ որ դիտաւորութիւդ մէջ ամենեին չի գտնըլած ։ և չի խորհած խօսք մը կը խօսին հոգեւորական օգուտի յարմար և այ կամացը հանցյ այն ժամանակը կըսեմքէ լեզուի ճարտարութիւն կամ մտաց հանճարոյ պտուղ չէր այս խօսքը, այլ յատուկ աստուծէ շնորհ մի էր, և կըսեմքէ լեզու արքաւու քեզի այն խօսքը ։ արգելոք մէր խօսակցութիւն նման արտաքերական ձայնիւ սորովեցցյ՝ ոչ ։ ահա և զտաված հոգիներուն խօսակցութիւն ալ այսպէս խմացիր։

### Հ ։ ՃԻԱ

**Ը**տերը ՚ի ուց հարց՝ իրական պատմութիւնը կը համարին այս եղելութիւնը, կուզեմոր այս տարակուսութիւն ալ ըսւծես ։ Աեծատունը կըսէր Աբրահամին ։ Աղաչեմզքեզ հայը, զի արձակեսոցէս զքա (զավար) ՚ի տուն հօր խմաց ։ են իմ անդեղքաբը հինգ, որպէս զի տացէ նոցա զվայցութիւն, զի մի և նորա գայցեն յայս աեզի տանջանաց ։ զակ ։ ժկ ։ 27 ։ Արդ՝ այն դժոնացին չաղջարանաց և պատակման մէջ ինչ միոք պիտի ըլլայ այդ խնդիրը։

Պ. Եղի խնդիրը առաքինական սիրոյ պառող չըլլալը յայտնի է . քանզի եթէ առաքինի ըլլար՝ իւր կենդանութելը չէր թողուր՝ որ աղքատ Ղաղարոսը այն թշուառութելը մէջ մնաց : Խայ ըսող՝ թէ բնական սիրոյ պառող է այդ խնդիրը . իւր թէ ինքը այն տանջանացը արժանացաւ, կը խնայէր որ եղայրներն ալ չե գան . բայց այս մեկնութիւնին ալ հաւատալը ինծի դժուար կերևայ . քանզի գիտեմք՝ որ նեղութեն պատճառաւ հայրը որդին ծախած է, և ի՞նչ կերպ նեղութի՞ն ոչ դժոխյին և յաւխանական, այլ անցաւոր և աշխարհային, որ բոլորովն բնական հայրական սէրը ոտքի ներքեւ առնել կուտայ, որոնց զի ինքը քիչ մէ հանգչ . և ոչ թէ միայն ծախել այլ սնօթութե պատճառաւ մայրո կը մորթէ մանուկը՝ և կուտե . դ . թագ . դ . 28 : Վայ ինչպէս բնական սիրոյ պառող խմանամք, եթէ նեղութեան մէջ եղօղ մոյրը անխիղոք կը մորթէ զաւակը :

Ոմանք ևս կըսեն, որովհետեւ ցաւոց մէջ եղողը՝ երբ կը տեսնայ իւր մերձաւորն ալ նեղութեան մէջ, իւր տանջանքը տառաւել կը շտանայ . այս պատճառաւ խնդիրեց մեծատունը, որ իւր եղայրները այն տեղ չե գան : Վ. Ալք ևս կըսեն, իբր նենդաւոր մաօք ըրաւ այդ խնդիրը, որ Ղաղարոս իւր առաջին թշուառութելը մէջ երթայ իյնայ : Բայց ինծի առաւել հաւական է այս միտքը . քանզի այն մեծատունը իւր սովորական մեղքերէն զատ՝ նոր հնարած մեղքեր ալ ունէր իւր տանը մէջ, և եղայրներն ալ իրմէն սորվելով միշտ կը գործածէին . և անոնց օր ըստ օրէ գործածելով՝ իւր տանջանքը կեվելնար, որովհետեւ հաղորդ էր այն մեղքերուն, իւր հնարածը ըլլալուն համար . այս պատճառաւ աղացեց՝ որ Ղաղարոսը խըրիէ, և երթայ իւր եղասրը պատմէ քաշած տանջանքը . և իւր հնարած մեղքերէն հեռի մնան, որով շաճի իւր տանջանացը սասակութիլ . և ապա իրենիք ալ հշմարութեն հետեւն՝ որ այն տանջանացը հաղորդ չըլլան :

## Հ . ՃԻԲ

Վ. Ետարանին մէջ քն կըսէ, || Ո՞ր առաքեացն զիս՝ ընդիաէ, ոչ եթող զիս միայն . աջ . ը . շջ . : Վայ ինչո՞ւ համար խաշն վրայ ըստ . || Ած իմ՝ ած իմ, ընդէլը թողէր զիս || :

Պ. Ռուռնելոս այս հարցմանդ սյսպէս պատասխան կուտայ . || Քը իսաստ խօսէր ՚ի բերանց մարդկային բնութեան, որոց եղեալէր երաշխաւոր || : Կայսրէս և ոքն Շնորհալի կը վեցիր

ըսելով . || Ելի Ելի աղաղակեր , իմովս ընդ իմ զհայր աղաչեր || :  
Իմովս ընդ իմ ըսելը , իբր մարդկային քնութեամբա՝ մարդ-  
կային քնութեան համար հօր աստուծոյ կաղաչեր :

### Հ . ՃԻԳ

Վրիսոս իւր աշակերտացը կըսէ . || Որ հաւատայն յիս ,  
զգործոն՝ զըր ևս գործեմ , և նա գործեսցէ , և մեծամեծս  
ևս քան զնոյնս գործեսցէ . յօհ . ժ-դ . 12 || : Յայտնի է՝ որ  
հաւատացող շատ եղաւ , բայց յի հրաշքներէն մեծ հրաշք  
ովլ գործեց :

Պ . Յ-Դ Հարցմանդ այսպէս կըպատասխանէ Ոսկեբերան .  
” Վաղ եթէ յերկուացի ոք ընդ մեղ , եթէ ուրանօր առ զկա-  
տարութն պատգամէ այդ , ՚ի ձեռս իւր առցէ այնպիսին ըզ-  
” գիրսն զայն՝ որ գործք կոչի առաքելոց , և ունին գիրքդ այդ՝  
” ոչ զամ միանդամայն , այլև ոչ զամենեցուն նոցա . այլ զմիոյ  
” կամ զերկուցն՝ և այն շափաւոր . և տեսցէ ապա զիօթաց-  
” եալսն՝ որք ՚ի մահին իւրեանց անկեալ դնիցեն , և ստուելը  
” միայն երանելեացդ այդոցիկ (այսինքն առաքելոց) շարժեալք  
” ՚ի վերաց նոցա , և անդէն ՚ի քաջողլութի անդը հասատես-  
” ցեն զնոսա : Բաղմաց և յայսահարաց անտի , ոչինչ այլ իմիք  
” պետք էին՝ բայց հանդերձիցն Պողոսի ՚ի հալածել զդեւն՝ որ  
” լիկերն զնա : (Ճառ Ագոնց Ստեփանոս վարդապետն գրէ . )  
” Ու միայն հիւանդը բժշկեցան լոկ ՚ի հովանւոյ Պետրոսի ,  
” այլև էրինք շարժեցան ՚ի տեղուոչէ իւրեանց՝ բանիւ Գրի-  
” գորի սրանչելագործին , և աբրամ Մարկոսի , և այլ անբա-  
” հրաշք եղեն ՚ի դարձ աղջաց և աղանց՝ ՚ի ձեռն առաքելոց  
” և առաքելագործ արանց :

### Հ . ՃԻԳ

Վորոտաց համար հին օրինաց մէջ այնպէս հրաման կընէ-  
ած Սովորէսի , որ շէնլիքէն գուրս ըլլոյ բորոտին բնակարանը՝  
այսպէս ըսելով . || Աբասաքց բանակին եղիցի ընակութիւն նը .  
շետք . ժ-դ . 46 || : Խնչո՞ւ քո՞ւ երբ բեթանիաց եկաւ , Սիմօն  
բորոտին տունը բաղմեցաւ . հար . ժ-դ . 3 :

Պ . Արքաղան մեկնիչք հասարակաբար այսպէս կարծիք ու-  
նին , թէ այդ Աիմօն ըսածը՝ որ բորոտ կանուանի , այն ժա-  
մանակը բորոտ չէր , ոյլ յառաջուց բորոտեալ և բժշկեալէր .

և բորոտ անունը իբրև մականուն վըսան մնացեր էր : Աշ թէ՝ Սիմօն բորոտ էր այն ժամանակը , և ըստ օրինաց շենլիքէն դուրս բնակելով իւր տունը պարապ էր , և հոն հրաւիրեցին յար . իբր թէ ըսել կուղեն՝ թէ Սիմօն բորոտը չէր յար հրաւիրօղը . այլ ուրիշ երկելի մարդիկ ուղեցին հրաւիրել յիսուսը իւր բոլոր պարագայիւրը , և Սիմօն բորոտին տունը պարապ ըլլարով՝ այն տեղ հրաւիրեցին :

Վայ երկու մեկնութելը որը կը հաճիս նէ՝ այն ընդունէ՛ , դիմալով՝ որ յիսուս օրինաց գէմ բորոտին հետ չի նստաւ :

### Հ ։ ՃԻԵ

Պը յիսուս էրը յԵրուսաղեմ եկաւ , աւետարանիցները կըսէն՝ թէ Բաղրումք ՚ի ժողովութոց տարածեցին զհանդերձս իւրեանց ՚ի ձանապարհին : Այդ հանդերձ տարածելը գըրական մեկնութեամբ ի՞նչ խմանավիք :

Պ. Այսպէս կըսէն , թէ սովորութիւն է քաղաքացւոց՝ որ յաղթութէ գարձող թագաւորը էրը նորէն կը մտնայ քաղաքը , ձանապարհին վըսյ աւագ կը տարածեին , և աւազին վըսյ ասպրշեղէն կերպասնէր և ուրիշ գեղեցիանկար օթոցներ կը սփռէին , և կանաչ ծառերու բողըոջներ կը ձգէին : Ասյց քի քաղաքացիները՝ իրենց թագաւորին նման աղքատ ըլլարով , իրենց հանդերձները տարածեցին ձանապարհին վըսյ՝ ՚ի նշան պատուց թագաւորին իւրեանց , և ՚ի նշան ջերմեռանդութեան սրտից իւրեանց :

### Հ ։ ՃԻԶ

Այն գալստեան օրը՝ արմաւենւոյ և ձիթենւոյ ոստեր առին դիմացը գացողները . այս ի՞նչ միաք պիտի ըլլայ :

Պ. Արմաւենւոյ ոստով պատիւ տալով կիմացնէին՝ թէ մէր եկող թագաւորը արդար և յաղթողէ . քանզի հին ժամանակաց մէջ յաղթութիւն ընող թագաւորներուն արմաւենեք պատիւ կուտային : Ձիթենւոյ ոստերով՝ քի ողորմածութիւնը կը պատուէին , որովհետեւ ձէ թը ողորմութեան նշանակ է . այս պատճառուաւ կոյրերն ալ այն տեղ կաղաղակէին , և Ողորմեամբ մեղ յիսուս որդի Դաւթի || :

Հ Յ Ա Խ Ե

Հիսուսի Երուսաղեմ եկած ժամանակը՝ ուր տեղ աշակերտները և բոլոր ժողովորդները բարձրաձայն օրհնութեաց անաբաննելի և երկրպագելի թագաւորը կը պատուեին . ումանք փարիսեցիներէն յի ըսին՝ աշակերտներուդ սաստէ , որ լուեն . և յիսուս աւ ըսաւ , || Եթէ գորա լուեցեն , քարինքդ աղաղակեցեն . զա՞յ . ժթ . 40 || : Վնչ իմանալու է այս քարերուն աղաղակաւը :

¶ . ¶ **արդապետք եկեղեցւոյ կըսեն**, թէ այս բանը այնքան չափազանց առակաւոր խօսք չէ, այլ իսկական մարդարէութի մի է . քանզի յի մահուան ժամանակը՝ երբ աշակերտները մեծ երկիրակիւ լուեր էին , պանչէլեք խորտակեալ քարերը՝ իբր իրենց լեզուովը յայտնաբարբառ փառաւոր արարին զնա , թէ ած է մարդացեալ , և վա փրկութե՛ մերց զըտագակ մահու ընկալեալ . և գերեզմանաց քարերը շարժելով՝ և գերեզմանները բացվելով՝ իբր իրենց լեզուովը յի ընծայ ըրին թաղվածներուն մարմինները , և աղաս ձանապարհ բանալով՝ այն մեռեալները դուրս ձգեցին , իբր յայտնապէս դաւանեցին՝ թէ այն մեռեալները ետները յարուցանողը տէր է կենդաննեաց և մեռելոց :

Հ • ՃԵՂ

Եսուսի յերուսաղէմ գտլուն համար աւետարանինեւ-  
ըւ կը գրեն, թէ իշց և յաւանակի վրայ նստաւ, այս ինչպէս  
իմանալու է:

Պ. կ. իսուս իշոյ վրայ նստաւ ՚ի բեթանիա՝ և անկէ հաստեմինչև այն տեղ, ուր կսպասեին ձանապարհին վրայ և աւանակն աւ իրենց հետ, այն տեղ էշը փոխեց՝ և աւանակին վրայ նըստաւ։ Խորհրդական մեկնութեամբ խմանալ պէտք է մեզի, որ իշուն վրայէն ինջաւ նէ՝ կը նշանակեր երրայսական հին ժողովուրդը, որ բարձի թողի պիտի ըլլար իւր յամառութեամբը։ և յաւանակը՝ որուն վրայ նստաւ յա, հեթանոսաց ազգը կը նշանակեր, որ պատրաստ էին մանալ քի նոր օրինաց հնագանդութեանը ներքեւ՝ քարոզութեամբ սուրբ աւետարանին և միջնորդութեամբ առաքելող և նողին հետևողաց։

卷之二

Յիսուսի յերուսաղեմ վառաւոր գալստեան ժամանակը  
Յոհաննես աւետարանիչի կը այն անդ ոմանք և հեթանոսք

“ յելելոց անդր , զի Երկիրպագանիցեն ՚ի տօնին : ՚ Առքա մատ-  
“ եան առ Փիլիպպոս , որ ՚ի Բեթսացիդայ Գալիլեացւոցն էր ,  
“ աղոյէին զնա և ասէին . առ կամրով զյիսուս տեսանել . գայ  
“ Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս , Անդրէաս և Փիլիպպոս ասեն  
“ ցյիսուս , և այն . ան . ժը . 20 : ՚ Արդ՝ սյս հեթանոսները  
ովլէին , որ քի հետ տեսնըլիլ կուղէին :

Պ . ՚ Երթողահայրն մեր ՛ ՛ Մովսէս խորենացի կըսէ ,  
թէ ասոնք հրաւիրակ էին մեր Աբգարիոս թագաւորին կողմանէ , որոյ թագաւորական քաղաքը՝ այն ժամանակը Ուրհայ էր . որ Բնիքը չի տեսնալով հաւատացեր էր . քի որդի այ ըլլալուն , և այս հաւատքով ծառայաբար հրաւիրակ խրկեր էր , որ յար յՈւրհայ հրաւիրեն . և եթէ չի գոյ՝ պատկերը նկարեն տանին , որուն նայելով իւր բորստութեան ախար բժշկըվի : Որոնք կուգան յԵրուսաղէմ , ոչ առեւրատաւանութեամբ մը յանկարծ յի դէմ կելան , ոյլ նախ Փիլիպպոս առաքելոյն կերթան կը խօսին , և այն ալ Անդրէասին կըսէ , և յետպ ասոնց միջնորդութեամբը յիսուսի գիմացը կելան , և Աբգար թագաւորին գիրը կուտան :

՚ Եւ որովհետեւ յի ՚ի խաչ ելլալու օրերն էր՝ որ փրկական տնօրէնութիւն պիտի կատարէր , յՈւրհայ երթալու ժամանակ չունենալուն համար՝ այսպէս պատստիսան տրվաւ յա , ՚ Եհաս ժամ՝ զի փառաւորեացի որդի մարդոյ : ՚ Հրաւիրակները իմացան , որ չի պիտի երթայ , սկսոն պատկերը նկարել որ թագաւորին տանին , և բնական արհեստին նկարչութեան չի կըրնալ նկարելով ինքն յա կառնէ գաստառակը , և կը դնէ իւր ածային երեսացը վրայ , որով իսկոյն տիրական պատկերը ոք գաստառակին վրայ նկարվեցաւ . և հրաւիրակները ուրախութէ առին այն ածային պատկերը , և տարին Աբգարու , որ նոյն պատկերին շնորհօքը աղատեցաւ բորստութեան ախտէն . և յը իստոսի համբարձմանէն եաքը օտագէոս առաքեալը գնաց և միրտեց զինքը համեայն ընտանեօքն , և այն :

՚ Հա ածային երանուե՝ յառաջ նախահաւատ թագաւորն մեր արժանի եղաւ , որ կըսէ , ՚ Երանի՝ որոց ոչ իցէ տեսնալ և հաւատացեն . ան . ի . 29 : ՚ Եւ մեղ համայն աղգիս հայոց հոգեորական պարծանք ՚ի առնէ այ պարգևեցաւ . որպէս և սրբազն հայրապեան մեր սուրբն Ներսէս շնորհտուն ՚ի պատիս ոք թագաւորիս կըսէ , ՚ Աստանօք՝ ես ցնծացեալ , թագաւորաւա՞ եմ պերճացեալ . Արքան ղթումնա՞ յառաջացեալ , ղերանութիւն՝ հայոց բերեալ :

## Հ • ՃԼ.

**Ա**յս հրաւիրակներուն ինչո՞ւ հեթանոս կըսվի:

Պ. Արէից աղքը հեթանոս կանուանէր իւր աղքէն դուրս եղող բոլոր աղքերը . և այն ժամանակը երեք տեսակ հեթանոս կայր: Ոմանք միայն կուռք կըպաշտէին , և ճշմարտին ոյ ամենենքն չէին հաւատայր , որոնք պարզապէս կռապաշտ կըսվէին : Ոմանք թէպէտ ճշմարիտ աստուածը կըպաշտէին , բայց կուոց ևս պատիւ և զոհ կը մատուցանէին : Եւ ոմանք հեռի էին իպաշտամանէ կռոց , և միայն ճշմարիտ աստուածը կը պաշտէին , բայց ըստ հին օրինաց չի թլփատաւնուն համար , հեթանոս կըսվէին չըէաներէն :

Եւ յայտնապէս կէրևայ , որ այդ եկողները երբորդ կէրպովն էին , քանզի ատոնց համար կըսէ աւեարանիչը , || էին անդ ոմանք և հեթանոսք յելելոց անդ՝ զի երկիրսպագանիցեն ՚ի տօնին || . ապա ոչ կռապաշտ էին՝ և ոչ կուոց հետեւող , այլ անթլփատ ըլլալնուն համար հեթանոս կըսվէին չըէաներէն :

## Հ • ՃԼԱ!

**Ա** երնատամնը մշջ ալ սեղանոյն վրայ քո՛ ըստաւ աշակերտացը , || Յանկանալ ցանկացայ ուտել զայս պասէք (որ է գառն զատկական) ընդ ձեզ . զուկան . իլք . 15 || : Եւ ետքը ինչո՞ւ համար աղօթք կընէ առ հայր՝ ըսելով , || Հայր՝ եթէ կամիս , անցն զըտագակ զայս յինէն || :

Պ. Այսպէս ըսելուն երկու պատճառ կուտան վարդապէտք . մշկ մը՝ որ իւր ճշմարիտ մարդեղութիւնը ցցց տայ . քանզի մարդս բնականաբար չարչարանքէն և մահէն կը վախնայ : Երկրորդ՝ Յուդայի ապէրախտութիւն ծանր կերեցընէր այն չարչարանաց բաժակը . քանզի (այս) բառը՝ քէրականօրէն մօտ եղօղը ցցց կուտայ :

## Հ • ՃԼԲ

**Ի** րիստոսի մատնութեան գիշերին համար Դուկաս աւետարանիչ կըգրէ , || Երկեցաւ նմա (յիսուսի) հրեշտակ յերկնից , և զօրացուցանէր զնա . լուկ . իլք . 43 || : Վնչպէս ՚ի հրեշտակէ զօրութիւն կառնէ այն , որ զօրացուցիչն է երկնաւորաց և երկրաւորաց :

Պ. Աւտարանիչեն միտքը ուղղակի քի տկարանալը՝ և հրեշտակին զօրացուցանելը բսել չէ. այլ կը կամի ուսուցանել մեղ թէ երբ նեղութեան մեջ գանըլիսք, մեր պահապան հրեշտակը մեղի կը զօրացընէ, եթէ հաստատ հաւատը ունենալք և համբերութէ դիմանամք։ Այս եթէ հարցմունքիդ բուն խորհրդական միտքը կուղէս՝ քի վրայ մասձելով, հրեշտակը կաղուչէր քի, որ չարչարանաց և մահուան բաժակը յօժարութեամբ ընդունի մեր փրկութեանը համար։

## Հ. ՃԼԴ.

Անչու չեն յայտնէր հրեշտակին ինչ խօսելը այդ տեղ քրիստոսի հետ։

Պ. Ճապէս կարծիք կընէ կաղինոս՝ ՚ի դիմաց հրեշտակին ըսելով՝ ՚ի ու ինքնին գիտես ովկամենագէտ, զի սցսէ կամք ՚ի հօր քո, ընկել քեզ զրաժակին՝ որում ցանկայիր ՚ի փրկութի ՚մարդկային աղքի ՚ի սակաւ ժամն վարդին չարչարանքտ ։ ՚արդէն հասեալ կաս մարդկութեամբ առ սահմանօք հայրենի ՚փառացդ՝ մտանել կըկին իրաւամբք ՚ի ժաւանգութի նց։ ՚Ամանապէս յայտնի են տնդ մերում, և արդասիք ոք չարչարանացդ, ստատնաց նուաձեալ, աշխարհս փրկեալ, դրունք ՚երկից բացեալ, անհամար հոգիք ոքց հարց, որք ՚ի ստորերկ ՚ըեայ արդելանս սպասեալ մային յայնչափ դարուց հեաէ տո զատեցուցչին իւրեանց, ՚ի մօտայ համդերձեալք քեւ աղաւանալ. և անթիւ կուսանք՝ մարտիրոսք՝ խոստովանողք՝ որք ՚քեւ ունին արդիւնանալ ՚ի վերայ երկրի, և զհետ քո եր՝ թալ յերկնային արքայութիւնդ։

Վհա՛ իւր ասոնք էին հրեշտակին խօսքերը. ոչ եթէ ինքնին չէր կընար յիսուս այդ մտածութիւնները ընել և իրեն բաւական ուրախութիւն մը գանալ այն տրամութէ ամզերը ցրուելու համար. այլ յիսուս՝ որ իւր խորհրդոց տէրն էր, չուղեց իւր աէրութիւնը գործածել, միայն կամեցաւ հրաշալի խոնարհութիւն ձեռք առնել, ցոյց աալով ինքը զինքը կարօտ յարդուսանաց՝ և սրտապնդութիւն ընդունելու ըստ մարմայ՝ իւր անմարմին ստեղծուածէն։

## Հ. ՃԼԴ.

Քրիստոս ինքը կարօղէր ուսուցանել աշակերտաց պէտք եղած դիտութիւնը. ինչո՞ւ համար կը խոստանաց աշակերտաց

ղառաքումն հոգւցին սրբոյ , ըսելով ॥ Կա ուսուցէ ձեզ  
զամենայն . յակ . ժ. գ. 26 ॥

Պ . Լ . Ժ . ածային գաղտնիք մի է . բայց մարդկօրէն կըր-  
նամք ըսել , թէ ՚ լախ՝ կամք եղեն այ ձանչցունել մեղե հոգ-  
ւցին սրբոյ անձը նշանաւոր բարերարութե՛ք . քանզի յանձնէ  
հօր այ՝ ունեինք իւր միածնին որդւցին խրկըվիլո . յանձնէ  
որդւցին միածնի՝ իւր մարդանալը և մեղե փրկելը . ապա և  
յանձնէ հոգւցին սրբոյ՝ պէտք էր մեղե կերպ կերպ շնորհաց  
պարգև . ունել՝ որ մեք զմեղ յարմարէինք փրկադործութե՛ք  
պառուղը վայելուու , և հոգին ոք լուսաւորէ մեր մտաց աչքը՝  
ածային խորհրդոցը ծանօթանալու , և զօրանալ ՚ի պահպա-  
նութիւն ածային պատուիրանաց :

Խրկըրորդ՝ ուղեց որ առաւաւել հոչակաւոր ըլլայ գիտու-  
թեան պարգևել՝ որ տրլիցաւ սրբազնն առաքելոց ՚ի հոգւցին  
սրբոյ : Խթէ քի կենդանութել՝ առաքեալք բոլոր գիտու-  
թիւնները կատարեալ սորված ըլլային , շատերը կըսէին՝ թէ  
այն իրենց բնական սրամութիւնն է . բայց քի մահուանէն  
ետք , որ բոլորին ալ յայտնի էր առաքելոց ագէա և երկչոս  
ըլլալը . և հոգւցին սրբոյ իջման օրը՝ յանկարծ այնքան իմաս-  
տուն և քաջամիրտ ըլլալով յայտնի կերեւար ածային զօրու-  
թեան ներգործութիւնը , և մեր հաւատոյն հաստատու-  
թեան նոր և պայծառ նշանը :

Խրբորդ՝ չայնպէս կամեցաւ քա , որ առաքեալները և մեք  
սորվիմք , թէ արտաքին և ականջալուր խօսքերը՝ բաւական չեն  
մեղե ճշմարտութեան ձանապարհին դարձունել , և փրկութե՛  
շնորհին յօժարեցընել առանց ներքին շնորհաց հոգւցին որյէ ։  
Եւ հաւատոյ ճշմարտութիւր քարոզողները՝ և մոլութե՛ ձանա-  
պարհէն դարձունօղները՝ չի գիտնան , թէ իրենց ձարտա-  
րութիւնն է , այլ հոգւցին սրբոյ շնորհաց զօրութիւնն է :  
Պիտառու՝ հոգւցին սրբոյ իջումէն յառաջ , աղջեկէ մը վախնա-  
լով երեք անգամ ուրացաւ քառ , չեմ գիտէր՝ չեմ ձանչնար  
ըսելով . բայց երբ հոգին սուրբ ինջաւ , յայտնաբարեառ քի  
ածութիւնը քարոզելէն ետքը՝ մեկ աւուր մէջ երեք հազար  
հոգի մէկէն մլլատեց : Ա երջապէս իմացեր ես՝ որ մարդեղութե՛  
խորհուրդը՝ երկրորդ արարչութիւն կանուանի :

Եհա ինչպէս ՚ի նախկին արարչութե՛ հայրն ած բանիւ-  
ստեղծ զամ , և աստ նոյն բանիւն նորոգէ զամ . ՚ի նախկին  
արարչութե՛ ։ Հոգի այ շրջէր ՚ի վերաց ջուրց , որ ըստ մեծի

շնորհալոցն , || Ե վե՛ ջուրցն գոլով՝ ստեղծանէր զարարածս || ,  
ահա և այս երկրորդ արարչութեան մէջ՝ հոգին ոք իջանելով  
՚ի վերայ սրբազն առաքելոց , նորօք ծնանի զամ հաւատաց-  
եալս յամենամաքուր արգանդէ սրբոյ աւազանին :

Վ հա այսպէս ըստ մարդկային մտաց տկարութեան ուստ-  
նիմք՝ թէ այս պատճառաւ որդին միածին կիսկատար կը թո-  
ղու առաքեալները , որ առաքմամբ ոք հոգւցն՝ բերէ զնոսա  
՚ի գաղաթ կատարելութեան :

#### Հ . ՃԼԵ

Լ ուս յիսուս հոգւցն սրբոյ համար կըսէ իւր աշակերտ-  
ներուն , թէ || Կա ուսուցի ձեզ զամ || . արդե՛օք ամմէն  
գիտութիւններն ալ սորվեցան :

Պ . Ջի սորվեցան ամմէն գիտութիւնը , քանզի այդ կըլլար  
բովանդակիչ գիտութի՞ , որ արքայութէ մէջ եղող երանեալ  
հոգիք ևս տակաւին չունին . և միայն ոյ և սեպհական գիտել  
զամ գիտելիս . այլ փրկութեան հարկաւոր , և իրենց քարո-  
ղութեան պաշտօնին յարմար , և իրենց հոգեորական օգուտին  
պէտք եղած բովոր գիտութիւնները սորվեցան :

#### Հ . ՃԼԶ

Ա քրիստոսի համար շատ երկիւղ և տրտմութիւն ունէր  
կըսէն աւետարանիչները չարչարանաց գիշերը . կը զարմանամ ,  
որ մարտիրոսները աներկիւղ կը վազէին դէպ ՚ի տանջանս . քա-  
ինչո՞ւ երկիւղ և տրտմութիւն պիտի ունենայ :

Պ . Ա պարախրոսները և նահատակները՝ իրենց կամքովը տէր  
չէին իրենց վախնալուն և չի վախնալուն , այլ աստուծմէ օգ-  
նութի՞ կը համնէր իրենց տկարութի՞ը , որ չըլայ թէ բնական  
երկիւղը իրենց վայ տիրելով՝ մարտիրոսութէ զրկվին : Իսոյց  
յիսուս անհամեմատ կերպիւ ամմէն մարտիրոսներէն հզօրագցն  
երեցաւ , քանզի ցոյց տրված՝ որ այն երկիւղը իւր կամքէն  
կապված էր , ուրեմն վախնալը և չի վախնալը իւր իշխանութի՞ը  
ներքե էր : Երկիւղ ունեցաւ քրիստոս , բայց այն երկիւղին  
պատճառաւ պարտիզէն չի վախաւ , այլ արիութի՞ այն տեղ  
կեցաւ՝ մատնիչին ձաւրան նայելով :

Վ . Յն՝ որ զքտ ած կը ձանչնար , եթէ ստուգիւ աներկիւղ  
աւսնար տանջանաց մէջ , կը ընար տարակուսիլ՝ թէ իւր ամենա-

կարօղ զօրութելը կը վարվի , որ տանջանաց ցաւը և կսկիծը չեմանայ . այլ միտք բերելով նորին նախընթաց խորին արամութը և երկիւղը , հաստատապէս կիմացվի՝ որ կատարեալ մարդ էր , և մեր փրկութեանը համար այն չարչարանքը կը քաշէր :

## Հ . ՃԼԵ

**Պ**ար Հրեայք բունած կը տանէին փրկիչն մեր մատնութեան գիշերը՝ Մարկոս աւետարանիչ կըսէ , թէ Ո՞մն երիտասարդ գիշեա երթայր նորա , արկեալ զեւրկ զկտաւ մի ՚ի մերկուց . ժ-դ , 51 || այդ երիտասարդը ո՞վ պիտի ըլլայ :

Պ . **Օ** անազան կարծէր կայ ատոր վրայ . բայց գործցն վերջաւորութել նայիս նէ , կերեայ՝ թէ այն պարտիզպանին տղայն էր . կամ պարտէղն մօտ եղող բնակիչ գիշականաց մէկն էր , որ պառկած տէղն լսելով այն բազմութեան աղաղակը՝ իմանալու համար գուրս վազեց , իսկցն վրան սաւան մը առնելով գնաց այն բազմութեանը ետեւէն , որ իմանայ ինչ ըլլալը . բայց զենուորին մէկը երբ իրեն ձեռք երկնցուց , սաւանը ձեռքը ձգեց՝ և ինքը մերկ փախաւ :

## Հ . ՃԼԵ

**Վ**երիտառոս տէրն մեր ամմէն տէսակ չարչարանքները սիրով ընդունեց մեր փրկութեանը համար . ինչո՞ւ խաչին վրայ երբ գինի տըլին լեղի հետ խաւնած՝ չի խմեց . || Ետուն նմա գինի ընդ լեղի խաւնեալ , և իրբե ճաշակեայ՝ ոչ կամէր ըմղել || . Տառ . իէ . 34 || :

Պ . **Ե**ղիով խաւնած գինին թմրութիւն մը վրան գալու համար տըլին , որ բոլոր չարչարանաց ցաւցն կսկիծը չիմանայ . և չիմանալով խակցն չի մեռնի , որ շատ չարչարեն . և որովհեան քա՛ սիրով կընդունէր մեր փրկութեանը համար , ուղեց՝ որ բոլոր տանջանաց կսկիծը կատարելապէս տանի . վասն որց երբ ճաշակեց թմրեցուցիչ գեղը , չուղեց խմել :

## Հ . ՃԼԹ

**Ա**նչո՞ւ համար հոգին աւանդած ժամանակը՝ լեղիով խտանած քացախը յօժարութել խմեց . Տառ . ժթ . 30 :

Պ . **Ա**նչո՞ւ հոգին աւանդած ժամանակը ինչ կերպ չարչարանք և ցաւ տըլին նէ , բոլորն ալ յաւաջուց մարդարէները

գուշակէր էին . և այս մէկը պակաս մնացէր էր , որ դատթի  
մարգարէութիւնն էր . || Եւ ՚ի ծարաւ իմ արքուցին ինձ քա-  
ցախ || . ուստի յօժարութե՛ խեց այն լեզով խստնած քա-  
ցախը , և ըստ , || Ամենայն ինչ կատարեալէ , և խոնարհե-  
ցուցեալ զգութին՝ աւանդեաց զհոգին || :

J. • D. Lu

Արեգական խաւարումը ի՞նչ պատճեռութ եղաւ այն ժամանակը:

¶ · **❖** **λαρργωκαδινασητευ** · πιπερι **αδ-** αρε<sup>τ</sup>ωκαδιν **καταρριμαντερ**  
ցուցունել **քի** տն **մերց** **աճութիւնը** · **Արովշետե** **այդ** **խա-**  
**ւարումը** **իբրև** **հրաշք** **եղաւ** , **վասն** **որց** **բնական** **պատճառ**  
**չունի** , **քանզի** **լուսնի** **լուսնի** **էր՝** **որ** **այն** **ժամանակը** **հեռի**  
**կրլայ** **արեգակէն** · **Վ.** **յս** **խաւարրմանը** **գեղեցիկ** **և** **խորհրդա-**  
**կան** **պատճառ** **կուտայ** **սուրբ** **Ներսէս** **շնորհալին** **ըսելով** ·  
**|| Բոպէից** **արեգական** , **զտիւն** **արար** **գիշերանման** · **զատուելոն**  
**քող** **արկ** **մերկութեան** , **զի** **մի'** **աեսցէ** **ակն** **անարբան** ::

Իսրայէլացւոց աղքէին ապէրախտութեանը չափ և կանոն  
ըսլալով, յառաջմանէ Եսայի մարդարէն ՚ի գիմաց աստուծոց  
խօսելով երկնի և երկրի հետ, ոյսպէս կը գըէ . || Վար Երկին՝  
և հւնինդիր Երկիր, զե տէր խօսեցաւ, որդիս ծնայ՝ և  
բարձրացուցի, և նորա զիս անարդեցին || :

Վհա՛ այդ աղքէին շարութել պատճառաւ, իբը թէ երկնի  
և երկրի հետ գանկատօրէն խօսելով կըսէ, || Լուր Երկին, և  
ունկնդիր Երկիր || . այս գանկատօրէն ոյ խօսակցութեանը,  
Երկինք և երկիր ահա՞ այսօր պատասխան արվին . երկինքը  
այնքան սուզ. և տրտութիւն ունեցաւ, որ իւր պարծ-անաց  
թագ և պասկ տրեգակը՝ մթութք խաւարեցցց այսօր . եր-  
կիրը ահէն և երկիւղէն շարժելով գողալ սկսաւ, և իւր հաս-  
տառուն աղառաժները ձեղքել և պատառել. ինչպէս աւետա-  
րանիշը կը վիսյէ : Տաճարին վարագոյրը նիդնին վերէն՝ ՚ի վար  
երկու կտոր եղաւ՝ վկայելով թէ իւր օրէնսդիր թագաւորը  
խաչին վրայ զատեց բանական հոգին մարմինէն, ՚ի ձեռս հօր  
ոյ աւանդելով : || Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս  
՚ի վերուստ մինչև ՚ի վայր . երկիր շարժեցաւ, և վէմք պատա-  
ռեզան հարթէու . իէ . 51 || :

Վհա սցս պատճառաւ էր արեգական խաւըռումը, որ  
անդպայ և տնկենդան ըլլալով՝ իւր ստեղծողին պատիւը ցոյց  
տրվաւ, և երկնի և երկրի արարիչ ըլլալը վկայեց:

Հ • ՃԽԱ

Վարդեօք այդ խաւարումը բոլոր աշխարհի վրայ եղաւ։  
Պ. Վ. յա այսպէս կը վկայէ Մատթէոս աւետարանիչ .  
|| Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ՚ի վերայ ամ երկրի  
մինչև ցինն ժամ . իէ . 45 || :

Հ • ՃԽԲ

Պ սիր՝ թէ ամ երկրի ըսելով, բոլոր աշխարհը պիտի իմա-  
նակ . բայց Ամենայն բառը՝ որ միշտ ոք գրոց մէջ կը գործ-  
ած-վի, ամեն տեղ բոլորն ալ ՚ի միասին չիմացունէր . ահա  
Յովսէփայ ժամանակը Եգիպտոսի մէջ եղած սղութել համար  
սուրբ գիրը կըսէ, || Եւ ամ աշխարհ գոյին յԵղիպտոս՝ գնել  
(զերակուր) ՚ի Յովսէփայ . ծնն . խառ . 57 || :

Պ. Վ երատին կըսեմ, թէ այն խաւարը բոլոր աշխարհիս  
վրայ եղաւ, որ է հասարակ կարծիք ամ վարդապէտաց, և ունին  
հիմն և վկայ երեք աւետարանչաց խօսքը՝ որ անհերքելի է .  
|| Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ՚ի վեց ամ երկրի մինչև  
ցինն ժամ . իտք . իէ . 45 || : Այսպէս և միւս աւետարանիները  
կը գրեն: Եւ այս սացգ վկայութեց հակառակ բան մը չի կայ  
ոք գրոց մէջ, որով բոլոր աշխարհը չիմանանք: Գիտեմ՝ որ  
կը հաւատասա, որ այն խաւարումը բնակուն պատճառաւ չէր,  
այլ հրաշական կերպեւ էր . ապա ոք աւետարանչաց վկայու-  
թեամբ՝ որոց բոլոր վարդապէտք կը հետեւին, հարկ է հաւա-  
տաւ թէ բոլոր աշխարհի վրայ եղաւ այն խաւարումը:

Վ. բրդ՝ բերած վկայութեղ նման՝ ես ալ քեզի այնպէս  
վկայութիւններ գտնամ, որ ամ աշխարհ՝ կամ ամենայն երկիր  
ըսածը, միշտ բոլոր ըսել չիմացվեր . բայց անոնց ալ չիմացվե-  
լուն պատճառը կայ . || Եւ եղեւ ընդ աւուրն ընդ այնոսիկ ել  
հրաման յօդուստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամ  
աիեզերս . զ-է . բ- . 1 || : Վ. հա այս տեղ յայտնի կերեայ՝ որ  
Ամենայն բառը բոլոր աշխարհը չէ, այլ իւր իշխանութեան  
ներքեւ եղած ամեն տեղն է: Վ. բրդիաս կըսէ Եղիս մարգա-  
րէին, || Եթէ իցե աղդ՝ կամ թագաւորութի՝ ուր ոչ առաք-  
եաց աէր իմ խնդըել զքեղ . դ, թագ . մ-ը . 10 || : Վսկից ալ  
յայտնի է՝ որ ոչ եթէ բոլոր թագաւորութեց և աղդաց մէջ  
պըրալստած կըսայ Աբդիաս, այլ միայն այն սահմանակից գա-  
ւաւուներուն մէջ, որոց հաղորդուի ունէր Աքաար թագաւորը:

Ահա բերած վկայութեանդ նման են ասոնք , որոց մէջ  
Ամենայն ըսելով , յայտնի է՝ որ բոլորն աշխատավեր . բայց  
տւետարանչաց ըսած Ամենայնը այսպէս չէ , այլ բոլոր աշ-  
խարհի վրայ եղաւ խաւարումը :

## Հ . ՃԽԴ

Ուրբ գիրը կըսէ , թէ խաւարը կէս օրվան մէջ եղաւ ,  
և երեք ժամ աւելց . ուրբեմն միայն այն երկիրները եղաւ , ուր-  
բեղ որ այն ժամանակը կէս օր էր . և ոչ թէ այն տեղերը , ուր-  
որ այն ժամանակը առաւօտ էր , կամ երեկոյ , և կամ գիշեր :

Պ . Աւետարանիչները չեն ըսեր՝ թէ խաւար եղաւ լնդ ամ-  
տեղիս , երբ Երուսաղեմ կէս օր էր . այլ այն ժամանակը՝ որ  
ուրիշ տեղեաց որպիսութեանց՝ լայնութեն և երկայնութեանը  
նայելով՝ կըհամեմտաին Երուսաղեմի կէս օրվան : “Եցնափէս  
երբ քի հոգւոցն աւանդմանը համար կըսէն աւետարանիչները՝  
յիններորդ ժամու աւանդեաց զհոգին՝ որ է երրորդ ժամկէս  
օրէն ետքը . յայտնի է՝ որ Հակոտնէից երկրին յարմոր չէ ,  
քանզի մեղի ցերեկ եղած ժամանակը՝ այն տեղ գիշեր է . և  
միշտ այնպէս է , և ոչ ուրիշ տեղեաց համար՝ ուր որ առաւօտ  
էր , այլ միայն Երուսաղեմի համար՝ ուր որ քրիստոս մեռաւ :

## Հ . ՃԽԴ

Այս հրաշքեն գիտաւորութեն հրատարակական նշան մի  
էր քի անութեն և անմեղութեն , որ միայն Հրէաստաննեաց  
երկրին կըվայլէր՝ և ոչ հեթանոսաց . ուրբեմն միայն Հրէաս-  
տանի եղաւ՝ և ոչ թէ բոլոր աշխարհի :

Պ . Անզո՞ւ միայն Հրէից պիտի ըլլայ այդ հրաշքը , չէ՞ որ  
քրիստոսական հաւատքը բոլոր աշխարհի մէջ պիտի տարած-  
վէր սրբազն առաքելոց քարոզութեն , ապա բոլոր աշխարհին  
վրայ ըլլայ կըվայլէր , որոնք որ քի սրբանչելոգործութիքը չէին  
տեսեր՝ և չէին խնացեր . արեգական այս հրաշական խաւար-  
մանը առաքեալները կըբնային հաւատացունել . մանաւանդ-  
հեթանոսաց մէջ եղած երեւելի աստեղագիտաց բաւական էր  
այդ արեգական հրաշալի խաւարումը՝ առ ՚ի հաւատաւլ քրիս-  
տոսի անութեն և մարդեղութեանը . ինչպէս որ Դիոնիսիոս  
Արիստագոցին հեռաւոր երկրի մէջ ըլլալով , արեգական խա-  
ւարումը որ տեսաւ , այսպէս ըստ . || կամ արարեն բնութե-  
չարչարի , կամ շնուրած աշխարհիս կործանի || :

## Հ • ՃԽԵ

Վարիամ յարութիւնը պատմող կանայքը ո՞վ էին :

Պ. Արիամ Մագդաղենացին, Մարիամ Կղեռվայ, որ այս Կղեռվայն՝ Յովսէփ ածահօր եղայր էր, կինն՝ որ Մարիամ Կղեռվայ կանուանի, ըսելէ կին Կղեռվայ։ Ատղօմէ՝ որ էր մայր Յակոբայ առաքելցն և Յովհաննու առետարանցին։ Մարթա՝ որ է քոյրն վերցիշեալ Մագդաղենացւոյն, Յօհաննա՝ Քուղայ հազարապետին կինը։ Աւ Շուշանն՝ որ Ղուկաս աւետարանիչը կը ճիշտակէ . ը. 3 :

## Հ • ՃԽԶ

Յարութիւնէն ետքը քրիստոս իւր մօրը Երևեցաւ :

Պ. Յանզի քանզի առաքեալներուն ըատւ յա, || Այժմ գուշ տրամութիւն ունիք, գարձեալ տեսից զձեզ, և ուրախ լինիցին սիրտք ձեր || . ՚ի հարկե ամմէնէն էլել տրտումէր տիրամայրն, ապա յառաջ անոր Երևեցաւ :

## Հ • ՃԽԵ

Եթէ մօրը Երևեցաւ, ինչո՞ւ սրբազան աւետարանիչք չի գրեցին :

Պ. Այտնի է՝ որ մայրը ամմէն մարդէ առաւել լցված էր ՚ի շարշարանս որդւոյն, և բան մը չի գրեցին աւետարանիչները, և վարագուրի ներքեւ պահեցին անոպատմելի տրտութիւն . նոյն պէս և որդւոյն յարութիւնը ունեցած ուրախութիւնը անձառելի ըլլուրով զանց ըրին գրել :

## Հ • ՃԽԲ

Պ. Ողոս առաքեալ առ Տիմոթէոս կը գրէ, || Ծանեաւ տէր զայնոսիկ՝ որք իւրեն են . ը, ՚ինվես . ը. 19 || . Վա՞թէ իրեն չեղածները չի նահնար :

Պ. Յաղես կը մեկնեն, թէ Ծանեաւ բառը՝ ճանշնաւ չէ այն աեզ, այլ սիրել՝ հոդալ մնուցանելն է։ ՚ի հա այս իսուքին անդրադարձը՝ քրիստոս դատապարատելոց կըսէ, ՚ի գիտեմ զձեզ, մի՞թէ իրաւ չէր գիտեր . նոյնպէս և իմացիր այս աեզ այս ծանեաւ բառը :

« Այն առաքեալը կը գրէ , || Ե միոջէ մարդոց մեղք յաշ-  
եարհ մախն , և ի մեղաց անտի՝ մահ . հասկ . ե . 12 || : Վ . րդ՝ ուր-  
կցմն Մարիամ սկզբնական մեղք չուներ՝ ինչո՞ւ մեռաւ :

Պ . 1 Ուրբ կուսին մահը սկզբնական մեղաց պատիժ չեր , և  
ոչ Ագամայ պարտաւորութեր կարդին էր՝ այլ ըստ պատշաճի :  
Վ . յս պատշաճողութին ալ երեք կերպիւ էր . նախ՝ իւր որդ-  
ւոյն նմանիւ կը վայելէր . ինչպէս որ որդին՝ մահու անպարտա-  
կան ըլլալով մեռաւ , ահա մայրն ևս այնպէս : Երկրորդ՝ ինչ-  
պէս որ որդին չարչարեցաւ , ինքն ալ հետը սիրով չարչարե-  
ցաւ . իւր սրտին ցաւը որդւոյն չարչարանքին առաւել էր . և  
ինչպէս որ որդին մեռաւ , նոյնպէս և մայրն մեռաւ : Երրորդ՝  
որ մեղի զօրութիւ տայ մահունեւ երկիւղ չունենալու համար :  
Ընէպէտ սուրբ կցուը մեռաւ , բայց ոչ մարմինը փառեցաւ  
հասարակ մարդկանց պէս , և ոչ ալ ՚ի գերեզմանի մասց , այլ  
անապական մարմնով յերկինս վերացաւ :

Պ օղոս առաքեալ կը գրէ , || Տուտւ ինձ խայթ մարմնոյ՝  
հրեշտակ սասան կոփել զիս , զի մի՛ հպարտացոյց . բ . կար .  
ժը . 7 || : Վ նչ պիսի ըլլայ այս խայթը , կամ հրեշտակ սասանը :

Պ . 2 ակոր ածաբան՝ Պօղոս առաքելոյն համեստութեր հա-  
մոր այսպէս կը գրէ . այն որ ցանկութեան գործէն այնքան  
վերջոցեր էր , և այնքան պարկեշտութեան սիրողէր , մինչեւ որ  
իւր մարմնոյն ցանկութեան արմատը միշտ հետը կը կռուէր .  
և ինքն ալ կուղէր՝ որ յաղթէ : || Երիցս անդամ (կըսէ սրբա-  
զան առաքեալը) աղաւեցի զաեր , զի ՚ի բաց արասցէ յինէն  
դիմայթ ցանկութեան || : Վ հա խայթ մարմնոյ՝ կամ հրեշտակ  
սասան ըսածը , այն ցանկութեան արմատն է :



# ՔՐԵԱԿԱԺՈՒՅԵԱ ԽՆԳԹԹՈՅ

ՄԱՍԻՆ · Գ

ՔՐԵԱԿԱԺՈՒՅԵԱ ԽՆԳԹԹՈՅ ԵՎ ԱՐ



ՀԱՐՑԱԿԱՅՆ ԱՌԱՋԻՆ

(Օրէնք ըսելը ի՞նչ ըսելէ :

ՊԱՏԱՍԽԱՆԻ

(Օրէնքին այսպէս սահման կուտան աճաբան վարդապէտները . Հաստատուն կարգումն բանի յօդուտ հասարակաց, հրամարակեալ յայնմանէ որ ունի զ՛ոդ հասարակութե, գիտաւորութեամբ պարտաւորելց դհպատակս || :

Հ · Բ

Պահնի՞ տեսակ կը բաժանի օրէնքը :

Պ · Օրէք ։ յաւիտենական՝ բնական՝ և դրական :

Հ · Գ

Պահենական օրինաց սահմանը ի՞նչ է :

Պ · Պահագոյն ըսմն՝ ըստ որց զամբինչ աճ ուղղէ և կառավարէ : Պահագոյն թան ըսածնիս, բեռնարառու՝ օրէնք ոյց կառուանէ, քանզի աճային աեսջութիւն իըրեւ կանոն անոր կը հետակեց՝ ներդործական իրաց կառովարութե կարգին նայելով :

Հ . Դ

Անական օրինաց սահմանը ի՞նչէ :

Պ . Եթե և ձառագայթ յաւիտենական օրինաց՝ տղաւորեալ յայ ի՞ն բանսւոր արարածն, որ թելադրէ և հրամայէ զի՞նչ ինչ արժան իցէ առնել և յորմէ խորշել :

Հ . Ե

Արական օրինաց սահմանը ի՞նչէ :

Պ . Տ' այն՝ որ յանձնիշխան կամաց օրէնսդրին յաւելեալ է ի՞ն վերաց բնական օրինաց :

Հ . Զ

Արական օրէնքը քանի՞ տեսակ է :

Պ . Ճրկու • պատուածային և մարդկացին :

Հ . Է

Աստուածային օրէնքը քանի՞ տեսակ է :

Պ . Ճրկու • մոլոխական և աւետարարանական :

Հ . Ը

Ամսնի՞ կերպ է մարդկացին օրէնքը :

Պ . Ճրկու • մշկը հասարակ է ամազգաց, որ կըսվի իրաւունք աղանց • և միւսը՝ յորում ամմշնքը միաբան չեն • թէ որ այս եկեղեցական իշխանութենէ յառաջ գայ, կըսվի կանոնական կամ Եկեղեցական օրէնք • թէ որ քաղաքական իշխանութենէ յառաջ գայ, կըսվի քաղաքական օրէնք :

Հ . Ծ

Ճթէ մշկ տեղմը օրէնքի գէմ սովորութիւն մը գըտնըվի, հնա՞ր է՝ որ ամային օրէնքը գտոդարի այն ներհակ սովորութեան պատճառաւուը :

Պ . Յոսաբենոս կըսէ • || Ասէ աէրն յաւետարանին, ես եմ Համարառութի, և ոչ ասաց՝ ես եմ սովորութի, սովա աեղի տացէ

սովորութիւնն՝ ճշմարտութեն ։ Եւս այսպէս կըսէ ։ Ի դուք  
ոմանք յաղթեալք ՚ի բանից՝ առաջի առնեն մեղ զսովորութին,  
որպէս թէ սովորութին մեծ իցէ քան զՃշմարտութին ։

## Հ ։ Ժ

Անչո՞ւ կամեցաւ ած ։ որ բնական օրէնքը տախտակի վրայ  
գրվի ։ ոչ ապաքէն ՚ի սիրաս մարդկան անջնջելի տպաւորեալէր ։

Պ. Ալսէ Օգոստինոս տախտակի վրայ գրվեցաւ ։ որոնք որ  
իրենց սրախն մէջ գրած չէր ։ կամք չըւնէին կարդալու ։ աշ-  
քերնուն առջն գրվեցաւ ։ ինչ որ կարդալով հարկ էր գիտնալ ։  
Եւ ևս ցանկութիւն և անկարգ բաղձանքը յիրաւի բոլորովին  
չի ջնջովիր բնական օրէնքով ։ բայց կը տկարանայ ։ և միտքը կը  
կըրթըվի ։ մինչև որ մարդս կըսկըսի չարը և բարին իմանալ ։  
ուստի կըսէ առաքեալը ։ Եւ զցանկութիւն ոչ ճանաշէի ։ եթէ  
ոչ օրինացն էր ասացեալ ։ մի՛ ցանկանայցես ։ հոռվ. է. 7 ։

## Հ ։ ԺԱ

Հին օրէնքը արդեօք բարի՞ էր ։

Պ. Ա հաւատոց գիտեմք հին օրինաց բարի ըլլալը և աստուծմէ  
հաստատվիլը ։ ըստ այնմ՝ ։ Այսուհետեւ օրէնքն սուրբ են ։ և  
պատուիրանն սուրբ և արդար և բարերար ։ հոռվ. է. 12 ։  
։ Բազում մասամբ ք բազում օրինակօր կանխաւ խօսեցաւ ած-  
ընդ հարս մեր մարդարէիւք ։ է բայց ։ ա. 1 ։

## Հ ։ ԺԲ

Եթէ բարի էր հին օրէնքը ։ ինչո՞ւ ած կըսէ ։ Ետու-  
նոցա հրամանս անբարիս ։ Է զէինէլ. է. 25 ։

Պ. Հայր մը երբ կուզէ իւր օրդին կըթել ։ ճանր գործ կը  
դնէ օրդւցն վրայ ։ այն գրած գործը բարի է և օգտակար ։  
բայց ըստ որում կըթութէ համար է ։ բարի չի համարվիր ։ այս-  
պէս իմացիւր հին օրէնքը և Եբայցեցւոց աղքը ։

## Հ ։ ԺԳ

Անչո՞ւ հին օրէնքը ծխով և մըրկաւ կը արովի ։ Է էց ։  
Ժ է. 18 ։

Պ . Աստուածաբանք կըսեն , թէ սուրբ երսորդութէն խոր-  
հուրդը և քի մարդեղութիւնը օրինաց քօղով ծածկըլած էր ,  
վասն որոյ Մոլվէսի երեմն աւ քող կը ձգվէր . բայց քի չար-  
չարանաց ժամանակը՝ այն քօղը վերցաւ , որոյ օրինակ էր աս-  
ճարին վարագցըր՝ որ երկուք բաժնըլեցաւ :

## Հ . ԺԴ

Հին օրինաց պատուիրանիքներուն շատը՝ երբ որ կըպատ-  
ուիրէր ած , Օրէն կամ Ուխտ յաւիտենական կանուանէր , ըստ  
վեայութէն ուր գրոց : Արդ՝ թէ որ յաւիտենական օրէնք է ,  
քո՞ ինչը՞ համար մարդեղութեան ժամանակը ատոնք լուծաց :

Պ . ԵՌ յաւիտենական բառերը , որ օրինաց վրայ կըսվին ,  
պէտք չէ մշտնջենաւոր կամ անվախճան իմանալ . քանզի գի-  
տեմք՝ որ աշխարհս անցաւոր է , և ի՞նչպէս կըլայ՝ որ մարդ-  
կանց վրայ յաւիտենական օրէնք դրվին , նա մանաւանդ՝ որ  
օրինապահք ևս մեղանչական են . այլ կըսվին թէ Երբայական  
Օհօլամ բառէն թարգմանված է յաւիտենական բառը . և  
Օհօլամ բառը յաւիտենական չի նշանակէր , այլ ժամանա-  
կաւոր . ապա պէտք է իմանալ ժամանակաւոր , կամ ՚ի բա-  
զում ազգս , կամ ժամանակս :

## Հ . ԺԵ

Ի՞նչ պիտի ըլլայ չորեքդրամենի տանըլիլը անդրանիկնե-  
րէն հին օրինաց մէջ :

Պ . Ա արդապետք եկեղեցւց կըսեն , թէ երբ ած Եղիոլ-  
տացւոց անդրանիկները ջարդեց , Խրայէլացւոց անդրանիկ-  
ները պահէց , այն ժամանակը իրաւասմբք ըստաւ , || իմէ ամանդ-  
րանիկն Խրայէլի : || Բայց ապերտիստ աղջին ծանր թուեցաւ  
այս օրէնքը , վէ որոյ անդրանիկներուն փոխարէն զւեայ աղջը  
ընտրեց և իւրացցյ ած . և օրինադրէց որ իրենց անդրանիկ-  
ները տաճարը տանին և զւետացիներուն մէկ մէկ սիկդ տալով  
աղատին , որ մէկ սիկդ ըստածը , երկու տրամ է :

## Հ . ԺԶ

Ո զիատութեան էութիւնը ի՞նչ էր հին օրինաց մէջ :

Պ . Չ շան ուխտի էր այց Աբրահամու հետ , որով կը զատ-  
վէին Աբրահամու որդիքը հեթանոսներէն :

Հ ։ Ժ Ե

**Ձ** Ալֆատութեան օգուտը հին օրինաց մէջ ի՞նչ էր :

Պ. Աստուածաբանք կըսէն, թէ սկզբնական մեղաց քաւունի կուտար, բայց արքայութեն արժանի չէր ընէր մկրտութեան նման . քանզի թլփատեալներէն արդարները իրենց մաշուանէն ետքը մնացին սատանային իշխանութեանը ներքեւ, և գերութեան ցաւը կրեցին, մինչև բանն աստուած իւր մարդ-կութեամբը զիրենք աղատեց :

Հ ։ Ժ Բ

**Ձ** Ալֆատութիւն ի՞նչո՞ւ ծննդական մարմնցն վո՞ր կայացաւ :

Պ. Ճրեք պատճառ կը տըրվի այս բանին . Կախ՝ այս անդամցն մէջ յառաջ խնացաւ Ադամ իւր անհնաղանդութիւնը և մարմնցն ապատամեռութիւնը . Ճրկրորդ՝ այս անդամէն կը ծնանիմք, և իմ մեղ կանցնի սկզբնական մեղքը, որ թլփատութիւնը այն ժամանակը վերը ըսածնուս չափ՝ իրը ներողութիւն կունենար: Ճրկրորդ՝ ցցց կուտար՝ թէ նոր ուխտին կայացուցանօղն յիսուս՝ ծնաներ պիտի Աբրահամու զաւակներէն:

Հ ։ Ժ Թ

**Ի** նչո՞ւ քրիստոս թլփատութեան կը հնաղանդի ըստ օրինաց, և շուրաթը կը լուծանէ ընդդէմ օրինաց :

Պ. Աստուածաբանք կըսէն, թէ քրիստոսի տղայութիւնը ըստ արտաքին կենաց՝ զանազան չէր ուրիշ տղայոց տղայութենէն . ուստի ինչ որ աղայոց պէտք էր ըստ օրինաց՝ ինքն ևս ամմէնն ալ ունեցաւ: Բայց երբ կատարեալ հասակին հասաւ, պէտք էր՝ որ ցուցունէ ինքը զինքը տէր օրինաց ըւլալը՝ և օրէնքը իրմով կատարվիլը:

Հ ։ Ի

**Կ** նորհական օրէնքը տըրվելով ստուերական օրինաց խափանիլը կը սորվեցընէ մեղի ար եկեղեցին . բայց կերեայ՝ որ Պօղոս տապեալ ներհակը կը գործէ՝ Տիմոթէոսը թլփատելով. Գործ. Ժ. 3: Վաղ եթէ ստուերական օրէնքը այժմ՝ գործածեմք, մեղադրանաց ներքեւ չեմք ըլլար:

Պ. կառ. որ Պօղոս առաքելցն այդ գործը լսեցիր, լսէ ևս ատոր ներհակ ինչ կըսէ . . . Ա. յժմիկ ծանեւայք զած, մանաւանդ . . . թէ ծանուցայք իսկ յայ . զիսա՞րդ դաւնայք միւսանդամ անդ- ըէն ՚իտարերս տկարս և յաղքատս, որոց միւսանդամ զան- ՚ձինս ծառայեցուցանել կամիք : Օ աւուրս խտրէք և զամիսս և զգամանակս և զարդիս : Ա. բդ.՝ ո՞ւր է ստուերական օրինաց գործածօղը : Ա. յլ. եթէ ըսես՝ ինչ պիտի ըլլայ Պօղոսի այդ թլփատութեան գործը, կամ ատոր նման հրէական օրինաց ինչ արարողութիւնները :

՚լախ՝ կըպատասխանեմ, նոյն գործոց մէջ այն տեղէ այս հարցմանդ պատասխանը, որ կըսէ՝ վասն չրէից, իբր թէ գայ- թակղութիւնը չըլլալու համար անոնց, քանզի տակաւին սովոր- եալ չէին շնորհական օրինաց քաղցր լծոյն . որոնց հետ մէկ կըլլար, որ գուցէ անոնցմէ մէկըստանայ : Երկրորդ՝ Օգոստի- նոս երեք ժամանակ կըդնէ ստուերական օրինաց . ՚լախ՝ յա- ռաջքան զմարդեղութիւնն : Երկրորդ՝ աւետարանին քարոզ- ված ժամանակը : Երրորդ՝ աւետարանը քարոզվէլէն ետքը : Կըսէ՝ թէ . . . Իան զքի չարչարանքն յառաջ՝ հին օրինաց հին արարողութիւնը մէռեալք էին և ոչ մահաբերք, այլ վիրկա- րկանք . . . յետ չարչարանացն, մինչ . . . յընդհանուր քարո- զութիւն աւետարանին, էին մէռեալք և ոչ մահաբերք, կարէր ողաճիւ ՚ի հաւատացեալ չրէիցն, յցս ՚ի նոսին ոչ գնելով :

՚Քանզի անարժան էր այն ժամանակը քիւ մահուանէն ետ- քը՝ անգոսնէն Մովսէսի օրէնքը իբր կուապաշտութիւն . այլ վայելու էր հին մայրը՝ այսինքն հին օրէնքը պատուով ՚ի գե- րեզման մանալ. ահա այն ժամանակը երբեմն կերեայ՝ առաքե- լոց հին օրինաց արարողութիւն գործածէլ : Բայց յետ ընդհա- նուր քարոզութեան աւետարանին՝ հին օրէնքն ոչ թէ միայն մէռեալք էին, այլ և մահաբերք :

## Հ. ՏԱ

՚ին օրինաց մէջ արգիւեալ չէ չորս հինդ անդամամուս- նանալը՝ թէ էրիկ մարդու և թէ կնիկ մարդու . ինչո՞ւ քո՞ կը յանդիմանէ Սամարայի կինը, ըսելով՝ ՚ձինդ այր փոխեալէ քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր . ամկ. դ. 18 :

Պ. յդ. կինը օրինաւոր ամուսնութիւն ամուսնացեալ չէր այն հինդ էրիկ մարդոց հետ, իբր թէ մէկին մէռնելէն ետքը միւսը առած չէր, այլ սիրօղներն էին, և վեցերարդն ալ այն- պէս էր, ինչպէս կինը վկայեց, ըսելով՝ ՚Զի՞ր իմ՝ այր || :

Ամսելի՝ որ Բառնաբաս անուանեցաւ առաքեաներէն . . . || Ակտացի՝ յազգեւ Կիովրացի . էր նը գիւղ՝ վոճառեաց և եթեր զգինսն, և եղ առ ոսս առաքելցն . Դործ . դ . 36 || :

Արդ՝ թէ որ Բառնաբաս Ակտացի էր, պէտք չէր՝ որ կալուած կամ գիւղ ունենար . քանոնի հին օրինաց մէջ գրածէ, || Ո՛չ գց Ակտացւցն քաժին և ժառանգութիւն ՚ի մէջ եղբարց իւրեանց, զի տէր ինքնին է մասն և ժառանգութիւն նոցա, որպէս և ասաց նոցա . թ, օրինաց . Ժ . 9 || : Ազա այդ մարդը ինչպէս կալուած կունենաց :

Պ. || Եկինչք կըսեն, թէ երկու բան պէտք է միտք քերեւ . Ամի՞ չարգիւց ած Ակտացւոց կալուած ունենալը աւետեաց երկիրէն գուրսաւ : Երկրորդ՝ այն աւետեաց երկրէն՝ իւր ձնասպարհի մղոնի մը չափ պարապապատ քաղաքներէն հնոի եղած միջոցներուն մէջ՝ Ակտացւոց աեղի աբրվի՝ իրենց անսառները արածվելու համար :

Առաջին ըսածնուս հաստատութիւնիր ՚ի դիրս թուոց՝ || Ժ. 20. Յերկրի նց մի՛ ժառանգեսես ||, և այն . և ՚ի 24 համարն նցն գլխոց՝ կըսէ ած . || Ի մէջ որդւոցն Խորացէլի մի՛ ժառանգեսեն վհճակ ||, ոսյինքն Խորացէլի երկրին մէջ . բայց ուրիշ տէղ կըրնային կալուած ունենալ, ինչպէս կըսեն մեկնիչք :

Երկրորդ ըսածնուս հաստատութիւն նցն թուոց գրոյն մէջ ունիր ՚ի գլ լեւ . || Հքաման տաւը որդւոցն Խորացէլի, և տացեն Ակտացւոց ՚ի վհճակաց կալուածց իւրեանց քաղաքս բնակութեանց և ըսուրաստանս, և եղիցին նոցա քաղաքք բնակութեան՝ և զատուցեալք նոցա, եղիցին խաշանց նոցա և ամենայն չորրուսանեաց նոցա || :

Այս խօսքէն մեկնիշները ընդհանրապէս կիմանան, թէ այն գիւղը կամ աղարակը՝ Բառնաբաս որ ծախեց, կամ աւետեաց երկիրէն գուրսաւ էր, կամ Եբրայեցւոց քաղաքներուն մէկին հեռաւոր միջոցներն էր . բայց եթէ միտք բերեմք՝ թէ Խորացէլի քաղաքներուն հեռաւոր միջոցները՝ Ակտացիք միայն կըրնային գործածէլ, բայց աիրութիւն չունեին ծախելու . ապա ասկից կերեայ՝ որ Բառնաբասի ծախած այն աղարակը՝ Խորացէլի երկրին մէջ չէր, որովհետեւ իւր տունը Կիարրոսի մէջ էր, ապա այն տեղէր իւր աղարակին ող ծախեց :

## Հ . ԻԴ

Հին օրինաց մէջ եթէ մէկը իւր եղբօրը կինը առնէր՝  
մէլքը չէր համարվէր . ինչո՞ւ Յովհաննէս մլրտիւ կը յանդի-  
մանէր չերտղէսը . տարիս . Ղ . 17 :

Պ . Ա . ԵԴ կինը որ չերտղէս առած էր , աւետարանիշը՝  
Փիլիպպոսի կին անուանելով , կը ցուցունէ՝ թէ կենդանի էր  
երիկը . ապա թէ ոչ այրի կանուանէր . ահա այս պատճառաւ  
շնութիւն կը համարվի հին օրինաց մէջ ևս այս գործը :

## Հ . ԻԴ

Հին օրինաց մէջ , եւէց . ի՛ւր . 1 . գըրված է , եթէ  
մէկը գողանաց արջառ մը կամ ոչխար մը , և մորթէ կամ  
ծախէ . հինգ արջառ մէկ արջառին փոխարէն տուգանք տո-  
նըվի , և չորս ոչխար՝ մէկ ոչխարին փոխարէն . ինչո՞ւ արջա-  
ռին հինգ կըսէ , և ոչխարին չորս :

Պ . Ա . Եկնիծք կըսէն , մէծ բան գողցօղս մէծ պատիժի ար-  
ժանաւոր է . արջառին գողութիւն ոչխարին գողութէն մէծ է .  
ապա արջառին գողը կը հարկադրի արդարութիւն հինգ արջառ  
հատուցանել , որով փոխարինած ըլլայ եղած վնասը՝ որ ար-  
ջառին ամիսոջը հասաւ . իւր երկրագործութէն յետ մնալով ,  
քանզի այդ գործցն մէջ ոչխարը պաշտօն մը չունի . և որովհե-  
տեւ աւելի է արջառին վաստակը , ՚ի հարկէ և անոր փոխա-  
րինական հատուցմունքն ալ աւելի կըլլայ :

## Հ . ԻԵ

Պ . Ա . Երամով ինչ և իցէ խաղ խաղալը , (որ է խումար) և  
փարայով պէս բոնելը օրինաւո՞ր է :

Պ . Ա . ԵՄ-պիսի խաղերը գարշելի և անվայել ըլլալը՝ բոլը  
ածապաշտը կը վկայէն . և պէս առվ խաղը լած խաղը և առնը-  
լած գրամը անիրաւ կը համարին բոլը ոք հարը : Բայց ես  
այս աեղ բաւական կը համարիմ միայն՝ ժող լուգովիկոս թա-  
գաւորին հըսլաբառակը , որ կըսէ . Պ . Եղիւեալեւիք մէր իշխա-  
նութեանը մէջ հնազանդեալ բոլը ժողովուրդը , որ չե հա-  
ւաքվին իրենց ասնը մէջ այսովորի խաղերու համար , (որ այն  
ամանակը Ակադեմեան կամ բերլանեան կըսիէր) . այսուհե-  
տեւ թողլ յայտնըլին բոլը գիմադ արձ ըլլօղնէրը՝ և ձեռք

“զարնօղները այսպիսի վնասակար գործերու . և այնպիսիները  
“այսուհետեւ վատահամբաւ . և անընդունակ համարվին իմ թա-  
“գաւորութեւս պաշտամանց մէջ : Հրաման կընեմք , որ խաղի  
“պատճառաւ եղած պարտքը՝ և բոլոր պարագաւորութիւննե-  
“րը՝ խոստամունքները՝ պէսերը՝ իրաւունքէ դուրս համարվին՝  
“և բոլոր կանոններէն հեռու :

## Հ . Ի Զ

**| Երդումը ի՞նչ պիտի ըլլայ :**

Պ . | Երդումին սահմանը այս է . || Վկայութի՝ այսինքն ՚ի վկայ  
կոչումն ածային անուան , առ ՚ի հաւասարմացուցանել , կամ  
հաստատել զնոստումն || : | Այս սահմանէն կերեայ՝ որ երկնից  
վրայ երդուօղը՝ կամ տւետարանին վրայ , կամ տաճարին , կամ  
քրիստոնէական հաւատոց վրայ՝ անոնց ստեղծօղը վկայ բերել  
կը համարվի , թէ ոչ ընդունելի չէ այսպիսի անշունչ իրաց ա-  
նունը ՚ի վեսցութի՝ բերել : | Հաւսուքերը՝ երբ վկայ կը բռո-  
նըլին բանի մը ստուգութեն համար , այն մտօքը պիտի առնը-  
լին , ըստ որում ածային ձշմարտութիւնն ՚ի նոսա կը փայլէ :  
թէ այս ձեռվ չըլլայ այն երդումը՝ առ ածպաշտութիւնն  
մերաբերեալ չըլլար :

## Հ . Ի Է

**| Երդումը քանի՞ կը բաժանի :**

Պ . | Երեք , հաստատական , խոստացողական , և նզովական :

## Հ . Ի Բ

**| Անչէ հաստատատական երդումը :**

Պ . | Այն՝ որով կը հաստատի այժմեան եղածը կամ անցեալը :

## Հ . Ի Թ

**| Խոստացողական երդումը ի՞նչ է :**

Պ . | Այն՝ որով կը հաստատի մէկ բանին խոստամունքը՝  
որ ապիլի է :

## Հ . Լ

**| Կովական երդումը ի՞նչ է :**

Պ. կ այն՝ որով ած վկայ և վրէժինդիր կը կոչեմք . եթէ սուտ ըլլայ մեր հաստատութիր , եթէ մեր խոստմունքը՝ կամ խոստմանը վկայ հաստատ չի մատք . ինչպէս ըսեմք՝ թէ ած վկայ պատուհանէ , թէ որ ստեմ . երբ այսպիսի նզովմունք բարկութեամբ զուրուցվին , հայհցութիւն կը համարվին՝ այ անունը և սրբոց անունը և մեր սուրբ խորհուրդները թշնամնոք առնըվելուն համար :

## Հ . Ա.Ա.

**Պ**օղոս առաքեալ կը գրէ , || Ե , Կրն . ա . 2 3 . Վկայ զանձ կոչեմ : Եւ քովմայ Ագուինացին կըսէ , || Երդնլով մարդն յած՝ խոստավանի զանձ հզօրագոյն , որց ճշմարտութիւնն է անազարտելի և հանաջումն ընդհանուր , և այսպէս յարգեղանձ : || Աստի և Պօղոս առաքեալը կըսէ , || Ապաքէն մարդիկ՝ որ ինչ ՚ի վերց է քան զինքեանո՞ յայն երդնուն : ||

Դպա այս վկայութիւններէն կերպեաց՝ որ երդումը իրաւամբը և ուղիղ բան մի է . այլ ինչպէս խմանամք քի խօսքը , որ կըսէ : || Այլէս ասեմ ձեզ՝ ամենելին մի երդնուլ . ևառ . ե . 3 4 : ||

Պ. կ սած վկայութիւններդ ճշմարիտ է , և բանն քի ևս առաւել ճշմարտգոյն . բայց ածաւըանք այսպիսի արգելումը կիմանան կիւրակէ աւուր ծառոցական գործ գործելու արգելմանը տէս : Հիւրաւի կիւրակէ աւուր մէջ ծառոցական գործ գործելու հրաման չի կայ , բայց միայն անհնարին հարկ մը ըլլայ նէ . ուստի երբ հարկը կըստիպէ՝ պէտք է ճշմարտութիւնը երդմանիք հաստատել , և ոչ հասարակ խօսքի մէջ խաչո՞ ԱՅ վկայ՝ ըսելով , երդում ընել : Վայպէս կըսեն ածարանիք , || Հրաման ան արգելուուլ զերդումն յայսմ է , զի դու ՚ի կողմանէ քումմէ մի ախորժեսցիս , իբր զի մի իբրեւ բարւոյ բերկութեամք իմ ցանկացիս երդնուլ : ||

## Հ . Ա.Բ.

**Վ**նչ կանոն հարկ է երդումի մը , որ օրինաւոր համրգի :

Պ. կ յէ հարցմունքիդ երեմլաւ մարդարէն այսպէս կըպատասխանէ : || Եւ երդնուցուս՝ եթէ կենդանի է տէր 、 ճշմարտութիւն , իրաւամբը , և արդարութիւն . Երեւ . դ . 2 : || Վայս երեք կանոնին կարօտ է օրինաւոր երդումը : Ճշմարտութիւն հարկ կընէ՝ որ երդում ընօղը թեթէ կարծիքովմը ընտրութիւն

ընէ երդումընելու բանին ճշմարիտ ըլլալու, այլ խոհեմութք քննութիւն ընէ : Երդումին արդար ըլլալուն՝ պէտք է այ ոք անունը ընդունացն աեղը բերան չառնել, այլ պատուով և միայն ըստ հարկաւորութեան, և իրաւամբք :

### Հ . ԼԴ

Արդեօք անուն կոտըլելու՝ կամ աքսոր ըլլալու՝ կոմ մեռնելու երկիւզով եղած երդումը՝ արդար կը համարի՞ :

Պ . Երբեմն այդպիսի սուտ երդումները պատշաճ համարեցու, և երանի թէ մեր ժամանակներն ալ այդ վնասակար մոլութիւնը նորեն չի բողոքոջէր :

Արդ՝ տանց գէմ օգոստինս այսպէս կը վճռէ . " Խակ աղնչ, զի կենցաղասէըս այսոքիկ առ ՚ի ոչ մեռանիլ մարդց, կամին՝ զի ոչ միայն սաեւցուք, այլ և ստերդումն լցուք : Եւ են քաջահմաւտք ՚ի նս, որը և կանոնս սահմանեն, թէ Երբ արժան իցէ սուտ երդնուուլ և երբ ոչ : Վկ թէ՝ ուր են աշ բիւըք արտասուաց, ուր մացուք՝ զօղեցուք ՚ի բարկութենէ ճշմարաւթէ, յորժամ ոչ միայն զանց առնեմք զգուշանալ ՚ի ստութենէ, այլ և իշխեմք ուսուցանել զստերդմնութիւն : Ուրեմն այս վճռցն նայելով ամենեին արդիլեալ է սուտ երդումը :

### Հ . ԼԴ

Երահամ նահապէտ երդումընել կուտայ ծառային, և կըսէ, || Դիբ զձեւն քո ընդ երանօք իմնովք, (այսինքն միջացըս վրայ) ծանրաց . իդ . 2 || : Ենչ մետք պիտի ըլլայ ծառային ձեռք գնել ատը իւր միջացը վրայ :

Պ . Աս ածաբանք կրսեն, թէ այս կերպ երդումը այն ժամանակը սովորութիւն չէր ամմանուն ալ, այլ միայն Արահամու և թռուին նորա, որոնք հոգւցն սրբց աղբեցութէ գիտէին քի ծնանիը իրենց ցեղէն . վասն որց միջացը վրայ ձեռք գնելը՝ քի վրայ երդումընել կը հասկըցի՞ :

### Հ . ԼԵ

Երբ Յակոբ նահապէտ երդումընել կուտայ Յովսէ-փին, որ իւր մարմնն մեռնելէն ետքը Եղիպատուի մէջ չի ձգէ . սուբբ գիբըը կըսէ յեաց . || Եւ երկիրեպադ Իսրայէլ ՚ի վերայ

գլուց գաւաղանի իւրց . ծնն . խէ . 31 || : Քակոբայ այդ եր-  
կըրպագելցն միաբը ի՞նչ պիտի ըլլոյ :

Պ . Ամանք կըսեն՝ թէ այսպէս ընելով Յակոբ նահապետ  
Յովսէփայ երազը հասաստեց . ծննդոյ . լէ . 9 : Ամանք ևս  
կըսեն , թէ ոյ երկրպագութիւնը ըստ . բայց Վարդան վարդա-  
պետն մեր կըսէ , անկողինին մէջ նստած ըլլալով իւր ձեռքը  
գաւաղան մը ունէր , որ կը նշանակէր երկրպագելի կենաց  
փոյտը , և այն մտօք երկրպագութիւն ըրաւ :

Քովսէփայ երազը եթէ կուզես իմանալ այս եր . կըտես-  
նար Յովսէփ՝ որ արեգակը և լուսինը և տասն և մէկ տասը իրեն  
երկրպագութիւն կընէին . որ հայրը մեկնեց՝ թէ ինքը և  
մայրը և տասն և մէկ եղթարքը իրեն երկրպագութիւն պիտի  
ընեն : Քիրաւի այն ժամանակը Յակոբ նահապետ բարկացաւ  
Յովսէփայ վրայ այդ երազին համար , բայց յետոյ աստուած-  
կատարեց , երբ Յովսէփ՝ Եղիպատացւոց Փարաւոն թագաւոր-  
թին փոխարքայ եղաւ :

### Հ . 1.2

Արդար մարդուն սուտ խօսիւ չե վայլէր . ինչո՞ւ Աբրա-  
համ սուտ խօսեցաւ Աբիմելիք թագաւորին Սառայի համար՝  
քցըս է ըսելով . ծննդոյ . ի . 2 : Քայտնի է՝ որ Սառայ քցըս  
չէր , այլ կինն էր :

Պ . Ուտ չէր Աբրահամու ըստածը , քանզի ինքը կը հաստա-  
տէ ետքը իւր ըստածը , թէ յիրաւի Սառայի մարդուն է հօր-  
մես՝ և ոչ մօրմէս , և եղե ինձ կին . ծննդոյ . ի . 12 :

### Հ . 1.3

Նա՞ր է որ մէկ մարդ մը իրեն կին ընէիւր քցըս , թէ  
և ոչ մէկ մօրէ ըլլայ . ոչ ասպաքէն բնական օրինաց գէմէ :

Պ . Անականի գէմ չէ . ապա թէ ոչ պէտք էր աստուծոյ  
Աղամ ստեղծած ժամանակը՝ երկու այր մարդ ևս և երկու  
կին ստեղծել . որ Աղամայ առաջին տղայքը առ հարկի իրենց  
քցըերը չաւնէին :

### Հ . 1.4

Ալ պատուիրէ Փարաւոն Եբրայեցի կանանց դայեկնե-  
րուն , որ ծնած արու զաւկընէրը խղդեն , և միայն աղջիկները

ապրեցընեն : Բայց այսպէս չէին ընէր, այլ արու զաւկըներն աւ կապրեցընէին, և Փարաւօնի սուտ կը խօսէին, և կըսէին՝ մեք այն յլի կանանց քուլ չէ գացած՝ իրենք իրենցմէ կը ծնաւնին . և կըսէ ուր գիրքը՝ թէ բարի կընէր ած այդ գայեկնեռուն . եւից . առ 20 : Խնչո՞ւ սուտ զուրցելը վարձ կունենայ :

Պ . Ասոււածաբանիք կըսէն, || Վարձատրեցաւ մարդասիրութիւնն և ոչ խարէութիւնն , բարեյօժարութիւնն մտաց և ոչ անօրէնութիւն ստախօսին || :

### Հ . 1.թ

Խնչո՞ւ արդարոց ոմանց աղաչանիքը ընդունելի ըըլլար առաջի աստուծոյ , ինչպէս Աբրահամու աղաչանիքը Սոդոմայեցւոց համար :

Պ . Ողոմայեցիք ինիքը զինքնին զղման չի պատրաստեցին , վարժանաւոր չեղան Աբրահամու աղաչանաց շնորհքին և այ ողորմութել . և իրենք իրենց համար աւ աղաչանիք չըրին այ , ուստի յուսահատ հիւանդաց նման գեղին օգուտը ոչինչ համարեցին : Եւս արդարոց աղաչանիքը՝ որ վնասումը համար կըլլայ , երբեմն ընդունելի ըըլլար , քանզի այն վնասէն մեծ օգուտ պիստի ըլլայ . ահա Պօրսու առաքեալ իւր մարմնոյն խայթին համար երեք անգամ աղաչանիք ըրաւ այ , և ընդունելի չեղաւ . լի , իրն . ժը . օ . քանզի այն վնասէն մեծ օգուտ կը յառաջանայ , և այ զօրութիւնը ՚ի տկարութե կերևաց :

### Հ . 1ս

Որբոց բարեխօսութիւնը առաջի այ ընդունելի՞ն :

Պ . Արիդոր Նարեկացին կըսէ , || Զորոց (զորբոց) կերպարանս և յիշատակս անուանցն աղաչէլ աստուած իսկ վարդապէտեաց , և նոքօք հաճութիւն ՚ի մէջ խռովութեան՝ արարչեղբան լուսաւորեաց . գլ , համ || :

Ի՞ս խօսքին վրայ Յակոբ ածալան այսպէս կըսէ . || Անուսոց նեղութե ժամանակին մէջ սուրբերէն բարեխօսութիւնդրէլ . և այս խօսքին վեայութիւ կառնէ Յօրայ գիրքէն , որ ած կըսէ , || Յօր ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր . զի թէ ոչ նմա ակն առեալէր , և թէ ոչ մը նը էր , կորուսեալէր իմ արդեօք զձեղ . յօն . ինը . օ . || : Կառ տեսլեամբ երկի ած-

Արիմելեքաց, և Ստուայի համար կըսէ՛ ॥ Արձակեա զելնդ յայր  
իւր, զի սոյր մարգարէ է, և արտացէ աղօթս վասն քո և կեց-  
ցէս . ծննդոյ ։ Ե ։ 7 ։

Վատուածածնի բարեխօսութէ՛լը չէ՞ր մի, որ կանայ Գալիլ-  
եացւոց հարսանեաց մէջ ջուրը դինի փոխվեցաւ: Վաեփաննոսի  
աղօթքը չէ՞ր մի՝ որ Սօլոս գոյլը՝ գատն Պօղոս եղաւ: Վիմն  
կախարդը՝ սրբոց բարեխօսութէ՛լ հաւատաց, և առաքեալնե-  
րուն ըստաւ, ॥ Աղաջեցէք գուռք վասն իմ զաէք ॥: Եւ այսպիսի  
վկայութիւններ անթիւ է:

## Հ ։ ԽԱ

ՎԵՂԱՆՈՐ մարդու ձեռօք սրանչելիք կըլայի:

Պ. Վարկու բան պէտք է նկատել սրանչելեաց վրայ, մէկ մը՝  
ինչ բանի համար ըլլալը, և միւսո՞ ինչ կերպով ըլլալը: Ի՞նչ  
բանի համար ըլլալը նկատեն նէ, երբեմն սրանչելիքը կըլայ,  
միայն ածային կարողութէ՛լ և հրամաննը և բարութէ՛լ ցցց տա-  
լու համար, իբր միիթարութէ՛լ նեղութէ՛ մէջ ինկածի մը, կամ  
ուղեղ վարդապետութիւնը մը ճշմարտելու համար. այսպիսի սրան-  
չելիքները երբեմն մեղանոր մարդու ձեռօք կըլայ. ինչպէս՝  
ո ինազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ, տէ՞ր տէ՞ր, ոչ յա-  
նուն քո մարդարեացաք, և յանուն քո գես հանաք, և յա-  
նուն քո զօրութիւն բաղումն արարաք: Եւ յայնժամ ասացից  
“յնոսա, եթէ ոչ երբեք գիտէի զձեզ, ՚ի բաց կացէք մինէն  
ամենեքեան” ոյք գործէք զանօթէնութիւնն: Տառ. կ. 22:

Արանչելիք ևս կընէ ած մարդկանց ձեռօք՝ որոնց անմե-  
ղութիւնը և սրբութիւն յայնելու համար. բայց սյս կերպով  
եղած հրաշքները մեղանոր մարդու ձեռօք չըլլար. քանին  
հրաշք ըստածդ՝ կնիք և ստուգութիւն է աստուածային հրա-  
մանին. և ինչպէս սուտ չի կընար ըսել աստուած, նշնպէս  
ստութեան ալ չի վկայէք:

Վ. րէ՝ սրանչելեաց ինչ կերպով ըլլալուն՝ սյսպէտ կըսէ  
օգոստինոս. Վարդը հրաշք կըդործէ՛ ինքը իրմէ բան մը չու-  
նենալով, սյլ կընէ իսաշին նշանաւ, կամ յի անունը տալով,  
կամ նըց մասունքով. և այսպիսի հրաշքները կըտրվին ածային  
զօրութէ՛ կամ այն սրբոց շնորհացը, որոնց է նէ մասունքնե-  
րը. սյսպէս ըլլալով կարելի է մեղանոր մարդու ձեռօք հրաշք  
ըլլալ. բայց սյսպիսի հրաշքներով այն մեղանորը պարտուց  
արժանաւոր չըլլար, սյլ սրամիւթ հրաշքին տիրոջն է:

Վ. Համարքեալք ըստին յի՞ն ։ Ամարդապէտ՝ տէսաք զբան՝ որ  
յանուն քո դևս հանէր, և մեր զկնի ոչ շրջէր, և արդելաք  
զնա ։ Տար ։ թ. 37 ։ Ինչ պատասխան կուտայ քո՛, և Մի արդե-  
լուք զնա ։ Քանզի հնար է և չար մարդուն հաղորդ ըլլալ  
այն շնորհին, որով դևերը հալածելու և հրաշք գործելու կա-  
րող ըլլայ ։ Բայց որքան որ ամբարիշտ և չար ըլլայ, չի կը նար  
յիսուսի անունովը հրաշք գործել, իսկցն յիսուսի անունը  
հայհցէլ վասն որց ըստ քրիստոս, և Զի որ ոչն է ընդ մեզ  
հակառակ, իմ մեր կցս է ։

## Հ. ԽԲ.

Վ. արմանաւոր բարիքը, ինչպէս մարմաց առողջութիւնն  
կամ հարսաւութիւնն, ինչո՞ւ ընդ հանրապէս չար մարդկանց ալ-  
կը արքվե՛ բարեաց ալ։

Պ. Վ. արմանաւոր և ժամանակաւոր կամ բնական բարիքը՝  
բարի մարդկանց վարձք չեն, քանզի հասարակ են բարեաց և  
չարաց, ոյ ատելիներուն և սիրելիներուն ։ և Օդոստինոս կըսէ,  
“Քանզի ուղեց ած՝ որ մարմանաւոր բարին հասարակաց ըլլայ,  
” բարի մարդկանց ալ և չարաց ալ, որ արդարները չեցանկան  
” այսպիսի բարիքներու, տեսնալով՝ որ չարերն ալ ունին ուստի  
” ժամանակաւոր և բնական բարիքը ած կուտայ չարերուն ալ  
” որ դերագցն ոմն չերևան նեց ։ ինչպէս Աբրահամ՝ աղախիննե  
” բուն զաւակացը անցաւոր բարիք տրվաւ ։ Բայց սիրելի և հարա  
” զատ որդեցն իսահակին՝ որ օրհնեց, իւր կալուածը տրվաւ։

## Հ. ԽԳ.

Վ. մուսնութե՛ բուն էութիւն ինչ բանի վայ կը կայանայ:

Պ. Վ. մուսնութե՛ էութիւն ոչ թէ մարմաց խառնակութըն  
է, այլ հոգւոց միաւորութք, որ մշանցնաւոր կապակցութիւն  
մի է ՚ի ներգործական հաւանութեան առն և կնոջ ծագեալ ։  
ապա ամուսնութեան իսկութիւնը մարմաց զուգաւորութեան  
վրայ կապված չէ ։ այսպէս կուտացանեն աստուածաբանք:  
Եւ եթէ կուզես ընդարձակ մեկնեմ ամուսնական էութիւն,  
բնական կամ քաղաքական դաշնակցութիւն ըլլալով ինչ բանի  
վրայ կայանալը իմացունեմ:

Վ. մուսնութիւն երկու կերպ է, մէկը կըսվե՛ Յեղանիլն, և  
միւսը կըսվե՛ Յեղեալ դոլն: յեղանիլ ըսածը՝ ամուսնութե

սկսել մի է . Յեղեալ գոլն՝ կատարին է : Վմուսնութե՛ է ութիր ըստ որում յեղանին՝ կը կայանայ երկու ամուսնացելոց օրինաւոր և յայտնի հաւանութեան վրայ փոխարինելու խոստմամբ մէկդ մէկու հետ՝ այսինքն առն և կնոջ : Իայց ամուսնական է ութիր ըստ որում յեղեալ գոլն՝ կապված չէ ամուսնութե՛ նպատակը գործածելու վրայ՝ մարմնոց խառնակութիր, այլ հաւանական ար սիրով հոգւոց միաւորութե՛լ վրայ է , իբր մըշանջենաւոր կապակցութիր մի է , որ կը ծագի ՚ի ներգործական հաւանութենէ առն և կնոջ . ահա անհերթելի և սառուգագոյն վկայութիւն՝ կանոն՝ և օրինակ քեզ ամենօրհնեալ սուրբ կցս Մարիամ ածածինն, որ կին սրբոյն Յովլէփայ ածածօրն կանուանի, բոյց միշտ կցս և անարատ մնաց, ոող վկայէ ար եկեղեցին և ամենայն ազգ ուղղափառ քրիստոնէից : Եշ թէ կին կանուանի սրբոյն Յովլէփայ, ինչպէս ըսաւ և հրեշտակը, || Յանձնական որդի Գաւթի, մի՛ երկնչեր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո . Տապթէսս . առ 20 || :

Վ յս բանին համար այսպէս կըսէ Օգոստինոս . || Ո՛չ էր կորուսեալ, և ոչ սուտ լինէր անուանին ամուսին . ուր չէր՝ և ոչ լինէլոց էր՝ խառնակութիւն մարմնոց || : Քանզի ինչ բանի վրայ որ գաշնակցութիր կըլլայ, անոր գործածութիր գաշնակցութեան է ութիւն կախված չէ, այլ երկրորդական և հետեւալ բան մի է գործածութիր: Խնչպէս ըսէմք թէ գետրոսը Պօղոսէն արա մը գնեց . Պետրոսին այն արտին առ ըլլալ արար վարելուն ցանելուն վրայ կապված չէ, այլ իրաւամբք գնելով իսկական աեր կըլլայ արտին, և իշխանութիր ունի այն արար գործածելու առանց անիրաւութեան :

Վ պա ամուսնութե՛ գաշնակցութիւնը կըկատարի առն և կնոջ փոխիսակի մէկդ մէկու իշխանութիւն տալով իրենց մարմիններուն վրայ . թէ և ամուսնական գործը այնուհետեւ չի գործածեն ալնէ, ևս օրինաւոր այր և կին են :

### Հ . ԽԴ

Վ մուսնական միաւորութիր կարգիլէ՞ ՚ի հաղորդութենէ : Պ . Վ մուսնական միաւորութիր ըստ որում հեշտութիր անձին և ցանկութիր մարմնոյ կարգիլէ ՚ի հաղորդութիր . և ար հաղորդութիր մերձեցողին պէտք է զղջումով և խոստավանութիր և աղաշխարութիր սրբիլ և մաքրիլ ՚ի մեղաց . քանզի ար պատարագին ասմունքին մէջ՝ երբ ժամարարը փրկարար խորհուրդը

կը բարձրացընէ առանց ծածկութի ՚ի տեսութիւն ժողովը -  
եան, կըսէ՝ ի սրբութի սրբոց ։ Հիրաւի սրբութիւն է, բայց  
սրբոց սրբութիւն է, և ոչ թէ պղծոց ։

### Հ ։ ԽԵ

Ուրբ գրցն մէջ գրված է՝ Երբ սեամբ ամպոյ աճեղէն  
տեսիլքը պիտի ըլլար, ի Եւ ասէ ցժողովուրդն, պատրաստ լւ-  
րուք՝ զերիս աւուրս ՚ի կանայս մի մերձենայք. Ելիշ. Ժթ. 15 ։ ։  
Վա մերձաւորութի ունեցօղին պէտք չէ հաղորդութի առ-  
նել, քանզի մերձաւորութիւնը մեղի ՚ի շնորհաց կը զրկէ, և  
այն գործը՝ որ ՚ի շնորհաց կը զրկէ, մեղք է։

Պ. Ա ստուածաբանք կըսէն՝ թէ մարդս ընդ այ երկու կեր-  
պիւ միաւորութիւն կունենայ, մէկը կըսվի՝ ըստ ունակութէն  
շնորհաց, որով մարդս միաւորի ընդ այ՝ որդեգրութեան  
շնորհօք, ծաւայութեան կամ պաշտօնի ։ Եւ միւս՝ միաւորի  
մարդն ընդ աստուծց՝ գործով, խոկմամբ, և սիրով։

Վ. Յ մ երկու կերպ միաւորութէն մէջ զանազանութի կայ.  
քանզի առաջին կերպ միաւորութիլ հարկաւոր է փրկութէ,  
այսինքն ըստ ունակութէն շնորհաց ըստանիս, քանզի հարի չէ՝  
միշտ ներդործութէն զանայինսն մտածել. ուստի այն գործը՝  
որ առաջին միաւորութէն մեղի կը հեռացընէ՝ միշտ մեղք է,  
քանզի այ շնորհը առանց մեղաց չի վերցըվիր մարդոյն վրայէն։

Տ. այց այն գործը՝ որ Երկրորդ միաւորութէն մեղի կը  
զատէ, այն միշտ մեղք է. քանզի զանայինսն մտածելը շատ  
կերպիւ կը վերցըվի մարդէն՝ առանց մեղաց + ահա մարմնաւոր  
զբաղմունքներ կան՝ որ զանայինսն մտածել չեն թողըւը, և  
մեղք չէ. ինչպէս մերձաւորութէն գործը այնպէս բան մի է,  
որ մարդս այն ժամանակը իւր մտածմունքը յանայնոց կը հե-  
ռացընէ։ Վաս անոնք՝ որ անային խոկումմը ունին, կամ  
սուրբ խորհրդոց հաղորդ եղողները՝ պէտք է որ օրինօք այն  
ժամանակին մաքուր ըլլան ամմէն կերպով. և այսպէս յայտնի  
եղաւ որ մերձաւորութեան գործը կարգիլէ երկրորդ միաւո-  
րութիւնն ընդ այ՝ այլ ոչ զառաջինն, ապա մեղք չէ։

### Հ ։ ԽԶ

Վ մուսնացեալ մարդը իւր կնոջմէն մօտ մարդ չունենար,  
որովհետեւ երկուքը մի մարմին են. ապա աճ Կոյ նահապեաին  
կըսէ, տապահնը մտիր դուն և քու որդիքը, քու կինդ՝ և քու

որդւոցդ կանայքը . ծննդոց . է . 7 : Ինչո՞ւ նցեն ետև իւր որդիքը կըսէ , կինը ըսէր , յետոյ կինը և որդւոցը կանայքը կըսէ :

Պ . Ակեկնիչք այսպէս իմանալով կըսէն , ածային հրամանին միտք բանին այն է՝ որ Նոյ իմանաց , թէ տապանին մէջ արգիլեալէ մերձաւորութիւնը : Արդ՝ եթէ տապանը եկեղեցւոյն օրինակ էր , թող ձանաշէն եկեղեցականք սուրբ եկեղեցւոյն գերազանցութիւնը : Եթէ տապանը ապաշխարութե օրինակ էր , թող լսեն զզջացօղք և պահճք պահճողք , և մանաւանդ սուրբ հաղորդութեան մերձեցօղք :

## Հ . Խէ

**Պ**ոռնիկ կին առնելը , կամ պոռնիկ հետ ամուսնանալը ամուսն օրինաց մէջ արգիլեալէ . արդ՝ ինչո՞ւ ած հրաման կընէ Ովսէ մարգարեին պոռնիկ կին առնել . «Ձէկ . ա . 2 :

Պ . Ակեպէտ այդ խօսքիդ խորհրդական մէկնութիւնը այսպէս կիմացվե , իւր զե Ովսէին պոռնիկ կին առնելը օրինակ էր միանալց պոռնիկ մարգիային բնութեանս ընդ որդւոյն այ . և մարգիային բնութիւնը պոռնիկ կըսվե , քանզի իւր ձշնարիտ պաշտելի ածը ձգէր էր , և կուապաշտութե կը հետեւէր . ինչպէս որ օրինաւոր ամուսնութե ունեցած իւր էրիկը կը ձգէ մէկ կին մը , և օտարաց հետ կը զուգաւորի՝ պոռնիկ կըսվի :

Դայց պիտի ըսես , խորհրդական մէկնութիւլ իմացանք , սակայն մարգարեին այդ գործը գործելը մեղք չէ՞մի . ածաբանք կը պատասխանեն այսպէս . || Ովսէէ մերձենալովն ՚ի յամուսին պոռնիկ՝ կամ ՚ի կին շնացող , ոչ շնացաւ և ոչ պոռնիեցաւ , վազ զե մերձեցաւ առ այն՝ որ իւր էր հրամանաւն այ՝ որ է հաստատիչ ամուսնութե || : Իբր զե պոռնիկ հետ ամուսնանալը մեղք է . ովլ ըստաւ՝ ած . և որովհետեւ Ովսէի միայն ինքն հրաման տըվաւ , մեղք չէ :

## Հ . ԽԸ

**Յ**այանի է՝ որ Աղամ մէկ կին ունէր , որ է Եւայ . այլ շատ կին առնելը ուսկի՞ց սկըսվեցաւ :

Պ . Ամեքէն , որ Երկու կին առաւ , մէկը Աղդա , և միւսը Սէլլա , ծննդոց . դ . 23 :

Հ • Խթ.

**Ա**նչո՞ւ Աղամայ առաջին ծնունդը իրենց քրոջը հետ  
կամուսնանպին . չէ՞ որ ան արդիլէր է՝ ըսելով , || Զառականս  
քեռ քո , թէ առ ՚ի հօրէ իցէ կամ առ ՚ի մօրէ , ՚ի տան  
ծնեալ կամ արտաքոյ , մի՛ յայտնեցես զառականս նորա .  
շետացաց . ժը . 9 || :

**Պ** . **Ա**ռաջինք երբ այսպէս կընէին , տակաւին ըսված օրէնքը  
արրված չէր , որ գրական և անպին օրէնք է : « Քանզի այս  
օրէնքը իբր չորս հարիւր տարի Աբրահամու մեռնելէն ետքը  
արրվեցաւ : » Այնպէս ևս այն տեղ կարդիլէ ան երկու քյոր  
՚ի միասին կին առնելը՝ քանի որ երկուքն ալ ողջ են . շետ .  
ժը . 18 : Բայց Յակոբ նահապէտ՝ երբ այս օրէնքը արր-  
ված չէր , երկու քյորը միատեղ առաւ , Լիս և Ռաքէլ ,  
որ երկուքն ալ կենդանի էին :

Հ • Ծ

**Ա**յլ մարդ մը և կին մը , կամ տղայ մը և աղջիկ մը իրարու-  
հետ դաշն ունենան մէկ զմէկ առնելու , ապա թէ խօսքէն  
մէկը դառնայ , այսչափ գումար դրանց հատուցանէ միւսին .  
և եթէ յիրաւի մէկը խօսքէն դառնայ նէ , հարկ է որ այն-  
չափ դրամը հատուցանէ :

**Պ** . **Ա**յս կերպ դաշնակցութիւնը պսակին աղատութիւն կը-  
բառնայ , և բռնութիւն եղած կըլլայ պսակը . բայց ըստ օրինաց  
մերոց՝ պէտք է որ պսակը կամաւոր ըլլայ . ուստի դաշնակ-  
ցութիւնները անվայելէ պահէլը . և հրաման չիկայ խնդրե-  
լու այն դաշնակցութիւն մէջի եղած դրամը՝ երկուքն մէկէն ,  
եթէ պսակիւլ չի կամենան :

Հ • ԾԱ

**Ա**յէկ մարդ մը իւր բոլոր ստացուածքը իւր կամքին ու-  
ղածին պէս կըրնայ գործածել . արդ՝ հարձն (օտալլիս) ալ  
ստացուած կը համարի իւր տիրոջը . ապա տէրը կըրնայ իւր  
կամքին ուղածին պէս մեղք գործել հետը :

**Պ** . **Հ**արձը ստացուած կը համարվի իւր տիրոջը իրաւամբք ,  
բայց ըստ որում պաշտօնատար և սպասաւոր , և ոչ թէ գործի  
մեղաց : ապա հետը մեղք գործելը իրաւանց դէմ է : Եւս

ուրիշ կերպ է միայն մարմնաւորէն ստացուած ունենալը , և  
ուրիշ կերպ է ՚ի հոգւց և ՚ի մարմնոյ ունենալը , ինչպէս որ  
մարդո ՚ի հոգւց և ՚ի մարմնոյ բաղկացեալ է . արդ՝ հոգին  
ուրիշն ստացուած չըլւար , ապա և մահացուցիչ գործոյ  
ներքեւ ալ չի ձգվել :

Հ . Տ. Բ.

### Հայհցութիւնն ի՞նչէ :

Պ . ( Ետոստինոս կըսէ , թէ հայհցութիւնը կիմանալը միայն  
չար բան ըսել ընդդէմ այ : Եւ այս չար ասութիւնը՝ կամ  
անմիջապէս կըսվի ընդդէմ այ , կամ միջնորդաբար այ արտ-  
րածոց վրայ , կամ սրբազն իրաց և սրբոց վրայ :

Հ . Տ. Գ.

Ա . Բանի՞ կերպ է հայհցութիւնը :

Պ . Երեք , Արտասանական , Անիծական , և Անարդական :

Հ . Տ. Դ.

### Արտասանական հայհցութիւնն ի՞նչէ :

Պ . Այն , որ այ չի վայէլու բան մը կըսվի , կտմ այ սեպ-  
հական եղած բան մը կը վերցըվի . ինչպէս՝ եթէ ըստ առաջնոյն  
ըսվի այ՝ անդութ , անողորմ , և այլն . և ըստ երկրորդին՝ վեր-  
ցըվի այ վրայէն ամենակարողութիւն , յառաջատեսուիլ , և այլն :

Հ . Տ. Ե.

### Անիծական հայհցութիւնն ի՞նչէ :

Պ . Այն , որով որ չար կը խնդրէ աստուծմէ , ինչպէս  
կընեն դատապարտեալները գժոխին մէջ , և յուսահատեալ-  
ներն ալ երկրիս վրայ :

Հ . Տ. Զ.

### Անարդական հայհցութիւնն ի՞նչէ :

Պ . Այն , որ երբ այ բան մը կըսվի , որ յիրաւի այ կը վայ-  
էլ , բոյց ըսօղը անպատշաճ կերպիւ և թշնամութեան ձեռվ

կըսէ , ինչպէս էր ուրացօղ Յուլիանոսին որդնալից բերանոյն հայհցութիւն , որ ըստ ՚ի գէմն քի , Յաղթեցեր Գալիլեացի :

### Հ . ՏԱԿ

**Պ**թէ անձնասպանութիւն մեղք է , անձին մահ ինդրելն ալ մեղք է , կամ ծնած օրը անիծել . ապա ինչո՞ւ Յօր կըսէ , Կորիցէ՛ օրն՝ յորում ես ծնայ , և գիշերն՝ յորում ասացին , թէ ահա արու . յօն . դ . 2 : Այնպէս և Երեմիա . ի . 14 :

Եւ Նարեկացին . գլ . դ :

**Պ**րդարև անձին մահ ինդրելը մահու չափ մեղք է՝ երբ ինդրողին գիտաւորութիւնը տրանջել ըլլոյ ընդդէմ ածային նախատեսութեան , կամ յուսահատութեան մաօք , և ոչ թէ քո ցուցուցած սրբոցդ նման . ապա ասոնք չի մեղանցեցին , որոնք հոգւով սրբով լցված էին : Հիրաւի իրենց անձին կը խնդրէին՝ բայց սրաերնուն կսկիծէն էր , և ոչ թէ մեղաւորաց նման տրանջելու պատճառաւու :

**Յ**օր՝ իւր սրտին ցաւէն զաւակացը կորստեանը վրայ աղեքը տրորելով՝ իւր ծնած օրը կանիծէ . իրը թէ իւր մեղաց պատճառաւուը՝ իւր զաւակունքը սկսան սպառիլ . Երեմիա մարդարեին ըստած ժողովրդեան վրայ ցաւելուն համար էր , որ գերի պիտի ըլլոյին : Ինչպէս որ Մովսէս կըսէր ոյ , և թէ թողուս դոցա (այսինքն ժողովրդեան յանցանքը կը ներեւս նէ) , թող . և թէ ոչ և զիս ջնջեա ՚ի դպրութենէդ քումմէ՝ յոր գրեցեր . Եւ լի . լի . 3 : Այսպէս Պօղոս առաքեալ ցաւակցելով Հրեկից վրայ՝ նզով կուզէր ըլլուն ՚ի քի . հառլ . թ . 3 :

**Վ**պա այսպիսի անէծքի խօսք ըստոնքերը արտնջելով , մահացու մեղք կը գործէն , և ոչ թէ այնպիսի սուրբերը՝ որ ոյ սիրովը սիրահարեալ վատեալ և բորբոքեալ գոլով , կը կամենային՝ որ իրենց կեանքը կտրի , և ածային ամենաբարի կամացը գէմ գործմը չի յառաջանայ :

### Հ . ՏԱՐ

**Վ**ակողմեան աւազակը ի՞նչ պատճառաւ զզացաւ , և ներողութեան արժանացաւ :

**Պ**արդ ապետք եկեղեցւոյ կըսէն , որովհետեւ ոյք կցուը խաչին աջ կողմը կայնէր էր՝ մարդկային ազգի միջնորդութիւննելու համար , այն կողմի խոչեալ աւազակն ալ անոր միջնոր-

ուռաթեամբը շնորհաց արժանի եղաւ . ինչպէս որ նորին միջնորդութելը ջուրը գինիի փոխվեցաւ , աւազակն ալ մեղաւորութենէ յարդարութել փոխվեցաւ : Եթէ Պետրոս առաքելցն շքովը ախտաւորները կառողջանային , ևս առաւել տիրամօրը ողորմութել շքովը՝ որ շնորհաց աղքիւր է , հոգւով ախտաւորները կառողջանան :

## Հ . Տ. Թ.

¶ Արահաւատ մեկը չի մկրտված՝ եթէ անհաւատները սպաննեն հաւատալուն համար , փրկեալ կը համարվի՞ արդեօք : Պ . ¶ Յ՞ փրկեալ կը համարվի , քանզի այնպիսի մարդուն մկրտութիւնը՝ մկրտութիւն արեան կըսվի , որով մարտիրոսական պատկ կառնէ :

## Հ . Կ

¶ Ինչ կերպ մեղք է , որ ընդդեմ հոգւոյն սրբոյ կըսվի , և թողութիւնը չունենալուն համար անթողիլ կըսվի :

Պ . ¶ արդապետք զանազան կերպիւ կը մեկնեն այս անթողիլ մեղքը . բայց ինքն երկնաւոր վարդապետը ստոցդ մեկնութիւնը կըսէ , || Ամէն ասեմ ձեզ , զի ամ թողի որդւոց մարդկան մեղք և հայհցութիւն՝ որչափ և հայհցիցեն , բայց որ հայհցեսցէ զհոդին պէ , ոչ ունիցի զթողութիւն յաւիտեան , այլ պարտապան լցից յաւիտենիցն մեղաց . հարիս . դ . 28 || :

¶ Արդ՝ ովկ պիսի ըլլայ այսպիսի հայհցիչը , կամ ինչէ հայհցութիւնը . ինքն քա միւս խօսքովը կը մեկնէ . երբ կըսէ՝ || Զի ասէին , թէ այս պիղծ գոյ ՚ի նմա : || Հայ յայտնապէս կերւայ՝ թէ հոգւոյն սրբոյ հայհցութիւն կամ անթողիլ մեղքը յատկապէս այն է՝ որ գերբնական բարիքները , որոնք հոգւոյն սրբոյ շնորհօքը կըլլան , հայհցիչները կըսէն՝ թէ սատանայական զօրութել եղան , ինչպէս որ զրէաները քրիստոսի համար կըսէին , բէեղզեբուղաւ հանէ զդես , այս է ըսելն թէ , || Զի ասէին՝ թէ այս պիղծ գոյ ՚ի նմա || :

## Հ . Կ. Ա

¶ Այս Մովսէս մօրմէն կը ծնանի , մայրը պրտուեայ արկդ մի կառնէ , և կը ծեփէ կպրաձիւթով , և զաւակը կը դնէ այն

արկղին մէջ , և կը ձգէ գետոյն մէկ քովը՝ վախ ունենալով  
Եղիպատոսի մանկակոտոր թագաւորէն : Վայ մօրը գործը արդ-  
եօք որդեսպանութիւն չի՞համարվիր :

Պ. Ա. Քանզի Յովսեառոս կը պատմէ , թէ մանկակոտոր  
Եղիպատոց իշխանութեն ժամանակը , տեսաւ Ամբամ Մովլ-  
սէսի հոյրը՝ որ իւր Յովսեբէլ կինը յղի էր , անհնարին նե-  
ղութէ մէջ ինկաւ՝ այ օգնականութենը աղաւինելով : Տեսիլ-  
քին մէջ ած կերևս իրեն՝ և սիրտ տալով կը միսիթարէ , որ  
իւր ժողովուրդը պիտի աղաւէ խիստ ծառացութենէն այն  
տղային միջնորդութենը՝ որ իւր կինը պիտի ծնանէր : Վայ  
զօրացտն Մովսէսի ծնողքը՝ և երբ ծնաւ մանուկը՝ միտք ըրին  
գաղանի տանը մէջ սնուցանել . բայց երեք ամիսէն ետքը շատ  
վախցան , որ չըլսյ քի տղային հետ իրենք աւ մեռցընեն ,  
աստուծոյ յանձնելով մանուկին աղաւիլը՝ հնարեցին արկ-  
զին մէջը գնել և գետը ձգել :

Վ. Ա. գործոյն որդեսպանութիւն չըլլալուն համար , և այ  
ողորմութենը աղաւինելով մանուկը գետը ձգվելուն համար ,  
Պօղսու առաքեալ կը վկայէ այսպէս . || Հաւատովք՝ զՄովսէս  
իրեն ծնան , թաքուցաւ ամիսս երիս ՚ի հարց իւրոց , քանզի  
տեսին կայտառ զմանուկն , և ոչ զանդիտեցին ՚ի սրբ թագա-  
ւորին . եբրայեցաց . ժամ . 23 || : Աւքեմն որդեսպանութիւն  
չէ , քանզի գիտէին՝ որ աստուծոյ նախախնամութենը ապրի  
պիտի . որ և ապրեցաւ թագաւորին թերմութիս անուն ալ-  
ջըկանը միջնորդութեամբը :

#### Հ . ԿԲ

Կ. Եղիշերվան պատահած գիճութիւն կարդիլէ՞ զմորդ ոք  
խորհրդոյն հաղորդութենէն :

Պ. Կ. Կիանալ պէտք է՝ որ գիճութեան մէջ մահացու մեղք  
աւ կըլլայ , ներելի մեղք ալ . քանզի եթէ խորհուրդ ըլլայ  
առանց մեղաց , ինչպէս եթէ մէկը արթնութենը մէջ կը կար-  
դայ և կը տրամաբանէ առանց ուրախութեն՝ այս մեղք չէ , ոչ  
մահուչափ և ոչ ներելի . բայց երբ այդ պատահմունքին հետ  
զգայութեան ալ ուրախութիւն կըլլայ , այն ժամանակը ներելի  
մեղք կըլլայ . երբ քանականութիւն ալ կամակից կըլլայ այն չար  
խորհրդոյն , և կը պատահի գիճութիւն , այն ժամանակը մեղք է .  
միոյն ըստ որում մահուչափ մեղք պատահած ժամանակը կար-  
դիլի ՚ի սուրբ հաղորդութենէ :

**Վ**արմնցն պղծութեանը համար կարգիլվե՞մ մարդ սուրբ  
խորհուրդէն :

Պ. Եթէ պղծութիլ բնական է և միշտ՝ արգելումն ըլլար •  
Եթէ պատահական է և դժուարաւ առողջանալի՝ պէտք է  
ժամանակ մը յետս մնալ ՚ի պատիւ սուրբ խորհրդոյն :

**Վ**եղաց համար ապաշխարօղները և զղջացօղները ինչո՞ւ  
ձայնով կաղաչեն, ձեռքերնին վեր կառնեն, կուրծքերնուն  
կը զարնեն :

Պ. Յայտնի է՝ որ մեղքը երեք բանով կը գործըմի, խորհրդ-  
դով՝ բանիւ՝ և գործով • ուսաի ապաշխարօղը՝ ապաշխաց  
երեք կերպ ցցց կուտայ ասոնց գէմ՝ բերանով կաղաչէ՝ բա-  
նիւ գործած մեղքերուն համար • կուրծքին կը զարնէ՝ խոր-  
հրդով գործած մեղքերուն համար • ձեռքերը վեր կառնէ՝  
գործով ըրած մեղքերուն համար :

**Վ**ովսէս՝ Եդիպտացին սպաննելով՝ որ կը հարկանէր զեւ-  
րացեցին, մարդասպանութիւն մեղք գործեց մի՛ • Ելջ. Է՛ • 12:

Պ. Արայէլացիք իրաւունք ունէին՝ իրենց անձին և ընկե-  
րին պաշտպանութիւննել անիրաւութիւն չարչարօղներուն գէմ։  
Վ. յս իրաւունքը Մովսէս գործածեց՝ մեծ եղայրական սի-  
րով անմեղ Երացեցին աղատելով • որ ուրիշ հնար չե կար  
աղատութիւն, այլ հարի եր սպաննել զեդիպտացին։ Վովսէս  
այս գործը ընելով՝ ուղեց ժողովութեան իմացունել ոյ կամաց  
հաճութիւնը, որ ինքը առաջնորդ և փրկիչ պիտի ընէ իրենց •  
ինչպէս կը վկայէ Ստեփաննոս՝ ըսելով, || Զմանաւ ածէր՝ թէ  
իմասցին եղքարը նորա, զի աստուած ՚ի ձեռն նորա տալոց եր  
զփրկութիւն նոցա • Գործ • Է • 35 ||:

Վ. յտ՝ Մովսէս երեք կերպ իրաւունքով վարեցաւ՝ Եդիպ-  
տացին սպաննած ժամանակը • այս է՝ արդար պատերազմնաւ,  
անմեղադրելի պաշտպանութեամը, և իրաւամէ իշխանութեան՝  
որ տըրոված եր իրեն :

## Հ . Կ. Զ.

Պահմք թէ Գետրոսը Պօղոսի հետ ատելութիւն ունենաւ լուն համար՝ Պօղոսին ըլլալու վնասները չի խափաներ, խափանելու կարողութիւն ունեցած տեղը. ինչպէս կը տեսնայ Պետրոս՝ որ գողերը Պօղոսին ստացուածքը կը տանին, կամ թշնամիները կապտահանեն արտը. և կամ կը տեսնայ՝ որ Պօղոսին բարեկամներուն մէկը կաշխատի՝ որ այդ վնասը ընել չի այց, անոր միտքը կը գարձունէ Գետրոսը, որ Պօղոսին ախրութիւն չընէ: Արդ՝ կուղեմ իմանալ, արդեօք Գետրոս այդ եղած վնասները հատուցանելու կը պարտաւորի՞:

Պ. թէ Գետրոս իւր աստիճանին հարկադրութէն՝ պարտաւորութիւն ունէր Պօղոսի վնասը խափանելու՝ և չի խափանեց, հարկէ է որ այն վնասը հատուցանէ: Իստիճանի հարկադրութիւն ըսելս այս եր, եթէ Գետրոս իշխան ըլլայ, կամ արտի պահապան, կամ քաղաքի հրամանատար, հարկէ է որ Պօղոսին վնասը հատուցանէ. քանզի փոխարինական արդարութեան դէմ մեղք գործած կը լայ, որովհետեւ հասարակութեան հետ դաշն ըրած է պաշտպանել հասարակութեան ստացուածքը. ապա թէ ոչ սիրոց աղադաւ պարտաւորութիւն չունի հատուցանելու:

Եւս ըսիր՝ թէ Գետրոսը Պօղոսին բարեկամը արգիւլեց, որ տիրութիւն չընէ Պօղոսի: Եթէ Գետրոս՝ Պօղոսին բարեկամը արգիւլեց սոււտ զուրցելով՝ կամ ուրիշ հնարքով նէ, պարտաւոր է այն վնասը հատուցանելու. եթէ աղաջելով մը արգիւլեց նէ, պարտաւոր չէ. քանզի արդարութեան դէմ չէ մեղքը, այլ սիրոց դէմ է:

## Հ . Կ. Ց.

Արդեօք թագաւորին մեղքին համար ժողովուրդը կը պատժըլի՞:

Պ. յա՞ քանզի Աբիմելէք այսպէս կըսէ Աբրահամու, Աքինչ գործեցեր գուռ զայր ընդ մեղ. մի՛ թէ մեղաք ինչ քեզ, զի ածեր ՚ի վերայ իմ և ՚ի վը թագաւորութէ իմոց մեղս մեծամեծս. Ճնն. Ղ. 9 ||: Որ ըսել կուղեր՝ թէ Սառա կնոջդ համար քցը ըսիր: Արդ՝ ժողովուրդը իբր ստացուած մի է իշխանին, կամ անդամէ քաղաքականին. և ինչպէս ած մարդու

մը բարկանայ նէ , անոր ինչքը կը հասցընէ , նցնպէս երբ  
թագաւորին կը բարկանայ , ժողովուրդը կը պատժէ :

## Հ . ԿԸ

**Յ**ակոբ նահապետ դաշն կընէ Լաբանու հետ՝ որ ոչխա-  
րաց կամ այծից խատուտիկ ծնածները իրեն ըլլայ վարձքի  
տեղ , քանզի Լաբանու հովեւութիւն կընէր , և այնպէս խատու-  
տիկ բնականաբար պէտք էր որ՝ ոմանք կը ծնանէին՝ և ոչ ար-  
հեստիւ . Յակոբ հնաբրովմը այնպէս ծնել կուտար . արդ՝  
ըրած դաշանցը նենգութիւն չէ՞ր մի . ծնն . Ե . 37 .

**Պ . Յ**ակոբայ այնպէս ընելը՝ դաշնքին նենգութիւն ընել  
չէր , քանզի ագառ և անօրէնն Լաբան շատ կը նեղացընէր  
զինքը . և իւր աշխատանացը վարձքը ուրիշ կերպովմը չէր կըր-  
նար առնել Յակոբ . քանզի նախ Լաբան ծանը անիրաւութիւն  
ըրած էր Յակոբայ Հռաքէլի համար , որ իրեն խոստացեր էր  
տալ և անոր տեղը տգեղ Լիան տրվաւ . և յետոյ եօթը տարի  
ևս ծառայել տրվաւ , և ապա Հռաքէլն ալ տրվաւ : Եւ որով-  
հետեւ իշխանաւոր չի կար իրաւունքը յայտնի ընելու , Յակոբ  
առ հարկի իւր վարձքը այնպէս հնաբրով առւաւ :

## Հ . ԿԹ

**Ա**ծնէ կուրին համար աշակերտները կը հարցընէին յի՞  
|| Ո՞յր մնաս է , սորա՞ , թէ հօր և մօր իւրց ։ Զհ . Ե . 2 . || . Վ . թ՝  
հօր և մօր մեղքովմը կը պատժըլի՞ն արդե՞օք որդիքը , կամ այն  
կյորը չի ծնելէն յառաջ կըրնա՞ր մեղանչէլ :

**Պ . Յ**ամար , կը պատժըլի՞ն ոմանք ուրիշներուն մեղքին հա-  
մար . քանզի ջրհեղեղին ժամանակը անմեղ մանկունքներն ալ  
խղզըլեցան : Դադանայ և Արիրոնի պատժյն մէջ՝ անմեղ  
մանկունքն ալ ընկղմեցան իրենց ծնողացը մեղքին համար :  
Բայց այն կցըրը՝ երբ մօըը արդանդին մէջ էր , մեղք ունե՞մ  
մի . Օդոսաինոս կըսէ , || Հատ թշուառութիւն մարմնաւոր ցաւ  
կը կրեն մանկունք սկզբանական մեղքի համար || :

## Հ . Հ

**Վ . թ՝** կուրին համար՝ քրիստոս թուքով շարախ չինէց ,  
և անովլ աչքը բացաւ , այդ լինչ միտք է :

Պ. ♦ ոգւովկով կուրացեալ Հըէաները դիւական զօրութեն կուսացին՝ քի ըրած հրաշքները . այժմ այս ձևով եղած բժշկուեն կընացին գիտնալ Հըէաները՝ թէ այն տեղ դիւական զօրութի չի կայ . քանզի գեր բնական պատճառները՝ որ ներգործական են, կրաւորական պատճառաց մօտեցընելով կընէ՝ ինչ որ կընէ . բայց շաղախնը՝ եթէ աչքի վրայ ծեփիլ, ոչ թէ լցու կուտայ, այլ լուսաւոր աչքը կը կուրացընէ . ապա հնար չէր բնապէս անանկ պատճառէ այնպիսի գործ յառաջդալ, այլ անոր միայն յատուկ է՝ որ ամենակարօղ զօրութի ունի : Կուզէր ևս քայց տալ, թէ ինքն է՝ որ հողէն ստեղծեց ամենն ալ, և աչա հողով լցու կուտայ տչաց . ևս թուք գործածելով ցայց կուտար, թէ ոչ միայն մարմնոցն կատարեալ մասանց մէջ ունի հրաշից զօրութիւն, այլ և թքցն մէջ ևս իւր ամենակարօղ զօրութիւնը կը փայլի :

## Հ. ՀԱ

Կայն կցըը կըսէր, || Գիտեմք՝ զի ած մեղաւորաց ոչ  
լսէ || . իրաւ էր արգեօք :

Պ. Ուուտ է, քանզի ածաբանք կըսէն, թէ այն կցըը թէ-  
պէտ այն ժամանակը տչօք լուսաւորեալ էր, բայց մտօք կա-  
տարեալ չէր :

## Հ. ՀԲ

Որոդայթ լարելը բոլոր օրէնքները կարգիլէն . ապա ինչո՞ւ  
ած կը պատուիրէ Խորացէլացւոց՝ Եգիպտասէն ելած ժամա-  
նակնին, Եգիպտացւոց որոդայթ լարել, անոնց ինչքը հնար-  
քով հետերնին տունելով :

Պ. Ասոք որոդայթ լարել չըսվիր, որովճետեւ ամենուն տէրը  
ինքն ած է . երբ մէկին ստացուածքը կառնէ՝ ուրիշն կուտայ,  
այն անոր օտարի ստացուածք չի համարվիր, քանզի իւր է աշ-  
խարհ լրիւ իւրով : Այց Սոլոմոն՝ Եգիպտացիներէն առնը-  
ված ինչքը՝ Եբրայեցւոց աշխատութեն վարձը կը համարի՝ ըսե-  
լով, || Հատացյ սրբոցն զվարձս վաստակոց նց . ինտառ . Ճ. 17 || :

## Հ. ՀԳ

Աստուած Մովսէսի կըսէ, || Ես խստացուցից զսիրան  
Փարաւոնի, և յաճախեցից զնշանս իմ և զարուեսս յերկըն

Եգիպտացւոց . Ելիջ . Է . 3 || : Արդ՝ Եթէ Փարաւոնի սիրով  
խստացունողը՝ և յամառութիւն ընել արվողը ինքն է , ինչ  
իրաւամբը կը պատժէ :

Պ . Ամենայն ուղղափառ վարդապետք՝ ոչ ուղղականապէս և  
դրականաբար կիմանան խստացուցանելը , այլ թշրթաբար .  
քանզի մարդոցն կամբը ոյ ձեռքն է , գործադրապէս և դրա-  
կանապէս կը շարժէ զինքը առ բարին . բայց երբ թողկուտայ  
իւր կամացը՝ այն ժամանակը գետ ՚ի առ չարն հակի , ահա  
այս է թշրթառութեան ներգործութիւնը : Դարձեալ իւրա-  
տացուցանել կը վիճ՝ քարշելով ֆարաւոնէն իւր շնորհքը .  
ինչպէս որ արեգակը իւր տաքութիւնը գէպ յինքն քարշելով  
գետնի խոնաւութիւնը կը չորնայ :

## Հ . ՀԴ

Խնչո՞ւ յերրորդ ժամու կը պատահի հոդւոյն սրբոց ե-  
ջումը առաքելոց վայ :

Պ . Այս մարդկային խարվիլը յերրորդ ժամու սկսաւ . ինչ-  
պէս սրբազնն հայրն մեր Ներսէս շնորհալին կը վկայէ . || Իւ-  
ծեալ յերրորդ ժամու օձին , զմիսս նախնւոյ մօրն Եւային || :  
Կոյնպէս յերրորդ ժամու մեր հոգեոր հնողացը՝ այսինքն ա-  
ռաքելոց վայ իջաւ կենդանաբար ոք հոգին , որ այն վերքին  
առողջացուցիչ ածային գեղն էր : Ճշորովվետե քի շարչարա-  
նաց սրագեւն էր , ինչպէս որ կըսէ , || Չե ևս էր հոգի , զի յա  
չէր փառաւորեալ || : Վայ ինչպէս յերրորդ ժամու խաչը ե-  
լաւ քն , որ կըսէ սուրը աւետարանը , || էր ժամ երրորդ , և  
հանին զնա ՚ի խաչ || . նոյնպէս յերրորդ ժամու եղաւ հոդ-  
ւոյն սրբոց իջումը :

## Հ . ՀԵ

Երբ Նեեման Սաորին կը խըսկըլի Եղիսէի քով՝ որ իւր  
բորոտութէն սրբըլի . Եթէ հրաշքով պիտի ըլլար՝ բաւական  
էր մէկ անդամ Յորդանան գետոյն մէջ լուացվելը . ինչո՞ւ  
եօթն անդամ լուացվել կուտայ . դ , Բագ . Ե . 10 :

Պ . Եիրաւի մէկ անդամը լուացվելը բաւական էր . բայց բա-  
ւական ալ չէր անոր մէջի եղած . Խորհրդոյն համար , այլ եօթն  
լուացմունք պէտք էր : Ճշ եօթն թիւը ինչ խորհուրդ ունե-  
նալը՝ գիտնաւլպէտք է , որ ոք գրոց մէջ շատ տեղ եօթն ըսել

չեհասկցվիր , ոյլ շատ կամ շտա անդամը ըսելէ : Յորդանան  
գետու՝ աղախարութեան խորհրդացն օրինակ էր . որով մեզի  
հստակընտլ պէտք է , որ եօթն՝ այսինքն շտա անդամ այս ա-  
պաշխարութեան ջրովը լուացվելու է . որ այն ժամանակը  
իւր հոգին այնպէս մաքրութիւն մը կստանայ , ինչպէս որ  
Նեհմանի մարմինը ունեցաւ , որ նոր ծնած տղայի մարմինի  
նման եղաւ ըստ վկայութեան սուրբ գրոց :

## Հ . Հ. Զ.

**Լ**աղիսէ Երբ Երկբովլէր , քաղաքացիր կաղացէն՝ որ իրենց  
ջուրը աղէկցընէ , որ անշտհ և անպաղաբեր էր . ինչո՞ւ իրենց  
կըսէ՝ նոր կուժմը բերէք ինձի և աղ , որ ջուրը բժշկէմ .  
Դ . Բաժառաբաց . Բ . 20 :

Պ . **Յ**այտնի է՝ որ աղը ոչ եթէ անշտհ ջուրը կաղէկցընէ ,  
այլ աղէկը կաւրէ . ուստի աղը բերել կուտայ՝ որ աստուծոյ  
ամենակարօղ զօրութեան շնորհը ցցց տայ , որ ներհակէն  
ներհակ բան յառաջ կը բերէ :

## Հ . Հ. Տ.

**Խ**րայելացւոց համար երկինքէն իջած մանանայն , ինչո՞ւ  
յառաւոտէ յառաւոտ ժողվել կուտար ած :

Պ . **Լ**յադէս կըսէ Սողոմօն , || Որպէս զի յայտնի լիցի ,  
թէ պարտէ նախ քան զարեգակն կանխել ՚ի գովութիւն  
քեզ . և յառաջ քան զծագել լուսոյ յանդիման լինիլ քեզ .  
Էտասպառին . Ժ . 28 || :

## Հ . Հ. Ը.

**Վ**արդէօք առաքեալք լեզուաց գիտութիւն առին , թէ  
իրենք Եբրայեցւոց լեզուաւը խօսէլով , ուրիշները իրենց  
լեզուաւը կիմանային :

Պ . **Ա**մանք կըսէն՝ թէ առաքեալք միայն Եբրայեցերէն կը  
խօսէին , և լազները իրենց լեզուաւը կիմանային : Եթէ այս-  
պէս ըլլար՝ առաքելոց եղած չէր ըլլար շնորհը՝ այլ լազնե-  
րուն . և զուկաս աւետարանիչ չըսէր՝ թէ լազները կիմա-  
նային , այլ առաքեալք խօսէին յիւրաքանչիւր լեզուս , և  
լազներ կիմանային իրենց լեզուաւը :

Յիսուս երբ դէպ ՚ի բեթանիա կելլար , ձանապարհին վրայ թուղի ծառ մը տեսաւ . և պատուղ ուղեց այն ծառէն՝ և չի գտաւ . քանզի թուղի ժամանակ չէր . ինչ երաւամբք այն ծառը անիծեց . նորիս . ԺՌ 13 :

Պ. Ա արդապետք այսպէս կիմանան . թղենին ուրիշ ծառերէն և բայսերէն զանազան է . քանզի ուրիշ ծառերը յառաջ ծաղիկ և տերե կուտան՝ և ապա պատուղ . բայց թղենին տերեին հետ կուտայ պատուղը , և երբեմն աերեէն ևս յառաջ : Վ. ՐԵ՝ այն թղենին , որունք մօեցաւ , միայն տերեւ տըմիլը էր առանց պարզ , ինչպէս որ կը պատահի տկար և անպիտան թղենեաց : Վ. ՐԻՄասոս անկէ հասուն պատուղ չէր ուղէր , քանզի գիտէր՝ որ ժամանակը չէ . այլ գոնէ խակ պատուղաւ չունէր՝ որ ժամանակն էր , և յն կը բաւականացը խակ պաղով , կամ հրաշքով կը բաղցրացընէր . այս պատճառաւ յանցաւոր եղաւ ծառը , մինչև այն ժամանակը պատուղ չի տալուն համար :

Խորհրդականապէս՝ թղենի ծառով կիմացիլ Եբրայական եկեղեցին . բայց բարյականապէս՝ ծոյլմեղաւորաց օրինակ կը համորի այն թղենին , որոնք արտապին բարի օք՝ այսինքն տերեօք զարդարեաւ կը լլան , և հոգեւորական բարի պատուղէ զուրկ կերեան , պատճառելլով թէ շատ բարիք պիտի գործէի , բայց յարմար ժամանակ չեղաւ : Խ. Ինչպէս մարմնաւոր բարիկներուն , որք տերեւ օրինակ են , ժամանակ կունենան , և հոգեւոր գործոց ժամանակ չեն ունենար . ապա ինչպէս որ անիծաւ թղենին , անոնք աւ իրաւամբք լսեն պիտի , և Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական || :

Վարդցս կեանքը՝ նոյ նահապէտին ժամանակը հարիւր քսան տարի սահմանվեցաւ աստուծմէ . ինչո՞ւ այնուհետեւ ոմանք աւելի ևս ասղրեցան :

Պ. Ա ուրբէ գերբը կըսէ , և Եւ եղիցին աւուրբ դոցա՝ ամք հարիւր և քսան . ծննդոց . Դ. 3 || : Վ. ՋՄ հարիւր քսան տարին՝ մարդցս կեանքին չափ չի արրվեցաւ . քանզի յայտնի է՝ որ այդ խօսքէն եաքը՝ Սէմ ապղեցաւ հինգ հարիւր տարի . Արիաքսաղ՝ երեք հարիւր երեսուն տարի . Եբեր՝ երկու հարիւր երեսուն տարի , և այլն :

Վ. թէ՝ այս խօսքը այսպէս իմանալու է, այս մարմնասէց  
մարդեկները առաւելապէս զես նեղացուցին, կարօղ եմ՝ որ  
մէկ վայրկեանի մէջ զերենք ջնջեմ. բայց որովհետև գլխած եմ,  
իրենց հարիւր քսան տարի ժամանակ կուտամ, եթէ այնչուի  
ժամանակին մէջ ծուլութք չապաշխարեն, ջրհեղեղով ամմէնն  
ալ կը ջնջեմ. այսպէս կիմանան ամ վարդապէտք: Աւ ասկից  
ալ յստանիէ, որ երբ այս խօսքը ըսվեցաւ, նոյ չորս հարիւր  
ութսուն տարեկան էր, որ քսան տարի յառաջ էր Սէթայ  
ծնունդէն. և երբ ջրհեղեղով եղաւ, վեց հարիւր տարեկան էր  
նոյ, ինչպէս կը վկայէ սուրբք գիրքը. ծննդոյ. է. || Աւքնն  
ստուգապէս կը հետևի, թէ այն հարիւր քսան տարին, որ ած-  
ըսաւ, ապաշխարելու ժամանակ տըրված էր մինչեւ ՚ի ջրհեղեղ,  
և ոչ թէ մարդոցս կենացը չափ և սահման:

## Հ. 25

|| Եռնելէն ետքը մարդոցս կամքը անփոխիս է ՚ի չարէն  
առ բարին՝ և ՚ի բարւցն առ չարն, ըստ որում մարմինէն զատ-  
ված հոգի է. սանդարձմետականաց գունդն ալ հոգի էր,  
ինչո՞ւ հպարտութեան մտօք փոխվեցան, որով և թշուառու-  
թեան մէջ ինկան:

Պ. || Գեղէն բնութիւն՝ այսինքն հոգին, քանի որ մէկի մը  
հետ միաւորված չէ, մէկ անգամ կը դառնայ առ բարին կամ  
առ չարն. և երբ մարմնց հետ միաւորի, կը բնայ փոփոխիլ  
՚ի բարւցն առ չարն՝ և ՚ի չարէն առ բարին. քանզի հոգին՝  
մարմնոյ նման բաղադրեալ չէ, այլ պարզ է, որ կողմը  
դառնայ՝ հոն կը մնայ. բայց մարմնոյ հետ միաւորվելով  
մարմինը ինչ կերպ որ փոխվի, հոգին ալ հետը կը դարձընէ.  
ալպէլու. գիրք, ը. գլ., ժ. :

## Հ. 26

\* Պոդոյ փրկութեան համար սուրբ եկեղեցին շատ հար-  
կաւոր բանէր կը սորվեցընէ մեղե. քրիստոս ինչո՞ւ միայն մէկ  
խօսքով մը սահման կը դնէ՝ ըսելով, || Այս է գործն ոյ, զի հա-  
ւատասովէք յայն՝ զոր առաքեացն նա. յօհ. ու. 29 ||: Վայ միայն  
քի որդի ոյ ըլլալուն հաւատալը՝ բաւական է փրկութե:

Պ. || Ստուածաբաբանք այսպէս կը մեկնեն այս բանը. || Զի հա-  
ւատասովէք յայն ||, ոչ թէ հաւատացցէք այնմ, քանզի դեերն

ալ նմա հաւատացին , այլ ոչ ՚ի նա (յաճ) : Խնչ պիտի ըլլայ հաւատան ՚ի նա , այս է՝ հաւատալով սկրել , հաւատալով անոր հրամանացը հետեւիլ և իւր անդամոցը հետ միաւորիլ . ահա այս է հաւատաքը՝ որ ած մեղմէ կը պահանջէ . և այս հաւատքն է , որ կը դաւանիմք Նիկիական հանգանակին մէջ ըսելով , || հաւատամիք ՚ի մի ած հայրն ամենակալ . . . և ՚ի տէր յանք որդի նորա միածին . . . հաւատամիք և ՚ի հոգին սուրբ յանելն և ՚ի կատարեալն || :

## Հ . 24

**Վ**արդոյս հոգին աւանդելը ի՞նչպէս կըլլայ . և աւանդելն յետոյ ի՞նչ որպիսութիւն կունենայ :

Պ . **Ո**ւրբ Գրիգոր եռամեծն այսպէս կը գրէ . Երբ սուրբ կյսն Մարիտմ հրեշտակէն իւր վերափոխման աւետիսը իմացաւ , իրեն մերձ եզօղները ժողվել արվաւ , և անոնց փրկութեանը շատ գիտնալու բաներ սորվըցուց . և այն սորվըցուցածներուն մէկը քու հարցմանդ պատասխանն է , որ կըսէ : Երկու հրեշտակ կերթան մարդոյն հոգին առնելու , մէկը չարութէ՝ և միւսը արդարութէ . Երբ մարդոյս օր մահուն ահեղ և սարսափելի է , չար հրեշտակը կը մօտենայ՝ և այն նեղը ինքած հոգին կը պահանջէ , և չար գեերն ալ այն ժամանակը կը մօտենան : Աւ եթէ ոք ըլլայ հոգւով և մարմնով և զայութեամբ , կուրախտնայ բարի հրեշտակը , և իրը բարեկամը և սիրելի ողջոն կուտայ իրեն , և չար գեերը տրամութքը կը հեռանան . և հրեշտակը այն հոգին կառնէ՝ քաղցրութք երկնից Ճանապարհը կելլայ . և յիրաւի օդային չար գեերը առաջքը կելլան , որ գտնան վրան մեղաց արատ մը , և երբ չեն կընառ գտնալ՝ հրեշտակէն ամաչելով յետս կը գտունան . և ոք հրեշտակը կը տանի այն հոգին առաջի աթոռոց ածութեն , և երկրպագութք ընել կուտայ , և ապա կը տանի՝ արդարոց կարգը կը շարէ , որուն Պօղոս առաքեալ՝ || Ոգիս անդրանկաց կատարելոց || կըսէ . և այն տեղ կը մնայ լցեալ անմահութեն յուսով մինչեւ դատաստանին օրը , որ հատուցումպիտի ըլլայ ըստ գործոց իւրաքանչիւրոց . ինչպէս Պաւէիթ կըսէ , || Քեղ սպասեն արդարըն , մինչեւ հատուցես || : Իսոյց միջակ արդար եզօղներուն հոգին , որ քիչ մը յանցանք կունենան , իրեն նման հոգիներուն կարգը կը գնէ . որոնք յցս ունին ոց ողորմութերդատաստանին օրը , և ոք եկելցւոյն աղօթից օժանդակութելը :

Աւ եթէ մեղօք շաղախեալ ըլլայ հոգին, կը տրտմի բարի  
հրեշտակը, և չար դեերը կուրախսանան, որ յաւիտենականա-  
պէս պիտի տանջեն այն հոգին։ Բայց այն հրեշտակը՝ թէպէտ  
տիամայ կամօք, բայց այ հրամանին համար աւանդել կուտայ  
հոգին, և ասուկալի կերպարանք մը ցոյց կուտայ իրեն, ինչպէս  
թագաւորի մը կողմանէ խրկըլուծ դահիճիմ մը կերպիւ՝ չարտ-  
գործները տանջելու, վէ որց չար հրեշտակ կըսին. ինչպէս կը  
դրէ դաւիթ։ Առաքեաց ՚ի նո տանջանս ՚ի ձեռն հրեշտակի  
չարի։ բայց ոչ թէ բնութք չար է հրեշտակը, այլ չարչար  
տանջանքներուն համար չար կանուանի. և դեր հոգի տան-  
դէլ տալու իշխանութիւն չունի։ Եւ երբ չար հոգին մարմինէն  
կը բաժանի, հրեշտակը կառնէ անիկայ՝ կելլայ դէպ ՚ի յօդը,  
դէմ կելլան դեերը գունդ գունդ, կուրախսանան այն կորս-  
տական հոգւոյն վրայ, և կուզեն՝ որ յափշտակէն ոք հրեշտա-  
կին ձեռքէն, և իւր ամմէն չար գործքերը յայտնի կը հանեն,  
և կըսէն՝ մեր է այդ հոգին, մեր կամացը հետևեցաւ. վէ որց  
Յովիշաննէս աւետարանիչ իւր ննջման աղօթքին մէջ կըսէ։  
|| Եւ ՚ի գալս իմում առ քեզ, ընկրկեացի հուրն շիջցի հնոցն.  
ամսէնցէն հրեշտակը չարին ||։ Վանդի տանջանաց գործիք-  
ներ կը պատրաստէն, կրակի բոց կը հանեն, սաստիկ սառնամա-  
նիք ցոյց կուտան, որ գիտայ մեղաւոր հոգին, թէ անոնք  
պիտի պատահին իրեն դատաստանին օրը, և ապա հրեշտակը  
յետս կը կանգնեցընէ անոնք։ Վ. բժան ըըլլար մեղաւոր հո-  
գին՝ երկինքը ելլալ և երկրպագութիւննել այ. այլ հրեշտակը  
կը տանի միւս չարագործ հոգիներուն քով. և կսպասէ ողբով  
և կոծով յաւիտենական տանջանաց, և թէպէտ չեն աւներ կա-  
տարեալ պատիժ իրենց չար գործոցը համար, բայց անտանելի  
տրամութք կը չարչարին. ինչպէս որ արդարներն ալ փառաց  
և պսակաց յուսով միշտ կուրախսանան և կը հանգչին։

## Հ ։ ԶԴ

(Օ) ննդական կանանց մաքրըլելուն համար գըրվածէ,  
այն՝ որ արու կը ծնանի, մինչև քառասուն օր. և այն՝ որ էգ  
կը ծնանի, մինչև ութսուն օր. ընտացաց. ժք. 2. Վ. նչ պիտի  
ըլլայ արուին և էգին զանազանութիւնը։

Պ. Ալլսէն՝ թէ արուին յղութէ սերմը մինչև քառասուն օր  
հաղեւ կը կաղմըլի՝ գցացական տեսակ ընդունելու. բայց  
էգինը մինչև ութսուն օր, որովհետեւ պաղուկ է սերմը և  
էգին բնութիւնը։

Հ . 26

**Ա**ղամ և Եւոյ գրահատին մէջ մերկ ըլլալով ինչո՞ւ չէին  
ամաչէր . ծննդոյ . բ . 25 :

Պ . **Բ**անի որ անմեղ էին՝ վավաշոտութիւն և ցանկութիւն չու-  
նէին , քանզի անկից յառաջ կուգայ ամօթը և պատկառանքը ,  
և այն անդամոց վրայ կերեւայ վավաշոտութիւնը :

Հ . 27

**Ա**յսենի և Աբելի պատարագին համար ոք գիրքը կըսէ .  
|| Հայեցաւ ած ՚ի հարել և ՚ի պատարագս նորա . և ՚ի Կայէն  
և ՚ի զոհս նը հայեցաւ . ծնն . դ . 4 || : Վ նշանով յայտնի  
եղաւ՝ Աբելի պատարագին ընդունելի ըլլալը , և Կայէնինը  
ընդունելի ըլլալը :

Պ . **Ի**նդ հանրապէս սուրբ հարու կըսէն , թէ ած երկինքէն  
կըսակ ՚ի ծեցընելով Աբելի պատարագին վրայ՝ յայտնի ըրաւ-  
անոր պատարագին ընդունելի ըլլալը , և այն կըսակով տնոր  
զոհը այրեց . բայց Կայէնինը այնպէս մնաց : Վ հա այս է ըն-  
դունելի ըլլալուն և ըլլալուն նշանը :

Հ . 28

**Ա**նովք և Եղիա ինչո՞ւ համար յերկինս համբարձան :

Պ . **Ե**րկուքին ալ պատճառը ոք գիրքէն այսպէս կիմանամք .  
Ենովքայ համար Սիրաք այսպէս կըսպատասխանէ . || Ենովք հա-  
ճայացաւ ոյ , և վերափոխեցաւ ՚ի դրախտն . զի տացէ չեթանո-  
սաց զապաշխարութիւն . լսդ . 16 || : Եւ Եղիայի համար այսպէս  
կըսին ոք գրոց մէջ . || Եղիա վո՛ նտիսանձայցդ լինելց՝ խընդ-  
բելց գլուէժն օրինաց՝ վերացաւ յերկինս . առ , առ . բ . 58 || :

Հ . 29

**Ա**նովք և Եղիա յերկինս մարմնով համբառնալէն ետքը  
բնակութիւննին ո՞ւր եղաւ :

Պ . **Ե**րդապէտք եկեղեցւոյ կըսէն , || Տեղի և վիճակ  
Ենովքայ և Եղիայի . թէ զիանդ կեան այժմ , և թէ արդե՛ք  
կերակըին , և զինչ գործեն , ծածկեաց ՚ի մէնջ ած : || Եւ ա-  
սոնց վրայ նախկին և այժմեան գիտունները զանազան կարծի-  
քով շատ բան կըսէն , և ոք գրոց մէջէն հիմն ըռւնին , և ոք

Եկեղեցւոյն վարդապետութէն վկայութիւն չունին . միայն սյս  
Ճշմարիտ է , որ կենդանի պիտի մնան մինչև ՚ի կատարած աշ-  
խարհի , և վերստին պիտի գան և նահատակ ըլլան . ինչպէս կը  
վկայէ Յովհաննէս աւետարանիչ իւր յոցտնութել մէջ : Տե՛ս  
՚ի Տեսութիւն հին կտակարանաց . հատոր , գուգակ , երես . 160 :

Հ . ԶԹ

Պափ և կշեռ՝ յորմէ՞ մնաց :  
Պ . Այէնէն : Տե՛ս ՚ի Տեսութիւն հին կտակարանաց . հա-  
տոր , առ ու բար :

Հ . Դ

Մնչո՞ւ կըպատուիրէ ած Կոյին , որ անսուրբ կենդանի-  
ներէն երկու երկու գնէ տապանին մէջ , և ՚ի ուրց՝ եօթն եօթն :  
Պ . Անսուրբ կենդանիները տապանին մէջ դրսվեցան՝ միայն  
տեսակնին պահվելու համար . բայց ոք կենդանիները՝ ոչ միայն  
տեսակնին պահվելու համար , այլ Կոյի և իւր ընտանեացը կե-  
րակուր ըլլալու համար , և յետոյ ոց զոհ ըլլալու համար :

Հ . ԴԱ

Ին ժամանակը ի՞նչ գերազանցութիւն ունէր անդրան-  
կութիւն , որ Յակով Կահապէտ կամք կընէ , և ոսպէ ապուրով  
մը Եսաւ Եղզօրմէն կըգնէ անդրանկութիւնը . ծնն . ին . 35 :

Պ . Պորս կերպ գերազանցութիւն ունէր անդրանիկը : Կախ  
անդրանիկը կըշնէր իւր եղբարցը վեայ : Երկրորդ՝ հօրը ինչքը  
բաժանման ժամանակը՝ երկու բաժին կառնէր : Երրորդ՝  
անդրանիկը քահանայ կըլլար իւր ընտանեացը : Պորբորդ՝ երբ  
հայրը մեռնէր , բուն օրհնութիւն անդրանիկին կուտար : Վսոնք  
համառօտեցինք Կուռնելիսաին ծննդոց մէկնութենէն :

Հ . ԴԲ

Երկրագործներէն տասանորդ առնելու սովորութիւնը  
յորմէ՞ մնաց :

Պ . Յովսէփէն , երբ Եգիպտոսի մէջ փոխաբոյ էր : Տե՛ս  
ծննդոց . խէ . 26 :

Արքազան առաքեալն Պետրոս, Երբ քի մարդեղուելը վրայ  
կը քարողէր նորահաւասներուն, կըսէ՝ ॥ Զնա նկատեալ խոր-  
հրդով և կանխագիտութեն այ, մատնեալ ՚ի ձեռս անօրինաց՝  
բեեռեալ ՚ի փայտի սպանիք ։ Գործ ։ լե ։ 23 ։ Արդ՝ եթէ ած-  
կը կամէր այն մահը, ինչ պատճառաւ մեղք գործեցին սպան-  
նողները, ո՞չ սպաքէն այ կամքը կատարած եղան :

Պ. Այդ վկայութիւնդ սրբազան առաքեալն Պետրոս՝ իբր  
խորին ածարան զանազաննեաց յած, սահման կամ վճիռ, և  
կանխագիտութիւն։ ՚ի, կատեալ ըսածը, այսինքն սահմանեալ  
խորհրդով և կանխագիտութեն այ. իբր թէ ըսել կուղէ, թէ  
ած ՚ի յաւիտենից նախատես էր, որ չըեայք հալածեն պիտի  
յար, և այնքան պիտի հակառակին՝ մինչև որ խաչեն, և խաչին  
վրայ սպաննեն. և որովհետեւ հարկ չէ այ մեղքը խափանել՝  
այն փրկարան մահը իրեն հանց ըլլալով. քանզի գերազանց  
գործ մի էր խոնարհութե՛ սիրոյ՝ արդարութե՛ և ամ գերա-  
գոյն առաքինութեանց. սահմանեց այս շարչարանիքը և մահը՝  
հանութեն կամօք, և թշնամեաց գործողութիւն՝ թշութութեն  
կամօք. Իբր ըսել կուղէր, չեմ կամիր այն մեղքը խափանել,  
որով իմ որդիս մեռնելով մարդկային ազգին այնշափ բարեկ  
յառաջ պիտի գան, և ինձի այնշափ փառք :

(Օրինակաւ խօսիմք, զօրապետ մը հրաման կնէ իւր զօ-  
րացը յարձակիլ տեղի մը վրայ, որ թշնամեաց սուրբին և կըրա-  
կին մէջէն պիտի անցնըլի. թէպէտ կամը կուտայ զօրապետը  
այն յարձակմանը, բայց թշնամեաց դէմ դնելը՝ իւր կամիրին  
ընդդէմ է. ևս եպալբուը իրաւամքը մահուտն վճիռ կուտայ  
մեղապարտ մէկի մը. բայց դահիճը կը մեղանչէ, եթէ թշնա-  
մութեամք այն հրամանը կատարէ. Վ. յսպէս չըելոց գործո-  
ղութիւնը անհանց էր, բայց քի շարչարանիքը հանց եղու-  
կըսէն ածարանիք. ॥ Քանզի ո՞չ անտի ել կամքն սպաննանելոց՝  
ուստի մեռանելոց. և ո՞չ ՚ի միոց ոգւց եղեւ գժնդակութիւն  
ապիրատութեանն՝ և համբերութիւն փրկչին ։

Հիառու աստուծմէ տըրվեցաւ, և ինքը իւր կամօքը ան-  
ձը ընծայեց վն հնազանդելոց այ՝ ՚ի ձեռս թշնամեաց իւրոց.  
ահա ուբն Պետրոս այս յօժարութիւն խօսեցաւ. որ չըլլայ թէ  
կարծեն չըեաները, թէ քի յաղթեցին իրենց հնաբըովը և  
զօրութենը. Վ. յլ երբ. քա կը համբերէր տանջանաց՝ վն ոք և  
գերագոյն վախճանի, ստատնայն կաշխատէր հնաբը գտնալ, որ

ՔԵ քարողութիւր ոչինչ հանե՛ Յուղան իրեն օգնական գտաւ՝  
որ արծաթ ստանայ . Հրէաները դիմակալութիւր վասն նա-  
խանձու , քահանայք՝ վասն շահախնդրութե՛ Պիղտոսու՝ վասն  
երկիւղին , և բոլորն ալ ոյ կամքը կատարելու համար չելին .  
ամենուն ալ դիտաւորութիւր ոյ դէմ մեղանցէլէր՝ որ իրենց  
թշլ կուտապ , ինչպէս որ ուրիշներուն մեղացը թշլ կուտապ :  
Այն զարհուրելի սեղանակապութիւնը , ոյն մահուանը  
վճիռը կապակցեալէր ասսուծց կանխագիտութեանը հետ , և  
աչ թէ իրենց ամբարշտութեան հրամանին հետ :

## Հ . Դ.

**Պ**ետրոս առաքելցն տեսիլք մը կերեայ՝ ինչողէս որ Պու-  
կաս աւետարանիչ կը պատմէ . «Տեսանէր զերկինս բացեալ , և  
» զըորեցունց տանոց կապեալ անօթ ինչ իրեւ կտաւց մեծի ,  
» իջեալ և նստեալ ՚ի վը երկրի . յորում էին ամ չորբոտանիք  
» և սողունք երկրի , և թռչունք երկնից : Եւ եղեւ ձայն առ  
» նա , արի Պետրէ , զէն և կեր՝ և Պետրոս ասէ , քաւ լցիր  
» որ , զի ոչ երբեք կերի խառնակ ինչ և անոր : Զայն եղեւ կը բ-  
» իին անգամառ նա , զոր ած սրբեաց՝ դու մի՛ պիղծ համարիր :  
Վակից կերեայ՝ որ բոլոր կենդանիները կուտպին . ինչո՞ւ զո-  
մանս պիղծ կանուանեմք :

Պ . Այս պէս իմանար տեսիլքին միտքը , ոոկ թէ կենդա-  
նիները անխափը ուտելու համար երեցած ըլլայ . այլ այն ժա-  
մանակը՝ որ Պետրոս տեսիլքը տեսաւ , կուռնելիոսէն՝ որ հե-  
թանոս էր , հրաւիրակ պիտի գայը իրեն , և Պետրոս հրէութէ  
եկած ըլլալով՝ կը զգուշանայր հեթանոսի տուն մտնալէն , կամ  
հեթանոսի հետ սեղան նստելէն . յառաջ այդ տեսիլքը կե-  
րեայ , որ գալու հրաւիրակները յետա չի գարձենէ : Եւ այս-  
պէս ըլլալը ինքն Պետրոս առաքեալ կը մեկնէ՝ այն հրաւիրակ-  
ներուն հետ կուռնելիոսի տունը երթալէն ետքը . քանզի  
երթալ հանգչէլէն ետքը , այն բազմութիւնը մէջ կըսկըսի ըսել .  
|| Դուք ինքնին դիտէք՝ ոոկ անմարթ է առն Հրէի հսկիլ կամ  
մերձենալ առ այլազգիս , և ինձ ած եցոյց՝ մի՛ զոք խառնակ  
կամ անսուրք ասել ՚ի մարդկանէ . Գոբք . Ժ . 28 || :

Տեսամը որ կենդանիները անխափը ուտելու համար չէր՝  
զէն և կեր ըսվածը , այլ ՚ի ձշմարիտ հաւատս եկողները՝ երբ  
ջերմեռանդ սրախւ կուդան յուղութիւր , մի՛ խտրեր , մի՛ անոր  
ըսեր , մի՛ պիղծ համարիր , որովհետեւ ոք աւտպանի ծնուռնդ-

կըլլան մեղի նման , այն ժամանակը համապատիւ եղբայր Են մեղի , և մեք և անոնք անդամք եմք մից գլխոցն յի : Եւ ահա վկայութիւ այս մեկնութենս Ներսէս շնորհալին ըսածը , որ կը գրէ ՚ի միջագետ Ասորւոց . “ ՞ աղագւ այնպիսէաց խարէու . “ թեանց՝ բերեք յառաջ և զիսաւեղէն անօթն , զոր ետես “ Պետրոս , որ ոչ վա զառւնս և զգայլս և զօնս և զգորատունս “ ուտելոյ ասացաւ , թէ արի Պետրէ զեն և կեր , այլ վասն “ զայնոսիկ պաշտողացն հեթանոսաց , որք սրբելոց եին ՚ի պղծութենէ ” ՚ի ձեռն քարողութեանն Պետրոսի , որպէս “ առընթեր բանն վկայէ :

## Հ . Ղ.Ե

**Վ**աղա Պօղոսի այս ըսածը ի՞նչ պիտի ըլլայ , || Ամենայն տրարածք ոյ բարիք Են , և չիք ինչ ՚ի նոսա խոսան , մանաւանդ որք գոհութեամբ ընդունիցին . զի սրբի բանիւն ոյ և աղօթիւք . ու , պիտի կառա ։ դ . 4 || :

Պ . **Պ**օղոս առաքեալ այսպէս ըսելով , ոչ թէ հրաման կուտայ մեռեալ մարմին ուտօղ կենդանիները ուտելու . այլ նոյն սրբաղան հայրապետը այն թուղթին մէջ այսպէս կրսէ , “ Օ զր ասէ Պօղոս , որ ոչ թէ զայս ասելով հրամանս տայ “ գաղանս շաղակերս լինիլ , և յամ գարշելս բերանաբաց եղ . “ ետլ գաղանաբար՝ առաւել քան զիեթանոսս : Վ . ՅԼ քանզի “ եին ոմանք ՚ի սուտ առաքելոցն՝ որ արգելուին զհաւասաց “ եալսն որ ՚ի հեթանոսաց , յամուսնութէ և ՚ի մայ , ոչ յան “ սուրբ կենդանեաց՝ այլ ՚ի սրբոցն և յուտելեացն . յաղագւ “ այնպիսէացն գրեաց նա զոյս :

## Հ . Ղ.Զ

**Վ**աղութիւն ընօղը եթէ երթայ խոստովանի քահանային իւր ըրած գողութիւնընէ , թողութիւնն կառնէ՞ , և կաղատի՞ այն մեղքէն :

Պ . **Վ**աղացեալ իրին թողութիւն՝ միայն այն ինչքին տէրը կուտայ , անոր պէտք է խոստովանիլ , որուն կամ կը հատուցանէ , կամ այն ինչքին տէրը կը բաշխէ իրեն , որով կաղատի այն մեղքէն . և ահա սուրբ Ներսէս շնորհալին այսպէս կրսէ , “ Ձաղողութէ իջևանութիւն՝ գողոցն , յաղագւ գողացելոյ նիրին , որ տէրն է գողացեալ գոյին ունի , և ոչ օտար ոք խոս-

ատոլոնահայր։ Ա ասն որց զե հէ խոստովանի նմա (այսինքն մանին տիրոջը), և ոչ հատուցանե՝ զոր գողացաւն ՚ի նմանե և զոկեաց, ոչ ասեմ չորեքին ըսա մաքսաւորին Զաքեի, այլ ոչ զոր էառն, ոչ ընդունի թողութիւն յաւիտեան։

## Հ ։ Պ Ե

**¶** Կողացեալ իրին փոխարէն՝ աղքատաց ողօրմութիւն տըրմի նէ, թողութիւն կըլլայ։

Պ. **¶** Հա պատասխանին հարցմանդ ։ || Որ մատուցանէ զող- ջակեզ ՚ի գցացութէ աղքատաց՝ իբրու թէ որ զենու զորդի առաջի աշաց հօր իւրց ։ Այսակ լի՛ ։ 24 || ։

## Հ ։ Պ Ը

**¶** Կնչ տեսակ մեղքի կը նմանի գողութիւնը։

Պ. **¶** Արդասպանութեան նման բան մի է ։ Ինչպէս կըսէ Սիրաք ։ || Որ հեղու զարիւն՝ և որ զոկանս առնէ վարձկանի, եղբարք են ։ Ի՞՛ ։ 27 || ։ Բայս պիտի թէ զոկանքը գողութի կը համարվի ։ Այս գողութէ մէկ տեսակն աւ այն է ։

## Հ ։ Պ Ը

**¶** Ուրբ գիրքը կըսէ թէ վերջին դատողական տաեւանը Յովսափաթու ձորցն մէջ պիտի ըլլայ ։ Այնքան մարդիկ այն ձո- րցն մէջ ինչպէս պիտի պարունակվին։

Պ. **¶** յն ձորցն մէջ վերջին դատաստանը պիտի ըլլայ կըսվի նէ, ոչ եթէ ամ դատելի մարդիկ այն տեղ պիտի պարունակ- վին, այլ այն ձորը ատեւանի միջին տեղը կը համարվի, և բոլոր աեղեւը որովհետեւ հարթ և հաւասար պիտի ըլլան, ամեն կողմն աւ կըկանգնին, որքան տեղի որ բաւական ըլլայ ամմարդ կան ։ || մանք ևս կըսեն, որովհետեւ արդարները քի աջ կողմը պիտի կանգնին, և մեղաւորները ձախ կողմը ։ աջ կողմով՝ կիմանան արդարներուն կանգնիլը քըիստոսի հետ՝ ՚ի վերսայ բարձրա- գցն օդցն՝ իբր ՚ի փառաւոր տեղուոջ ։ և ձախ կողմով՝ մեղա- ւորաց կանգնիլը ՚ի վերսայ երկը՝ իբր յանարդ տեղուոջ։

## Հ ։ Տ

Ենմեղ մեռեալ մանկունքները , սուրբ մկրտութեամբ  
աղաս լլլալով սկզբնական մեղքէն՝ մեռեր են . անոնք ալ դա-  
տաստանի պիտի ելլան :

Պ. Եմ , անոնք ալ դատաստանի պիտի ելլան , ինչպէս կը  
վկայէ Յովհաննէս աւետարանիչ իւր յայտնութեր մէջ , ըստ-  
լով || Եւ տեսի զմեռեալս՝ զմեծամեծս և զփոքունս , որը կոյին  
առաջի աթոռոյն . ի . 12 || : Քիրաւի առանձնական կամ ներ-  
գործական յանցանք մը ցունին , որ այն մեղաց դատաստանը ըւ-  
լայ , բայց վայելուչէ՝ որ իրենց համար ալ հրապարակական և  
վերջին վճիռ մը ըլլոյ՝ այն աշխարհագումար առեանին մէջ ,  
որ քրիստոսի բարձմաղատիկ շնորհը , և իւր պատուական արեան  
տրդ իւնիքը առաւելապէս կերեւի այն փրկեալ մանկանց անմե-  
ղութեամբը , որոնք առանց բարի գործոց՝ միացն սկզբնական  
մեղքէն աղատելով , նորին շնորհօքը ՚ի յերկինս պիտի փառա-  
ւորին յաւիտենական փառագք :

## Հ ։ ՏԱ

Պ. Առանց մկրտութե մեռնօղ երախնայք , որոնք սկզբնական  
մեղքը մեռած են , անոնք ինչպէս պատիժ ունին :

Պ. Ենդ հանուր կարծիք է բոլոր ածաբանից եկեղեցւց և  
երկելի նրբոց վարդապէտաց , թէ միայն սկզբնական մեղքը՝  
այսինքն առանց մկրտութե մեռեալ մանկանց պատիժը՝ ոչ է  
պատիժ զգայական , ներդործական մեղք ունեցող մեղաւորաց  
նման , այլ միայն պատիժ զըկման յերանական տեսութենէ այ :


ՎԵՐՋ ՉՈՐԻՈՐԴ ՄԱՍԻՆ



# ՔԱՆԱԿԻԹ-ԹԻՒՆ ԽՆԳԹՈՅ

ՄԱՍԻՆ · Ե

ՔԱՆԱԿԻ ԿՐԵՅ ԱՐԵՅ



ՀԱՐՑՈՒՄ Ա Ա Ա Զ Ի Ն

Ա դամայ խօսակցութիւնը ի՞նչ լեզուաւ էր :

Պ Ա Տ Ա Ա Խ Ա Ն Ի

Ա յս առաջին հարցմանդ երկարօրէն պատասխանի պէտք  
է . բայց համառօտ կերպիւ մը խօսիմք հաստատութեամք  
ի սուրբ գրոց :

Վ ը ր է՝ Ադամ նախահօրն մերց խօսակցութեան լեզուն՝  
Հայոց լեզուն էր . և այս է հաստատութիւն բանիս . քանզի  
առաջին նահապետք՝ Հայոց աշխարհին մէջ յետ. ջրհեղեղին  
իբր հարիւր միտուն տարիի տափ բնակելով անեցան, և իբրենց  
բազմութենը բաւական տեղի գտնալու համար ցրուեցան ոմանք  
անկից . և ոմանք ևս այն տեղ տուն և այդի և բաւական բնա-  
կութեն տեղի ունեին, վաս որց չի ցրուեցան, որոնցմէ մէկը նոյ  
նահապետն էր, որ Հայաստան երկրին մէջ տապանէն իջաւ, և  
այն տեղ բնակեցաւ, որուն համար ոք գիրքը՝ ոյլ տեղափո-  
խութիւնը չի գրէր : Աշ այս ցրուօղները եկան Սենատը երկ-  
րին դաշտին մէջ սկսան միաբանիլ, և աշտարակ մը շինել, որ էր  
չարութեն գործ ըստ ոք գրոց . քանզի ան տեսաւ՝ որ այս չա-  
րութիւն լեզուաց միութեն կը գործ են, վաս որց միայն այն տեղ  
անոնք պատժեց լեզունին խառնակելով . ինչուս ոք գիրքը  
կըսէ, || խառնակեցուք անդ զեզուս նոցա . Ժ ա ն դ ո ց . Ժ ա ն դ ո ց . 7 || :

Եւ յիրաւի այ արդարութեանը դէմ է , անոնց հետ չեմ չեմ միաբանօղներն աւ պատժել . ապա կը հետևի՝ որ նոյ և այլ չեմ միաբանօղք այս լեզուի խառնակութեան պատիմը չեմ կրեցին : Եւ ապա ելաւ հայկ այս միաբանութեան մէջէն՝ եկաւ իւր հայրենի երկերը . և գիտէր՝ որ իւր նախահաւը՝ այսինքն նոյ տակաւին ողջ է . քանզի ըստ նը գրոց՝ նոյ ջրհեղեղէն ետքը երեք հարիւր յիսուն տարի ևս ապրեցաւ . և աշտարակին շինութիւն հարիւր յիսուն տարիի չափ եաքը եղաւ ջրհեղեղէն : Եւ բնակեցաւ հայկ իւր հայրենիքին մէջ , և այն ժամանակը ներբովթայ հպարտ ամբարտանութիւնը ևս նուածեց , և բնաջինջ ըրաւ այն ածընդդէմ գործոցն հետևօղներուն մէկը մանաւանդ գլխաւորը . և ձգեց այն լեզուն՝ որ երկնառաք պատուհան էր , և իւր նախնեացը հետ կը խօսէր տուաջին անմեղութեան լեզուաւը , որ յԱղամայ իրենց հասէր էր որդոց յորդի . ապա Աղամայ նախահօրն մերց խօսակցութեան լեզուն՝ հայոց լեզուն էր , որ յաջորդութեամբ մինչեւ ցայ հասէր էր , և նշյէն մինչեւ առ մեզ հայաստան երկրի մէջ , և ՚ի մէնջ մինչեւ ՚ի կատարած աշխարհի :

Կան ևս այլ տպացոյց հաստատուե այս բանիս վրայ , առել յանուանէ նախնի տեղեաց , և ՚ի ստուգաբարանութէ անուանց կենդանեաց , և ՚ի բարեյարմար կաղընութէ լեզուիս , որոց ամենն աւ կը թողըւմք բազմահմուա խմաստնոց և ներհուն գիտնոց :

## Հ • Բ

**Ա**լբավի թէ եօթանասուն և երկու հոգի էին այն աշտարակին շինօղներուն գլխաւորները , վասն որոց լեզուները երբ խառնակեցան՝ եօթանասուն և երկու տեսակ լեզու եղաւ . արդ՝ մինչեւ ցայժմ ամբողջ եօթանասուն և երկու տեսակ լեզու կայ մի :

Պ . յ՞ կայ . և կըսեն՝ թէ մէկը մէկէ ածանցմամբ ևս եւլցաւ . քանզի կը վկայեն , թէ գիւղմէնին մէկը հարիւր և քսան տեսակ գրով և լեզուաւ տպել տըլած է տէրունական աղօթքը՝ համատրդամ քաղաքին մէջ :

## Հ • Գ

**Ա**ղամայ աւետեաց երկերը չի թաղվեցաւ , ինչպէս կը լոյն որ գլուխը Գողպոթայ լեռան վրայ է կըսեն :

¶ . ¶ արդապետք կը գրեն, թէ Նոյ ջերմեռանդութեամբ  
և պատուով՝ Աղամայ ոսկորները ժողվեց՝ տապանին մէջ գրաւ  
ջրհեղեղին ժամանակը . և ջրհեղեղը դադարելէն եաբը՝ այն  
ոսկորները իւր որդւոցը բաժին ըրաւ . Սեմ որդւոյն բաժինը՝  
Աղամայ գլուխն էր, որ այս տղային վիճակ՝ չըկասանի  
կողմը ինկաւ . Իբր թէ Նոյ մարդարէական հոգւով այս այս-  
պէս ըրաւ, գիտնալով՝ որ քի մահը այն տեղ պիտի ըլլայ, և  
Աղամայ յարութիւն պիտի տայ . ահա այս պատճառուու-  
Աղամայ գլուխը դողդոթայ է կըսվի :

## Հ . Դ

¶ . յդ տեղը Գողգոթայ ըսվելուն պատճառն ի՞նչ է :  
¶ . ¶ ահապարակց գլխատոնն տեղի էր . և կառափնատեղ  
կամ գագաթ ևս կըսվէր, որովհետեւ Աղամայ գլուխը հնի էր :

## Հ . Ե

¶ . դամայ խաբվելը ինքիրմէն էր, եթէ սատանային :  
¶ . պատանայն մարդու չի կըրնար խաբել, եթէ չի յօժարի  
անոր թելադրութեանը . արդ՝ Աղամ ոչ եթէ իբր անդէտ  
խաբվեցաւ, այլ ինքն ալ կամք ըրաւ անոր ըսածին . քանզի  
իւր բանականութելը և իմաստութելը չէր վայլէր հաւատաւ՝  
թէ օձը սողուն մը ըլլալով՝ կըրնայ բնապէս խօսիլ . չէր վայլէր  
հաւատաւ՝ թէ տարրական պառուղը՝ կըրնայ ածանալ . շաս-  
քիչ էր օձ կերպարանեալ բանսարկուին ստութէ զօրութիւլ-  
իրեն ածապարգե իմաստութէն . ստունային թելադրութիւլ  
յիմարական խօսք մի էր, ի՞նչ կարօտութիւն ունէր Աղամ եթէ  
ունկնդիր ըըլլար . բայց յօժարութիւն կամաց ցուցունելուն  
համար կըսվի, Աղամ խաբվեցաւ օձէն՝ կամ սատանային :

¶ . Հա և Ոսկեբերան այսպէս վկայութիւն կուտայ՝ ըսե-  
լով՝ ի ձեւ հարցման ՚ի գիրն՝ Ո՛չոք մնասի, եթէ ոչ միւրմէ :  
” Ես (այսինքն սատանայն) ոչ մնասեաց զԱղամ, և յերկիր  
” կործանեաց, և ՚ի դրախտէ անտի արտաքս վարեաց : (Իբր  
” թէ մէկը հարցընէ, և ինքն ալ այսպէս պատասխան կուտայ : )  
” Ո՛չ նա, այլ մնասելցն (այսինքն Աղամայ) վատութիւն . և  
” զի ոչ զուարթուն հանդիպեցաւ նախահայրն և ոչ հսկող :  
” Քանզի որ այնպիսի և այնչափ մեքենայս տուեալ՝ ՚ի մէջ մա-  
” տցց, և ոչինչ կարօղ եղեւ սասանեցուցանել զՅով, զիա՞րդ



ա արդեօք խոնարհագուշիւքն նշան յաղթութեան կանգնէթ  
”ի վերաց Ադամաց , եթէ ոչ նա ինքնին ընտանի վատութեն  
” մատն եղեալէր անձին իւրոյ :

## Հ . Զ

|| Ե գիրքը՝ ծնն . դ . 24 . կըսէ՝ Եհան զԱդամ , և այլն .  
իւր դրախտին դիմացը . արդեօք ո՞ւր պիտի ըլլայ այդ տեղը :

Պ . || Սաւեն՝ թէ հրեշտակի ձեռօք առնըլեցաւ Ադամդրախ-  
տէն դուրս , ինչպէս եղան Ամբակում կամ Տօրիթ . և բեր-  
վեցաւ Քեթրոնի երկիրը՝ ուր տեղոր ըստեղծվեցաւ , և հոն  
մնաց , և յետոյ թաղվեցաւ :

## Հ . Է

|| Ըբան ժամանակ մնաց գրախտին մէջ :

Պ . || մենայն սրբազն հարք կը վկայեն , թէ վեցերորդ օրը  
ստեղծվեցաւ Ադամ , և նցն օրը մեղանչեց :

## Հ . Ը

|| Ճառ կենաց ըսվածը ի՞նչ ծառ էր :

Պ . || ատ գիտնականք զմնազան բան կը խօսին . բայց  
կուռնելիս՝ իրական ծառ էր կըսէ , և բնական զօրութի մի  
ունէր , որ կենաց երկարութի կուտար՝ հանդերձ առողջու-  
թեամբ , բայց ոչ բոլորովին անմահութիւն կամ անապակա-  
նութիւն կը պարգևէ :

## Հ . Թ

|| Կատութե բարւոյ և չարի ըսված ծառը ի՞նչ ծառ է :

Պ . || մանք թղենի կըսեն , և ոմանք խնձորենի , և այլն :  
Բայց այս եղելութեցը պատմիւ նախամարդարէն Մովսէուէ ,  
որ անկից աւելի հարազատ տեղեկութի ունեցօղ չի կայ՝ թէ  
դրախտին և թէ Ադամաց վրայ , որ պատուղի անուն չի տար :  
Վոյա || ծառ գիտութեան բարւոյ և չարի || ըսածը՝ այս է  
կընամք ըսել . որովհետեւ պատուիրեց ած այն ծառէն չու-  
տել , և եթէ ուտալիք , ըսելէ թէ ուտողին չար ըլլալը կե-  
րեար , անոր համար ըսկեցաւ՝ || ծառ գիտութեան բարւոյ  
և չարի || , որովհետաք չարն և բարին :

Եւ սրբազնն հայրապետն մեր Կերսէս շնորհալի՝ այս  
երկու տեսակ ծառերուն, այսինքն կենաց ծառին և գիտութե՛  
ծառին համար այսպէս կըսէ . « Եւ ծառն կենաց և ծառն  
» գիտութե՛ ծառք են ստուգապէս ըստ այլոցն, ՚ի չորից տա-  
» բերաց բնութե՛ գցացեալք, որպ այսորիկ որ առ մեզս են .  
» բայց այլանմանք ՚ի սօցանե՛ և յցժ վայելուչք, և պատուղքն  
» պատուղք հաւասարէք, ըստ աղքի՝ անդիտելիք մեզ, ոմն կե-  
» նաց ըստ բնութեան, և ոմն մահու՝ ոչ ըստ բնութեան, այլ  
» յաղագս պատուիրանազանցութեանն եղեալ:

## Հ ։ Ժ

Պ ։ Ա տանայ գերեղմանը մշը է :  
Պ ։ Ա արդապեաք՝ աւանդութեամբ նախնեաց կըսէն, թե  
Ադամ թաղեցաւ ՚ի Քերոն :

## Հ ։ Ժ.Ա

Ա նչ եղանակի մէջ աշխարհս ստեղծվեցաւ :  
Պ ։ Ա մանք կըսէն՝ թէ աշխարհս աշնան եղանակի մէջ ստեղծ-  
վեցաւ, որ այն ժամանակը գիշեր և ցերեկ հաւասար կըլլայ .  
և այն եղանակին մէջ հասած բոլըր պատուղները և բոյսերը՝ մար-  
դոյս ապրուստին համար : Բայց կուռնելիս և այլ երևելի  
վարդ-ապեաք կը հաստատէն՝ թէ գարնան եղանակի մէջ ըս-  
տեղծվեցաւ աշխարհս, որ այն ժամանակը գիշեր և ցերեկ  
հաւասար կըլլայ . ինչպէս որ աշխարհիս նորոգում ալ քե-  
մարդեղութեամբ՝ նցն եղանակին մէջ եղու :

## Հ ։ Ժ.Բ

Ա թէ գարնան եղանակին մէջ ստեղծվեցաւ աշխարհ և  
մարդ, այն ժամանակը ինչ հասուն պատղ կար ուտելու :  
Պ ։ Ճ Երկիրը ուր տեղ մարդ և ամ ցամաքային կենդա-  
նիք ստեղծվեցան, բարեխաւն էր . և այս պատճառաւ գարնան  
եղանակին մէջ շատ պատղ կուռնենար, և անասնոց համար ալ  
արածելու խոս . մանաւանդ Ադամ Երկրաւոր դրախտին մէջ  
գլուխեցաւ, որոյ ծառերը միշտ պաղալից էին :

**Ա**ն ոմանք՝ որ աշխարհս ՚ի յաւիտենից է կըսեն, և ոչ  
թէ ՚ի ժամանակի ստեղծեալ, այսպէս ըսօղներուն ի՞նչ պա-  
տախան տալու է:

**Պ.** ՚ յդպէս ըսօղները՝ յայտնի է որ ո՞ր գորոց վկայութի-  
չեն ընդունիր. հարկ է որ բնակսն բանիւ պատախանի տամբ է  
յաւիտենական անոր կըսվէ, որ փոփոխութիւն չունի. քանզի  
փոփոխութիւնն է սկիզբն ապականութեան, և աշխարհիս մէջ  
եղածները կը տեսնամբ, որ միշտ փոփոխութեան մէջ են, և  
որովհետեւ կը փոփոխին, հարկ է օր մի ալ ապականիլ, և  
ապականացուն՝ չի կընար անսկիզբն և անսպական և յաւի-  
տենական ըլլալ. ուրեմն ապականացու աշխարհս ոչ է ՚ի  
յաւիտենից՝ այլ ՚ի ժամանակի ստեղծաւ:

**Լ**ւս յաւիտենական անոր կըսվի, որ իւր գոյութիւնը  
իրմէն եղած կըլլայ, և ոչ թէ ուրիշէն սկիզբն կունենայ. այլ աշխարհիս մէջն եղածները կը տեսնամբ՝ որ մէկը մէկէն  
յառաջ կուգայ, և ոչ թէ ինքը իրմէն. ուրեմն չեն յա-  
ւիտենական՝ այլ սկիզբնաւորեալ:

**Լ**ւս գլխաւոր մասն աշխարհի մարդն է, և այլ ստեղծ-  
ուածք անոր համար ստեղծվեցան. և յայտնի է՝ որ մարդն ժա-  
մանակաւոր է՝ և ոչ յաւիտենական, քանզի այս աւուր ծնեալը  
եէրէկ չի կար, ապա ժամանակ յառաջ մարդոյն առաջին  
արմատն ալ չի կար. և միւս բոլոր ստեղծուածները՝ որ իրեն  
համար ստեղծվեցան, անոնք ալ ժամանակ կար՝ որ չի կային.  
ուրեմն ժամանակաւոր են ամենն ալ և ոչ յաւիտենական:

**Ե**թէ ՚ի ժամանակի ստեղծվեցաւ աշխարհս, քանի՞ տա-  
րի է մինչև ցայդմ ստեղծվելը:

**Պ.** ՚ ին իմաստասէրը՝ ինչպէս Քաղլեացիք, Եգիպտացիք,  
և այլն, քսան հաղար կամ երեսուն հաղար տարվան՝ և առա-  
ւել ևս կը համարին, որ բոլորն ալ առասպել է, և ատոնց ոմանց  
տարի ըստծը լուսնի մէկ շրջանն է, որ է մէկ ամիս, և այսպէս  
շատ հաղարաւոր տարիներ կը թուեն: ՚ Եղի գիտնալու պէտք  
եղածը Եօթանասնից թուականն է, որ բոլոր քրիստոնէից աղ-  
գերը՝ իրենց գիտնականօք և իմաստավլք անոնց կը հետևին.  
որոնք ՚ի ստեղծմանէ աշխարհի մինչև այս տարի կը թուեն  
Եօթն հաղար երկու հարիւր Եօթանասուն տարի:

## Հ . ԺԵ

|| Ուրբ գիրքը կըսէ՝ թէ վեց տւուր մէջ ստեղծեց բոռ  
լոր աշխարհը, այդ վեց օրը ինչպէս խմանալ արժան է:

Պ . || Ուրբ գրոյն հետևելով կարծիք է հասարակաց, թէ  
բնական օրեր են այդ վեց օրը: Առաջին օրը՝ երկինք և երկիր  
և լոյսը ստեղծվեցաւ: Երկրորդ օրը՝ անձրևային ջուրը գե-  
տերուն և ծովուն ջուրէն զատվեցաւ՝ մէջերնին օդը հաս-  
տատելով: Երրորդ օրը՝ ջուրը միատեղ ժողվարեցաւ, և մնաց-  
եալ ցամաքը բուսուլք և անկովք զարդարեց: Չորրորդ օրը՝  
երկնային լուսաւորքը ստեղծեց: Հինգերորդ օրը՝ ձուկերը  
և թռչունները ստեղծեց: || Էցերորդ օրը՝ անասունները և  
մարդը ստեղծեց: Խօթներորդ օրը՝ հանգեաւ ՚ի գործոց, իբր  
՚ի նորատեսակ ստեղծուածոց:

## Հ . Ժ.Զ

|| Առաջին օրէն եթէ բնական օր թուեմք, արեգակը լու-  
սաւորաց հետ չորրորդ օրը ստեղծվեցաւ. այն երեք տւուր ցե-  
րեկը և գիշերը՝ երեկցն և առաւտօտը ինչպէս պիտի գիտցըվի:

Պ . || Առաջին օրը՝ || Յորում տասց աստուած եղեցի լցու և  
եղեւ լցու • արեգակը ստեղծվեցաւ. քանզի ար գիրքը կըսէ. •  
|| Եւ ետես ած՝ զի լցուն բարի է. և մեկնեաց ած ՚ի մէջ լու-  
սոյն և ՚ի մէջ խաւարին: Եւ կոչեաց ած զլցուն տիւ, և զիսա-  
ւարն գիշերը ||: Ասոնք առաջին առուր եղելութիւն են. • քանզի  
այն օրը որոշեց լցուը և խաւարը՝ ցերեկը և գիշերը. ապա արե-  
գակը այն օրը ստեղծվեցաւ՝ ունելով օրական շարժումն:

Եւ գիտեմ՝ պիտի ըսէս, թէ սուրբ գիրքը ինչո՞ւ կըսէ  
չորրորդ օրը ստեղծվեցաւ. չորրորդ օրը մասնաւոր ընթացք  
ունեցաւ կենդանակերպից կամարին վրայ, և ներգործական  
ազդեցութիւ ժամանակաց փոփոխմանցը վրայ, վաս որոց չորրորդ  
օրը եղաւ կըսի՛ և ոչ թէ պարզբար այն օրը ստեղծուած,  
|| Այլ զի լիցի ՚ի նշանս, և ՚ի ժամանակս, և յաւուրս և ՚ի տա-  
րիս ||: Վհա չորրորդ օրը ստեղծվեցաւ ըսելը՝ այս ներգոր-  
ծութիւնները ունենալուն համար է այն օրը. բայց օրական  
շարժումը առաջին օրը ունեցաւ:

## Հ . ԺԷ

**Ը** ինելը քակելէն աւելի ժամանակի կարօտ է . ինչու վեց օրվան մէջ երկինքը և երկիրը կստեղծէ ած , և ջրհեղեղով ապականած ժամանակը քառասուն օր տևեց կործանումը :

Պ . **Ա** արդապետք եկեղեցւոյ կըսեն , թէ ստեղծելը ողորմութե գործ է , որ այ բնութելը յարմար է . ինչպէս Դատիթ կըսէ , || Ասացէր՝ թէ աշխարհս ողորմութելը շնեսցի || : Իսայապականելը վրէժինդրութե գործ է , որ այ գթութեն օտար է . վ՛ որոյ կըսէ մարդարէն . || Տրտմութի նը օտարաբար դատեսցէ , և դառնութի նորս օտարաբար հասցէ . Եսայէ . իլ :

## Հ . ԺԲ

**Վ** ստղաբաշխները կամ մոդերը տօմարական գրոց մէջ երբեմն ապագայ բաներու վրայ կը խօսին . ինչպէս այս ինչ տարի սղութի պիտի ըլլայ , կամ աւտատութի , կամ պատերազմ , կամ խաղաղութիւն , և այլն . ասոնք ձևարիմա են :

Պ . **Ո**ւրբ Ներսէս շնորհալին տատղագիտաց համար Յիսուս որդի գիրքին մէջ կը գըէ , || Եւ զի լինի և կատարի զոր խօսեցան , Եւ զի սխալող և ընդունայն բարբառեցան || : Եւ կուռնելսո կըսէ , մեր աստղաբաշխները իրենց օրացոյցներովը ճշմարիտ գուշակութի չունին . այլ գուշակութի կընեն ապագայից վրայ՝ լուսնին նորած ժամանակը . քանզի այն ժամանակը նշանաւոր փոփոխութիւներ կըլլայ , և լուսնին ալ իշխանութի ունի իւր ներքելը եղօղներուն , և կը ներգործէ մարմնաւորաց վրայ :

Այս աստղաբաշխներուն զբոցքը երբեմն կը յարմարին և երբեմն չեն յարմարիր . քանզի աստեղաց զօրութիլ յօժարութիւն կուտայ , բայց բռնութի չի կընար ընել :

## Հ . ԺԹ

**Վ** յդ պատասխանէդ կերևայ՝ որ աստեղը կամ երկնային լուսաւրը մանաւանդ արեգակն և լուսինն , ըսաւ Լինիլ՚ի նշանս՝ իբր զանազանութիւն տաքութե՝ ցրտութե՝ անձրեի՝ պարզութե՝ եղանակաց և ժամանակաց , և ոչ թէ մարդոցն փոփոխութիւն տալու՝ կամ անձնիշխանութեանը վրայ տիրելու .

Պ . **Յ** մ չեն կընար , քանզի երբ ած երկնային լուսաւոքը ոտտեղեց՝ մանաւանդ արեգակն և լուսինն , ըսաւ Լինիլ՚ի նշանս՝ իբր զանազանութիւն տաքութե՝ ցրտութե՝ անձրեի՝ պարզութե՝ եղանակաց և ժամանակաց , և ոչ թէ մարդոցն փոփոխութիւն տալու՝ կամ անձնիշխանութեանը վրայ տիրելու .

վարդ ըստւ ած մարգարէին բերանով, || Ի նշանաց երկնից մի՛ զարհուրիցիք || : Վանդի հեթանոսները կը կարծէին՝ թէ աստեղք կամ բոլոր լուսաւորք մարդոցն բարուցը վրայ կը ընան իշխել, և պարգել և պատիժը անոնցմէ յառաջ կուգայ, այն պատճառաւ իբրև ած կը պաշտէին: Աթէ լուսաւորք մարդոցն ընութեանը կը ընան իշխելնէ, ահա Եսաւ և Յակոբ երկու եղբայր մէկ մօրէ մէկ ժամանակ միատեղ ծնան: Ծնչու մէկը չար և միւսը բարի եղաւ, մէկը անմաղ և տգեղ, և միւսը մաղու և կարմրագոցն: ապա աստեղք՝ մարդոցն կամքին և անձնիշխանութեանը վրայ չեն կը ընար իշխել:

## Հ ։ Ի

**Վ**արդարէական դրոց մէջ երբեմն արեգական և լուսնի խաւարութն կը կարդամք: Ինչպէս՝ Եսայի: Ժ՛՛ ։ 10: Յովէլ ։ Ք: 15: և այլն: Վրբէ ք իրականապէս կը խաւարէին:

Պ. **Լ**ուռնելիոս այն կանոնացը մէջ, որք կը ավելին ձբագ մարդարէական, ՚ի կանոնն լը՝ այսպէս կը ըսէ. || Ո՛չ արդարեւ խաւարեցան՝ կամ անկան ||, այլնախ՝ ցցց տալու համար կոսորման և կողծանման սասակութիւնը՝ որ այնքան մեծ եղաւ, որ արեգակն և լուսին և աստեղք Բարելացւոց և Երուսաղէմացւոց՝ ահաբեկութը և տարակուսութը շատ և շատ յիմարելոց էին, մինչզի խաւարիլ կամ անկանիլ ըսելու չափ արժանաւոր և կը ըրորդ՝ այնպիսի տեղեաց կողծանումը օրինակ եղաւ աշխարհի կողծանման, երբ արեգակն և լուսինն խաւարելու էն՝ և երկնից աստղերը իյնալու են: Հառ: ի՛՛ ։ 25: Ուրեմն այսպիսի ասութիւնները ոչ այնքան յօրինակն՝ ողբան յօրինակեալն, որուն միայն կը վայլէն, և անոր վրայ կը հաստատվին: Իսաց քի խաչելութեան ժամանակին լուսաւորաց խաւարումը՝ որ կը ըսվի, իրականապէս կասարեցան ըստ սըբք աւետարանին անստելի ձշմարտութեան:

## Հ ։ ԽԱ

**Վ**ովսէս մարդարէն կը սէ, թէ բոլոր ստեղծուածները վեց օրվան մէջ ստեղծեց ած: բայց էկղէսիսամիկէս կը գըտէ, և Ստեղծ զամենեսեանսն ՚ի միասին: Ժ՛՛ ։ 1 || :

Պ. **Լ**ուռնելիոս կը սէ, թէ ՚ի Միասին բառը, Ստեղծ բառին վրայ իմանալու չէ, այլ զամենեսեան բառին վրայ այսպէս, դւմենեսեան ՚ի միասին՝ աստուած ստեղծ:

## Հ • ԻԲ

ինչո՞ւ վնասակար դեռունները և սողունները և չար գաղանները ստեղծեց աստուած։

Պ. Ա նասակար և անվնաս կենդանեաց ստեղծօղը մի միայն ամենահարօղ արարիչն է Երկնի և Երկրի։ Ոմանք վնասակար կենդանեաց պէտք կրլաւն, ինչպէս օձէն՝ ախտի բժշկութեան համար թիրեաք կառնեն, և ոմանք զարդ են աշխարհիս, ոմանք երկիւղ կուտան, որ մարդոց հպարտութիւնը անոնց խոնարհցընէ։ Վ. յապէս կը գրէ Եղնակ Կողբացին։

## Հ • ԻԳ

Այրը ստեղծեց ած սողունները և թռչունները, սուրբ գիրքը կըսէ՝ օրհնեց և ըսաւ։ Աճեցէք և բազմացարնեք, ծնն. առ. 22։ Որ այն օրհնութեամբ իւրաքանչիւրը իրենց տեսակաւը շատցան։ ինչո՞ւ Փիւնիկ հաւը մէկ հատիկ մը մընաց։ ինչպէս որ շատերը կը պատմեն՝ թէ մէկ հատ մի է, և իւր մոխիրէն վերսափին կը ծնանի։

Պ. Ա մի գիտունները շատ տեղ գրեթ են այդ Փիւնիկ հաւուն համար։ բայց յետին Փիլիսոփայք և քննիչք բնութեն և սցլք բազումք՝ Փիւնիկ հաւը առասպել կը համարին։ և սուրբ գիրքն ալ կը վիայէ։ քանզի առոր համար գրօղները կըսեն, թէ մէկ հատիկ մի է աշխարհիս մէջ։ ուր կը մնաց այ հրամանը՝ որ ըսաւ նոյի։ Յամենացն անասնոց սրբոց մայծ ընդ քեզ ՚ի տապանն եօթն եօթն՝ արու և էգ։ ծնն. է. 2։ Վ. պա Փիւնիկ հտւը ինչպէս մէկ հատիկ է։ Վ. այսքան երկիրները շըջադայօղ խմաստասիրաց մէկն ալ ըսած չունի, թէ տեսած եմ։ ուրեմն մտացածին կենդանի է։

## Հ • ԻԴ

Ուրբը և անսուրբ կենդանեաց խտրութեան պատճառը լինչէ, որ հին օրինաց մէջ կալ։

Պ. Ա յարեք պատճառ կուտան նախնիք։ Ա. ախ իրենց բնական շահաւետութիւր, այսինքն ուր կենդանեաց օգուտալ, և անսրբոց վնասը մարդկային բնութեն։ Երկրորդ և բարոյականապէս՝ որ յետս քաշլին Խորացելի ժողովուրդները՝ պիտի կենդանեաց բնութեն, ինչպէս իսոզին զաղացիրութեն, շանը և նապաս-

տակին անառակութենէն , ուղտին ռխակալութենէն , և այլն ։  
Երբորդ և խորհրդապէս՝ որ ած որոշէ իւր սուրբ ժողովուրդը հեթանոսներէն , որոնք անխափ բոլոր կենդանիներն աւ կուտէին : Այս միտքը զետացւոց մէջ գըրվածին կը հայի . ի . 24 . և ին . 26 :

## Հ . Ի Ե

**Վ**րդեօք ջորին ուրիշ կենդանեաց հետ վեցերորդ առուր մէջ ստեղծվեցաւ աստուծմէ :

Պ . **Պ**որին կատարեալ կենդանի չըսվիր , այլ խառնածին . վասն որպէս այն օրը ուրիշ կենդանեաց հետ չստեղծվեցաւ . այլ յետ ժամանակի ձիոցն և իշոյն զուգաւորութէն յաւաջեկաւ :

## Հ . Ի Զ

**Փ**իւնիկ հաւուն համար ինչպէս կը կարծէինք թէ մէկ հատէ . արդեօք Աւիաթան ըսված ծովային վիշտավն աւ մէկ հատէ , և կը գանըվի՞ աշխարհիս վրայ :

Պ . **Պ**եմ կարծէր՝ որ այդ Աւիաթանը մէկ հատ մը ըլլայ , ինչպէս կը կարծեն ոմանք . քանզի Աւիաթանը ծովային մէծ կենդանեաց կըսվի , և ոչ թէ յատկապէս մէկ կենդանի : Եւ ոմանք կարծեօք կըսեն , թէ Աւիաթանը աշխարհս պատելով առւար գլխուն եկեր միաւորէր է , և երկրաշարժութիւր անոր շարժմանէն կըսլայ . և այս խօսքերուն բոլորն աւ առասպէլէ :

Եւ Լամբրոնացին՝ ահագնատեսիլ կանուանէ Աւիաթանը , որ մարդարէն Դաւիթ վիշտապ կըսէ : Եւ Որոգինէս կըսէ՝ կայ մարմնաւոր և սքանչէլի վիշտապ մը այնչափ մէծութիւ , որ նաւալարները իբր տեսած են : Եւ Յօրայ խօսքը՝ ն . 10 . յիրաւի մէծ և անձունի ըլլալ ցոյց կուտայ Աւիաթանը , բայց ոչ այնքան մէծ , որպէս զի աշխարհս չըրս կողմէն պատէ . քանզի եթէ ծովուն մէջ տեսներ են նաւալարները , ապա ծովուն մէջ բնակած է , և ոչ թէ աշխարհս պատած է ըստ առասպէլաբանից : Այս Ճշմարիաը այս է՝ որ այսպիսի բառերը՝ կէտ , Աւիաթան , Վիշտապ ընդհանրապէս ծովային բոլոր մէծամեծ գաղաններուն կըսվի :

## Հ . Ի Ե

**Վ**իշտ ձուկը ո՞ւր թքաւ Յօնան մարդարէն , որ Ախուուէ քաղաքին մօտ գանըվեցաւ :

Պ . Առողջելիոս կըսէ՝ թէ Յօնան ցամաքը ելաւ՝ Փիւնիկ  
Ասորւոց Երկրին մէջ . և տաճարը գնաց այ շնորհակալութիւն  
տալու , և ապա Նինուէ քաղաքը գնաց , որ շըլայ թէ Փիւնի-  
կեցիներէն խըրկըլած համարվի :

## Հ . Ի՛Ը

Ո արդցս մեղանչական ըլլալը բնական է , և թէ եկտքէն  
վըայ եկած քան մի է :

Պ . Ո արդապէտք եկեղեցւոյ բնական չէ կըսէն , մանաւանդ-  
սուրը Գրիգոր Նարեկացին այ հետ խօսելով այսպէս կըսէ .  
|| Եթէ ես զաննմանն ինձ կամ ցուցի , ո՞չչափ առաւել դու-  
զընաւորականսդ քո զընտանի բարերարութիւնդ || : Որ Յակոբ  
ածարան մեկնելով կըսէ . Դս որ մեղասիրութիւն՝ բնաւորա-  
ն կան չէ ինծի , և անվայելուէ քո ստեղծեալ պատկերիոտ՝ որ է  
“իմ հոգիս , իբր իմ կամքս ըլլալով ցցց տըլի՝ մեղքը միրե-  
ւովս , ո՞չչափ առաւել դու՝ քո բարերար և բնութենական  
”կամքդ ողբրմելու՝ ինծի ցցց տալու ես :

## Հ . Ի՛Ը

Ո անի՞ մարդց անուն կայ , որ ած ինքն է դըեր :

Պ . Ո եց . ինչպէս կըվկայեն վարդապէտք : “Եախ” Խամացէլ .  
Ճննդոց . ԺՂ : Երկրորդ՝ Խասհակ . Ճննդոց . ԺՂ . 19 : Երրորդ՝  
Ապղոմօն . Ղ , Էադասուրաց . ԺՂ . 25 : Չորրորդ՝ Յօսիա . Ղ ,  
Բագաւառ . ԺՂ . 1 : Հինգերորդ՝ Յովհաննէս . Ղաւիան . Ղ . 13 :  
Ո էցերորդ՝ Յիսուս . ղաւիան . Ղ . 31 :

## Հ . Լ

Ո արդցս մահը քանի՞ տեսակ կը պատահի :

Պ . Ո օրս տեսակ է . բնական , Պատահական , Անձնիշխանա-  
կան , և Նախախնամական :

Բնական մահը Տերութեան մահն է , որ զգայարանաց զօ-  
րութիւնը կը թուլնայ , և չօրս տարերաց բաղադրութիւնը կը  
քակվի , և հոգին մարմինէն կը բաժանի . ինչպէս Աբրահամու՝  
Խասհակայ՝ Յակոբայ՝ և այլոց մահը , որոց համար սուրբ  
Գերքը կըսէ , || Աւելորեալ և լի աւուրբք՝ մեռան և յաւելան  
առ հարս իւրեանց || :

Պատահական մահը՝ փորձանքով յառաջ կուգայ՝ ՚ի գաղանաց՝ ՚ի գետոց՝ ՚ի քարանց՝ և յայլոց, որոնք աստուծոյ թոյլառութենէն մարդոյս կը պատահին:

Վնձնիշխանական մահը՝ երկու կերպ ե՝ բարի և չար. բարին՝ մարտիրոսաց մահն է, որ անձնիշխանական կամօք՝ իրենք զիրենիք կը մատանեն ոյ սիրոյն համար, որոնք թէպէտ մարմնով կը մեռնին՝ այլ հոգւով կը կենդանանան: Չար մահը՝ Աքիտոփէլի և Յուղայի մահուանը նման է, որ իրենք զիրենիք կսպաննեն, և հոգւով և մարմնով կը մեռնին. և անձնասպան և հակառակ աստուծոյ կը համարվին:

Կախախնամական մահը՝ շատ պատճառներով կըլլայ. անզեղջ մեղաւորին մահ կուտայ՝ որ մեղքը չե շատնայ, կամ ՚ի պատիժ մեղաց՝ անժամնակ մահ կուտայ. կամ մէկը արդար կըլլայ, բայց ձգնութք նեղութէ մէջ ձգած կըլլայ իւր անձը, մահ կուտայ ան այնպիսւցն՝ որ հանդչե, քանզի այնպիսի մարդոյն մահը հանգիստ է: Կամ եթէ ան պատիժ ասպու ըլլայ երկրի մը, նախ արդարը մահուամբ կըլլեցընէ՝ որ մեղաւորաց հետ չետ չե պատժընի՝ կամ անոնց համար աղջանք ընէ: Վահ կուտայ փոքր տղայոց՝ որ չե մեծնան և մեղօք շաղախվին. այլ անմեղ մեռնին՝ և իրենց ծնողաց չարեացը հաղորդ չըլլան, կամ ծնողքները իրենց կսկիծովը խրատվին:

Ձխողումք ուրիշ կերպ պատճառները՝ որ միայն ան գիտէ. մեք այսքան գիտեմք՝ որ ոյ խնամքը բարի է, և բարի կընէ, չար չե կամիր. թէպէտ մեղի չար կերեայ թէ արդարոց և թէ մեղաւորաց մահը. քանզի անզգամաց կերեայ՝ որ արդարը մեռաւ, բայց արդարոց հոգին ՚ի խաղաղութեան է ըստ Սողոմօնի: Վեղաւորը որ կը մեռնի՝ կը գադարի մեղք գործելէն, որ այն ևս բարի է:

### Հ. ԼԱ

Վ երջեն վայրկենին մէջ եղած զղջումը ընդունելի կըլլայ:

Պէտք է ոյ անոխակալութիւնը մտածել, և զղջացողին զղջման կերպը. քանզի եթէ տասն և մէկ ժամուն յայգին եկողմշակները ընդհանրապէս վարձ առին՝ առաւօտեան ժամուն եկողներուն հետ. նառ. լ. ջ. ինչ կընամք ըսել վերջեն վայրկենին ձշմարտապէս զղջացողին. միայն այսչափ պէտք է գիտնալ որ չըլլայ թէ մէկ մարդ մը այս խօսքիս յուսալով այն

Ժամանակին ձգէ զղջումը • թաղ գիտնայ՝ որ մահը երբեմն յանկարծ ալ կըպատահի, և ինքն ալ անպատրասա կը գանըլի, և յուսով մեղմնչելով անցյա կը կորնչի: Ինչպէս Պուկասուտեսարանին մէջ ըսված, ժը 16 • մեծատունը՝ որոյ անդաստանը իւր բերբերը տըլէրէր, կը մատածէր՝ թէ ինչ ընեմ, ո՞ր լցընեմ այնքան արդիւնքը • շտեմարաններս կը քակեմ կըսէր, և կը մեծցընեմ՝ և այն տեղ կը լցընեմ, և իմ հաճցըքս կը նայիմ • երբ տակաւին այս մատածմունքներուն վրայ էր, այն գլշերը հոգին իրմէն պահանջըլվեցաւ:

Վարդ՝ մեր խօսքին նայիմք, եթէ այն վերջին շունչին ժամանակը խելքը գլուխը գտնըլվէլով սրտի մտօք զղջաց, և այնպիսի գիտաւորութիւն գրաւ որ՝ եթէ այ ողորմութեամբը առողջանայ չի մեռնի, և այն խոստովանած մեղքերը չի գործէ, և այն չար սովորութիւնները ձգէնէ, այնպիսին թողութեան արժան չըլսար չեմք կըսնար ըսել, ապա թէ ոչ խոստովանութիւնը ոչինչ կըլսար:

## Հ • ԼԲ

## (Նովուն ջուրը ինչո՞ւ աղի է:

Պ. (Նովուն աղինութիւն գետնէն ելած շոգիէն և կըսակէն կըլսայ, որ չի հոտիր և նաւերն ալ յաջողութեամբ կընթանան: Ոմանք ըսեր են՝ թէ աղինութիւնը արեգական տարութենէն յառաջ կուգայ՝ որ երեւելի գիտնականք չեն ընդունիր այդ խօսքը: Քանզի եթէ այնպէս ըլլար՝ պէտք է որ ստեղծուած ժամանակը քաղցր ըլլար, յետոյ արեգական ներքեւ իյնալով աղինութիւն ունենար:

Ծւ ատոր գէմ կուռնելիս կըսէ, թէ երրորդ օրը՝ ածաղի ծովը ստեղծեց, և միշտ աղինութիւն կը պահէ՝ այն շոգիները վրան էլլուցընելով, որ գետնէն արեկին զօրութիւնը և ուրիշ լուսաւորաց զօրութիւնը կելլան՝ և ծովը կը թափին: քանզի անմտութե խօսք՝ որ կըսէ կուռնելիս՝ ոմանց աստղաբաշխներուն խօսքը՝ որ կըսէն, թէ ծովուն աղինութիւնը արեգական ձառագայթներէն յառաջ կուգայ, որ իրը թէ անոյ ծովուն յատակը կոյըրի, և այրելէն այն աղինութիւն յառաջ կուգայ, ինչպէս կըսակը կը կըծունայ այրելէն: Ծւ այս կարծիքը ամենեին անընդունելի է, որովհետեւ յայտնի փորձով կըսըտիլ: քանզի արեգակը ծովը չայրէր, և իւր ձառագայթը տասն և հինգ կտնգունին տւելի ջուրին մէջ չի ներդործէր, ինչպէս կը վկայէն հմուտ նաւավարները և լողակները:

Հ . Լ.Դ.

Օ սովորուն կապցա գումառով ըլլալը ինչէ՞ն է :

Պ . Երկնից գցնը երեն քարշելով՝ կապցա կերեաց :

Հ . Լ.Դ.

Գ ըրված է՝ թէ ։ Նց անկեաց այդի ։ Ճննդաց ։ թ . 20 ։

Ա՞նի թէ ջրհեղեղէն յառաջ այդի չի կա՞ր :

Պ . Ա արդապեաք կըսէն՝ թէ որթը ջրհեղեղէն յառաջ կար ։ բայց մինչև ՚ի ջրհեղեղ՝ որթը վայրենի տնկոց կարդն էր ։ և մարդիկ անկից գինի ընկել չեն գիտէր, մեայն խաղողը կուտէին : Ի այց նց հնարիւք առաւ որթը՝ և հարթեց, և այդիի մէջ կարդաւ տնկեց, և խաղողն գինի ըրաւ ։ և որովհետեւ գինին զօրութիւնը չէր գիտէր, խմելով գինովցաւ :

Հ . Լ.Ե.

Կ ցի տապանին բոլոր մեծութիւնը ո՞չափ էր, որ մէջը այնքան կենդանիներ պարունակվեցան :

Պ . Ուրբ գրցն խօսքին նայելով, չորս հարիւր յիսուն հաղար քառակուսի կանգուն էր ։ քանզի երեք հարիւր կանգուն տապանին երկայնութին էր, յիսուն կանգուն լայնութիւնն էր ։ Եթէ այս թիւերը երկրաչափորէն բազմապատկես՝ իբր երեք հարիւրը յիսունով, կըլլայ տասն և հինգ հաղար քառակուսի կանգուն ։ և այս թիւը երեսունով բազմապատկես՝ որ բարձրութե չափն է, կըլլայ չորս հարիւր յիսուն հաղար կանգուն : Աւ եթէ տապանին երկայնութիւր՝ լայնութիւր՝ և բարձրութիւր ստոյգ սցսչափ ըլլալը կուղես, տես ծննդոց, կ . 15 :

Հ . Լ.Զ.

Երբ աճ խոստացաւ Աբրահամու, որ զինքը մեծ աղք մի ընէ, և ցցց արված երկիրը ժառանգել տայ : Աբրահամ՝ իբր նշան մը ուղելով՝ կըսէր, թէ ինչէ՞ն գիտնամ, որ պիտի ժառանգեմ : Իսաւ աստուած իրեն, առ երեք տարվան երինջ մը, և երեք տարվան նոխաղմը, և երեք տարվան խոյ մը, և տատրակ՝ և աղաւնի : Աբրահամ առաւ ասոնց ամմէնը, և երկու կառը ըրաւ ։ և մէկդ մէկու գէմդրաւ, և թուշունները չի կըտըրտեց, և ացն, ծնն, ժէն, ց : Այս նշաններէն ինչ հասկընալ պէտք է :

Պ. Աստուած-ցցց կուտայ Աբրահամու տառնցմոլ յետ ժամանակի ըլլալերները, որ իրմէ ետքը եկողներուն պիտի ըլլար՝ այսինքն Եբրայեցւոց աղբին • քանդի երեք տարեկան երինջը՝ ցցց կուտայ Եբրայեցւոց աղբը՝ և իրենց յշգիպտոսէն աղտավելը Յովսէփիայ ժամանակը • քանդի այն ժամանակը երինջի նման Եգիպտոսի գաղտերուն վըայ կը կենային: Երեք տարեկան նոխաղը՝ Յովսէփին յետայ եղած Եբրայեցւոց երկրորդ աղբը, որ այժու նման կթել սկսան Եգիպտացիք, և անոնց գործքովը և ծաւայութեամբը հարստացան:

Իսցց զօրաւոր և եղջերաւոր խցը՝ ցցց կուտար Եբրայեցւոց անթիւ և ուժեղ երրորդ ծնունդը՝ Մովսէսի ծնաժժամանակը, վառոյ սաստիկ ծառայութե՛ կը նեղվէին Եգիպտացիներէն: Իսցց երկու տեսակ թռչունները՝ այսինքն տառակը և աղաւնին, որոնք չեկտրաեց, ցցց կուտային Եբրայեցւոց յշգիպտոսէն աղատիլը չորս հարիւր տարիեն ետքը, "ո՞ ած պաշտէին՝ թէ անապատին մէջ և թէ ՚ի քանան: Ագալեց տատրակը՝ ցցց կուտայ քառասուն տարվան սուզը անապատին մէջ պանդխառութեամբ • և ընկերասէր աղաւնին՝ ցցց կուտայ Յեսուայ ժամանակը՝ որ Եբրայեցիք խսուացած երկրին մէջ խաղաղութեամբ և ուրախութե՛ բնակեցան: Չորքոտանեաց կտրատումը ցցց կուտայ Եբրայեցւոց զանազան նեղութիւնները Եգիպտոսի մէջ. և յետո ամեռող թռչունները, և անոնց թռչնիլը գեղ ՚ի մարմիններուն վըայ, ցցց կուտայ Զովկ՝ Զսեհօն՝ և Զամաղէկ՝ և ուրիշ թշնամինները Եբրայեցւոց՝ պանդխառութեան մէջ, որոնք կողոպտեցին և փախուցին: Եւ Աբրահամու թռչունները փախցընելը, ցցց կուտայ ոյ նախախնամութիւնը, որ Աբրահամու արդիւնքին համար պաշտպանեց Խրայելացւոց աղբը:

## Հ. Ա.

Անչու սյդ կենդանիները երեք տարեկան ընտրըլեցան:

Պ. Երեք տարեկան կենդանիները կտարեալ կըլլան հասակաւ և զօրութե՛ • և Եգիպտական ծառայութիւնը մինչև երեք աղբ մնայ՝ կահաթու, Ամրամայ, և Մովսէսի, վասն որց երեք տարեկան կենդանիներ ընտրըլեցան:

## Հ . Ա. Ա.

Պատանային համար կըսվի՝ թէ նախ հըեշտակ լուսոյ եր՝  
եթէ հըեշտակ եր՝ պէտք է որ իմաստուն ըլլար, ինչո՞ւ այն  
յիմարտկան խօսքը կըսէ · || Ելց յերկինս ՚ի վերց քան զսո-  
տեղս երկնից՝ արկից զաթոռ իմ, նատաց ՚ի լըրինսն բար-  
ձու · . . եղէց նմանօղ բարձրելցն · եսացի · ժդ · 13 || :

Ա. յապիսի խորհուրդ՝ յիմար մարդիկ անգամ չեն ըներ:

Պ. Պուռնելիսո կըսէ՝ թէ յառաջ այնքան յիմար չեր, որ  
ած ըլլալ ուղեր՝ կամ հաւասար ոց, քանզի գիտեր՝ որ ան-  
կարելի է · բայց իւր գերազանց որպիսութեանը նայելով, և  
տեսնալով իւր իմաստութիւն՝ կարողութիւն՝ և շնորհքը, հպար-  
տութեամբ ուռեցաւ, և իբր ինքը իրեն բաւական ըլլալու  
չափ՝ կամք չեր ըներ, որ ասութեամբ կախում ունենաց, կամ  
հնազանդի · և այս հպարտութեան ախտիւ կուրացաւ, և այն  
յիմարական խօսքը միտք բերաւ, և անով ինկաւ:

## Հ . Ա. Ա.

Ասկից են գեերը՝ որոնցմով կը պատժըլին ոմանք աշ-  
խարհիս վրայ:

Պ. Ա արդապետք կըսեն, թէ երբ ած չար հըեշտակները  
երկինքէն գուրս հանեց, անոնցմէ շատերը գժոխքէն գուրս  
ձեց մինչև դատաստանին օրը, ոմանք լեռներու մէջ և ոմանք  
չեն տեղերու մէջ մնային · կամ օդոցն մէջ իրենց բնական զօ-  
րութեամբը ձեց · բայց ասոնցմով չի հպարտանալու համար  
նուաստացցց, նախ անոնց զօրութիւնը խափանեց, որ չե-  
կըրնան գործածել մինչև աստուծմէ թշրիւութիւն չըլլայ. ·  
Երկրորդ՝ այնպէս երկիւղմը գերաւ վանին, որ ոչինչ բա-  
նէ մը կը վախնան:

## Հ . Ա. Ա.

Ական ծխված լեռորդը և սիրտը ի՞նչ զօրութիւն ուներ,  
որով աղմուգ գեր հալածվեցաւ · առվելի ը · 2 :

Պ. Ա աս մեկնիչք զանազան բան կը խօսին, բայց հաւա-  
նականը այս է · Աստուծոց կարողութիւն՝ այն գեերը խայտա-  
ռակելու համար ստեղծուածոց ոմանց զօրութիւն սաստկացց,  
որոնցմով տանջէ այն գեերը, որ իրենց սասակի տանջանքը

իմանալով՝ հեռի մնան այն թշնամիէն . ինչպէս վերի հարց-  
մանդ պատասխանւոյն մէջ ըսինք : Վ. յապէս էր կըսեն այն  
ձկան լւարդը և սիրաը , որ մեզմէ անծանօթ էր , և այս հին  
օրինաց մէջի սահմանադրութիւնն էր . բայց ըստ նոր օրինացս  
կըսեմք , թէ կամ վերցցյց այն երկիւղը՝ ուրիշ կերպ երկիւղի  
փոխելով , այսինքն վախցընելով որը և հոգեսոր բաներէ , ինչպէս  
որ խաչէն՝ աւետարանէն՝ սրբալոյս միւռոնէն՝ սրբոց անու-  
նէն , և այլն . կամ եթէ ձգեց այն երկիւղը նէ , մեղե չե յայտ-  
նեց այն մարմնեղէն իրերը , որոնցմէ վախչին դեերը : Իւ  
ոյժման մեր ապաւինութիւնը և յցու՝ դիւաց հակառակու-  
թէնէն ազատելու համար , միայն ոչ ամենակարօղ զօրութիւնը և  
սրբոց բարեխօսութիւնն է :

Հ . ԽԱ

### ԱԺ-ՌԵՎՐՈՒ ԵՂԲ ՍԹԵՂԾՎԵցաւ :

Պ . Արովիչեաւ հրեշտակները արարչագործութեան առաջին  
օրը ըստեղծվեցան , և շատ չանցաւ՝ մեղմնչեցին , վե որոյ խակցն  
երկինքն դժոխքը թափեցան , և յաւիտենական տանջանօք  
պատժվեցան . ապա յայտնի է՝ որ դժոխքն ալ առաջին օրը  
ստեղծվեցաւ . և ինչպէս նոյն օրու լոյսը խաւարէն զատվեցաւ ,  
այսպէս և հրեշտակները դեերէն զատվեցան , շնորհքը մեղքէն  
զանազանեցաւ , և փառքը պատիմէն բաժանեցաւ :

Հ . ԽԲ

### ԱԺ-ՌԵՎՐՈՒ ՀՈՒՐԸ ԱՐԴԵԿՈՔ ԻՆՉ ԿԵՐՊ ՀՈՒՐ Է :

Պ . Կարիգոր Նարեկացին որ աւետարանէն սորվելով՝ այս-  
պէս կըսէ . || Զորդնն անմահ ասացեր , զհուրն անշէջ և զկըշ-  
տամբութիւնն անվախճան . նարեկ . կդ || : Վ. յս խօսքը այսպէս  
կը մեկնէ Յակոբ ածարաւան . այն տեղ եղած որդերը մարմին  
ուտելու և սպառելու համար չեն , այլ խածնելու և ցաւցընե-  
լու համար : Բայց հուրը զգալի է՝ և յաւիտենական . որ դերբ-  
նական զօրութեամբ անշէջ կը մնայ այն հուրը դժոխքի մէջ ,  
որով մեղմուորները առանց ազատառութեան տանջին :

Եթէ ըսես՝ որդերը կուտեն , և հուրը կայրէ , ուրեմն  
տանջըլողներն ալ կըսպառին : Վ. յդպէս չէ , սպառեալին տեղը  
խակցն ամբողջ կը լւցիլի . քանզի եթէ զովտոյ կնոջ մարմինը  
արձան աղի եղաւ , եթէ քիչ մը կարըլի անկից , կըսեն՝ թէ

իսկցն տեղը կը լէցվի . արդեօք այսպէս ալ ամա չի լէցընէր այն որդերէն կերպած մարմինը : Վաս հաւանական է՝ թէ որդը այն տեղ խածառելու և ցաւցընելու համար է . նցնպէս կըրակն ալ շնմարիս կըրակ է՝ այրելու համար և ոչ թէ սպառելու համար :

Հ . ԽԴ.

### Արեմուտին օրը ինչո՞ւ կը պատուեմք :

Պ . Ա ւանդութիւն այսպէս պատմութիւնը կայ . յայտնի է՝ որ աշտարակաշինութեսն ժամանակը եօթանասուն և երկու հոգի էին գլխաւորները , որոնց լեզուն երբ խառնը վեցաւ իրարմէ զատվեցան . և մեր աղջին գլխաւորը՝ որ հայկն էր , տարեմուտին օրը հայաստան հասաւ , և այն օրը հանգստանալով ուրախութեան տօն կատարեցին . և անկից մինչև այս օր ստվորութիւնաց մեր աղջին մէջ այն օրը պատուելու հայց ըստ վորդապետութիւն հայաստանեայց եկեղեցւոյ՝ այսպէս գիտեմք . որ աղօթիւք սրբազն հայրապէտին բարսղի՝ անօրէն Յուլիանոսը սատակեցաւ , և այն օրը իմացան , վասն որոյ ուրախութիւն տօն կատարեցին քրիստոնեայք . ուստի մինչև ցայժմ այն ուրախութիւն կիշատակութիւն կընեմք : Տես Յայսմաւուրի . յունվարի . ան:

Հ . ԽԴ.

### Պ ղարիայի փոքր թուականը ինչ է :

Պ . Ա մմէն աղջաց թուականները մէկ մէկ երկելի իրողութիւններ ունին՝ իրենց աղջին վերաբերեալ . և անկից սկսված է այն աղջին թուականը : Իսց այս Աղարիայի փոքր թուականը այնպիսի նշանաւոր իրողութիւն մը չունի , վասն որոյ կըսվի փոքր . և միայն ջուղայեցւոյ կը վերաբերի , և տօմարագէտ ջուղայեցի Աղարիայէն սկսված է . քանզի ՚ի թուականիս հայոց ոճ , Պարսից առաջին Շահապահաս թագաւորը գերի կառնէր ջուղայու քաղաքացիները , որ էր մեծին հայոց Վասպուրական աշխարհին մէջ , և կը տանէր Պարսից երկիրը . և նոր ջուղայ քաղաքը շինել կուտայ Սովահան քաղաքին մօտ , և այն տեղ կը բնակեցընէ հին ջուղայէն բերած գերիները :

Եւ երբ այն տեղ հանգստացան քաղաքին շինութիւնը լը-մընցած ժամանակը՝ հանգէս և ուրախութիւն ըրին . և նյին Աղարիա անուն մարդն ալ փոքր թուական ըսվածը հաստատեց , որ իմացվի այն նորաշին ջուղայ քաղաքին մէջ բնակած-

տարիներնուն որբանութիւնը , վասն որոյ միայն ջուղայեցեք  
կը գործածեն այս թուականը :

## Հ . ԽԵ

**Բ**ատիւդ կամ ձակատագրութիւնը ըսվածը ի՞նչ պիտի ըլլայ ,  
որով ոմանք յաջողութե մէջ կըլլան , և ոմանք թշուառուե մէջ :

Պ . Այս հեթանոսները՝ կըյր չածուհի մը անուանեցին այդ-  
բախտը , որ մարդուն ոչ բարին կը նայի և ոչ չարը , այլ չար  
մարդիկը յաջողութիւնը կը լեցընէ , և բարիները ձախորդութիւնը  
կը տանջէ . և ոմանք ևս ձակատագիր կըսէին , որ մինչեւ ցայդմ  
ևս երբեմն ռամիկ քրիստոնեայներէն ալ կը լըսմի : Վասդա-  
րաշխները՝ աստեղաց և կենդանակերպից իշխանութիւնը կըլլայ  
կըսէին . բայց տանց ամմէնն ալ առասապել կը համարին սրբա-  
ղան հարգ . քանզի ած է ընդ հանուր պատճառ և կառավարող  
ամենայնի . ինչպէս Դաւիթ մարգարէն կը վեսցէ՝ ըսելով .  
|| Դու ես ած իմ , և ՚ի ձեռու քո է ժառանգութիւն իմ .  
սաղնա . Ը . 16 || : Խւ Սողոմօն կըսէ , || Անդրէն ՚ի ծոց իւրեանց  
դառնայ ամենայն ինչ անիրաւաց , այլ ՚ի աեառնէ ամենեցուն  
իրաւունք են . առակաց . ԺՂ . 33 || :

**Ե.**րդ՝ այս յաջողութիւնը կամ ձախորդութիւն , պատահ-  
մունք կը համարվին՝ բայց ոչ ասաուծմէ . քանզի յառաջ քան  
դյաւխտեանս ամմէն բան իրեն յայտնի է . այլ մեր կողմանէ  
պատահմունք կը համարվին , քանզի ապագայ բանի վրայ գի-  
տութիւն ըունիմք :

## Հ . ԽԶ

**Ճ**րբ Խրայելացւոյ աղքը Եգիպտական գերութենէն  
աղատելով՝ անապատը ելաւ , ձմնապարհին մէջ արատւնջ  
ընելուն համար՝ օձեր ելան վրանին , որ զերենք ջարդեն . Մոլ-  
սէս աղացեց աստուծոյ , և աստուած հրաման ըրաւ Մոլ-  
սէսի , որ պղնձէ օձ մը շնուշ՝ և նշանակի վրայ դնէ , որ օձե-  
րէն վերաւորեալները այն օձին նայելով՝ առողջանան . յետոյ  
այդ օձը ուր մնաց . Խոսոյ . իա . 8 :

Պ . Եղ պղնձէ օձը՝ յառաջ Խրայելացիք կը պահէին իբրև  
յիշտակ բարերարութեցն այ . և յետոյ սկսան իբրև կուռք  
պաշտել և զոհ մատուցանել : Խւ ապա այն օձը Եղէկիա թա-  
գաւորը ջարդեց , և անունը անդամանցայտ ընելու համար հրա-

ման ըրաւ՝ որ անոր կտորվանքին Նեեսթան ըսվե , որ իբր  
պղնձի կտոր ըսելէ . դ , Եակառարաց . ժը . 4 :

Հ . ԽԵ

Յառաջ ուսկիլից հնարեցաւ ժամը , այսինքն սահաթը :  
Պ . Յամ ըսածդ՝ նախ ՚ի նախահարլց անուն ունեցաւ արե-  
դական օրական ընթացքը , քսան և չորս բաժին ընելով , և ամ-  
մէն մշկ բաժինը ժամանուանեցին : Այց ժամացցցը , թէ ոք  
գրոց վկայութե և թէ ըստ տուասպելաց՝ Եղեկիա թագաւորին  
հօրմէն՝ Աքաղէն եղաւ , որ Ցուդայի ցեղին թագաւորն էր :

Հ . ԽԲ

Արմնաւոր քնարները և նուագարանները ուսկիլից հնա-  
րեցաւ :

Պ . Այէնի ցեղէն Ճնած Ցօրաւ անուն ոմն հնարեց +  
Ճներաց . դ . 21 :

Հ . ԽԹ

Երկաթագործութիւնը ովլ հնարեց :

Պ . Յաօփեւ անուն Ղամեքայ տղայն . Ճներաց . դ . 22 :

Ա Ե Բ Զ Հ Ի Ե Գ Ե Բ Ա Ր Դ Դ Ա Ր Ա Ւ Ե

ԵՒ


ՎԵԽՃԱՆ ԲՈԼՈՐ ՀԱՐՑՄԱՆՑԱ



# ՅԱՆԿԱՆԻ ՊՐՈՑ

## ՄԱՍԵՆԻԱՄ

ՄԱՍՆ · Ա



Երես	
Են անփոփոխ է , ի՞նչպէս կըսվի երբեմն բարկացաւ :	1
Երբեմն հոգւցին սրբց համար ի՞նչպէս փոփոխիլ կըսվի :	1
Հոգին սուրբ ինչո՞ւ աղաւնակերպ երեցաւ քրիստոսի մը- կըտութեան ժամանակը :	2
Հոգին սուրբ առաքելոց վրայ ի՞նչո՞ւ հրեղէն լեզուի նման երեցաւ :	2
Հոգւցին սրբց համար ի՞նչպէս բարեխօսել կըսվի :	3
Երազը կը համարվի՞ Ճշմարիտ կամ մասն մարդարէութե՞ :	4
Հոգին սուրբ իբրև հողմ կամ հուր ի՞նչո՞ւ երեցաւ :	4
Ինչո՞ւ միայն երկինքը աթոռ աստուծոյ կըսվի :	4
Երկիրը ի՞նչպէս կըսվի պատուանդան ոտիցն աստուծոյ :	5
Դժոխիքին մէջ դատապարտեալները արդէօք կաղատին :	5
Դժոխիքի դատապարտեալներուն վրայ եղած աստուծոյ ան- դարձ վճիռը կը փոխվի՞ :	6
Եթէ ամեն բան աստուծով կըլլայ , ի՞նչպէս մեղք կամ այլ ի՞նչ կը պատահին :	7
Չարէն ի՞նչպէս բարի յառաջ կուգայ :	7
Դիպուածով եղոծ բաներուն աստուծոյ նախախնամութե՞ը եղած կըսվի՞ :	8
Եթէ մեղաւոր մը իւր մեղքէն չեդառնայ նէ , ոյ կամքը ան- կատար կը մնայ , որովհետեւ մեղաւորին մահն չեկամիր :	8
Եթէ մէկը մարդմաւոր տէքով չեկընար տեսնալ աստուծ , եսայի մարդարէն ի՞նչպէս կըսէ ,    Տեսի զտէր նըստ- եալ յաթոռ ,    և այլն :	9
Են աշունչին մէջ կը կարդամք՝ որ ած անձամք կերեար և կը խօսէր նահապետաց հետ ի՞նչպէս կերեար և կը խօսէր :	9
Ի՞նչպէս իմանամք աստուծոյ խօսիլը նահապետաց կամ մար- դարէից հետ :	10
Ճըշտակները մարմնաւոր կերեային նէ , որովիսի մարմին կաւնէին , և ի՞նչպէս կունենային :	10

- Վառեալ մորենիով ինչո՞ւ աճ կերեաց Մովեսի : 11  
 Դատաստանին օրը երբ ըլլալը ինչո՞ւ քրիստոս կը բացառէ  
   || Ո՛չ ոք և ոչ որդի գիտէ || ըսելով . ապա կը հետեւի  
 թէ քրիստոս հօր աստուծոյ գիտցածը չե գիտէր : 11  
 Վւետարանիչը ինչո՞ւ կըսէ , || Ո՛չ եթէ հայր դատէ զոք ,  
   այլ , և այլն : 12  
 Ինչո՞ւ աստուծո Եսայի մարդարէին բերանովը կըսէ ,  
   || Ես . . . հաստատեմ դշար : 12  
 Վ.րդեօք բնութեան դէմ կերեաց Երկնից վրայ ևս ջուր  
   ըլլալը : 13  
 Վ.յն ջուրերը Երկնից վրայ դրվելուն պատճառը ինչէ : 13  
 Վուաբինի ոմանք երրեմն ինչո՞ւ թող ալրված կերեւան , և  
   կամ վախճաննին մոլութեամբ կը կատարի : 13  
 Այուրբ գրցն մէջ գրված է՝ թէ || Ասաց աճ եղիցի լցո || ,  
   և այլն . մի՛ թէ այսպէս արաւբերական ձայն էր : 14  
 Վստուծ ամենուս է , ինչո՞ւ կըսիլ || Աստուծո Աբրահամ-  
   մու՝ Խաչակայ || , և այլն : 14  
 Վրիստոսի ուտելը յարութենէն ետքը ինչպէս էր : 14  
 Վրիստոսի ուտելուն ընդարձակ մեկնութի մի կըրնան տալ : 14  
 Վրիստոս Խաչին վրայ Խաչահանուց համար աղօթեց նէ ,  
   հօր աստուծոյ ընդունելի եղան : 16  
 Հակոբայ հետ մարտնչողը աստուծո էր՝ եթէ հրեշտակ : 16  
 Ինչո՞ւ Յակոբ կըսէ , || Տեսի զած . . . և ապրեցաւ անձն իմ || : 16  
 Հրեշտակը ինչո՞ւ Յակոբայ հետ կը մարտնչէր : 17  
 Հրեշտակը ինչո՞ւ Յակոբայ պուտահն ջնոլերը մմելով թմրեցց : 17  
 Ինչո՞ւ քրիստոս կին անուամբ կանուանի : 17  
 Վրիստոս անունը Երբ դրվեցաւ յիսուսի : 17  
 Ինչո՞ւ քրիստոս կըսէ , || Զիք ոք բարի բայց մի աճ || : 18  
 Վուաբեաները թափօրական լեռը քրիստոսի աճութէ լցոր  
   ինչպէս տեսան մարմնաւոր աչօք : 18  
 Հօր այ կամօքն էր քրիստոսի Խաչիլը , ինչո՞ւ Հրեացք  
   և Յուդա պարտաւորեցան : 19  
 Վրիստոս չարչանաց ժամանակը Հրեշտակէն ինչպէս կը  
   զօրանայր , և ինչպէս կըսորվէր հօր աստուծոյ կամբը ,  
   որովհեաւ ինքն է իմաստութիւն հօր : 19  
 Հոդին սուրբ քի վրայ ինչո՞ւ աղաւնակերպ Երկեցաւ : 20  
 Վստուծոյ մարդասիրութեանը կը վայլէ՞ մեղսւորաց մեղբին  
   համբանիք պահել իւր մատցը մշջ : 21

Քրիստոս խաչին վրայ ինչու կաղաղակեր առ հայր ըսելով	21
Աստուած իմ ած իմ, ընդէ՞ք թողէր զիս    :	
Կարեկացին ինչու միայն աստուած հոգւոց կանուանէ :	22
Վարեկացին ինչու կըսէ .    Աստուած կարէ առնել լաւա-	
դոցն ինչ քան զոր արարեալն է՝ բաց ՚ի յերից    :	23
Քրիստոնեայք ինչու տէրունական պատկեր կընկարեն :	23
Երկիւական հանգանակին մէջ որ կըսվի,    Ճնեալն յայ հօրէ՝	
միածին, այսինքն յէռւթէ հօր   , ինչպէս իմանալու է :	24
Ի ծոցց հօր առաքեալ կըսվի քրիստոսի համար, այս ծոց	
բառը ինչպէս իմանալու է :	24
Վ չք և ականճք աստուծոյ՝ ինչպէս կըսվի :	25
Վ սուծոյ համար ինչպէս կըսվի՝ Աստուած նախանձոտ :	25
Վ կիզրն և պատճառ, ինչպէս կըսվին աստուծոյ վրայ :	26
Վ ը հոգւոցն շրջելը ջուրերուն վրայ ինչպէս իմանալու է :	27
Ե ախասահմանութիւն բառը ինչ իմանալու է :	28
Ի նչէ՞ն կը յառաջանայ նախասահմանութիւնը :	28
Ե ախասահմանութեան չորս պատճառները որո՞նք են :	28
Վ թէ նիւթական պատճառ՝ նախասահմանեալ անձն է,	
անոր ինչէ՞ն նախասահմանեալ կըլլայ :	28
Ե ախասահմանութիւն իբրև ձակտագրութի՞ն իմանալու է :	29
Ե ախասահմանեալները արդէ՞ք մեղաց մէջ կիյնա՞ն :	29
Վ բդէ՞ք կըսվի, թէ ած ինչու այս ինչ մարդ նախասահ-	
մանեց, և այս ինչ մարդ չի նախասահմանեց :	30
Ե ախաշարժութիւնը ինչէ կամ ինչ պիտի ըլլայ :	30
Վ թէ նախաշարժութիւնը աստուծմէ ըլլայ նէ, մարդս	
անձնիխան ինչպէս կըլլայ :	31
Ե ախաշարժութիւնը իբրականապէս աստուծմէ ըլլալուն՝ ՚ի	
գրոց վկայութիւն ունի՞ն :	31
Ի նչու աստուած միշտ չի շարժէր մեղի ՚ի բարի գործս :	32
Օ ի՞նչ է հրեշտակն :	34
Հ րեշտակները ինչպէս կը ձանացեն :	35
Հ րեշտակները կընա՞ն ասպագայն գիտնալ :	35
Հ րեշտակները մարդոցս խորհուրդը գիտե՞ն :	36
Հ րեշտակները մարդոցս խորհուրդը ինչու չեն գիտէր :	36
Հ րեշտակները ինչպէս կը խօսակցին իբրու հետ :	36
Հ րեշտակները ինչպէս կուտեն :	37
Հ րեշտակաց գոցացտկան իմաստութիւնը կելելնայ:	37
Հ րեշտակները տեղեա՞ն էին քրիստոսի մարդեղութեանը :	37

Հրեշտակները ինչո՞ւ քրիստոսի համբարձման ժամանակը ան-	
գիտաբար կը հարցանէին,    Խակ այս ո՞վէ՝    և այլն :	38
Հրեշտակաց երգաբանութիւնը ի՞նչէ :	38

## ՄԱՍՆ · Բ

Կ թլփատեց յիսուսը :	41
Տեառն ընդ առաջ ինչո՞ւ կը սկի:	42
Կանա Գալիլեացւոց հարսանիքին փեսայն ո՞վ էր :	42
Քրիստոս իւր պայծառակերպութեան օրը հետը եղօղ աշակերտաց ինչո՞ւ պատուիրեց, որ տեսածնին մար-	42
դու չըսեն :	
Եթէ Ադամ չի մեղանչէր, քրիստոս կը մարմնանայր :	43
Եկեղեցւոց աստիճանները ե՞րբ պարդեւեց քրիստոս :	43
Ե՞ր օրինաց խորհուրդները ինչո՞ւ ամմենը միատեղ չի կար-	
գեց քրիստոս :	43
Պատիր ի՞նչպէս խորհուրդ կանուանի :	44
Քրիստոսի խաչին շալեւը ի՞նչ կը նշանակէր :	44
Քրիստոսի խաչին երկայնութիւնը որբան էր :	45
Դժոխքի բոլոր հոգիներն ալ ազատեց քրիստոս :	45
Եդամ դլուխ էր ազգի մարդկան, պէտք չէր որ անդամ-	
ներն ալ ազատէին :	45
Եւագ ուրբաթ գիշեր ինչո՞ւ սեղանին տասներկու մոմը կը	
մարեն, և մշկը վառ կը պահէն :	45
Եւագեալք ինչո՞ւ միայն յանուն միքի կը մկրտէին :	46
Քրիստոսի թաղումը ամեռող երեք օ՞ր էր :	46
Քաջ չարչարանոց գիշերը ինչո՞ւ պատասխան չէր տայր :	46
Քրիստոս ինչո՞ւ երեք օրէն յարութիւն առաւ :	47
Քաջ յարութեն ետքը ինչո՞ւ յառաջ կանանց երեցաւ :	47
Ինչո՞ւ քաջ Մագդաղենացիին ըստ,    Մի՞ մերձենար յիս    :	48
Քի հետ յարութի առնօղներուն մշջ կնիկ ալ կա՞ր մի :	48
Ուրբե աստուածածին սկզբնական մեղք ունե՞ր :	48
Կէտարանիները ինչո՞ւ բան չի գուցին ածածնի վերա-	
գովամանը և սկզբնական մեղացը վրայ :	49
Ինչո՞ւ չի կամեցաւ աստուած, որ սուրբ աստուածածին	
առանց ամուսնութեան մնայ :	49
Քրիստոս ինչո՞ւ իւր կցս մայրը կին կանուանէ :	50
Վծածին քանի՞ տարեկան էր վերափոխման ժամանակը :	51

	Երես
Արբաղան Հաղորդութեան ինչո՞ւ սուրբ Հաց կըսվե՞ :	51
Սուրբ Հաղորդութեան գյափոխութիւնը պատարագի ո՞ր բանին կըլլայ :	51
Խելագար մարդու Հաղորդութիւն տալ արժա՞ն է :	52
Ի՞նչ պէտք է եկեղեցւց խորհրդայն կատարելութեանը :	52
Ի՞նչ է խորհրդայն նիւթը :	53
Ի՞նչ է խորհրդայն տեսակը :	53
Ի՞նչ է դիտաւորութիւնը :	53
Ճերետիկոս քահանայի պատարագը ընդունելի կըլլայ՞ :	53
Ինչու ոմանք կըսեն, թէ խորհուրդը կատարալին վրայ՝ եթէ Հաւատք և սրբարար շնորհք չըլլայ նէ՝ հոդ չէ :	53
Ուրացող քահանային ըրած խորհուրդը ի՞նչպէս է :	54
Ժամանըարը երբ սուրբ Հացը կը բեկանէ, քրիստոսի մար- մինն ալ բեկեալ կը համարվի՞ :	54
Ճնար է՝ որ դրոշմը կըրեկնըլի:	54
Քահանայ մը եթէ սուրբ պատարագին մէջ միայն էական բանը ըսէ, և միւս ազօթքները չըսէ, այն խոր- հուրդը կը կատարի՞ :	55
Եթէ նեղ ժամանակ մը հարկ ըլլայ, հնար է՝ որ այն գործը առանց մեղաց ըլլայ :	55
Սուրբ խորհրդայն գյափոխութեանը բնականաբար օրի- նակ մի կըրնամս տալ :	55
Վուանց գյացուեն պատահմունք ցոյց տայը խարեւուն չէ՞ :	56
Եղիսկապոս ձեռնադրութեան ժամանակը աւետարանը ին- չու գլխուն վրայ կը դնեն :	57
Կարգաւորներուն հրաման կայ ամուսնացեալ կամ օտար կանանց հետ կենալ :	57
Եթէ մէկը անարժանութեամբ քահանայ ըլլայ, կըրնայ ինքը զինքը անպարտ ընել. կամ ձեռնադրով չի գիտնալ ձեռնադրածին անարժանութիւնը, ան- պարտ կըլլայ մի:	57
Յովհաննէս մէկրաչի մէկրտութիւն խորհուրդ կը համարվէ՞ :	58
Վուանց մէկրտութեան նահասակ եղողը կըրնայ փրկըլի:	58
Ճնար է տղայն իւր մօրմէն չի ծնած մէրտել:	58
Երկու քահանայ՝ մէկը միաձեռանի և միւսը համը, կըրնա՞ն երախայ մի մէրտել:	59
Արբոց ըարեխօսութիւնը ընդունելի՞ է առաջի ոյ:	59
Ճըւշատկները կմ ուշերը որո՞նց համար կընան բարեխօսել:	59

- Առուրբ միւռոնը իբրև դեղ մարմնաց տիտից գործածել  
արժան է : 60
- Եկեղեցւց ասմունքներուն կարդուինչպէս մոտաւ ոք ածը : 60
- Յարութեան օրը մարդիկ ի՞նչ հասակաւ յարութիւն պի-  
տի տունեն : 61
- Յարութեան օրը մարդիկ ի՞նչպէս կը նորոգին , և ամբողջ  
մարդ կըլլան : 61
- Եթէ մէկ մարդ մը մարդու միս ուտելով՝ և անկից սնանե-  
լով զաւակ ծնանի նէ , ի՞նչպէս յարութիւն կըլլայ : 61
- Վրիստոսի չի հաւատացօղները յարութիւն կառնեն : 62
- Խնչո՞ւ դաւիթ մարդարէն կըսէ , || Ո՛չ յարիցեն ամբարիշտք  
՚ի դատաստան || : 62
- Ժամանակաւոր յանցանքի համար յաւիտենական պատիճ-  
ինչո՞ւ պիտի ըլլայ : 63
- Վրիստոս որ թացեալ պատառ արվաւ յուդայի նէ , այն  
պատառը սուրբ խորհուրդէ՞ն էր : 64
- Դ աղարոս ո՞ր օր յարութիւն առաւ : 64
- Խնչո՞ւ չի ձգեց ած՝ որ ոք Յակով Նոյի տապանը տեսնայ : 64
- Բողոք տապանը ամբողջ մացե՞ր էր : 65
- Արբոց նշխարաց պաշտօն տալ կը վայլէ : 65
- Արբոց նշխարքը տեսնալէն ի՞նչ օգուտ կըլլայ : 65
- Արբոց մասունքները բժշկութիւն կըրնա՞ն տալ : 66
- Արբոց բարեխօսութիւնը օգո՞ւտ է մեղաւորին : 67
- Վնիրաւ բանադրեալը կը համարի՞ բանադրեալ : 67
- Կարդաւոր մը ոխակալութեամք պատարագ կըրնա՞յ ընել : 67
- Վահանաց մը պատուիրանալանց մէկը բանադրեալը կըրնա՞յ  
պատարագ մատուցանել : 68
- Աչինչ պատճառաւաւ մը բանադրեալին թողութիւն չի տայ նէ  
քահանայն , կըրնա՞յ պատարագ մատուցանել : 68
- Կ՞նչ որպիսութիւն պէտք է պատարագ ամատոյց քահանացին : 68
- Կ՞նչ որպիսութիւն պէտք է ձաշակ առնօղին : 69
- Վնարժան ձաշակօղները ի՞նչ պատիժ ունին : 70
- Վնմէն աղջի պատարագը մի և նոյն է : 71
- Կյամորեալն և անխմորն ջրախառն գինին և անապակն նոյն է : 72
- Կ՞նչպէս մի մարմին քրիստոսի կըսվի զանազան եկեղեցւց  
մէջ կատարված պատարագը : 72
- Վնմէն օր պատարագէլով քրիստոսի մահը միւսանդամ կա-  
տարած կըլլամիք : 73

- Վուաքեալք ի՞նչ ասմունք ունեին պատարագի աըալռ-  
ղութեան : 73
- Աուրբ պատարագին մէջ՝ Ողջն տուք միմեանց և Քըիս-  
տոս ՚ի մէջ մեր յայտնեցաւ , ի՞նչ կը նշանակէ : 73
- Դամարարին կիսով չափ սկիհը բանալը՝ և սեղանցն մէկ  
կողմը կանգնիլը՝ ի՞նչ պիտի ըլլայ : 74
- Վրիստոս առաքելոց ըստաւ , Մի բառնայք դքսակ ,  
և այն . այս ի՞նչ միտք պիտի ըլլայ : 74
- Խճանապարհի ումեք ողջն մի տացցէք ըսելը՝ ի՞նչ միտք է : 74
- Վուաքելոց քարոզութեան վեճակը ո՞յք էին : 75
- Վրիստոսի պայծառակերպութեան ժամանակը՝ առաքեալ-  
ները Մովսէսը և Եղիան ինչո՞ն ճանչցան : 75
- Վւետարանիշները ինչո՞ւ չորս են : 76
- Վրա ինչո՞ւ այնպէս յարմարեց , որ յետ յարութե երբ առա-  
քելոց երկցառ՝ թուլմա հետերնին չի գտնըլեցաւ : 77
- Խողաբեր կանայք ո՞վ էին : 77
- Վւագ շաբաթ օր ի՞նչ մատօք է՝ որ ուրեք ոմանք գերեզմա-  
նատուն կերթան : 77
- Վորաչն եկեղեցին ինչո՞ւ կօրհնեն՝ և կօծեն : 78
- Վի՞նչ կերպով պէտք է յեկեղեցին մտնալ : 78
- Եկեղեցին ի՞նչպէս կըսվի գերազանց քան զերկինս : 79
- Հեթանոս մը յեկեղեցին մտնայ նէ , եկեղեցին պղծեալ  
կը համարվի : 79
- Վանի պատճառաւ եկեղեցին պղծեալ կը համարվի : 79
- Օտքարիս քահանայապէտ տաճարին սրահին մէջ սպաննը-  
վեցաւ , ինչո՞ւ տաճարը վերսարին չի սրբագործեցաւ : 80
- Եպիսկոպոսը եթէ չի գիտնայ ձեռնադրածին որպիսութիւ,  
պակասութիւն կը համարվի իրեն : 81
- Վնարժան մէկը քանի մի անձանց վկայութեամբ ձեռնադ-  
րը նէ , ձեռնադրողը յանցաւոր կըլլայ : 81
- Վնարժան ընծայացուին մեղացը ի՞նչպէս հաղորդ կըլլայ  
ձեռնադրողը : 82
- Վշխարհամատրան կիւրակէ ի՞նչ ըսելէ : 83
- Աուրբ եկեղեցոց մէջ անդասատան ընելով աշխարհիս չորս  
կողմը ինչո՞ւ կօրհնըլի : 83
- Յետ սուրբ պատարագի մաս տրվելուն խորհուրդը ի՞նչ է : 84

## ՄԱՍՆ · Գ

- Խ**նչ մաօք է՝ որ սուրբ գըոց մէջ Խորայէլի աղքին համար  
կըավի , || Ես ստեղծի զքեղ || : 85
- Վ**արդ ցս համար ըստ պատկերի աստուծոյ ստեղծուած ըս-  
վլը՝ ի՞նչ միաք պիտի ըլլայ : 86
- Վ**Ճ կայենին կըսէ , || Ո՛չ ապաքէն ուղիղ մատուցանես , և  
ուղիղ ոչ բաժանես || + այս ի՞նչ ըսելէ : 86
- Կ**այենին մեղքը ի՞նչու թողութիւն չունեցաւ : 86
- Գ**րված է՝ թէ || Անուանեաց զանուն նոցա Ադամ || + ապա  
կողակցին Եւայ անունը ի՞նչ է : 87
- Վ**Ճ Ադամին ուր ըլլալը չէ՞ր գիտէր , որ ուր ես ըսելով  
կանչեց : 87
- Ե**թէ Նշին աղաւնիին գաղարելու տեղի չի կար , ագռաւը  
ուր դադարեցաւ : 87
- Ի**նչու ած պատուիրեց Ղավախին՝ որ ետեւը չի նայի : 88
- Դ**ովտին կինը՝ որ արձան աղի եղաւ , ի՞նչպէս անձրեւն  
չի հալը : 88
- Ի**՞նչպէս իմանալու է՝ որ Խորայէլացւոց աղքին գերու-  
թեանը համար սուրբ գըոց մէջ այլ այլ գրված է : 89
- Վ**ովսէսի օձ գարձած գաւաղանաւը ի՞նչ կիմացվի : 89
- Վ**ովսէսի ձեռքին բորոտութեամբը և վերստին բժշկու-  
թեամբը ի՞նչ կիմացվի : 89
- Վ**ովսէս ջուրը յարիւն գարձայց , այս ի՞նչ կը նշանակէ : 90
- Վ**ովսէսի երկցած վառեալ մորենին ի՞նչ կը նշանակէ : 90
- Հ**ին օրինաց զգեստին մէկին վշ գրված էր Յանդիմանութի-  
և ձշմարտութի , ի՞նչ մեկնութի ունին այս երկու բառը : 90
- Ա**սուեալ մորենիին համար սյլաբանօրէն մեկնութիւն մի  
կըրնաս աալը : 91
- Ա**քանչելիք ի՞նչ ըսելէ : 91
- Կ**ախարդաց կամ գիւաց ըրած զարմանալի գործքերուն ըս-  
քանչելիք կըավի : 92
- Փ**արաւօնի կախարդաց յօձ գարձուցած գաւաղանները ճըշ-  
մարիս օձ էին՝ եթէ սուտ : 92
- Փ**արաւօնի կախարդաց շինած օձերուն ուրիշ կերպիւ մը  
մեկնութիւն կը արբովի : 93
- Վ**Ճ ի՞նչու կըթողու , որ կախարդները զարմանալի գոր-  
ծէր կընէն : 93

	երես
Ո՞րչափ և ի՞նչ էին Եգիպտացւոց պատիմաները :	93
Ո՞րչափ ժամանակ տեսեց Եգիպտացւոց պատիմաները :	94
Ի՞նչ ջուր էր՝ որ Փարաւանի կախարդները յարիւն փռ- խեցին :	94
Փարաւանի խղդըլած ծովուն ինչո՞ւ կարմիր կրավիք :	94
Դմոկեղեն սիւնը ինչո՞ւ ցերեկը ամսիք նման կերւար իս- րայէլացւոց, և գիշէրը հրց նման :	94
ՄՃ ինչո՞ւ հրաման ըրաւ Եբրայէցւոց, որ օրվան բաւա- կանին չափ ժողվեն յերկնից իջեալ մանանայն :	95
Հին օրինաց սեղանի շինութեանը համար՝ ի՞նչ է աստուծց հրամանին մեկնութիւնը :	95
Հին խորանին չորս նիւթերը ի՞նչ նշանակութիւն ունին :	96
Հին խորանը ինչո՞ւ խորան վկայութեան կրավիք :	96
ՎՀարօն ինչո՞ւ որթ շինեց՝ որ Խորայէլացիք պաշտեն, և ուրիշ կենդանիի կերպարանքով բան մը չի շինեց :	96
ՎՀարօն մեղադրելի չէ՝ որթ շինելուն համար :	96
ՎՌովես ինչո՞ւ աստուծց պատուիրանաց երկու տախտակը կոսրեց բարկութեամբ :	97
ՎՀարօնի շինած որթը Մովկէս ինչո՞ւ պյուր, խարտեց, և ջուրին երեսը ցանեց, և խմեցուց Խորայէլացւոց :	97
Եգիպտացիք քառասուն տարի անապատին մէջուսկից հան- դերձ կառնեին և կը հագնեին :	98
Դաւիթ մարդարէն Մովկէսի համար կը գրէ,    Տ վիմէ մեղս յագեցցց նց    այս խօսքը ի՞նչպէս խմանալ պէտք է :	98
ՎՌովես մարդարէին պատիերընկարովները գլխուն վրայ եր կու եղջիւրի նման բան կը դնեն, ի՞նչ պիտի վլայ այն :	98
Հանդերձը ի՞նչպէս կը բորոտի:	99
Տանց բորոտութիւնը ի՞նչ պիտի ըլլաց :	99
ՎՌովես և Ահարօն ինչո՞ւ կրցին մտնալ աւետեաց երկիրը :	100
Յակոբ նահապէտի և Մովկէս մարդարէի խօսքերուն մէջ Ուութենի վրայ զանազանութիւն կայ, ի՞նչպէս պէտք է խմանալ :	101
ՎՌովես վերջին օրհնութիւնին մէջ Խորայէլի տասն և մէկ ցեղին նահապէտաց անունները կը յիշէ, բայց ինչո՞ւ Շմատօնը չի յիշէր :	102
ՎՌովես սի վախճանելը ի՞նչպէս եղաւ :	103
Ի՞նչ վիճանենք և Մովկէսի մարմարյն համար, որ Յուդա առաքեալ կը գրէ, յուրա առ 9 :	103

Աստանայն ի՞նչ համարձակութիւն ունի ոյ տոջին գալ,	
որևէ ած խօսի անոր հետ Յուբայ վրայ :	104
Խնչո՞ւ ած Մովսէսի պատուիրեց գաւաղանը Ահարոնի տալ, որ Փարաւօնի առջին ձգէ :	104
Հոգւցին սրբոյ գալստեան ժամանակը բոլորն ալ շնորհք առին :	105
Քեփթայէ իւր աղջիկը մատաղ ըրամաւ :	105
Ասմիսան ի կարգս նահատպեատ ի՞նչպէս կըբնոյ ըլլալ :	109
Վ.բիսողոմ ինչո՞ւ անդաւակ կըսվի :	110
Գիր կենաց ըսվածը ի՞նչ պիտի ըլլայ :	110
Գիր կենաց ըսվածին մէջ գրվօղները կը ջնջըլի՞ն :	110
Սաւողի համար ինչո՞ւ գրված է՝ որդի տարեւոր ՚ի թա- գաւորել իւրում:	111
Խարայէլացիք Յեգիպտոսէն ելած ժամանակնին արդե՛օք գիշե՞ր էր, եթէ տաւաւօտ, և կամ իրիկուն :	111
Ասցդ Սամուել էր երեցօղը, որ կախարդ կինը ցոյ տըլաւ :	112
Դաւիթ ինչո՞ւ ըսաւ՝ կցըք և կաղք մի մոցեն ՚ի տուն ան:	112
Ոզային մեղքը ի՞նչ էր :	113
Ինչ իմանալու է ոյ փառքը՝ որ Մովսէս տեսնալ կուղէր :	114
Ի՞նչ էր Եղիսէի միտքը՝ որ ըսաւ Ազայէլին. դ, Եագ. ը. 16:	115
Դաւիթ ինչո՞ւ սուգ պահեց Աբիսողոմին վրայ :	115
Վ.բիսողոմ ծառէն կախված տեղը նետովմը մեռաւ, ին- չո՞ւ ուրիշ կերպիւ չի պատահէցաւ մահը :	116
Յովաբ երբ Աբել քաղաքը և Բեթմաքայ պարխապը պա- շարեր էր, կին մի ելաւ պարխապին վրայ՝ և բան ինօ- սեցաւ, այն խօսքին միաքը ի՞նչ է :	116
Առւըր գիբբը կըսէ՝ թէ դաւիթի ժամանակը Եօթանասուն հաղար այր մեռաւ կոսորիչ հրէշտակէն, արդե՛օք կին չի մեռաւ :	117
Վ.Ծ պատուիրած էր Խարայէլացւոց՝ որ այլաղքեաց հետ ինամութիւն շընեն, Սողոմոն ինչո՞ւ Եգիպտացւոց Փարաւօն թաղաւորին աղջիկը առաւ կնութեան :	117
Առղոմնեան տաճարին համար կըսվի, որ շինված ժամա- նակը ամենեին երկաթեղին գործիքի ձայն չելսւ . ի՞նչպէս կըբնայ ըլլալ այս :	118
Խնչո՞ւ միայն Եղիա մարդարէին կըսվի Այր տառուծոյ :	118
Խնչո՞ւ միայն Եղիկիւ մարդարէին կըսվի Որդի մարդոյ :	119

- Եսայի մարդարէին ինչո՞ւ կայծակամբ մերձեցաւ Սէրովլ-  
քէն : 120
- Ինչպէս իմանալու է այն խօսքը՝ որ կըսէ Եսայի մար-  
դարէն . գլ. իդ . 20 : 121
- Դանիել մարդարէին չորս կերպ գաղան երևեցաւ , ինչ  
իմանալու է այս գաղաններովլ : 121
- Ինչո՞ւ մարդարէից բանքը պարզ չի գրվեցան : 121
- Աէման Եղիսէէն ներումն խնդրեց Ուեմանայ կռքատու-  
նը մանալու , և Եղիսէ ըստու Ե՛րթ խաղաղութեամբ .  
ինչպէս իմանալու է այս խօսքը : 122
- Եսայի մարդարէն կըսէ , գլ . Տ- 1 . այն խօսքով ինչ  
իմանալով : 123
- Ինչո՞ւ Աիրաք կըսէ , || Որ յաւելանայ ՚ի գիտութիւն , յա-  
ւելանայ ՚ի ցաւու || : 124
- Եսայի մարդարէին՝ գլ . Տ- 19 համարին խօսքը ինչպէս  
իմանալու է : 125
- Եսայի մարդարէին՝ գլ . կ- 20 համարին խօսքը ինչպէս  
իմանալու է : 125
- Եղեկիելի առաջին աեսիլքին մեկնութիւնը ինչ է : 126
- Եղեկիելի գլ . Տ- 13 համարին մշջւս բան մի կաց , այն  
ինչ է : 130
- Գրոդ Աբրահամու ըսվածը ինչ է : 130
- Երկիր կենդանեաց ըսվածը ինչ է : 130
- Դժոխին Երբեմն ինչո՞ւ գեհեան կըսվի : 130
- Վարուքոդոնսոսոր թագաւորը բոլորսին գաղան եղած մի : 131
- Ինչ է Դաւթի այս խօսքը՝ որ կըսէ , առնես . ը- 7 : 134
- Սուրբ գրոց մշջ յետին օր կըսվի Երբեմն՝ ինչ իմանալ  
պէտք է : 134
- Երբ որ Դաւթի աթոռ կըսվի՝ ինչ իմանալու է : 135
- Ինչո՞ւ կին կանուանէ քրիստոս սուրբ կցոյ ածածինը : 135
- Ինչպէս իմանալու է Մատթէոս աւետարանչի՝ գլ . ա-  
25 համարի խօսքը : 136
- Ինչպէս կըներհակին ոմանք ըսելով , եթէ ք- եղբայր  
ըսւնէր՝ ինչպէս անդրանիկ կըսվի : 136
- Յովհաննէս աւետարանչի՝ գլ . ը- 12 համարի խօսքը ինչ-  
պէս իմանալու է : 137
- Ինչ հտահեր Յովհաննէս Ալբանիչ Երբ յանապատ գնաց ,  
և ինչո՞ւ գնաց : 137

Քովհաննէս մղբաչի համար կըսէ ք՛ս,    Զե՛լ յարուցեալ ՚ի ծնունդս կանանց՝ մեծ քան զյովհաննէս   , և այլն.	
այս խօսքը ի՞նչպէս իմանալու է :	138
Քա՛ի ընծայաբեր մոգերը չշմարիս թագաւոր եին :	138
Ո՞ր կողմէ եկան ընծայաբեր մոգերը :	139
Վատը Ե՞րբ երևեցաւ մոգերուն :	139
Ի՞եթէ հէմի մանկունքը իբրև մարտիրոս ի՞նչպէս կը տօնախմբին :	140
Վատանայն գիտէ՞ր քրիստոսի որդի ոյ ըլլալը :	140
Վատանային առաջին փորձութե՛ հարցմունքը ո՞րն էր :	141
Երկրորդ փորձութիւնը ի՞նչ էր :	142
Երրորդ փորձութիւնը ի՞նչ էր :	142
Ի՞նչ է աւետրնչին՝ մաս, ժկ՝ 12 համարին՝ խօսքին միտքը :	143
Ի՞նչ է քրիստոսի ըսածը • զուկ • ժկ՝ 35:	143
Ի՞նչ է քրիստոսի ըսածը • յօհ • թ՝ 39:	144
Ի՞նչ է քրիստոսի ըսածը • յօհ • ե՝ 19:	144
Ք. ե անօրէնութեց ոյք գիբրին ինչո՞ւ Աւետարան կըսին:	145
Հայր և որ հոգի գատողական իշխանութե՛ հազո՞րդ են:	145
Քիսուս ի՞նչպէս Նազովըցի կըսին:	146
Ի՞նչ յանցանք ունէին այն օրինականները վայ լսելու, որոց հայրերը սպաններ եին մարդարէները:	146
Եթե շնացեալ կինը քի առաջը բերին, քն գետինը նայե- լով գիր գրել ակսաւ, այս գրութենէն ի՞նչ պիտի հասկընամք:	148
Ք. քրիստոս ինչո՞ւ գիւաց աղաջանքը ընդունեց, և անոնք ալ խողերուն փորը մոտան, և խողերն ալ ծովը խղալ- վեցան, ատոնց տիրոջը յանցանքը ի՞նչ էր:	148
Ի՞նչ է քրիստոսի ըսածը՝ յօհ • իտ՝ 22:	149
Ի՞նչ է քրիստոսի ըսածը՝ յօհ • ժկ՝ 10:	150
Ք. կըսէ՝    Զե՛լ առւեալէ գիտել. . . և նոյ չէ առւեալ   . ապա չի հաւասալովնին ի՞նչ յանցանք ունին:	150
Աելովոմ ի՞նչ կը նշանակէ:	151
Ի՞նչ կերպ հատուցմունք իմանալու է դաւեիթ մարդարէին խօսքը՝ որ առաքելոց համար կը մարդարէանայ:	152
Ք. բոլոր հրաշքները խօսքով ըրաւ, բայց մէկ կուրին աչքը ինչո՞ւ թուքաւ, և յառաջ ինչո՞ւ կիսամը բացաւ, և ինչո՞ւ շենլիքէն դուրս հանեց:	152
Ք. միայն աղքատաց աւետարաննելու համար յ՛ն եկաւ:	153

- Վան ինչո՞ւ ըստ մեծի մասին խորհրդակից ըրաւ իրեն ա-  
շակերտներէն՝ Պետրոսը՝ Յակոբոսը՝ և Յովաննէսը։ 154
- Վրիսատոսի աճեցուցած հացին կտորները ո՞ւր մնաց։ 154
- Ինչո՞ւ աղքտա Ղաղարոսին անունը կը յիշվե, և մեծա-  
տունինը չի յիշվեր։ 154
- Առեծատունը դժոխքէն ի՞նչ կընայ աեսնալ Ղաղարոսը։ 155
- Առեծատունին ըրած խնդիրքը աբրահամին ի՞նչ միաք պի-  
տի ըլլար։ 155
- Ինչո՞ւ խաչին վրայ ըստ քրիստոս, || ԱՃ իմ՝ ած իմ,  
Ընդէ՛ր թողէր զիս։ 156
- Յիսուսի հրաշներէն մեծ հրաշք ո՞վ գործեց։ 157
- Ինչո՞ւ քրիստոս Սիմօն բորսուն տունը բազմեցաւ։ 157
- Գրական մեկնութք ի՞նչ խմանալու է՝ ժողովրդոց հան-  
դերձ տարածելը, երբ քոյ յէրուսաղէմ եկաւ։ 158
- Վրմաւենիի և ձիթենիի ոստերով որ քրիստոս դիմաւորե-  
ցին նէ, ի՞նչ միաք պիտի ըլլար։ 158
- Վրիսատոս ըստ Քարինքդ աղաղակեցեն ։ ոյս քարերուն  
աղաղակը ի՞նչ խմանալու է։ 159
- Վիճ նստիլ իշց և աւանակի վրայ՝ ի՞նչ խմանալու է։ 159
- Հեթանուները ո՞վէին, որ քրիստոս աեսնալ կուղէին։ 160
- Վայն հրաւիրակներուն՝ որ քրիստոսի եկեր էին, ինչո՞ւ  
հեթանոս կըսվի։ 161
- Ինչո՞ւ քոյ աղօթք ըրաւ՝ բաելով, || Հայր՝ եթէ կամիս ||, ԱՃ։ 161
- Աաանուն գիշերը քոյ ի՞նչպա զօրուի կառնէ հրեշտակէն։ 161
- Հրեշտակին ինչ խօսիլը քրիստոսի յայտնի՞ւ է։ 162
- Ինչո՞ւ քոյ կը խոստանայ աշակերտացը հոգին ո՞վը խրկել։ 162
- Վոաքեալները տմին գիտուին աւսորվեցան հոգին ո՞բէն։ 164
- Վան ինչո՞ւ երկիւղ և տրամուի ունէր չարչարանաց գիշերը։ 164
- Վարկոս աւետարանիչ երիտասարդի մը համար բան մը կը<sup>1</sup>  
խօսի գլ, ժ՛գ, 51, այդ երիտասարդը ո՞վ պիտի ըլլայ։ 165
- Վիճ երբ լեղիով խառնած գինի տըլին, ինչո՞ւ չի խմեց։ 165
- Վրիսատոս հոգին աւանդած ժամանակը՝ լեղիով խառ-  
նած քացախը ինչո՞ւ խմեց։ 165
- Վրիսատոսի խաչելութե գիշերը՝ ի՞նչ պատճառաւ եղաւ  
արևին խաւարումը։ 166
- Վրեին խաւարումը բոլոր տշխարհի վրայ եղաւ։ 167
- Վգիպատոսի սովոյն ժամանակը ինչո՞ւ կըսվի, ծնն. Խառ. 57.  
|| Եւ ամենայն աշխարհ գային Յեղիպատոս ||, և այլն։ 167

Պատ գրոց խաւարը կէս օրվան մէջ եղաւ , ապա ի՞նչ-	
պէս խաւար եղաւ այն տեղերը , որ այն ժամա-	
նակը տակաւին կէս օր շէր այն տեղերը :	168
Վարելն խաւարումը միայն չըէաստանեայց երկրին ինչո՞ւ	
չեղաւ :	168
Քրիստոսի յարութիւնը պատմող կանոյքը ո՞վէին :	169
Քրիստոս յետ յարութեան իւր մօրը երևեցաւ :	169
Վւետարանիչք ինչո՞ւ գըերեն յետ յարութեան քրիստոսի	
երկելը իւր մօրը :	169
Պօղս առաքեալին՝ բարեկան 19. գրածը ի՞նչ ըսելէ :	169
Վծածին սկզբնական մեղք չունէր՝ ինչո՞ւ մեռաւ :	170
Պօղս առաքեալին Խայթ՝ կամ հրեշտակ Սատան ըսածը	
ի՞նչ պիտի ըլլայ :	170

## ՄԱՍՆ · Դ

(Օրէնքը ի՞նչ ըսելէ :	171
Օրէնքը քանի՞՛ կը բաժանի :	171
Յաւիտենական օրէնքը ի՞նչ է :	171
Բնական օրէնքը ի՞նչ է :	172
Դրական օրէնքը ի՞նչ է :	172
Վստուածային օրէնքը քանի՞՛ է :	172
Վարդկային օրէնքը քանի՞՛ է :	172
Վծային օրէնքը ներհակ սովորութեամբ մը կը դադարի՞ :	172
Բնական օրէնքը ինչո՞ւ տախտակի վըայ գրվեցաւ :	173
Հին օրէնքը բարի՞ էր :	173
Ինչո՞ւ ած կըսէ՝    Ետու նոցա հրամանս անբարիս    :	173
Հին օրէնքը ինչո՞ւ ծխով և մըրկաւ կը տրիի :	173
Ինչո՞ւ քրիստոս հին օրէնքներուն շատը լուծեց :	174
Հին օրինաց մէջ չորեքդրամենի ըսվածը ի՞նչ էր :	174
Ուլիստութիւնը ի՞նչ էր հին օրինաց մէջ :	174
Ուլիստութիւնը ի՞նչ էր :	175
Ուլիստութիւնը ինչո՞ւ ծննդական մարմնոյն վըայ կայացաւ :	175
Ինչո՞ւ քո թլիստութիւն հնազանդեցաւ , և շաբաթը լուծեց :	175
Եթէ հին օրէնքը պահեմք , մեղադրելի կը լամբի :	175
Ինչո՞ւ քրիստոս յանդիմանեց Սամարացի կինը՝ հինդ էրիկ	
մարդ առեր ես ըսելով :	176
Բառնաբաս՝ որ գլուխացի էր , ի՞նչպէս կալուած ունէր :	177

Յօհաննէս մկրտիչ ինչո՞ւ կը յանդիմանէր չերովդէսը՝ որ իւր եղորդ կինը առնել կուզէր :	178
Հին օրինաց մէջ ինչո՞ւ հրաման եղած է մէկ արջառին՝ հինգ- արջառ տուգանք տալ, և մէկ ոչխարին՝ չորս ոչխար տալ 178	
Դրամով խաղ խաղալը օրինաւոր է :	178
Երդումը ի՞նչ պիտի ըլլայ :	179
Երդումը քանի՞ կը բաժանի :	179
Ի՞նչ հաստատական երդումը :	179
Ի՞նչ խոստացողական երդումը :	179
Ի՞նչ նզովական երդումը :	179
Վիք ամենալին մի՛ երդումը ըսածը, ի՞նչպէս իմանալու է :	180
Երդումը ի՞նչպէս օրինաւոր կըլլայ :	180
Ա տանդէ աղաս մնալու համար եղած երդումը՝ արդար կը համարի՞ :	181
Ե. բրահմամ ի՞նչ մաօք էր, որ երբ երդում ընել տուաւ՝ ծառային ձեռքը իւր միջացը վասյ դնել տալով :	181
Յակոր նահապէտ՝ որ իւր որդուցն օսվածին երկրպա- գութիւն ըրաւ, ի՞նչ մաօք էր :	182
Ե. բրահմամ ինչո՞ւ սուտ խօսեցաւ Աբիմելեքի իւր կնոջը համար :	182
Մաէկ մարդ մը իւր քոյրը կըբնայ իրեն կին առնել, թէ և ոչ մէկ մօրէ ըլլայ :	182
Սուտ զուրցելը ի՞նչպէս վարձ կունենայ :	183
Ինչո՞ւ երբեմն այ ընդունելի չըլլար արդարոց աղօթքը :	183
Արբոց բարեխօսութիւնը ընդունելի՞ է աստուծոց :	183
Մաղաւորի ձեռօք սքանչելիք կըլլայ :	184
Մարմաւոր բարիք ինչո՞ւ չարաց ևս կըտրվի:	185
Մոււսնութեան էութիւնը ո՞ւր կը կայանայ :	185
Մոււսնական միաւորութիւնը կարգիլի՞ ՚ի հաղորդութենէ :	186
Ելից՝ գլ. ժե, 15 համարին մէջ գրված բանը ի՞նչ է :	187
Եց երբ տապանը պիտի մանար, ինչո՞ւ աճ յառաջ նոյի որդիքը կը յեշէ, և յետայ կինը:	188
Բաղմակին ըլլալը ուսկից սկավեցաւ :	188
Եղամաց առաջին ծնունդքը ինչո՞ւ իրենց քոյրը կառնէին :	189
Եմ մը և կին մը իրարու հետ դաշն ունենան առնելու, և եթէ խօսքերնուն դառնան՝ այսափ դումար դբամց հատուցանեն, և եթէ մէկը խօսքէն դառնաց նէ՝ կը պարտաւորի՞ այն դբամը հատուցանելու :	189

	Երես
Հարձը ստացուած կը համարի՞ իւր տիրոջը :	189
Հայհցութիւնը ի՞նչէ :	190
Վանի՞ կերպ է հայհցութիւնը :	190
Վրասանական հայհցութիւնը ի՞նչէ :	190
Վնիծական հայհցութիւնը ի՞նչէ :	190
Վնարդական հայհցութիւնը ի՞նչէ :	190
Խնչու Յօր կանիծէ իւր ծնած օրը :	191
Վակողմեան աւազակը ի՞նչ պատճառաւ զզջացաւ :	191
Վռանց մլրտութեան նորահաւատ մը եթէ սպաննըվե անհաւատներն , վրկեալ կը համարվի՞ :	192
Հոգւցն սրբոյ դէմ ըսված մեղքը ի՞նչ կերպ է :	192
Վովսէսի մօրը ըրածը որդեսպանութիւն կը համարվի՞ :	193
Գիշերային գիձութեան համար կարգիլվի՞ մարդ սուրբ հաղորդութենէն :	193
Վարժնոյն պղծութեանը համար կարգիլվի՞ մարդ սուրբ հաղորդութենէն :	194
Վողաշխարօղ և զղջացեալ մարդիկ ինչո՞ւ ձայնով կաղացէն , ձեռքերնին վեր կառնէն , կուրծքերնուն կը զարնէն :	194
Վովսէս՝ Եղիպատացին սպաննելով մարդասպան համարեցաւ :	194
Վեկուն վնաս մը հասած ժամանակը՝ ուրիշ մէկը կարօղ ըլլալով այն վնասը չի խափանէր , ինքը հասուցանէլ կը պարտաւորի՞ :	195
Ջատգաւորին մեղքին համար ժողովուրդը կը պատժըլի՞ :	195
Վակոր նոհատովեա արհեստիւ խատուաիկ ծնել կուտար Լարանու ոչխարները , և իւր դաշնագովը իրէն կը սեպ-հականէր վարձի տեղ . այս ըրածը նենդութի չէր :	196
Հօր և մօր մեղքով կը պատժըլի՞ն որդիք :	196
Ի՞նչ միար է քրիստոսի թուքով շաղախ շնելը , և կուրին աշքը բանալը :	196
Վասուած մշպաւուաց ոչ լըսէ ըսաւ կցըր , իրա՞ւ է :	197
Եթէ որոգայթ լարելը արդիեալէ , ինչո՞ւ ած հրաման ըսաւ Խրացելացւոց , որոնք հնարքով Եղիպատացւոց լոթերը առին , և այնպէս Եղիպատուէն ելան :	197
Եթէ աստուած էր Փարաւօնի սիրալ խստացունօղը՝ ինչո՞ւ պատժեց :	198
Վուրբ հոգւցն իջումը առաքելոց վրայ ինչո՞ւ յերրորդ ժաման պատահեցաւ :	198

ԱԵԿՄԱՆ ԱՍՈՐԻՒՆ՝ ԻՆՉՈՒ ԵՊԻՍԵ ԷՈԹՆ ԱՆԳԱՄ ԼՌԵՄԱԳՎԵ-	
ՄՌ ՀՐԱՄԱՆ ԸՐԱՎԵ :	198
ԵՊԻՍԵ ԻՆՉՈՒ ՆՈՐ ԿՈՒԺ և աղ բԵՐԵԼ ԹՐՎԱՎ ԶՈՒՐԾ ԲԸ-	
ԺՀԿԵԼԸՆ ՀԱՅԱՐ :	199
ԽՆՉՈՒ ած առաւուները ժողվել կուտայր մանանայն :	199
ԱՌԱՔԵՄԱԼՔ ԼԵՊՈՒԹ գիտութիւն առի՞ն :	199
Ի՞նչ իրաւամիքք քրիստոս թղենին անիծեց :	200
ԱՅ մարդոյս կենացը հարիւր քսան տարի ստիման դրաւ Նոյի	
Ժամանակը, յետոյ ոմանք ինչու աւելի ևս ապրեցան :	200
ԱՄՆԴԱՐԱՄԵ-ՄԱԿԱՆՔ՝ որոնք հոգի են, ինչու հպարտութե-	
մեղանչեցին	201
ԱՅԻ որդի նոյ ըլլալուն հաւատալը՝ բաւակա՞ն է փրկութե :	201
ԱՄԱՐԴ-ՈՅՍ ՀՈԳԻՆ աւանդելը ի՞նչպէս կըլսյ :	202
Ի՞նչ զանազանութիւն է արուին և էգին՝ որ գրված է	
զլապահուց ։ ժը ։ 2 :	203
Ա գամ և Եւայ մերկ ըլլալով՝ ինչու չեին ամաչեր :	204
Ի՞նչպէս յայանի եղաւ Աբելի պատարագին ընդունելի	
ըլլալը :	204
Աշնովք և Եղիա ինչու համար յերկինս համբարձան :	204
Աշնովքին և Եղիային ընակութիւնը ո՞ւր է :	204
Չափ և կշիռ ուսկից մնաց :	205
Ինչու ած պատուիրեց Նոյին աննք կենդանիներէն երկու	
երկու գնել ատպանին մէջ և նբերէն եօթն եօթն :	205
Հին ժամանակը ինչէ՞ն գերազանց էր անդրանկութիւնը :	205
Երկրագործներէն տասանորդ առնելը ուսկից մնաց :	205
Եթէ քրիստոսի մահը նոյ կամօքն էր, ինչու սպաննօղները	
մեղք գործեցին :	206
ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ բոլորն ալ կուտավի՞ն :	207
Ի՞նչ պիտի ըլլայ Պօղոս առաքեալին ըսածը՝ ա ա ի ։ դ ։ 4 ։ :	208
Պօղոս միայն խոստովանելով թողութիւն կըրնայ գանալ :	208
Պօղութեան թողութիւնը ողորմութեամբ կըրայ :	209
Ի՞նչ տեսակ մեղքի կը նմանի գողութիւնը :	209
Պատաստանին օրը Յովլափաթու ձորոյն մէջ այնքան մար-	
դիկ ի՞կ ի՞նչպէս պիտի պարունակիվին :	209
ԱԿՐՈՒԵԱԼ և անմեղ մեռեալ մանկուքները ևս գատաստա-	
նի պիտի ելլա՞ն :	210
Առանց մկրտութեան մեռած երախաները ի՞նչ պատիճ-	
ունին :	210

## ՄԵՍՆ · Ե


Վ. Դամ ի՞նչ լեզուաւ կը խօսէր :	211
Վ. օթանասուն և երկու տեսակ լեզու կայ մինչև ցայդ-մ:	212
Վ. Դամայ գլուխը ինչե՞ն Գողգոթայ լեռան վրայ է կըսեն :	212
Վ. ողբոթայ ըսվելուն պատճառը ի՞նչ է :	213
Վ. Դամայ խաբվիլը սատանայէ՞ն էր :	213
Վ. Դամափին գիմաց ըսած տեղը՝ ո՞ւր է :	214
Վ. Դամ ո՞ւրան ժամանակ մնաց դրախտին մէջ :	214
Օքոռ կենաց ըսվածը ի՞նչ ծառ էր :	214
Վ. Խոտութե բարւց և չարի ըսված ծառը . . . ի՞նչ ծառ է :	214
Վ. Դամայ գերեզմանը ո՞ւր է :	215
Վ. ի՞նչ եղանակի մէջ աշխարհս ստեղծ-վեցաւ :	215
Վ. Կարնան եղանակին մէջ ի՞նչ պառող կար Աղամայ ու- տելու :	215
Վ. Ճխարհս ՚ի յաւխտենից է ըսողներուն ի՞նչ պատասխան տալու է :	216
Վ. Ճխարհիս ստեղծ-վելը քանի՞ տարի է մինչև ցայդ-մ:	216
Վ. Ճխարհիս արարշագործութեան վեց օրը ի՞նչպէս իմա- նալու է :	217
Վ. ըեգակը ըորըսդորդ օրը ստեղծ-վեցաւ , այն առաջին երեք աւուր տուաւօտը և իրիկունը ի՞նչպէս պիտի գիտցըլի:	217
Վ. ի՞նչո՞ւ վեց օրը ստեղծեց ած աշխարհս , և քառասուն օր- վոն մէջ եղաւ ջոհեղեղով կործանելը :	218
Վ. սողաբախներուն գուշակութիւնը ձշմարի՞տ են :	218
Վ. ստեղք մարդու վրայ կըսնան իշխել :	218
Վ. ուրբ գրոց մէջ կը կարդամք արեգական և լուսնի խա- ւարումն , իրականապէ՞ս կը խաւարէր :	219
Վ. կղէսիսատիկէս կը գրէ . Ժ. 17 ի՞նչպէս խմանալու է :	219
Վ. նասակար կենդանիները ի՞նչո՞ւ ստեղծեց ած :	220
Փիւնիկ հաւը ի՞նչե՞ն մէկ հատ է կըսեն :	220
Ո. և անո՞ր կենդանեաց խորութե պատճառը ի՞նչ է :	220
Զ. որին ևս աստուած ստեղծեց :	221
Վ. նիսաթան վիշապը մէկ համա է :	221
Վ. հապ ձուկը ո՞ւր թքաւ Յօնան մարդարէն :	221
Վ. արդցս մեղանչականութիւնը բնական է :	222
Վ. անի՞ մարդց անուն կայ աստուծ մէ դրված :	222
Վ. արդցս մահը քանի՞ տեսակ կը պատահէ :	222

	Էրես
Ա էրջի վայրկենի զղթումը ընդունելի կը լայ:	223
Օ ուղուն ջուրը ինչո՞ւ աղի է :	224
Հ շունուն կապցա գոյնը ինչե՞ն է :	225
Տ քհեղեղէն յառաջ այդի կա՞ր :	225
Կ ցի ասպանին բոլոր մեծութիւնը ո՞րչափ էր :	225
Դ ֆ խստացաւ Աբրահամու մեծ աղդ ընել, և իւր խստ- մանը հաստատութե՛ համար նշան ցոյց արվաւ, ծնն .	225
Ժ է . 9 : Ի յն նշաններէն ի՞նչ հասկընալ պէտք է :	225
Ե ֆ ինչու երեք տարեկան կենդանիներ ցոյց արվաւ Աբ- րահամին առ ՚ի նշան իւր խստամանը :	226
Վ ատանացն եթէ յառաջ հրեշտակ էր՝ ապա խմաստուն էր , ի՞նչպէս յիմսրաբար մեղանչեց :	227
Խ նշպէս ունանք կը պատժովին գեւերէն աշխարհիս մէջ :	227
Չ կան լեարդը և սիրաը ի՞նչ զօրութիւն ունէր . պավէ . ը . 2 :	227
Դ ժոխիքը ե՞րբ ստեղծվեցաւ :	228
Դ ժոխիքին հուրը ի՞նչ կերպ հուր է :	228
Տ արեմուտին օրը ինչո՞ւ կը պատուեմք :	229
Ի զարիսցի փոքր թուականը ի՞նչ է :	229
Բ ամսդ կամ ձակատագրութիւն ըսվածը ի՞նչ է :	230
Վ ավսէսի պղնձէ շինած օձը ո՞ւր մասց :	230
Հ առաջ ո՞ւսկից հնարեցաւ ժամը :	231
Տ ինարը և նուտգարանը ո՞վ հնարեց :	231
Ե րկաթագործութիւնը ո՞վ հնարեց :	231



Ալեսաւ	Ուղիւր	Երես	առշ
գոճքը	գոլծքը	12	20
ննջեցի	նջեցի	39	35
պէքէ	պէտքէ	52	28
հաւաքը	հաւատքը	56	27
յաւիտենակութիւր	յաւիտենականութիւր	120	29
Կ'	Լ'	172	8
կոռողէ	կոռզէ	173	25
խսուացած	խոսացած	226	19





Lip. Lys. 16. h.

Stz

Wif

2m

